

ԱՅՐ

Ուրվականների
A Haunted House. ԽՈՒՆԻ

Վիրջինիա Վուլֆ
Virginia Woolf



DARAK

Տ ԱՐՄԱՆ ՀԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՎԻՋԻՆԻԱ ՎՈՒԼՖ

Ուրվականներով տունը

ԵՐԵՎԱՆ



ԴԱՐԱԿ
2016

ՀՏԴ 821.111-32 Վուլֆ
ԳՄԴ 84(4Մբ)-44
Վ 974

*Հրատարակվել է ՀՀ մշակույթի նախարարության
աջակցությամբ*

Անգլերենից թարգմանեց Մանիկ Եգանյանը
Խմբագիրներ՝ Աշոտ Գաբրիելյան,
Թագուհի Ղազարյան

Վուլֆ Վիրջինիա

Վ 974 Ուրվականներով տունը: Պատմվածք-
ներ / Վիրջինիա Վուլֆ; Թարգմ.՝ Մանիկ
Եգանյան. – Եր.: Դարակ, 2016.- 264 էջ.-
(«Սաֆո» մատենաշար):

Վիրջինիա Վուլֆի (1882-1941) «Ուրվականներով տունը» պատմվածաշարն առաջին անգամ որպես ամբողջություն տպագրվել է հեղինակի մահից զրեթե երեք տարի հետո՝ ամուսնու՝ Լեոնարդ Վուլֆի նախաձեռնությամբ: Լեոնարդ Վուլֆը «Ուրվականներով տունը» ժողովածուի առաջաբանում նշում է, որ պատմվածքների այս ժողովածուի կառուցվածքը համապատասխանում է հեղինակի ցանկությանը, և որ այդ մասին քննարկել է հեղինակի հետ:

ՀՏԴ 821.111-32 Վուլֆ
ԳՄԴ 84(4Մբ)-44

ISBN 978-9939-9132-3-0

© Եգանյան Մանիկ, 2016 (թարգմ.)
© «Դարակ», 2016

ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐՈՎ ՏՈՒՆԸ

Երբեմն լինում է, որ արթնանալուն պես դռան ձայն ես լսում: Նրանք են՝ ձեռք-ձեռքի տված շրջում են սենյակից սենյակ, ամեն անկյունը մի լավ տնտղում, քչփորում, բացում ու փակում: Իսկապես նրանք են՝ ուրվականների զոյգը:

«Այստեղ ենք թողել», - ասաց աղջիկը: «Նաև այստեղ», - ավելացրեց տղան: «Վերևում էլ կա», - շարունակեց աղջիկը: «Պարտեզում էլ», - շշնջաց տղան: «Կամաց...- ասացին միաձայն, - այլապես կարթնանան»:

Բայց դուք բնավ էլ մեզ չէիք արթնացնում: Ո՛հ, ո՛հ: «Նրանք ինչ-որ բան են փնտրում. ահա և վարագույրը մի կողմ տարան», - ինքդ քեզ կմտածես ու կստիպես քեզ մի երկու էջ էլ աչքի անցկացնել: «Ահա՛, գտան որոնածը»: Թաքուն կուրախանաս, որ զուր չէիր կասկածում ու գրքիդ էջին մատիտով քեզ հաղթական հիշեցում կթողնես: Հետո հոգնելով կարդալուց՝ վեր կկենաս ու կթափառես այդ դատարկ ու անշունչ տանը, ուր ծնշող ունայնությունը լցված է միայն անտառային աղավնիների, դաշտային աշխույժ եռուզեռի, կալսող մեքենաների ձայնով: «Ինչի՞

համար եկա այստեղ, ինչ եմ ուզում գտնել»: Ձեռքերս դատարկ էին: «Միգուցե վերևում է»: Այնտեղ, ձեղնահարկում խնձորներ կային: Եվ հետո նորից ներքև. պարտեզում ամեն ինչ անփոփոխ էր. միայն գիրքն է խոտերի մեջ ընկել:

Նրանք այն գտան հյուրասենյակում: Նրանց երբեք ոչ ոք չի տեսել: Պատուհանի ապակու մեջ արտացոլվում են խնձորները, ծաղկում վարդերն, ու մի նոր կանաչով պատվում են տերևները: Նրանց անձայն շարժումները միայն այդ խնձորները նկատեցին՝ սեթևեթելով դեղին թուշիկներով: Վայրկյան չանցած դուռը բացվեց. նրանք արդեն ներսում են: Ահա և ինչ-որ բան շաղ տվեցին հատակով մեկ, պատերին ինչ-որ բան հայտնվեց, ծածկեց առաստաղը,- ինչ է կատարվում: Ձեռքերս դատարկ են: Գորգի վրա պատկերվեց թռչող կեռնեխի արտացոլանքը. ձևշող լուսության մեջ կրկին լսվեց աղավառի ձայնը. «Պահ-պա-նիր»,- հանկարծ սկսեց բաբախել տան զարկերակը: «Գանձն այստեղ է պահված, սենյակում...», - բաբախյունը լռեց: Գանձ: Ահա թե ինչ եք փնտրում:

Հենց այդ պահին հյուրասենյակի լույսը հանգավ: Գուցե պարտեզում է թաքցրած: Բայց այնտեղ՝ պարտեզում, ծառերի սաղարթը խավար է սփռել՝ մեղամարտելով արևի մի ըմ-

բոստ շողի հետ: Ըմբոստ ու անկված, քնքուշ ու ջերմ մի շող, որ երկնի համբույրն է ուզում տարածել պարտեզում՝ թաքուն խաղալով պատուհանի վրա ու աներևույթ ջերմությամբ տենչալով ձուլվել շնչիս: Մահը այս պատուհանն է: Մահը հիմա կանգնած է մեր միջև՝ բաժանելով իրարից. հարյուրավոր տարիներ առաջ հենց ինքն առաջինն այցելեց աղջկան, որբացրեց մանկանը, անդարձ կողպեց պատուհանները, խավար ու մենություն սփռեց տանը: Իսկ տղան լքեց տունը, լքեց աղջկան, ոտքի տակ առավ արևելքն ու արևմուտքը, վայելեց հարավային երկինքը լուսավորող արծաթե աստղերի շուրջպարը... ու նորից դարձավ տուն... տուն՝ լքված ու դատարկ, բայց բլրի եզրին հավերժ սպասող: «Պահ-պա-նիր,- երջանկացած բաբախեց սիրտը տան,- քոնն է գանձը»:

Ծառուղում ոռնում է խելակորույս քամին: Ըմբոստ ծառերը, չդիմանալով նրա հուժկու հարվածներին, զուր այս ու այն կողմ են թաքնվում. անձրևի մենավոր կաթիլները ձուլվում են լուսնի ցուլքերին ու կարոտագին տենչանքով հպվում խոտերին: Իսկ պատուհանից այն կողմ հեծկլտացող լույսը հանդարտ է, անխռով: Վառվում է մոմը՝ հանգիստ ու հպարտ: Ուրվականների զույգը, մեկը մյուսի ետևից բացելով փակ պատուհանները, շրջում են տանը՝ շշու-

կով խոսում, որ մեզ չարթնացնեն... և վերջապես գտնում են իրենց որոնածը՝ երջանկությունը:

«Մենք այստեղ էինք քնում...», - ասաց աղջիկը: «Համբույրներ՝ անթիվ, անհամար...», - ավելացրեց տղան: «Առավոտյան արթնանալիս...», «Հիշում ես արծաթե ցողը պարտեզում...», «Իսկ ձեղնահարկում...», «Խոտերի մեջ...», «Իսկ ամռանը...», «Եվ ձյան փաթիլների տակ...», - մեկը մյուսի ետևից փակվում են տան դռները՝ մարդկային սրտի զարկերի նման մեղմ թփթփալով:

Ոտնաձայները հետզհետե մոտենում են: Ահա և քարացան մեր սենյակի մոտ: Քամին դեռ ոռնում է դրսում, երկինքը՝ արծաթե արցունք մաղում: Խաղաղ քունը անէացրել է մեզ՝ մութ խավարով վերմակել մեր աչքերը. ոչինչ, բացի մեր սեփական շնչառությունից, լսելի չէ անգամ ուրվական աղջնակի թիկնոցի շրշյունը: «Տես, - շնչաց տղան՝ ձեռքով փակելով լապտերի լույսը, - մանկան նման անուշ քնած են: Սեր է բոցավառվում նրանց շուրթերին»:

Հետո լապտերը պահում են մեր գլխավերևում, կռանում և երկար ու անթարթ նայում մեզ: Քամին նոր խենթություններ է անում: Սենյակում հեծկլտացող միակ լույսը սկսում է գալարվել: Լուսնի անսանձ ցուրթերը մխրճվում

են ներս, նկարում հատակին, պատերին, հետո մեղմորեն հավում մեզ հետևող զույգին: Նրանք մտախոհ են: Հայացքները հետևում են մեզ ու փորձում գտնել իրենց թաքցրածը... երջանկությունը...

«Պահ-պա-նեք», - հաղթանակած բարախեց սիրտը մենավոր տան: «Այսքան տարի է անցել...», - հառաչեց տղան: «Ու նորից դու գտար ինձ»: «Այստեղ, - շշտաց աղջիկը, - հենց այստեղ մենք քնում էինք, պարտեզում՝ կարդում, ձեղնահարկում՝ զվարճանում, խնձորներն այս ու այն կողմ գլորում... Ահա՛, այստեղ է մեր գանձը... մեր երջանկությունը»: Այնքան կռացան, որ լապտերը խոցեց աչքերս. «Պահ-պա-նեք», - ուրախությունից տան սիրտը քիչ է մնում դուրս թռչի: Արցունքն աչքերիս արթնանում եմ: Ա՛խ, ուրեմն սա՛ է ձեր թաքցրած գանձը: Սրտում պահված լույսը:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԿԱՄ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ուղիղ եկեղեցու վրայով, թևերով սահուն ձեղքելով տարածքը, ծուլորեն ու անտարբեր սլանում էր ձկնկույր: Ամենին անհաղորդ էր երկինքը՝ պայծառ ու հեռու. մեկ թաքնվում էր ամպերի հետևում, մեկ դուրս ժայթքում նրանց արանքից, մեկ փոփոխվում, դառնում անձանաչելի, մեկ էլ դառնում դարավոր, հին ու անփոփոխ: Լիճ... դու՛րս հորդիր ափերիցդ: Լեճ... Օ՛, անասելի է, արևի ոսկին է նրա կատարին: Հալվում է լեռը: Ահա՛ նաև ձարխոտերն ու սպիտակ փետուրները՝ չունեն ո՛չ սկիզբ, ո՛չ էլ վերջ ու անծայրածիր են, անվերջ...

Ճշմարտության տենչ, դրա նախազգացում, խոսքերի անավարտ պրպտում, հավերժական մի տենչ (ժայթքում է ձիչը՝ գլորվելով մեկ առաջ, մեկ ձախ: Անիվները սահում են տարբեր ուղղություններով: Օմնիբուսերի բախում և երկաթե հսկաների ձուլում), հավերժական տենչ, (ժամացույցի տասներկու խուլ կանչերն ազդարարում են կեսօրվա գալը. սփռվում է լույսի ցուլքը, իրար գլխի են հավաքվում երեխաները) հավերժական մի տենչ՝ դեպի որորևումը ճշմարտության:

Եկեղեցու գմբեթը պատվում է կրակե կարմրով. ծառերի տերևները մետաղադրամներ են հիշեցնում, ծուխը պատում է տանիքները. լաց, խառնաշփոթ, հաչոց. «Երկաթ է վաճառվում», - և սրա հետ ձշմարտություն:

Կանացի ու տղամարդու ոտնաքայլերի մի քառս, սև՝ տեղ-տեղ էլ ոսկեգոծ բծերով հանգուցված (Ինչ մռայլ եղանակ է:- Շաքարո՞վ:- Ո՛չ, շնորհակալ եմ: Ապագայի հասարակությունն է), բուխարու կրակը հեծկլտում է՝ սենյակը պատելով բոսոր շղարշով, միայն նշմարելի են մարդկային սև ուրվագծերն ու նրանց փայլիլող աչքերը, մինչդեռ պատուհանից այն կողմ ֆուրգոնն են բեռնաթափում: Օրիորդ Կաչունիկը իր սեղանիկի մոտ թեյ է վայելում, իսկ ցուցափեղկի հայելանման ապակին իր վաղեմի գործն է կատարում՝ պահպանելով մորթիները:

Չորացած, դալուկ մի տերև քամու հեքին հանձնվելով, պտտվում է խաչմերուկում, մխրձվում ու անցնում անվաղողերի արանքով, կաթիլները արծաթ են դառնում նրա դալուկից. ահա մի տեղ էլ ապաստան գտավ ու նորից... անտուն... ձուլվում է իր նմանների հետ մի խաշամի մեջ... բարձրանում է վեր և նոր ընթացքով գահավիժում գետնին ու... վերածնվում,- սա՛ է ձշմարտությունը:

Մտքերի հորձանուտից քարանում ես բու-

խարու կրակի առջև՝ աչքդ չկտրելով նրա ձերմակ մարմարե սալաքարից: Նրա կաթնագույն ձերմակից բառեր են հորդում, լցվում սևով, հասունանում ու առաջ շարժվում: Գիրքն ընկավ. ի՞նչ է դա, խարու՞յկ, ծո՞խ, կայծերի քարավան, թե՞ գոլորշացում. մարմարե բուխարին հեծկտում է, ներքևում առկայծնում են մզկիթները. հեռավոր գետերը խեղդվում են երկնային կապույտի օվկիանոսում, տեսնու՞մ ես աստղերի ոսկու փայլը. սա՞մ է ձշմարտությունը: Դե ի՞նչ, հիմա ավելի մո՞տ ես դրան:

Վերադառնում է ծույլ ու հուսալքված ձկնկույր, երկինքը իր վերմակի տակ է առնում աստղերը, հետո մերկացնում նրանց արծաթոսկին:

ԶԳՐՎԱԾ ՎԵՊ

Նա այնքան դժբախտ տեսք ուներ, որ հենց միայն դա բավական էր հայացքը թերթից կտրելու ու աչքի պոչով այդ թշվառ կնոջ՝ ոչնչով չառանձնացող դալուկ դիմագծերին հետևելու համար, որոնք ասես ամբողջ մարդկային մեղքի խորհրդանիշն էին: Կյանքն այն է, ինչ մենք տեսնում ենք մարդկանց աչքերում, կյանքն այն է, ինչ նրանք տեսնում, լսում ու ընկալում են, և այն, ինչ ընկալում են, անհնար է թաքցնել, քանզի ամենը հանգուցված է մեկ գաղափարի հետ՝ կյանքի. սակայն ինչն են փորձում թաքցնել: Գուցե հենց կյանքը: Իմ առաջ հինգ դեմքեր են, հինգ տարիքն ապրած դեմքեր, ու ամենքի հետևում կյանքի հսկա մի փորձ կա: Բայց տարօրինակն այն է, որ նրանցից յուրաքանչյուրն էլ փորձում է թաքցնել դա: Բոլորի դեմքերին սուսկ մի դրոշմ կա՝ զսպվածություն, պինդ փակած շուրթեր, կիսաբաց աչքեր, և նորից նույն ցանկությունը՝ թաքցնել, կոծկել կյանքի փորձը: Մեկը ծխում է, մյուսը՝ կարդում, երրորդը նոթատետրի գրառումներն է ստուգում, չորրորդը դիմացի պատին փակցրած երկաթուղային կայարանի քարտեզն է

տնտղում, իսկ հինգերորդը... այն, ինչ անում է հինգերորդը՝ սարսափելի է, քանզի նա ոչինչ չի անում: Նա ընդամենը նայում է կյանքին: Ա՛խ, թշվառ ու դժբախտ կին, մի՛ խախտիր խաղի կանոնները, խնդրում եմ, հանուն մեզ բոլորիս, դու էլ սկսիր թաքցնել:

Ասես նա լսում էր ինձ, հայացքը բարձրացրեց, ուղղվեց տեղում ու խորը հառաչեց: Թվում էր՝ նա ներողություն է հայցում ինձանից ու ասում. «Եթե միայն իմանայիր»: Ու նորից սկսեց նայել կյանքին: «Իսկ ես գիտեմ,- լուռ պատասխանեցի ես ու հանուն քաղաքավարության աչքս գցեցի «Թայմս»-ին,- ես ամեն ինչ գիտեմ: Երեկ Փարիզում խաղաղության դաշինք է ստորագրվել Գերմանիայի և Անտանտի միջև... Սենյոր Նիտտին՝ Իտալիայի վարչապետը... Դոնքասթեր ուղևորվող գնացքը բախվել է բեռնափոխադրողի հետ... Մենք բոլորս էլ գիտենք, «Թայմս»-ը գիտի, ուղղակի բոլորս էլ անիմացություն ենք ձևացնում»: Հայացքս կրկին թերթից սահեց դեպի այն հինգերորդը: Նա ցնցվեց, պարզեց ձեռքն ու, գլուխը տարուբերելով, քորեց թիակը: Ու ես նորեն ընկղմվեցի իմ բացահայտած կյանքի վիթխարի ակունքի մեջ: «Ինչ որ ցանկանաս,- շարունակեցի ես,- ծնունդ, մահ, ամուսնություններ, պետական աժիտաժ, թռչունների սովորություններ,

Լեոնարդո դա Վինչի, Սենդիլում կատարված սպանություն, բարձր աշխատավարձեր, կյանքի արժեք. ինչ-որ մտքիդ գա, կգտնես «Թայմս»-ում, կգտնես ամեն ինչ»: Ու նա նորից գլուխն այս ու այն կողմ տարուբերեց անսահման թախիծով, մինչև որ այն անշարժ քարացավ, ասես մի պտուտակ, որը կանգ է առնում երկար ու հուժկու պտույտից հետո:

«Թայմս»-ն անգոր է դեմ դուրս գալ նրա այդ վշտին: Բայց այ մյուսների համար դժվար թե կարելի է նույնն ասել: Կյանքից պատսպարվելու ու թաքնվելու համար ավելի հեշտ է քառապատիկ ծալել հաստ ու ճոճոռան թերթը և... նման պատնեշը անգամ կյանքին դյուրին չէ հաղթահարել: Այս գործն արված է. բարձրացրեցի հայացքս, հիմա ինձ պաշտպանված եմ զգում, ահա և իմ վահանը: Բայց նա փշրեց վահանն իմ այս: Նա այնպիսի ակնապիշ ու այրող հայացքով նայեց աչքերիս, ասես ինչ-որ խիզախության նշույլ էր փնտրում դրանց խորքում, որպեսզի հիմա դա էլ փոշիացնի: Նրա լոկ մի շարժումը անէացնում էր բոլոր հույսերը, հոգս էին ցնդում բոլոր երևակայությունները:

Այսպես անցնելով Սուրեյը՝ մենք ձեղքեցինք Սասեքսի սահմանը: Հետևելով կյանքին՝ ես չէի նկատել, որ մյուս ուղևորները մեկը մյուսի հետևից դուրս էին եկել, և եթե չհաշվենք

թերթ կարդացող տղամարդուն, ապա մենք խցիկում մենակ էինք մնացել: Ահա և «Երեք կամուրջներ» կայարանը: Գնացքը կամաց-կամաց սահեց կառամատույցի երկայնքով ու կանգ առավ: Մեր ընկերակից ուղևորը կլքի մեզ: Ինքս էլ չգիտեի, թե ինչ է ինձ պետք, ի վերջո աղոթում էի, որ նա մնար: Բայց այդ նույն վայրկյանին նա վեր կացավ, անհավասար ծալծլեց թերթն ու, ասես իր առաքելությունն ավարտած համարելով, բացեց դուռն ու դուրս եկավ. մեզ մենակ թողեց:

Այդ դժբախտադեմ կիսն առաջ ուղղվեց իմ կողմ ու սկսեց մի դժգույն ու տաղտկալի զրույց՝ անցած կայարանների մասին, այն մասին, թե ինչպես էր ինքը հանգստացել, Իսթբըրնի իր եղբայրների մասին, անգամ այն մասին, որ այս տարի ձմեռը շոտ է սկսվելու, թե՛ ուշ, հիմա արդեն չեմ էլ հիշում: Եվ ի վերջո պատուհանից դուրս նայելով (բայց ի՛նչ կարող էր նա այնտեղ տեսնել)՝ միայն կյանք, նա շշնջաց. «Չկա առավել ծանր բան, քան տնից հեռանալը»: Ահա հիմա կպարզենք, թե ինչն է նրան տանջում: «Իմ հարսը,- ձայնը թախծից դողդողում էր, ասես փրփրացող կիտրոն լիներ, ու նա սկսեց փնթփնթալ ինքն իր համար, և ոչ թե ինձ,- նրան ինչ էլ ասես, կասի «հիմարություն» է», ու այդ խոսքերի հետ նա այնպես կծկվեց,

կարծես ամբողջ մեջքը փշաքաղվեց, ինչպես մսավաճառի մոտ դրված փետրահաս եղած հավի մաշկը:

- Անասունի մեկը,- նյարդային ջղաձգումով դուրս շարտեց նա, կարելի էր կարծել, թե արածող մի մեծ հիմար կով, վախեցնելով իրեն, փրկում էր ավելորդ անկեղծությունից: Հետո նորից ցնցվեց, կրկին այնքան անհարմար ինչպես և առաջին անգամ ու նորից պարզեց ձեռքը, ասես այրվում կամ էլ քոր էին գալիս թիակները: Թվում էր՝ նա ամենադժբախտն էր այս աշխարհում ու թեև ոչ նախկին համոզմունքով, բայց և այնպես նորից հանդիմանեցի նրան, քանզի եթե նրա դժբախտությունը պատճառներ չունենար կամ էլ եթե անգամ ինձ հայտնի լինեին այդ պատճառները, միևնույն է նրան պետք չէր մեղադրել:

- Հարսները, նրանք...,- ասացի ես:

Նրա շուրթերը պինդ փակվեցին, որ թույլ չտային թույնը դուրս հորդել, ու այդպես էլ չարձակվեցին: Նա միայն հանեց ձեռնոցներն ու սկսեց դրանցով մաքրել պատուհանի կեղտը: Եռանդով տրորում էր, ասես փորձում էր ընդմիշտ մաքրել ինչ-որ բան՝ ինչ-որ մի հետք, մի բիծ: Եվ որքան էլ ջանասիրաբար էր նա տրորում, միևնույն է՝ հետքը չէր հանձնվում: Նա հետ նստեց, ու նորից ամբողջ մարմնով սար-

սուռ անցավ, ցնցվեց, ձեռքը մեկնեց մեջքին՝ արդարացնելով իմ սպասումները: Ինչ-որ մի աներևույթ ուժ ինձ էլ ստիպեց հանել ձեռնոցս ու իմ հերթին մաքրել իմ կողմի պատուհանի հատվածը: Իմն էլ էր մի տեղ կեղտոտված: Բայց որքան էլ տրորում էի, այն չէր անցնում: Այդ պահին ինքս էլ ցնցվեցի ու ձեռքս տարա մեջքիս: Այն զգացողությունն էր իմ մեջ, ասես մաշկս չորացել է, ինչպես մսավաճառի մոտ դրված փետրահան եղած հավիներ. թիակներս քոր էին գալիս, մարմնովս սարսուռ էր անցնում, քրտնում էի: Կկարողանամ ձեռքս տանել մեջքիս: Թաքուն պարզեցի ձեռքս: Նա նկատեց: Դեմքին մի թեթևակի քմծիծաղ հայտնվեց ու անհետացավ. քմծիծաղ ու խղճահարություն: Էլ ո՞ւմ են պետք խոսքերը, երբ նա արդեն պատմել էր ու բացել էր իր գաղտնիքը, վարակել իր թունոտ վարակով: Ես հենվեցի նստարանի մի անկյանը՝ հետ քաշվելով նրանից ու տեսնելով իմ առջև սփռված թավուտներն ու թումբերը, ձմեռվա գորշ, բայց և մանուշակագույն խաղերը: Նայում էի նրան, թափանցում նրա գաղտնիքի մեջ, մխրձվում ինձ ուղղված նրա հայացքի մեջ:

Հիլդան նրա հարսն է: Հիլդան: Նրա անունը Հիլդա է: Հիլդա Մարշ: Նա փթթուն, փարթամ կրծքերով տևտեսուհի է: Նա դռան շեմքին

կանգնած դիմավորում է տաքսին, գումարը պատրաստ պահած է ձեռքում: «Խեղճ Միսնի, մորեխի նման չորացել ես, ու դեռ անցած տարվա մաշված վերարկուն է հագիդ: Չնայած այս օրերին երկու երեխայի հետ դժվար է ավելին ցանկանալ: ...Օ՛հ, պե՛տք չէ, Միսնի, ես արդեն պատրաստել եմ: Վերցրե՛ք. սխալ մարդու եք ընտրել, վարձրդ: Ներս մտիր, Միսնի: Անգամ ՔԵԶ գրկած ներս կտանեի, էլ ուր մնաց քո զամբյուղը, թո՛ղ ինձ: (Նրանք մտնում են ճաշասրահ): Երեխանե՛ր, ահա և հորաքույր Միսնին»:

Գդալներն ու պատառաքաղներն ամուր բռնած բռունցքներն աստիճանաբար թուլացան: Նրանք՝ Բոբն ու Բարբարան, իջան աթոռից, մեկնեցին ձեռքները, հետո նորից անցան գործի՝ ուտում ու հետևում են, հետևում ու ուտում են: Բայց մենք բաց կթողնենք մանրուքները՝ կահավորանքը, վարագույրները, չինական ձենապակին, դեղին պանրի ուղղանկյունակները, սպիտակ թխվածքաբլիթների խորանարդիկները... բաց կթողնենք... Օհ, ո՛չ, մի րոպե: Ճաշի հենց կեսին նա կրկին ցնցվում է, իսկ Բոբը, այդպես էլ գդալը բերանից չհանելով, աչքերը չռած նայում էր նրան: «Արագացրո՛ւ Բոբ, վերջացրո՛ւ պուդինգդ»: Հիլդան դժգոհ է: «Ինչի՞ց է, որ նա այդքան դյուրագրգիռ է»: Սա էլ բաց կթողնենք, այս մեկն էլ, աստիճաններով՝ դեպի

վեր. աստիճանները պատված են պղնձով, լինուլեումը մաշված է, և վերջապես ննջարանը՝ Իսթբլրնի տանիքներին նայող պատուհաններով, տանիքներ՝ գիզգագաձև, ինչպես թրթուրները, պատված այս ու այն կողմ վազող կարմիր, դեղին ու կապույտ թերթաքարերով: Ահա՛ Միսնի, դուռն արդեն փակ է: Հիլդան ծանր քայլերով իջավ նկուղ: Իսկ դու այստեղ բացում ես զամբյուղդ ու անկողնու վրա պատրաստում խղճուկ գիշերային շապիկդ, հետո կողքիդ դնում մորթեպատ հողաթափերդ: Հայելին, չէ՛, չէ՛, այդ տեսքով խուսափում ես հայելուց: Զգուշորեն հանում ես գլխարկիդ ամրացրած քորոցները: Ահա և խխունջե զարդատուփը, գուցե ինչ-որ բան կա այնտեղ: Թափ ես տալիս, այն նույն մարգարտե ապարանջանն է, ինչ անցած տարի, ուրիշ ոչինչ: Փռշտում ես, հոգոց հանում ու նստում պատուհանի մոտ: Կեսօրվա ժամը երեքն է: Պատուհանից այն կողմ դեկտեմբեր է: Անձրև է: Կտորեղենի խանութի տանիքի տակ մի լույս է վառվում, մյուսն էլ՝ մի փոքր վերև՝ սպասուհու սենյակում. այդ երկրորդը հանգչում է: Նայելու այլևս ոչինչ չկա: Ընդամենը մի բուրդե ընդմիջում. հիմա էլ ինչի՞ մասին ես մտածում: (Թող մի հատ էլ աչքս զգեմ դիմացի նստարանին. նա քնած է, թե՛ ձևացնում է, ուրեմն ինչի՞ մասին կարող է մտածել կեսօրվա ժամը

երեքին՝ պատուհանի մոտ նստած: Առողջության, փողի, լեռների. Աստծո՛ւ): Այո՛, այո՛, իր աթոռակի ծայրին կույզ գալով Միննի Մարշը նայում է Իսթբըրնի տանիքներից վեր և աղոթում Աստծուն: Հրաշալի է, նա կարող է անգամ տրորել-մաքել ապակին, որ ավելի լավ տեսի Աստծուն, բայց ի՞նչ աստծու է նա տեսնում: Ո՛վ է Միննի Մարշի աստվածը... Իսթբըրնի հեռախորշերի՞ աստվածը, թե՞ կեսօրվա ժամը երեքի աստվածը: Ես էլ եմ տեսնում տանիքները, տեսնում եմ երկինքը, ահա հենց այս ամենն է, որ տանում է դեպի Աստված: Նա ավելի շատ նման է նախագահ Կրյուգերին, քան արքայազն Ալբերտին, սրանից առավել տպավորիչ նկարագրություն չեմ կարող գտնել նրա համար, ահա տեսնում եմ նաև, որ նա սև սերթուկը հագին նստած է աթոռին ու դա այդքան էլ բարձր չէ. այ՛ եթե մի երկու ամպ էլ երևակայեմ, նա առավել բարձր գահ կունենա... ամպերին հեռած ձեռքին ահա նաև հայտնվում է մի գավազան, թե՞ դա լոկ մի փայտ է. սև, գեր, վիթխարի, մի իսկական ծեր բռնակալ. ահա՛ Միննի Մարշի աստվածը: Նա՛մ էր արդյոք Միննիին ուղարկել այդ ցնցումները, քորը, ջղաձգումները: ՄԵՂՔԻ ՀԵՏՔԵՐ. ահա, թե ինչ է նա ապակուց մաքրում: Դե իհարկե, նրա խղճին մեղք էր ծանրացած:

Մեղքերն այնքան են. միայն պետք է ընտրել: Սահում են, բոցավառվում են անտառները. ամռանն այստեղ զանգակներն են պար բռնում, իսկ երբ գարունը բացում է իր դռները, հյուր են գալիս հազարավոր գարնանածաղիկներ: Քսան տարի առաջ այստեղ էր չէ՛, որ նրանք բաժանվեցին: Դրժված երգումնե՛ր: Չէ՛, միայն ո՛չ Միննիի կյանքում. դա նրա համար չէ: Միննին հավատարիմ էր: Ինչպես էր նա խնամում իր մորը. ամբողջ խնայողությունները նա ծախսեց գերեզմանի վրա. ծաղկեպսակներ՝ ապակե ծածկերով, կարգիզներ: Բայց ես շեղվեցի: Իսկ դա մեղք է... Նրանք կասեին, որ նա իր մեղքն է կոծկել, իր գաղտնիքն է խորը թաքցրել, գաղտնիքը սեռի, հա՛, հա՛, այսպես կասեին նրանք՝ հակառակ սեռի ներկայացուցիչները՝ գիտնական տղամարդիկ: Բայց ինչ անհեթեթություն է իր վրա բարդել նաև սեռի խնդիրները: Ո՛չ... ավելի շուտ այսպես է եղել: Քսան տարի առաջ, երբ նա անցնում էր Քրոյդոնի փողոցներով, կտորեղենի խանութի հայելանման ապակու մանուշակագույն ժապավենները, լուսավորվելով լուսամփոփերի վառ լույսով, գամեցին նրա հայացքն ու ուշադրությունը: Նա դանդաղում էր. արդեն վեցն անց կես էր: Եթե մի փոքր արագացներ, ապա դեռ տուն էլ կհասներ: Ձեռքը մեկնեց պտտվող դռանը:

Առևտուրը եռում էր: Ժապավենները ծփում էին իրենց գույների տարերքի մեջ: Նա հիացմունքով կանգ առավ, ձեռք տվեց մեկին, անցավ մյուսին՝ աչքի ընկնող ուռուցիկ վարդերովին, սակայն ընտրություն պետք չէր, գնելու կարիք էլ չկար. ամեն մի ծալք մի նոր հմայք էր պարփակում: «Մեզ մոտ մինչև յոթն է բաց». արդեն իսկ յոթն էր: Նա վազում էր, շտապում, ծախքում. ահա արդեն տանն էր. չափազանց ուշ էր: Հարևաններ... բժիշկ... փոքրիկ եղբայր... թեյնիկ... եռում էր... հիվանդանոց... մահացավ... թե՛ այդ ամենից սկիզբ առնող երկյուղ, գղջում: Ա՛հ, բայց ո՞ւմ են հարկավոր մանրամասները: Կարևորը հիմա այն է, որ նա չի կարող մաքրել հետքը: Հավերժական մեղքի զգացում. դա միշտ կլինի նրա թիակների արանքում:

«Հա՛, - ինձ գլխով անելով հաստատում է նա, - երևում է՝ ես հենց այդպես էլ վարվել եմ»:

Այդպես է վարվել, թե՛ չէ. իմ ինչ գործն է, ինձ այլ բան է հարկավոր: Կտորեղենի խանութի մանուշակագույն ժապավենները բավական են. թեկուզ անմիտ, թեկուզ ծեծված, բայց մեղքեր՝ ինչքան ասես, միայն դու ընտրիր, սակայն դրանցից շատերը (երևի մի անգամ էլ աչք գցեմ դիմացի նստարանին. նա դեռ նիրհում է, իսկ գուցե ձևացնում է: Նա գունատ է, հյուծված, պինդ հպած շրթունքներով, երևում է, որ կամա-

կոր է, այ դա բուրբուրովին չէի սպասում. սեռերին վերաբերող գաղտնիքներ այստեղ չկան), շատ շատերը քո մեղքերը չեն: Քո մեղքը չնչին է. այդ նրա արձագանքն է բարձր: Ահա բացվում են եկեղեցու դռները, փայտե կոպիտ նստարանները նրան իրենց գիրկն են առնում. նա ծնկի է գալիս գորշ սալաքարերին. աղոթում է, նա անընդհատ աղոթում է (հիմա էլ այստեղ է), ձմռանը, ամռանը, մթնշաղիս, արևազալին: Ու թափվում են նրա մեղքերը, թափվում են ու անէանում: Թափվում են ու... ընկնում են հետքի վրա: Ու հետքն ուռչում է, բոցավառվում ու շիկնում: Եվ այդ պահին նա ցնցվում է: Փոքրիկները նրան ձեռքով մատնացույց են անում: «Բոբն էլ այսօր ճաշի ժամանակ...»: Ա՛խ, տարեց կանանցից ահավոր բան չկա:

Հիմա դու չես կարող երկար աղոթել, պետք է շարժվել: Կրյուգերը հօդս ցնդեց ամպերի մեջ, ասես մի գորշ վրձին իր ամպագույնով սահեց նրա վրա, ամպագույն՝ խառնված սևի հետ, գավազան-փայտի մի ծայրն անգամ ցրվեց ահա: Ու միշտ էլ այդպես է լինում: Երբ հաջողվում է տեսնել նրան, զգալ նրա ներկայությունը, այդ պահին ինչ-որ մեկը մեջ է ընկնում ու խանգարում, ինչպես հիմա խանգարեց Հիլդան:

Որքան ես դու նրան ատում: Բայց չե՞ որ նա

հիմա անգամ սկսել է փակել բաղնիքի դուռը ուշ երեկոյից, իսկ քեզ հարկավոր է ընդամենը սառը ջրով լվացվել, հատկապես երբ ողջ գիշեր տանջվել ես անքնությունից ու թվում է, թե միայն այդ սառը ջուրը փրկություն կբերի: Նույնը կրկնվում է նաև նախաձաշին, այս անգամ Ջոնն ու երեխաները: Իսկ սեղանի շուրջ ամենաահավորն է. երբեմն նրանց շարքերին են միանում նաև իրենց ընկերները, անգամ ձարխոտերի հետևում հևարավոր չէ թաքնվել նրանց հայացքներից, իրենք էլ են ամեն ինչի մասին գլխի ընկնում: Դուրս ես գալիս, թափառում ծովափին. գորշ ալիքները ծփում են, թղթի կտորները պարում են քամու երգի տակ, կանաչ ցուցափեղկերի արանքից միջանցիկ քամիներն են խաղում, մի աթոռի համար երկու պենս են վերցնում, այ՛ թե թանկություն. կարելի է անգամ քարոզիչների ձայնին նորից ականատես լինել: Ահա՛ և նեգր... այ՛ այն մեկը, ինչ զվարճալին է: Ահա այնտեղ էլ մի մարդ՝ թութակներով. ինչ թշվառ փոքրիկ արարածներ են: Մի՞թե այստեղ չկա ինչ-որ մեկը, որը մտածում է Աստծու մասին. չէ՞ որ նա ուղիղ մեր գլխավերևում է, ալեհեր ամպերի վրա, գավազանը ձեռքին, բայց չէ՛, երկինքն ամբողջությամբ գորշ վերմակի տակ է, եթե անգամ մի փոքր

լույս էլ երևում է, ապա սպիտակ ամպերը իսկույն ծածկում են նրա դեմքը, իսկ երաժշտությունը. գինվորական շքախմբի ձայնն է դա, հետարբերքիր է՝ ինչ ձկնորսությամբ են նրանք այստեղ զբաղվում: Տեսնես բռնել են: Դե լավ, ինչ արած, հիմա ուղիղ հետ դեպի տուն. «Հետ դեպի տուն»: Իմաստալից խոսքեր են, անգամ այն մորուքավոր ծերունին կարող էր ասել այս խոսքերը, բայց ո՛չ, եթե անկեղծ, ապա նա ոչինչ էլ չասաց, սակայն ամեն բան իր իմաստն ունի. դռներին հենած ցուցափեղկերը, ցուցափեղկերին փակցրած անունները, զամբյուղների կարմրաթուշ խնձորները, վարսավիրանոցի պատուհաններից երևացող կանացի գլուխները, բոլորն ասում են՝ «Միննի Մարշ-նորից ջղաձգում,- ձուն էժանացել է»: Եվ այսպես միշտ: Ես նրան տանում էի դեպի ջրվեժ, դեպի խելացնորության տանող ամենաուղիղ արահետով, իսկ նա, ասես երագին հայտնվող մի ոչխարի հոտ, թեքվում է, փախչում, այն էլ՝ հենց աչքի առջևից: Ձուն էժանացել է: Հանցանքները, դժբախտությունները, հիացմունքները, խենթությունները խորթ են Միննի Մարշին, նա ամուր շղթայված է կյանքին, նա երբեք չի ուշանում ծաշից, երբեք անձրևը նրան առանց վերարկուի չի այցելել, նա երբեք չէր կարողա-

ևա մոռանալ, որ ձուն էժանացել է: Եվ ահա ևա արդեն տուն է հասել, կոշիկներն է սրբում շեմքի վրա:

Ես քեզ ձիշտ բացահայտեցի: Բայց մարդկային դեմքը, մարդկային դեմքը պատնեշված թերթի հաստ էջով, ավելին է պարունակում, ավելիին է դիմակայում: Հիմա բաց են նրա աչքերը, հայացքը սևեռված է դեպի... մարդկային այդ հայացքը... ինչպես ավելի ձիշտ նկարագրել. մարդկային հայացքը կտրում է, հեռացնում, բաժանում. մնում է դիպչես ցողունին ու թրթուռը բացվում է, այն թրթուռը, որը երեկոները ձախրում է դեղին ծաղկի շուրջ: Ծարժվիր, ձեռքդ բարձրացրո՛ւ, նտ քաշվիր, բարձրացիր, հեռո՛ւ գնա: Ես չեմ բարձրացնի ձեռքս: Ծախրիր, թող այդպես լինի, ձախրիր կյանք, հոգի, ոգի, ինչ էլ որ դու լինես Միննի Մարշի համար. ես էլ իմ ծաղկի վրա, բազե՝ մայրամուտի... ընդմիշտ միայնակ, այլապես ի՛նչ արժեք ունի մեր կյանքը: Թռչել, ձախրել մայրամուտին, ձախրել կեսօրին, ձախրել արևագալին: Ձեռքի մի շարժ առկայծեց, բարձրացավ: Ու նորից նստեց: Միայնակ: Բոլորի համար անտեսանելի, բայց ամեն ինչ տեսնող, իսկ նրա խորքում այնպիսի հանգստություն, այնպիսի գեղեցկություն: Ոչինչ չտեսնել, ոչինչ չզգալ: Ուրիշների աչքերը մեզ համար բանտախուց են, ուրիշների մտքե-

րը մեզ համար՝ վանդակներ: Քեզանից վերև օդ է, քեզանից ներքև՝ օդ: Եվ լուսինը, ն անմահությունը... Ա՛խ, կաթիլի նման ընկնում եմ գետնին: Դու էլ այդտեղ՝ քո անկյունում ես կաթիլի նման հանձնվում գետնին, դու, ինչպես ես քեզ անվանում, ո՛վ կին, Միննի Մամրշ, որքան գիտեմ քեզ այդպես ես դիմում, չէ՛: Ահա նա շղթայվեց իր ցողունին. բացեց պայուսակը, վերցրեց կեղևը. ձու՛, իսկ ո՛վ էր ասում, որ ձուն էժանացել է: Դո՛ւ, թե՛ ես: Հա՛, դու ասացիր տուն գնալու ճամփին, հիշո՛ւմ ես, այն ժամանակ այն ծերունին իր անձրևանոցը բացեց, թե՛ նա ուղղակի փռշտաց: Ինչ էլ որ այդտեղ պատահած լինի, մինևույն է, Կրյուգերն անհետացավ, ու դու էլ «հետ դեպի տուն» ուղղվեցիր ու շեմքին սրբում էիր կոշիկներդ: Հենց այդպես: Ու հիմա ծնկներիդ փռել ես թաշկինակդ ու նրա վրա գցում ես սրածայր կեղևի կտորները՝ քարտեզի մասնիկները... գլուխկոտրուկ: Ափսոս, որ ես չեմ կարող լուծել այն: Եթե միայն դու կարողանայիր հանգիստ նստել: Ծարժեցիր ծնկներդ, ու քարտեզը նորից քանդվեց: Անդերի երկայնքով մեկ անցնում ես, ձեղքում ես ձերմակ մարմարե քարերը, փռշիացնում ես իրենց ճանապարհին իսպանացիների հեծելազորը, պահակախմբի քարավանը՝ Դրեյքի ավարը՝ ոսկին և արծաթը: Բայց կվերադառնանք...

Ինչի՞ համար, ո՞ր... Նա բացեց դուռը, անձրևանոցը դրեց տեղում, դա բնական է, ինչպես և տապակայի հոտը՝ նկուղից եկող. կետ, կետ, կետ: Բայց այն, ինչ իմ ուժերից վեր է ոչնչացնել, այն, ինչ պարտավոր եմ ես անել՝ գլուխս կախ, աչքերս փակ, մարտիկի խիզախությամբ և ցուլի կատաղությամբ, իհարկե, այն ձարխոտերի հետևում կանգնած մարդիկ են՝ շրջիկ վաճառականները: Այս ամբողջ ժամանակ ես նրանց այդտեղ էի թաքցրել, հույս տածելով, հույս, որ նրանք ինչ-որ կերպ կփտեն, կամ էլ ավելի լավ մի տարբերակ՝ նորեն կհայտնվեն, այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև եթե պատմությունն իմ այս առավել զարգանա ու ձկունություն ձեռք բերի, ապա դրանից նրան կմիանա նաև ձակատագիրն ու ողբերգությունը, ինչը և բնորոշ է բոլոր պատմություններին, ապա իր այդ շարժման մեջ նա գուցե և կլանի մի երկու, ինչո՞ւ չէ՝ նաև երեք վաճառական և... «Թփերի հետևի վաճառականները հազիվ էին երևում»: Իսկ ձարխոտերի արանքից նրանք ընդհանրապես չէին երևում, ու դա ինձ շատ էր ուրախացնում. կարմիր և սպիտակ՝ ահա թե ինչն է ձգում, ահա թե ինչն է գրավում, բայց ձարխոտեր Իսթբըրնոմ, այն էլ դեկտեմբերին, և ինչո՞ւ հենց Մարշերի հյուրասենյակում, չէ՛, չէ՛, ձեռքս չի գնում. այս-

տեղ Մարշերին ավելի կսազեր չորացած դաշտածաղիկներ, պատատուկներ...

Գուցե և ծովը մի փոքր ավելի ուշ ինձ համար մի ազատ բույս գտնի. ես կսպասեմ: Բացի այդ հիմա ինձ տանջում է մի ցանկություն՝ թափանցել այս կանաչի ու ձենապակու միջով և նայել, տեսնել դիմացի տղամարդուն, ընդամենը մեկին, Աստված տա կարողանամ նրա հետ դիմանալ. չէ՞ որ նա Ջեյմս Մոգրիջն է, իսկ Մարշերը սովորաբար նրան Ջիմի էլ են ասում: (Մինևի, դու պետք է խոստանաս չշարժվել, չհեռանալ, մինչև ես այս հարցը չլուծեմ): Ջեյմս Մոգրիջը, որքան գիտեմ, զբաղվում է կոծակների վաճառքով, բայց դրանց ժամանակը դեռ չի եկել, խոշոր և մանր, ամրացրած երկար հաստ թղթերի վրա, մի մասը վառվում են, ասես սիրամարգի պոչ, մյուսները՝ դալուկ ոսկեգույն, մնացածներն էլ՝ լեռնային հախճապակուց ու վարդագույն քարերից, բայց, ինչպես արդեն ասացի, նրանց ժամանակը դեռ չի եկել: Նա ձամփորդող վաճառականներից է և հինգշաբթի օրերին այցելում է Իսթբլրն ու ձաշում Մարշերի հետ: Թուխ դեմք, մանր աչքերից նետվող կտրուկ հայացք, բայց դրա հետ մեկտեղ նրան հասարակ կամ սովորական էլ չես անվանի, բայց այն ախորժակը... (գուցե այսպես ավելի վստահելի է, նա աչքը չի էլ բարձրացնում Մինևի վրա, մինչև հացով չթաթախի ողջ սոուսը),

անձեռոցիկով մաքրեց բերանի անկյունները... չէ, այս ամենը արդեն իսկապես որ շատ հասարակ է, գուցե և ընթերցողը նման բաներ չի էլ սիրում, այս ամենն իմ սրտով էլ չէ:

Եկեք մի պահ էլ անցնեք Մոգրիչների ընտանիքի անդամներին ու նրանց էլ մտցնենք պատմության մեջ: Ահա այսպես, օրինակ կիրակի օրերին Ջեյմսը իր իսկ կամքով վերանորոգում է ընտանիքի բոլոր անդամների կոշիկները: Նա կարդում է «Ճշմարտություն» օրաթերթը: Բայց ո՞րն է նրա տարերքը: Վարդերով... Իսկ կինը գթության քույր է, շատ հետարբերքի է... ի սեր Աստծո, թույլ տվեք ինձ գոնե մի կնոջ անվանել այնպես, ինչպես ես եմ կամենում: Սակայն նա մտքի այն չձեռնած գավակներից է, այն ապօրինի ծնվածներից... բայց և այնքան սիրված ինչպես ծաղիկները: Ու նրանցից քանի-քանիսն են փոշիանում, մահանում ամեն մի գրված վեպի ավարտին, ամենալավերը, ամենասիրվածները... անթիվ են նրանք... Իսկ Մոգրիչն ապրում ու ապրում է իր համար: Սա կյանքի թյուրիմացությունն է: Ահա և Միննին, դիմացի նստարանին իր ձուն է ուտում, իսկ երկաթուղայինի այն մյուս ծայրում նա է... Լյուիսը: Մենք խոսեցինք Լյուիսից; Չէ, մենք Ջիմի մասին ենք խոսել: Իսկ հիմա ինչի համար է նորից ցնցվում Միննին:

Այնտեղ պետք է լինի Մոգրիչը՝ կյանքի

թյուրիմացությունը: Եվ կյանքն իր օրենքներն է թելադրում, կյանքն այդ խցանում է ուղիները, կյանքն այդ կանգնած է ձարխոտերի հետևում, կյանքն այդ բռնակալ է, հա՛, նա, բայց ոչ երբեք ինքնախաբեության հասնող պարծենկոտությունը: Չէ՛, չէ՛, հավատացեք, ես եկել եմ նրա մոտ բարի մտքով, Աստված գիտի, թե ինչ աներևույթ ուժ ինձ ձգեց այստեղ՝ նրա մոտ՝ ճեղքելով ձարխոտերն ու պատատուկները, քաշքշելով սեղաններն ու շարժելով շշերը: Եկա, որովհետև զգում էի նրա ամուր կրծքի, ուժեղ գրկի կարիքը, ինչ-որ մի հովանի գտնելու կարիքը, հպվել մարմնին, միայն թե ապավեն գտնել նրա գրկում՝ Մոգրիջ ամուսնու հոգում: Բայց անգամ մարմինն այդ ամուր թաքցրած է. կուրծքը՝ առաձիգ, ինչպես շնաձկան մարմինը, սլացիկ, ինչպես բարդին, կոնքերը՝ բողբոջող ճյուղեր, մաշկը՝ պինդ ձգված անջրանցիկ առազաստներ, իսկ այտերի կարմիր փոսիկները, սիրտը՝ հուժկու մի զարկ, մինչդեռ այդ ընթացքում միսն իր մուգ կտորներով զարեջուր է տեսչում ձգտելով նորից ներծծվել արյան մեջ. ահա վերջապես և աչքերը: Խոտերից այն կողմ նրանք ինչ-որ բան են տեսնում՝ սև ու սպիտակ: Նորից ուղղվում են ափսեի մեջ: Խոտերի հետևում նրանք մի տարեց կնոջ են տեսնում. «Մարշի քույրն է, բայց թե դեռ շատ հե-

ոու է Հիլդային հասնելու համար»: Հիմա աչքերն արդեն ուղղվեցին սփռոցին: «Մարշը պիտի իմանա, թե ինչ է կատարվել Մորիսների մոտ...»: Քննարկումն ավարտվեց... ահա և պանիրը... ու նորից ափսեի մեջ... շրջեցի հայացքս՝ այ թե վիթխարի ձեռքեր են... հիմա էլ դեպի դիմացի կնոջը: «Մարշի քույրն ընդհանրապես մի գրամ նման չէ եղբորը: Ծեր, խղճուկ կին է: Հավերիս, ինչպես որ հարկն է, պետք է կերակրել. այ, Աստված իմ, ասա, թե ինչու է նա ցնցվում: Ինչ-որ բան այնպես չասացի, այ թե հոգս են այս տարեց կանայք, իսկական հոգս, հոգս...»:

Հա՛, Միննի, գիտեմ՝ դու ցնցվում էիր, բայց մի քիչ սպասիր, նախ Ջեյմս Մոգրիջը:

Հո՛գս, հո՛գս, հո՛գս: Ինչ յուրօրինակ է հնչում: Ասես մուրձի հարված չոր տախտակին, ասես մի վիթխարի շնաձկան բաբախող զարկերակ, երբ ծովի ալիքները հարվածում են մեկը մյուսից հետո ու կանաչն ամպում է. «Հո՛գս, հո՛գս», սա տառապյալ հոգիների հուղարկավորման արձագանքն է. հանգստացնել է պետք նրանց ու նաև հրաժեշտ այս խոսքերով՝ «Բարով մնաս: Երջանիկ եղիր»: Այդ պահին. «Իսկ ձեզ ի՞նչ է հարկավոր», ու թեև Մոգրիջը կհասցնի իր պարտեզից նրա համար մի վարդ պոկել, բայց հետդարձ չկա ու չի էլ լինի: Իսկ հետո՛:

«Տիկին, դուք ուշանում եք գնացքից»։ չէ՛ որ նրանք չեն հապաղում:

Ահա, թե ինչպես է ընդունված ու ինչն է արմատացած տղամարդկանց մեջ. ահա, թե ինչպիսի խոսքեր են արձագանք առաջացնում, ահա և Սուրբ Պետրոսի տաճարը, ահա՛ նաև մեքենաները: Սակայն մենք դուրս ենք գցում մանրուքները: Ա՛խ Մոգրիջ, մի քիչ էլ մնացեք: Արդեն գնում եք: Այդ դո՛ւք էիք այսօր կեսօրին կառքով զբոսնում Իսթբըրնում: Այդ դո՛ւք էիք այն կանաչ արկղերով շրջապատված տղամարդը, որն այնքան փառահեղ էր բազմում, ասես սֆինքս լիներ, երբեմն էլ՝ այնքան սառն ու մեռյալ, որ միայն տեսքն անգամ հուղարկավորության ու դագաղի մտքեր էր առաջացնում. հա՛, ու որ միշտ էլ ձիապանն ու ձին էլ դիմացից կորչում էին մթնշաղի մեջ: Ասացեք, խնդրեմ, փակվեցին դռները: Մենք այլևս երբեք չենք հանդիպի: Բարով մնաք, Մոգրիջ:

Հա՛, հա՛, գալիս եմ, գալիս: Ուղիղ վերև: Ես ընդամենը մի պահ կուշանամ: Ինչ քառսային խառնաշփոթ սկսվեց իմ գլխում, և ինչ հորձանուտներ են ստեղծում այս հեղեղները: Ալիքները մռնչում են, ջրիմուռները տատանվում, այստեղ՝ կանաչ, այնտեղ՝ սև, ու հարվածում են ավազին, սակայն հետզհետե ամեն բան հանդարտվում է, թողնելով նստվածք, ինքն իրեն

ցրվում է ու պարզվում... և հանդարտություն: Աչքերի առջև բացվում են թափանցիկ վճիտություն և շուրթերն աղոթք են կերտում մեռած հոգիների հանգստության համար, նրանց համար, ում այլևս երբեք էլ չենք հանդիպի:

Ջեյմս Մոգրիջն այլևս չկա, նա ընդմիշտ հեռացել է: Դե ինչ, Միննի, դու ինչպե՞ս ես. «Ես այլևս այդ ամենը չեմ կարող տանել»: Եթե նա այդպես է ասել... թող տեսնեմ նրան: Նա թափ է տալիս ձվի կեղևները, որ ցրիվ են գալիս խորը թեքության մեջ: Հաստատ նա այդպես էլ ասել էր, երբ հենվել էր ննջասենյակի պատին՝ շոշափելով արևագույն վարագույրի ծայրի ելուստները: Բայց երբ ինքդ քեզ հետ ես խոսում, ապա ո՞վ է խոսակիցդ՝ թաղված հոգին, ոգին, որ ավելի ու ավելի խորն են տանում՝ դեպի ստորերկրյա գետնափոսեր, այն նույն «են»-ը, որն ընդունել է շղարշների թաքստոցը և լքել աշխարհը, գուցե և վախոտությունից, բայց ինչ-որ գեղեցիկ բան կա այն բանի մեջ, թե ինչպես էր նա, լապտերը թափահարելով, անընդմեջ վեր ու վար անում մթնշաղի մեջ: «Չէ՛, այլևս ուժ չունեմ,- ասում է ոգին,- իսկ այդ կերպարը ճաշի ժամանակ, իսկ Հիլդան, երեխաներն էլ հետը»: Աստված իմ, ո՞նց է նա հեկեկում: Այդ ոգին սգում էր իրեն բաժին ընկած խաչի համար, թափառող ոգին... նա տեսչում

էր ձուլվել գորգերին, որոնք օրըստօրե մաշվում են ու խունանում, բարականում ու բարականում, ասես ոտքերի տակից մայր հողն է հալչում ու փախչում իր հետ անէության գիրկը տանելով ն սերը, ն հավատը, ն ամուսնուն, ն երեխաներին, ն ով գիտի, թե էլ ինչ գեղեցկություններ ու շքեղություններ, երբեմնի պարմանուհու գայթակղություններ, բայց դրանք «ինձ համար չեն... ինձ համար չեն...»:

Ինչ է հետո մնում փքաբլիթներ, լոզոտ ծեր շուն: Ինձ թվում է՝ հույունքավոր անձեռոցիկները և ներքնազգեստը միակ շքեղություններն են: Իսկ եթե Միննի Մարշը վթարի ենթարկվեր, ու նրան հիվանդանոց տեղափոխեին, անգամ քույրերն ու բժիշկներն էլ այնտեղ կզարմանային: Ահա և քեզ հեռանկար, ահա և քեզ պայծառ միտք, ահա նաև տարածությունը՝ նրանց մեջ մի սև կետ՝ փողոցի ամենածայրում, մինչդեռ... մինչդեռ թեյն այնտեղ իր բուրմունքն է բուրում, իսկ փքաբլիթներն ուռչում են ջեռոցի ջերմից, իսկ շունը. «Բենի, տեղդ գնա, տես, թե մայրիկը քեզ ինչ է բերել»: Եվ նորից մատի տրորված ծայրով ձեռքդ ես առնում ձեռնոցդ, նորից մենամարտի ես կանչում սահմաններն անընհատ ընդարձակող հրեշին, խարազանող հրեշին, նորից պաշարման պարիսպներ ես կերտում և մոխրագույն բամբակյա թելով թել-

ված ասեղով այս ու այն կողմ ես տանում մեկ ներս, մեկ՝ դուրս, մեկ՝ աջ, մեկ՝ ձախ.... այստեղ-այնտեղ... ետ-առաջ... գործում ես մի սարդոստայն, որն անգամ Աստծու համար, շՆՇՆՇՆ. Աստծու մասին չմտածել: Ինչ ամուր կարկատան է: Կարկատան էլ չէ, այլ մի իսկական ասեղնագործություն: Թող ոչինչ էլ նրան չանհանգստացնի, թող լույսը մեղմ ու նուրբ տարածվի, իսկ ամպերը արտացոլեն առաջին իսկ բողբոջի կանաչ լույսը: Թող ձևձուլվը ճյուղին նստած գգվի տերևից կախվող անձրևի կաթիլին: Ինչո՞ւ բարձրացրիր աչքերդ: Ինչի՞ համար: Ձայն էր, թե՛ միտք: Տեր իմ: Նորից հետ եկք դառնում քո արարքի՛ն՝ հայելային ապակու մանուշակագույն ժապավենների՛ն: Ահա՛, Հիլդան է գալիս: Անարգված, հյուծված, վայ, վայ: Փակի՛ր դռանդ բաց ձեղքը:

Կարկատելով ձեռնոցը՝ Միննի Մարշն այն թաքցնում է արկղի մեջ և մի կտրուկ շարժումով այն մի կողմ հրում: Հայելուս մեջ տեսնում եմ նրա արտացոլանքը: Ծուրթերը պինդ փակված են: Դուռնը ցցած: Նա պատրաստվում է ամրացնել կոշիկների թելերը: Հետո... ձեռքը տանում է վզին: Ի՞նչ է պատկերված նրա կրծքազարդին: Եվ ընդհանրապես ի՞նչ է այստեղ կատարվում: Եթե ես մատույն չհասնեի երկնքին... զարկերակն արագացավ, մոտենում է

որոշիչ պահը, թելերը խաչաձևվում են, առջևում Նիագարան է: Հիմա՛ կամ երբեք: Աստված իմ, փրկի քեզ ու գթա: Առաջ: Խիզախիր: Հետ մի՛ նայիր, մի՛ ընդառաջիր: Նա արդեն դռան մոտ է. թույլ մի՛ տուր նրան նստել գլխիդ: Բաց դուռը: Ես քեզ հետ եմ: Առաջինը դու սկսիր: Նրա հետ մրցիր քո ուժը, այնպես արա, որ նա մնա դատարկության մեջ...

- Օհ՛, կներեք, այո՛, սա Իսթբըրնն է: Ես հիմա կօգնեմ ձեզ հասել դա: Թույլ տվեք փորձեմ ձեռքից: (Ամեն դեպքում Միլենի, թեկուզ և մենք ի ցույց չենք դնում, բայց ես բացահայտեցի քեզ, հիմա դու պարզ ես ինձ համար):

- Սա ձեր ամբողջ բեռն է:

- Չգիտեմ էլ ինչպես ձեզ շնորհակալ լինեմ:

(Բայց ինչո՞ն ես ինքդ քեզ հետ այդպես վարվում: Հիլդան չի գա քեզ դիմավորելու, Ջոնն էլ չի գալու, իսկ Մոգրիջը):

- Կներեք, ես ավելի լավ է իմ ուղեբեռի մոտ սպասեմ, այդպես ավելի ապահով է, բացի այդ՝ նա խոստացել է դիմավորել ինձ: Ահա՛ և նա՛ իմ տղան:

Նրանք հեռանում են միասին:

Ահա թե ինչ... ես ամբողջովին դատարկված եմ: Դե ինչ Միլենի, դու ավելի լավ գիտես... Տարօրինակ երտասարդ էր... Սպասիր: Ես կասեմ նրան. «Միլենի, տիկին Մարշ»։ Չնա-

յաժ ո՛վ նրանից գլուխ կհանի: Ահա՛ և օրենքի վերարկուն տարօրինակ կասկածանքով այս ու այն կողմ է գնում: Բայց ո՛չ, դա ձիշտ չէ, դա անհնար է... Տես, թե ինչպես է նա Միննիին մոտեցել, երբ նրանք հասան բակ... Միննիին իր տոմսն էր փնտրում: Ի՞նչ է կատարվում: Ու նրանք հեռանում են... հեռու... ձեռք-ձեռքի տված... ու դա իր հեռավորության հետ փլուզում է իմ երևակայությունների աշխարհը: Որտե՞ղ, ինչի՞ վրա եմ ես կանգնած, ի՞նչ է ինձ հայտնի: Դա բնավ էլ Միննիին չէ: Ու ոչ մի Մոգրիջ էլ երբեք չի եղել: Ո՞վ եմ ես ինքս: Ամեն բան սին է, ամենուր դատարկություն, կյանքը տերևաթափից մերկացել է, ինչպես աշևան դալուկ մի ծառ:

Եվ մի վերջին հայացք՝ նրանց. իջնում են մայթեզրից, Միննիին հետևում է նրա ամեն մի քայլին, մոտենում են մի շինության... և այդ վերջին հայացքը ինձ նորեն հիացմունքով է պատում, նորեն ոգեշնչումով շղթայում: Խորհրդավոր անծանոթներ: Մայր և որդի: Ովքե՞ր եք դուք: Ինչո՞ւ եք քայլում փողոցով: Այսօր որտե՞ղ եք քնելու, իսկ վա՛ղը: Արյունը ո՞նց է եռում իմ մեջ... Նորեն տարվել եմ: Կրկին բռնում եմ նրանց ճամփան: Մեքենաները վազում են այս ու այն կողմ: Թափվում է, ցրվում է պայծառ լույսը: Ցուցափեղկերի հայելային ապակիներ:

Մեխակներ... քրիզանթեմներ... մթնշաղի այգիների ծաղկափշեր... դռների մոտ կաթ վաճառողների սայլակներ: Ուր որ քայլում եմ, ձեզ եմ տեսնում, խորհդավոր անծանոթներ. տեսնում եմ, թե ինչպես եք թեքվում անկյունով, մայրեր ու որդիներ... դո՛ւք, դո՛ւք... և միայն դո՛ւք... Քայլերս արագացնում եմ և շարժվում ձեր հետքերով: Իսկ սա, ինձ թվում է, թե մի մեծ ծով է: Տեսարանը գորշ է, մոխրացած... շշնջում ու հեղեղվում են ալիքները: Եթե միայն ես ծունկի գայի, եթե հետևեի սովորույթներին՝ այդ հնագույն հրաշքներին, ապա միայն ձեզ, իմ անծանոթներ, միայն ձեզ կերկրպագեի... եթե բացեի գիրկն իմ, ապա միայն քեզ կշղթաեի իմ կրծքին, իմ պաշտելի աշխարհ:

ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌՅԱԿԸ

Ահա և մենք այստեղ ենք, և լոկ մի հայացքը դեպի սրահ բավական է համոզվելու, որ մետրոսներն ու տրամվայները, ինչո՞ւ չէ՛ նաև որոշ սեփական կառքեր, անգամ կհանդգնեմ մտածել, որ վտանգով հագեցած գնացքները ծայրից ծայր հենց սրա համար են ձեռքել ամբողջ Լոնդոնը: Այնուհանդերձ իմ տարակուսանքն ու կասկածամտությունը չեն լքում ինձ:

Եթե իսկապես ձիշտ է այն, ինչ նրանք են ասում, թե իբր Ռիչընթ Սթրիթի անցուդարձը փակված է և խաղաղություն է կնքված, թե իբր տարվա այս եղանակի համար այդքան էլ ցուրտ չէ, թե իբր նման գումարի դիմաց անգամ սենյակ չես վարձի, և իբր հարբուխի մեջ ամենազլխավորը, բորբոքումն է. եթե ինքս ինձ հիշեցնեմ, որ մոռացել էի գրել մառանի ձեռքի մասին, որ ձեռնոցս մոռացել էի գնացքում. եթե արյունակացական կապերն ստիպում են սեղմել ինձ պարզած ձեռքը, գուցե և առանց երկմտանքի ես...

- Յոթ տարի է ինչ չենք հանդիպել:
- Վերջին անգամ Վենետիկում էր:
- Իսկ հիմա որտե՞ղ եք ապրում:

- Դե ինչ, կեսօրից հետո ինձ լրիվ հարմար է, չնայած գուցե սա իմ կողմից մի փոքր հանդգնություն կարող է թվալ...

- Ես ձեզ միանգամից ձանաչեցի. դուք բնավ չեք փոխվել:

- Ինչ էլ ասես, միևնույն է՝ պատերազմն իր հետքը թողնում է:

...Եթե միտքդ ձեղքում են այնպիսի անկշմար նետեր (ըստ հասարակության օրենքների), որոնցից մեկը դեռ չարձակված՝ հաջորդն արդեն պատրաստ է, եթե այդ ամենից ջերմում ես ու դրան գումարած՝ հանգչում են լույսերը, եթե ամեն մի ասված բառը ձգձգվում է, ասես սպասում է ինչ-որ մի ուղղման, փոփոխման, և ի հեճուկս փոշմանելու, ևա դիպչում է ցանկություններին, զգացմունքներին և ձանձրույթթախծին, եթե ամեն ինչ այդպես է, մակերես են դուրս գալիս գլխարկները, մորթե շարՖերը, պարոնների կոստյումներն ու մարգարտապատ փոխկապները. մի՞թե հնարավոր է:

Իսկ կոնկրետ ինչը: Վայրկյան առ վայրկյան ավելի դժվար է դառնում ասել՝ ինչո՞ւ, ինչո՞ւ անկախ ամեն ինչից ես նստած եմ այստեղ՝ չկարողանալով անգամ վերհիշել, թե կոնկրետ ինչ և որտե՞ղ է վերջին անգամ տեղի ունեցել ինձ հետ:

- Շքերթը տեսա՞ք:

- Թագավորը մրսած տեսք ուներ:
- Չէ, չէ, չէ... Բայց կոնկրետ ինչ էր դա...
- Նա Մալմսբերրիում տուն է գնել...
- Ինչ լավ է: Նրան կարելի է շնորհավորել:

Իսկ ինձ մոտ տակավին հակառակն է, ես գրեթե համոզված էի, որ այդ կնոջը, ով էլ որ նա լինի, կարող եմ շատ հանգիստ՝ առանց երկմտանքի գրողի ծոցն ուղարկել իր բոլոր բնակարանների, գլխարկների, ձայերի հետ միասին ու նրան կարող էին միանալ նաև այստեղ նստած հարյուրավոր կանայք և տղամարդիկ՝ պաշտպանված մորթիների, մարգարիտների և բավականության վահաններով: Ես ինքս էլ հիմա հանգիստ նստած եմ ոսկեզօծ բազմոցին և փորփրում եմ թաղված անցյալը, ինչպես բոլորը, քանզի դատելով որոշ նշաններից, մենք բոլորս... եթե իհարկե չեմ խաբում ինքս ինձ, ապա մենք բոլորս փորձում ենք հիշել ինչ-որ բան, ինչ-որ մի անհետ բան գտնել: Եվ էլ ինչո՞ւ անհանգստանալ, ինչո՞ւ ձանձրանալ: Ինչո՞ւ անհանգստանալ կոստյումի ծայրերի համար: Ինչո՞ւ մտածել՝ զուտ ամրացնել ձեռնոցների կոճակները, թե՛ ոչ: Ինչո՞ւ հայացք նետել այն տարեց ու թառամած դեմքին՝ նկարի գորշ գույների վրա. մի վայրկյան առաջ այն այնքան կենդանի էր, աշխարհիկ, իսկ հիմա թախծոտ, ներամփոփ, ասես ստվերի հետքն է

վրան: Պատից այն կողմ երկրորդ ջութակն են լարում, չէ՛: Դուրս են գալիս. չորս սև կերպարներ՝ իրենց գործիքներով, նստում են սպիտակ քառակուսիների կողքին՝ ուղիղ լույսի հեղեղի տակ. և մի քանի վայրկյան և լարերը բաց կթողնեն իրենց ելևէջները: Միանվագ ու համերաշխ բացում, հուզմունք, և հայացք դիմացը նստած երաժիշտներին. առաջին ջութակահարը հաշվում է՝ մեկ... երկու... երեք...

Ծաղկում, ելևէջներ, սլացք և պայթյուն: Լեռան լանջին մի տանձենի: Հեղեղվում են շատրվանները, առկայծում կաթիլները: Իսկ Ռոնի ալիքներն ուժգնորեն հարվածում են, մխրձվում խորքերը, թե առնում կամուրջների վրա՝ չորս դին ցրելով ջրիմուռների վարսերը, և արծաթե ստվերաքող նետում դեպի հատակ փախչող ձկների վրա՝ շղթայված ներծծող ջրապտույտներով. սա դժվար հատված է... ծովի փրփուր, ջրի ցայտք և կեղեքում. հոսանքը այրվում է ու եռում, այն իր հորձանուտի մեջ է առնում դեղին ձային, պտտում է, պտտում ու ահա բաց է թողնում. ընկնում է վար, ներքև, բայց չէ՛, չէ՛, ահա նորեն վերևում գալարվում է ժապավենաձև... բարակ մի հետք, ինչպիսին ինքնաթիռն է թողնում. բարձր... բարձր... Որքան չքնադագեղ են նրանք՝ նրբանուրբ քայլեր, եթերային ժպիտ. ճախրում են նրանք ներքև՝

դեպի երկիր: Եվ չարածձի, բայց և փորձառու ձկնորսուհիներ՝ կամրջակների կամարների տակ նստած, անխ, բայց ինչն են այդ մեղք արարողները... այ թե ոնց են քրքջում, զվարձանում... այ... այ... այ...

- Իհարկե սա վաղ շրջանի Մոցարտն է:

- Այո՛, բայց մեղեդին, ինչպես և նրա բոլոր մեղեդիները քեզ նետում են հուսահատության մեջ, դե ուզում եմ ասել... հույս են ներշնչում: Ի՞նչ էի ուզում ասել... հան, ախր ամբողջ տագնապը հենց այս երաժշտության մեջ է: Այն քեզ ձգում է, քո մեջ պարելու, ծիծաղելու ցանկություն է առաջացնում, ուզում ես թխվածք համտեսել, պաղպաղակ, դառը չոր գինի ըմպել: Անհամեստ մի անեկդոտը, իհարկե խոսքը մեր մեջ, նույնպես տեղին կլիներ: Որքան մեծանում ես, այնքան ավելի ես սկսում սիրել անհամեստությունները... Հա, հա, հա... Այ թե ծիծաղս գալիս է: Բայց ինչից: Չէ՛ որ դուք ոչ մի զվարճալի բան էլ չասացիք, այն տարեց պարոնը նույնպես... բայց թույլ տվեք... թույլ տվեք... սո՛ւսսս...

Թախծոտ գետը նորեն տանում է մեզ: Լուսինը թափանցել է ուռենու հեզ ծյուղերից այն կողմ, ու ես քո դեմքն եմ տեսնում, քո ձայնն եմ լսում: Երբ անցնում ենք այդ ծառերի մոտով լսվում է նաև, թե ինչպես են թռչունները դայ-

լայլում: Ի՞նչ են նրանք շշնջում: Թախի՛ծ, թախի՛ծ... ուրախություն, ուրախություն: Նրանք ձուլված են իրար, ինչպես լուսնի տակ փայլփլող եղեգները: Իրար ձուլված, հանդուգն, վեր խոյացած, լցված ցավով, շղթայված տխրությամբ:

Նավակը խորտակվում է: Գույները պայծառացան ու սկսեցին տարածվել՝ դառնալով խունացած ու դալուկ ուրվական, և ուրվականն այդ կրակե մռնչյունով գալարվում է՝ երկատելով կիրքը իմ սրտից բխող: Նա երգում է ինձ համար, ցրում է թախի՛ծը, անէացնում խղճահարությունը՝ անարև ու անլույս աշխարհն այս դրոշմելով սիրով: Այն չի մեղմացնում, չի խլում քնքշությունը, բայց և մեծ ճարպկությամբ հյուսում է իր անգո սարդոստայնը, գործում է մինչև այն պահը, երբ դրանք նորեն ավելի ուժգին չեն բողբոջում... և անդորր... և թախի՛ծ... և ուրախություն... և հեծկտոց...

Էլ ինչի՞ համար թախծել: Ի՞նչ հարցնել: Մի՛թե անպատասխան հարցեր են մնում: Չէ՞ որ ամեն բան արդեն հարթված է, այո՛, հարթված է ամեն ինչ վարդի թերթիկների սավանի ներքո. հանգստի և անդորրի մեջ, պարուրված հենց այդ բուրավետ թերթիկներով: Թափվում են թերթիկները: Օ՛հ, ո՛չ, դադարեցին: Մի թերթիկ անշարժացավ անասելի բարձրության մեջ,

ինչպես մի փոքրիկ օդապարիկ՝ աներևույթ
ինքնաթիռից ներքև... և պտտվում է այն, դող-
դողում: Նա մեզ չի էլ հասնի:

- Ո՛չ, ո՛չ: Ես ոչինչ չնկատեցի: Ողջ տազնա-
պը կապված այս մեղեդու հետ լոկ անհեթեթ
երազանքներ են: Ասում եք՝ երկրորդ ջութակա-
հարը հեն է ընկել:

- Այս ծեր տիկին Մանրոուն շարժվում է դե-
պի ելքը: Խնդճ կին, տարեցտարի նա ավելի
վատ է տեսնում, իսկ հատակն այդտեղ այնքան
սահուն է:

Կույր ծերություն, ճերմակահեր Սֆինքս...
Հիմա, կանգնած մայրուղու վրա, դժկամ դեմ-
քով կանգնեցնում է կարմիր ավտոբուսը:

- Ինչ հիասքանչ է: Նրանք աստվածային
են նվագում: Որքան, որքան, որքան...

Չոսկրացած լեզու: Ինքնին դատարկու-
թյուն: Կողքս նստած կնոջ գլխարկի փետուրնե-
րը փարթամ են, գունագեղ ու գերող, ասես
մանկական խաղալիքը: Վարագույրի անցքից
իր կանաչով բոցկլտում է դժգույն տերևը: Անա-
սելի տարօրինակ է և անասելի դուրեկան:

- Որքան, որքան, որքան... 2222ը:

Խոտերի վրա՝ մի սիրահար գույգ:

- Եթե, տիկին, համաձայնեք ընդունել իմ
ձեռքը...

- Պարոն, ես ձեզ իմ սիրտն էլ կվստահեի:

Ավելին, մենք մեր մարմինները լքել ենք հանդիսության սրահում: Սրանք լոկ ստվերներ են, ստվերները մեր հոգիների:

- Նշանակում է՝ հիմա մեր հոգիներն են գրկախառնվում:

Կիտրոններն ու դափնիները մենամարտում են: Կարապը հեռանում է ափից ու երազկոտ լողում հոսանքն ի վեր:

Հետո ի՞նչ: Նա ուղեկցեց ինձ միջանքով և շրջվելուց տրորեց զգեստիս ասեղնագործ փեշը: Ես բղավեցի. «Ա՛յ»: Կանգ առա, կռացա, էլ ի՞նչ կարող էի անել: Իսկ նա մերկացրեց թուրը ու այնպիսի դեմք ընդունեց, որ ցանկացածին կձեղքեր ու կանցներ... ու գոռաց. «Խենթություն է, խենթություն»: Եվ ես կուչ եկա, իսկ Արքայազնը, որն այդ ընթացքում պատուհանի գոգին ինչ-որ բան էր գրում մագաղաթի վրա, դուրս եկավ՝ թասակը գլխին, մորթեպատ կոշիկները հագին, պոկեց պատին կախված Իսպանիայի թագավորի նվիրած սուսերը և... այդ պահին ես իսկույն փախա, վրաս այս վերարկուն զցեցի, որ զգեստիս պատառվածքը չերևա ու միանգամից հեռացա... Դե լսիր: Եղջերափողեր...

Պարոնն այնքան սիրով էր պատասխանում տիկնոջը, իսկ նա այնպես էր թռչկոտում աստիճանների վրա, և նրանք այնքան սիրով ու

սրամտորեն էին փոխանակում քնքշանքի խոսքերը, որ անգամ այդ խոսքն էր դառնում կրքի հոգոց, կորցնում ամեն մի բառը, բայց միտքը մնում էր նորից պարզ՝ սեր, ծիծաղ, ճախրանք, երկնային լազուրի օրհնություն, արծաթե եղջերափողերի շառաչյուն՝ հեռվից ժայթքող... մոտենում է, մոտենում է ու ասես այգն է ավետում կամ հայտնում սիրահար զույգի փախուստի մասին: Ամենն այս երջանկության փրփուրներով է շղարշում այդ քնքշությունները:

Կանաչազգեստ պարտեզը, լուսնի ավազանը, կիտրոնները, սիրահարները, ձուկը. այս ամենը հօդս են ցնդում մառախլապատ երկնքում, նրանց դիմաց ասես եղջերափողեր լինեն, շեփորներ՝ հնչեղ ու զրնգուն: Եվ դրանք միասին կերտում են այնտեղ ձերմակ կամարներ՝ ապավինված մարմարե սյուների բազկին. հաղթանակի որոտ: Ծաչյուն և շառաչյուն: Հաստատուն վիճակ և ամուր արմատներ: Միլիոնների երթ: Իրարանցումն ու քառսն անէացման են դատապարտված: Եվ քաղաքը, ուր գնում ենք մենք, քարից չէ, և ոչ էլ մարմարից, այն կախված է անէության մեջ, աներեր կանգնած, և ո՛չ մի ժպիտ, ո՛չ մի դրոշ նրան դեմ չեն գնում: Թո՛ղ որ հանգչի ձեր հոյսը, զի իմ ուրախությունը թառամում է անապատում. բացահայտ հարձակում: Մերկ են սյուները. անխիղճ,

լոկ առկայծում են ու խունանում: Ու ես կողմնորոշվում եմ, ես այլևս ոչինչ չեմ ուզում, միայն երազում եմ հեռանալ, գտնել իմ փողոցը, ճանաչել տները, բարևել կարմրաթուշ թմբիկ կնոջը և դուռը բացելուն պես ասել նրան. «Ինչ աստղագարդ գիշեր է»:

- Բարի գիշեր, բարի գիշեր: Դուք այս կողմ եք գալիս:

- Ափսո՛ս: Ա՛յն կողմ:

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՅԳԻՆՆԵՐ

Օվալաձև ծաղկաթմբից ավելի քան հարյուր ցողուններ էին գալարվում մայր հողը գրեթե գրկած՝ բողբոջելով ու փթթելով, ասես սրտաձև տերևների կամարներ կամ էլ կույզ եկած լեզվակներ լինեին՝ ծաղկաբաժակի հենց գագաթին իսկ վառելով կարմիր, կապույտ, դեղին թերթերի կրակներ՝ պատված ծաղկի խիտ պուտերով, իսկ կարմիր, կապույտ և դեղին մթնշաղի ներքո բաժակի հատակից վեր էր խոյանում մի տոկուն բողբոջ՝ ոսկեգույն ծաղկափոշուց ճոճոռացող և գրեթե կորացած գլխիկով: Տերևները խոշոր էին, նրանք արհամարհում էին ամառային քամին, իսկ երբ շարժվում էին, կարմիր, կապույտ և դեղնավուն կրակներ էին նետում մեկմեկու՝ գետինը ծածկելով լույսի անասելի մենապարով: Գույներն այդ մեղմորեն զգվում էին լեռնային հայելանման բյուրեղների, մեկ էլ խխունջի մոխրագույն ոլորապտույտ ելուստներով պատյանին, կամ էլ հանկարծ, ընկնելով անձրևի կաթիլի մեջ, հրաշեկ կարմիրի, կապույտի և դեղինի մի այնպիսի պայթյուն էին ստեղծում, որ թվում էր, թե ջրի նրբանուրբ շերտերը չեն դիմակայի ու հազար

մասի կբաժանվեն: Բայց անգամ մեկ վայրկյան հետո կաթիլն այդ հրաշեկ նորից դառնում էր արծաթ-մոխիր, իսկ գույներն իրենց խաղն էին շարունակում հյութալի տերևի վրա՝ մերկացնելով նրա խորը թաքցրած երակների շավիղները. հետո նորից փախչում էին ու նորից լուսավորում տերևների ներքո սփռված սրտաձև, կամ էլ կույզ եկած լեզվակների տեսքով կանաչը: Հետո քամու առավել հանդուզն մի հոսանք ժամանեց և, խաթարելով վերևում ամեն ինչ, ցրեց երփնաթույր կրակե լույսերը, որոնք դիպան հուլիսյան Թագավորական այգիներում զբոսնող կանանց ու տղամարդկանց աչքերին:

Այս տղամարդկանց ու կանանց կերպարները շարժվում էին ծաղկաթմբի շուրջ, ասես մի տեսակ տարօրինակ քառասային հորձանուտի մեջ լինեին՝ նման ձերմակ ու կապույտ թիթեռնիկների, որոնք գեղանի ճախրանքով պտտվում էին մի ջրափոսից մյուսը: Տղամարդը քայլում էր դիմացից՝ անփույթ ու թեթև քայլվածքով, մինչդեռ կինը քայլում էր առավել նպատակասլաց և միայն մեկընդմեջ շրջվում էր, որ տեսնի՝ հո շատ հետ չէ՞ն ընկել երեխաները: Տղամարդը քայլում էր դիմացից միտումնավոր, չնայած գուցե և առանց գիտակցելու, քանզի նա ուզում էր հանգիստ խորհել:

«15 տարի առաջ ես Լիլիին այստեղ էի բե-

րել,- մտածում էր նա,- մենք մոտավորապես այնտեղ էինք նստել՝ լճի մոտ, և ես նրան երկար-երկար թախանձում էի դառնալ իմ կինը: Շատ շոգ էր: Իսկ մեր գլխավերևում անդադար պտտվում էր ձպուռը, որքան վառ է իմ մեջ տպավորվել այդ ձպուռը, և նաև կոշիկը՝ խորանարդաձև արծաթե ձարմանդով: Իմ խոսելու ընթացքում ես նայում էի այդ կոշիկին, ու երբ Լիլին անհամբերությամբ արձագանքեց, ես առանց հայացքս իսկ փոխելու էլ գիտեի, թե նա ինչ է պատասխանելու: Թվում էր՝ նա անձնավորվել էր այդ կոշիկի մեջ: Իսկ իմ սերը, իմ կիրքը ձուլվում էր ձպուռին. չգիտեմ՝ ինչն էի մտածում, որ եթե նա նստի այն այնտեղ, այն կարմիր ծաղիկով լայն թփի վրա, անխ, եթե միայն ձպուռը նստի այդ թփին, ապա Լիլին հիմա ինձ կասի «Այո», բայց ձպուռը պտտվում ու պտտվում էր, ու այդպես էլ ոչ մի տեղ չնստեց. դե իհարկե, փառք Աստծո, այլապես ես հիմա զբոսնելիս կլինեի՞ այստեղ Էլեոնորայի ու երեխաների հետ»:

- Ասա ինձ Էլեոնորա, երբեք մտածո՞ւմ ես անցյալի մասին:

- Ինչն է ես հարցնում, Սայմըն:

- Որովհետև ես հիմա մտածում էի դրա՝ անցյալի մասին: Մտածում էի Լիլիի մասին, մի կնոջ, ում հետ կարող էի ամուսնանալ... Դե,

ինչ ես դու լռում: Քեզ դուր չի գալիս, որ մտածում եմ անցյալի մասին:

- Չէ, ինչո՞ւ, ինչո՞ւ ինձ դուր չպիտի գա, Սայմըն: Չէ՞ որ ամեն ոք էլ մտածում է անցյալի մասին այն պահերին, երբ այգում է, որտեղ ծառերի տակ պառկած են կանայք և տղամարդիկ: Միթե նրանք մեր անցյալը չեն, և այն ամբողջը, ինչ մնում է այդ անցյալից, լոկ այս տղամարդիկ ու կանայք են, այս ուրվականները ծառերի տակ... մեր երջանկությունը, մեր կյանքը:

- Իսկ ինձ համար... լոկ կոշիկը՝ արծաթե խորանադաձև ձարմանդով և ձպուռը...

- Իսկ ինձ համար... համբույրը: Պատկերացրու, թե ինչպես վեց փոքրիկ աղջնակներ կանգնած են պատկերակալների դիմաց, քսան տարի առաջ, լճի ափին և նկարում են ջրաշուշաններ, դա առաջին անգամն էր, որ ես տեսա կարմիր ջրաշուշաններ: Ու հանկարծ մի համբույր, այն այստեղ՝ վզիս: Դրանից հետո ամբողջ օրը ձեռքս դողում էր, չէի կարող նկարել: Ես հանեցի ժամացույցս ու մտապահեցի ժամը, այն ժամը, որ ինձ կարելի էր մտածել համբույրի մասին, լոկ հինգ րոպե, քանզի այն չափազանց թանկ էր ինձ համար, մի համբույր ձերմակահեր պառավից գորտնուկոտ քթով, իմ կյանքում պատահած համբույրներից ամեն

նազվխավորը: Արագացրո՞ւ Բերըլին, արագացրո՞ւ Հյուրերտ:

Նրանք անցան ծաղկաթմբի կողքով ու գնացին առաջ, հիմա նրանք չորսն էլ միմյանց կողք-կողքի են և շուտով դարձան փոքրիկ, աննշմար ու կիսաթափանց այդ ծառերի մեջ, այդ խոշոր ու դողդողացող արևի շող-հետքերի մեջ, որոնք, խաղալով ստվեների հետ, առանց շտապելու լողում էին նրանց մեջքին:

Օվալաձև ծաղկաթմբում խխունջ կար, որի պատյանը գեթ մի քանի վայրկյան առաջ խաղում էր կարմիր, կապույտ և դեղին երանգների հետ, հիմա ահա նա մի փոքր շարժվեց պատյանի տակ ու դժվարությամբ սողաց հողի փոշեհատիկների վրայով, որոնք էլ իրենց հերթին էին պոկվում ու ցած գլորվում: Երևում էր, որ նա իր առջև ինչ-որ նպատակ ուներ, որով նա տարբերվում էր այն տարօրինակ, խոշոր ու անկյունաձև կանաչ միջատից, որը փորձում էր առաջ շարժվել, հետո մի պահ քարացավ իր երկարավուն բեղիկներով, ասես մտորում էր ու հանկարծ նույն արագությամբ ու անհասկանալիորեն հետ շարժվեց: Կանաչագեղ լճերի խոռոչները, շագանակագույն քարափները, սարահարթները, ծառերը, որոնք տարուբերվում են արմատից մինչև գագաթ, ոլորաձև մոխրագույն քարերի վրա, բարակ խշխշացող կտորի

շրջանները, այս ամենը ընկած էր խխունջի ճանապարհին՝ մի ցողունից մյուսը. ահա և սպասված նպատակը: Մինչև նա մտածում էր շրջանցել կլորացած չոր տերևը, թե՛ անցնել այն ձեղքելով, ծաղկաթմբի մոտ նորից լսվեցին ոտնածայլներ:

Այս անգամ երկուսն էլ տղամարդ էին: Նրանցից մեկի դեմքը, որն ավելի երիտասարդ էր, լցված էր, կարելի է ասել՝ անգամ չափազանց հանդարտությամբ: Գլուխը բարձրացնելով՝ նա կտրուկ նայում էր իր դիմաց, մինչև նրա ուղեկիցը խոսում էր, բայց ուղեկցի լռելուն պես նա նորից իջեցնում էր հայացքը, երբեմն էլ երկար լռելուց հետո պատասխանում էր մի երկու բառ, իսկ շատ հաճախ էլ բնավ ձայն չէր հանում: Երկրորդը՝ տարեց տղամարդը, տարօրինակ կտրուկ և անհամաչափ քայլվածք ուներ. նա թափահարում էր ձեռքերը և ցնցում գլուխը, ինչպես մի անհամբեր բեռնաձի, որը ձանձրացել էր սպասել շենքի մոտ, ուղղակի նրա մոտ այդ շարժումներն անխմաստ էին ու չմտածված: Նա խոսում էր առանց ընդմիջման, ինքն իրեն ժպտում էր ու նորից խոսում, ասես սեփական ժպիտը իր իսկ խոսքի պատասխանը լիներ: Նա խոսում էր հոգիների մասին, մեռած մարդկանց ոգիների մասին, որոնք հիմա էլ, ըստ նրա խոսքերի, պատմում էին բավականին

խորհրդավոր բաներ դրախտի կյանքի մասին.

- Ըստ հին ժողովուրդների՝ դրախտը Ֆեսալիան էր, Ուիլյամ, իսկ հիմա՝ պատերազմից հետո, ոգեղեն մարմինները թափառում են լեռներում՝ որպես որոտընդոստ կայծակ,- նա կանգ առավ, ականջ դրեց ինչ-որ բանի, ժպտաց, թմփթմփացրեց գլխով ու շարունակեց,- վերցնում ես փոքրիկ էլեկտրական մարտկոց և մի կտոր ռետին լարը մեկուսացնելու համար... մեկուսացնել... անջատել... Ինչևէ, սրանք մանրուքներ են, ի՞նչ կարիք կա խոսել նման բաներից, որոնցից ոչ ոք գլուխ չի հանում: Կարձ ասած՝ հարմարավետորեն տեղադրում ես ամբողջ այդ մեխանիզմը մահձակալի գլխավերևում, ասենք, օրինակ, շքեղ լաբապատ հարդասեղանիկի վրա: Աշխատողները տեղադրում են այդ ամենը, ինչպես որ հարկն է, ըստ իմ ցուցմունքների, ու այդ ժամանակ այրին մոտեցնում է ականջն ու կանչում ոգուն, ինչպես որ պայմանավորված է ու որոշված: Կանայք: Այրիներ: Սևազգեստ տիկնայք...

Այդ պահին, հաստատ նա հեռվում նկատեց կանացի զգեստ, որը ստվերների ներքո թվում էր մուգ բոսորի խփող սև: Նա հանեց գլխարկը, ձեռքը դրեց սրտին ու վազեց նրա հետևից՝ թթի տակ ինչ-որ բան փնթփնթալով և ձեռքերը հուսահատ տարուբերելով: Բայց Ուիլյամը բռնեց

Նրա թևքից ու ձեռնափայտի ծայրով ցույց տվեց ծաղիկը, որպեսզի շեղի նրա ուշադրությունը: Խառնաշփոթ վիճակի մեջ լինելով՝ նա նայեց ծաղկին. ծերուկը խոնարհվեց ու ականջը մոտեցրեց ծաղկին, հետո, ասես իր լսածին ի պատասխան, սկսեց պատմել Ուրուզվայի անտառների մասին, որտեղ նա հարյուր տարի առաջ ճանապարհորդում էր Եվրոպայի ամենաչքնաղ կնոջ ուղեկցությամբ: Դեռ երկար լսվում էր նրա փնթփնթոցը Ուրուզվայի անտառների մասին՝ պատված արևադարձային վարդերի թփերի հարթ նեկտարով, սոխակների, ջրահարսերի և ծովում խեղդված կանանց մասին, իսկ Ուիլյամը տանում էր նրան հեռու ու հեռու, և ամեն մի քայլի հետ ավելի ուժեղ էր վառվում նրա աչքերի համբերատար տխրությունը:

Գրեթե այդ նույն պահին, նրանց հետևից անցնում էին երկու տարեց կանայք (այնքան մոտ, որ արդեն ծերուկի շարժումները կարող էին տարօրինակ թվալ), տեսքից կարելի էր ասել, որ ոչ հարուստ, մեկը՝ գեր ու դանդաղ կոտ, մյուսը՝ առույգ և կարմրաթուշ: Խենթության նշանները, որոնք մթանգնած գիտակցության նախադրյալներն են, հատկապես ունևոր մարդկանց մոտ, նրանց համար, ինչպես և նրանց տեսակի մյուս բոլոր մարդկանց համար, մի տեսակ անհավանական հետարքրք-

րութիւն և տարվածութիւն էին առաջացնում. սակայն նրանք իրարից բավականին հեռու էին քայլում, որպէսզի որոշեին՝ ծերուկը խէնթ է, թէ՛ իսկապէս ցնորվածի մեկն է: Լուռ ու ուշադիր զննելով նրա թիկունքը, հետո տարօրինակ ու խորամանկորեն իրար նայելուց հետո՝ նրանք նորից սկսեցին իրենց բավականին դժվար գրոյցը՝ անհասկանալի բառերով.

- Նէլ, Բերտ, Լուի, Սես, Ֆիլ, հայրը, նա խոսում է, ես խոսում եմ, իսկ նա, իսկ ես, իսկ ես ասում եմ...

- Իսկ իմ Բերտը, քոյրը, Բիլը, պապիկը, ծերուկը, շաքարը... Շաքար, ալյուր, ապխտած ձուկ, կանաչի, շաքար, շաքար, շաքար:

Գեր կինը խոսքերի փարթամ հոսանքի միջից նայում էր, թե՛ ինչպէս հողից սառնորեն վեր են խոյանում ծաղիկները՝ ուղիղ ու անխռով, ու դեմքը նրա լցվում էր անհասկանալիութամբ: Ծաղիկներն այդ երևում էին նրա աչքերին այնպէս, ինչպէս յուղե մոմակալը կերևար ծանր քնից արթնացած մարդուն, մոմակալը, որը նորովի ու անսովոր էր իր լույսն արտացոլում. դու բացում ու փակում ես աչքերդ ու նորից տեսնում ես այդ յուղե մոմակալը, այդ պահին հենց նոր ես արթնանում ու նայում մոմակալին՝ առանց իսկ դիմադրելու, որ չթերթես աչքերդ: Այդպէս էլ այդ վիթխարի կինը կանգ

առավ օվալաձև ծաղկաթմբի մոտ և դադարեց անգամ ձևացնել, որ լսում է իր ընկերուհուն: Բառերն անցնում էին նրա կողքով, իսկ նա մնում էր կանգնած՝ հանդարտ այս ու այն կողմ ձոճվելով ու անթարթ ծաղկին նայելով: Հետո նա ասաց, որ վատ չէր լինի մի հարմար տեղ գտնել ու թեյ խմել:

Խխունջն արդեն մտածել էր բոլոր ուղիները նպատակին տանող, որ ոչ շրջանցի չոր տերևը, ոչ էլ անցնի նրա վրայով: Կարելի էր այլևս չխոսել այդ մասին, թե որքան դժվար է բարձրանալ տերևի վրա, նա կասկածում էր, որ այդ բարակ կտորը, որն այդքան սպառնալից ցնցվում ու խշխշում է իր կոտոշների անգամ մի թեթև հպումից, կարող է դիմակայել նրա քաշին, քանզի տերևը մի ծայրից այնքան էր կռացել, որ մի հարմար մուտք էր ստեղծել: Նա գլուխն այդտեղ մտցրեց և ծայրաստիճան ուշադրությամբ սկսեց զննել բարձր շագանակագույն տանիքը՝ փոքր-ինչ հարմարվելով սառնաշունչ շագանակե մթնշաղին, այդ ընթացքում դրսում խոտերի վրայով ևս երկու հոգի անցան: Այս անգամ երկուսն էլ երիտասարդ էին, երիտասարդ մի զույգ: Նրանք պատանեկության ծաղկման երջանիկ տարիքում էին կամ էլ այն տարիքում, որն հաջորդում է պատանեկության ծաղկմանը, երբ նրբանուրբ վարդագույն կոկո-

և ը դեռ չի դուրս եկել իր առաձիգ պատյանից, երբ թևերը թիթեռնիկի արդեն աճել են, բայց դեռ անշարժ փայլվում են արևի տակ:

- Լավ է, որ այսօր ուրբաթ չէ,- ասաց տղան:

- Ինչո՞ւ, միթե դու սևահավատ ես,- հարցրեց աղջիկը:

- Ուրբաթ օրերին մուտքն արժի վեց պենս:

- Հետո ինչ: Միթե սա չարժի վեց պենս:

- Ի՞նչը «սա»: Ի՞նչ նկատի ունես «սա» ասելով:

- Դե... ամեն ինչը... մի խոսքով, դու հասկանում ես, թե ինչ նկատի ունեմ:

Այս խոսքերից ամեն մեկին հաջորդում էր երկար լռությունը... արտաբերվում էին անորոշ ու անիմաստ: Երկուսով կանգնել էին ծաղկաթմբի ծայրին և միասին սեղմում էին նրա անձրևանոցը, որի ծայրը խորը մխրձվել էր փափուկ հողի մեջ: Այն, որ նրանք այսպես կանգնած էին՝ իրար ձեռք-ձեռքի տված, մի անսպասելի ձևով արտացոլում էր նրանց զգացմունքները. անգամ այդ կարճ, աննշան խոսքերն էին ինչ-որ բան արտահայտում, խոսքերն այդ ունեին կարճ թևեր, իմաստի ծանր բեռն անզոր էր նրանց հեռու քշել, ու դրա համար նրանք անփութորեն իջնում էին շուրջը պատած իրենց իսկ սովոր առարկաների վրա,

բայց որքան կարևոր են թվում նրանք առաջին իսկ անփորձ հպումից: Եվ ո՞վ գիտի (մտածում էին նրանք՝ միասին պահելով անձրևանոցը) ինչ անդունդներ են թաքնված նրանց հետևում, ինչպիսի՞ փայլփլող սառցադաշտեր են ընկած այնտեղ՝ արևի տակ, նրա մյուս կողմում: Ո՞վ գիտի: Ո՞վ է երբևէ դա տեսել: Անգամ այն ժամանակ, երբ աղջիկը հարցրեց, թե Թագավորական այգում ինչպես են թեյ մատուցում, տղան զգաց, որ նրա խոսքերի ետևում թաքնված են մշուշապատ ուրվագծեր՝ վիթխարի և խորհրդավոր: Դանդաղորեն ցրվում էր մշուշն ու բացվում էր... ծի Աստված իմ, ինչ տեսարան էր, սպիտակ-սպիտակ սեղաններ և մատուցողուհիներ, որոնք նայում էին սկզբում աղջկան, հետո տղային, և հաշիվը, որը նա պատրաստվում էր փակել հետևյալ երկու շիլինգանոց կոպեկով, իրական է, այս ամենը ձիշտ է, համոզվում էր ինքն իրեն՝ գրպանում շոշոափելով կոպեկը. ամեն ինչը իրական է, բացի նրանց երկուսից: Բայց այս անգամ դա էլ սկսեց նրան թվալ իրական: Իսկ հետո. չէ՛, անհնար է նստել ու սպասել. նա կտրուկ մի շարժումով քաշեց անձրևանոցը գետնից, նա չէր համբերում գտնել մի տեղ, որտեղ կարելի էր թեյ խմել՝ բուլորի հետ, բուլորի նման:

- Ե՛կ, Թրեյսի, գևանք թեյ խմելու:

- Բայց այստեղ որտե՞ղ կարող ենք թեյ խմել,- հարցրեց աղջիկը դողդոջուն ձայնով: Նա ոչինչ չտեսնող հայացքով նայեց շուրջն ու շարժվեց դեպի իրենց գրավող կանաչ մարգագետնի հորձանուտը՝ անձրևանոցի ծայրը պտտելով խոտերի վրա, բռնակը ձեռքի մեջ աջ ու ձախ տարութերելով և մոռանալով թեյի մասին. նրան ինչ-որ աներևույթ ուժ էր ձգում մեկ այս կողմ, մեկ այն կողմ, նա հիշում էր խուլորձների, ծաղկադաշտի ձնձղուկների մասին, չինական եղանակի... և ալ կարմիր թռչնակի փոքրիկ փետուրով: Տղան առաջ էր տանում նրան:

Ու այսպես զույգերը մեկը մյուսին հաջորդելով ու հնազանդվելով աննպատակ ու անփույթ շարժման միաձուլվին՝ անցնում էին ծաղկաթմբի կողքով ու հետզհետե կորչում էին ծաղկաթմբի կանաչակապտավուն մշուշ-պատրանքի մեջ. սկզբում նրանց մարմինները կյութեղեն էին, թափանցիկ ու անգույն, մինչև ամբողջությամբ կծուվելին ու կանխանային կանաչակապտավուն մառախուղի մեջ: Ծատ շոգ էր: Այնքան շոգ էր, որ անգամ կեռնեխն էր ցատկոտում ծաղիկների ստվերի տակ, որպես մի կայտառ թռչնակ, որը երկար-երկար անշարժանում էր ամեն մի երկրորդ ցատկից հետո, ձերմակ թիթեռնիկները չէին ձախրում թմբերի վրա, այլ մենապար էին բռնել կանգնած տե-

ղում մեկը մյուսի վրա, այնպես որ խոշոր ծաղիկների գլխավերևում փայլփլող ձերմակ ժապավեններ էին թևածում, ինչպես փշրված մարմարե սյուներ. սրահի ապակե տանիքն այնպես էր հուրհրատում, ասես արևի ոսկով պատված հրապարակում բացվել էին հարյուր հրաշագեղ կանաչ անձրևանոցներ, իսկ ինքնաթիռի աղմուկը գլխավերևում ստիպում էր մտածել, որ այն բխում էր ամառային բարկերկնքի հոգուց: Դեղին և սև, վարդագույն և ձերմակ կերպարներ՝ տղամարդկանց, կանանց և երեխաների, այդ կերպարները մի ակնթարթով առկայծեցին հորիզոնում ու հետո, երբ կանաչին նիրհած դեղին արեգի լույսը մխրձվեց աչքերի մեջ, նրանք ցնցվեցին ու թաքնվեցին ծառերի ստվերների տակ՝ ջրի կաթիլների նման գոլորշանալով դեղնականաչավուն օդի մեջ ու իրենց անէացումով օդի այդ գույնին վրձնելով մի քիչ էլ կարմիր և կապույտ: Թվում էր, թե այն ամենը, ինչ ծանր էր ու ծավալուն, ընկել ու ձուլվել էր հողին՝ քարանալով տապից, սակայն ձայները թռչում էին այդ անշնչացած մարմիններից, ինչպես կրակե լեզուներն են բոցկլտում հաստափոր մոմերի վրա: Ձայներ: Այո՛, ձայներ... Անբարբառ ձայներ, որ լռությունը ձեղքում են այնպիսի քաղցր երանությամբ, այնպիսի կրքով կամ էլ, եթե դրանք մա-

նուկների ձայներ են, ապա այնպիսի հնչեղ զարմանքով են, որ խաթարում են լուրջությունը: Սակայն ո՞ր է նա, ո՞ր է այդ լուրջությունը. այս ամբողջ ընթացքում պտտվում են անիվները՝ ավելացնելով կարմիր ավտոբուսների արագությունը, ասես մի խոշոր չինական խաղալիքի մեջ պտտվում, շրջվում են մեկը մյուսի հետևից թրծված երկաթե գնդիկներ, արծազանքում, փնթփնթում է մեծ քաղաքը, իսկ այդ արծազանքի վրա տակավին բարձր գոռում են ձայները, և բյուր ծաղիկների թերթիկները դեպի երկինք են նետում իրենց ծաղկային կրակները:

ՊԱՏԻ ՀԵՏՔԸ

Երևի հունվարի կեսերին էր, երբ առաջին անգամ պատի վրա նկատեցի այդ հետքը: Կատարվածը նկարագրելու համար հարկ է հիշել դրա հետ կապված ամեն մի մանրուք: Հիշողությանս մեջ վեր է հառնում բուխարին, գրքի էջերին մեղմորեն գգվող դալուկ լույսը կրակի և բուխարու սալաքարին երեք քրիզանթեմ՝ ապակե շրջանաձև ծաղկամանի մեջ: Հա՛, հա՛, իսկապես, որ ձմռանն էր՝ խմել վերջացրել էի թեյը: Հիշում եմ՝ ծխախոտ էի ծխում, երբ աչքս ընկավ պատին և տեսա այդ հետքը: Հայացքս, ծխախոտի ծխի թավ ամպը ձեղքելով, նետի նման բախվեց բոցկլտացող հրաշեկ ածխակտորին. ծխի ու կրակի այդ պայքարի մեջ կրկին հին տեսիլքն ինձ այցելեց. ամրոցի աշտարակին ծփում էր բոսորագույն դրոշը՝ ոգևորելով սև ժայռը բարձրացող կարմրազգեստ ասպետների հեծելազորին: Բարեբախտաբար, աչքս նորից ընկավ պատի հետքին ու տեսիլքը հոդս ցնդեց. տեսիլք՝ մանկության անցած-գնացած օրերից ինձ հետապնդող: Դա մի փոքրիկ կլոր հետք էր, ուղիղ խարույկի սալաքարի վերևում՝ սևով դրոշմված սպիտակին:

Ինչպիսի մեծ պատրաստակամությամբ է մեր գիտակցությունն ընկալում նոր առարկաներն ու կայծակնային արագությամբ տարվում դրանցով, ինչպես սիրահարը սիրով, ինչպես բանաստեղծը մուսայով, բայց և նույն արագությամբ էլ մատնում մոռացության: Գուցե մեխի հենք է. եթե անգամ այդպես է, ուրեմն այդտեղ ո՛չ թե սովորական նկար է կախված եղել, այլ մանրանկար, կնոջ մանրանկար՝ շիկահեր, փարթամ գանգուրներով, դիմափոշու հաստ շերտով և ալ կարմիր մեխակներ հիշեցնող շուրթերով: Բայց անկեղծ ասած՝ սա ընդամենը երևակայության արդյունք էր, քանի որ մեզանից առաջ այդտեղ ապրող տան տերերը իրենց ժամանակին համահունչ նկար կնախընտրեին տեսնել այստեղ՝ հնագույն շրջանի կտավ և այլ ոչինչ: Նրանք բոլորովին այլ մարդիկ էին՝ չափազանց հետաքրքիր: Ես բավական հաճախ էի նրանց մասին մտածում, (այն էլ միշտ ինչ-որ անհասկանալի ու տարօրինակ պայմաններում), գուցե նրանից էր, որ այլևս երբեք չէինք նրանց հանդիպելու, չէինք իմանալու նրանց կյանքի պատմությունը: Նրանք ուզում էին տեղափոխվել. նոր ոճի տուն ու կահույք էին ուզում ձեռք բերել, համենայնդեպս տան տերն այդպես էր ասել՝ պնդելով, որ արվեստը գաղափարների վրա պիտի հիմնված

լինի. ու հանկարծ նրանց մասին մտքերը ան-
 էանում են՝ իրենց հետ անցյալի հորձանուտը
 տանելով թեյ լցնող ծեր կնոջը, ինչ-որ առանձ-
 նատան այգում թենիս խաղացող երիտասար-
 դին, կարծես սլացող գնացքի պատուհանից էի
 հետևում այդ տեսարաններին, որոնք արագո-
 րեն հեռանում էին ու ձուլվում անցյալի հիշողու-
 թյուններին: Բայց թե դա ինչ հետք էր, այդպես
 էլ գլուխ չհանեցի: Նկարի վարկածը կարելի էր
 մոռանալ, քանի որ մեխի համար այդ հետքը
 չափազանց մեծ էր և կլոր: Իհարկե, կարող էի
 մոտենալ ու մի լավ գնել, բայց համոզված եմ,
 որ եթե անգամ ամբողջ գիշերն էլ աչք չփակեի
 դրա դիմաց, միևնույն է՝ նորից գլուխ չէի հա-
 նելու, որովհետև երբ մարդ արարածի համար
 արդյունքն ակնհայտ է և տեսանելի, ապա դրա
 պատճառներն ու միջոցներն անդարձ անհաս
 կմնան նրա համար: Ա՛խ, ահա և կյանքի
 գաղտնիքը: Մտքի սայթաքումը: Մարդկային
 հոգու փոքրությունն ու ձղձիմությունը: Եվ որ-
 պեսզի ի ցույց դնեմ, թե ինչքան անզոր քաղա-
 քակրթություն ենք մենք, որ ամեն կերպ խույս
 ենք տալիս ձակատագրի դեմ պայքարից,
 ուզում եմ հիշել իմ կյանքում տեղ գտած կո-
 րուստներից ու գուցե սկսեմ ամենախորհրդա-
 վոր կորստից... կատոն էր գողացել, թե՛ առ-
 նետն էր թաքցրել... Երեք արկղերը, որոնց մեջ

էին պահված գրքերը, ամրացնելու գործիքները, հետո թռչնի վանդակը, երկաթյա շրջանակները, չժանգոտվող դահուկները, Աննա թագուհու ժամանակներից մնացած դույլերը, ածխի խաղատախտակները, քնարը. ամեն ինչ հողս էր ցնդել, անգամ ծիածանաքարերն ու զրմրուխտները՝ թաքցրած շաղգամի արմատների տակ: Կորուստներ, կորուստներ. անդարձ կորուստներ: Ենորհակալ պետք է լինեմ Աստծուն այս հրաշքի համար, որ դեռ հագուստս էլ չի անհետացել, որ նստած եմ այս հնաոճ կահավորանքով սեկյակում: Հետաքրքիր է՝ ինչո՞ւ միշտ, երբ փորձում եմք կյանքին բնորոշ համեմատություն գտնել, առաջին միտքը, որ ծագում է՝ ժամում հիսուն մղոն կայծակնային արագությամբ սլացող գնացքն է, որը քեզ տեղ կհասցնի թմրած ու զզգված: Թռիչք ուղիղ դրախտ՝ Եվայի զգեստով, փոստի փաթեթավորված դարչնագույն փաթեթի նման սրընթաց սլանում ես դաշտերով, մարգագետիններով... ու բախվում քամուն. ձիու պոչ հիշեցնող մագերդ ծածանվում են ալիք-ալիք: Դե գուցե այս անընդմեջ կրկնությունների մեջ է թաքնված կյանքի խորհուրդը՝ կորուստներ, ձեռքբերումներ... այն էլ հանկարծակի...

Իսկ մահից հետո հանդարտ թռչնում է կա-
նաչ ցողունը, խոնարհում իր վաղեմի հպարտ

գլուխը՝ վերջին անգամ իր շուրջը հեղեղում բոսորն ու ծիրանագույնը: Եվ վերջապես, այնտեղ՝ դրախտում էլ աշխարհ չպիտի գանք. անօգնական, անբարբառ, առանց տեսնելու ունակության... ու չպիտի նորից թավալվենք հսկաների ոտքերի տակ: Անհնար է հերքել ակնհայտը. կլինեն ծառեր, ծաղիկներ, կլինի և՛ կինը, և՛ տղամարդը, այդպիսին է խորհուրդը կյանքի, թեկուզ անցնեն դարեր: Կլինի միայն լույս ու խավարի հավերժություն՝ ծածկված նորահարս ցողուններով, իսկ նրանց բարձունքում՝ վարդի համբույրով դրոշմված վաղորդյան ցող՝ փոփոխվող անհասկանալի գույներով՝ ոչ այն է վարդագույն. ոչ այն է՝ կապույտ... բայց ժամանակը սլանում է, գույները դառնում են ավելի պարզ, դառնում են... անխ, ինքս էլ չեմ հասկանում, թե ինչ են դառնում: Ամեն դեպքում պատի այդ հետքն ամենևին էլ ծակ չէ: Այն, ավելի շուտ, հիշեցնում է ինչ-որ մի կլոր առարկա՝ գուցե վարդի փոքրիկ թերթիկ, որն ամառվանից կպել, չորացել ու մնացել է պատին. ես այդքան էլ պարտաճանաչ տևտեսուհի չեմ: Դրա վառ ապացույցն է սալքարի վրա նստած փոշու շերտը: Ասում են՝ հենց փոշու երեք շերտ խորության տակ է Տրոյան թաղված, և նրա գանգերով լի տարաներն են

միայն, որ անհաս են մնացել մարդկային ձեռքին, ինչին կարելի է և հավատալ:

Դրսում ծառը հեզ նորահարսի նման հավում է ապակուն: Ուզում եմ հագիստ մտորել՝ խաղաղ ու անխռով, որ ոչ մի բան ինձ չխանգարի, չչեղի ուշադրությունս, որ այս հարմարավետ բարձունքից անթարթ հայացքով սահուն թափառեմ սենյակում մի առարկայից մյուսը՝ անտեսելով խոչընդոտներն ու արգելքները: Ուզում եմ թափանցել դրանց խորքը, հասնել նրանց հեռուները, մոռանալ այս իրականությունը՝ իր դժվարություններով ու կցկտուր իրադարձություններով: Ուզում եմ խորհել. գուցե կառչեմ գլխումս ծագած առաջին իսկ մտքից. Ծեքսպիր... Չէր խանգարի, չնայած այս պահին ցանկացած միտք էլ կլիներ: Բազմոցին նստած մարդ արարածը հետևում է կրակի խաղին, ու կարծես մտքերի մի ամբողջ բանակ երկնքից ներխուժում է նրա ներաշխարհ: Գլուխն առած ափերի մեջ խորհում է նա, անցնող-գնացող ամբոխն աչքի պոչով հետևում է նրան բաց դռնից, տեսարան, որից կարելի է կռահել՝ ամառային մի երեկո է, բայց, Աստված իմ, ի՞նչ ձանձրալի են այս պատմական դեպքերի նկարագրությունները: Այն բնավ էլ չի գրավում: Ամբողջ էությամբ ուզում եմ ինչ-որ հաճելի մտքի շղթա գտնել, մի շղթա, որի փայլը գու-

ցե և արտացոլի իմ ներաշխարհը, արտացոլի իմ անձի հանդեպ թաքնված վստահությունը, փորձեմ նման ինքնագովերգման մտքերով սփոփվել, դե նման մտքերն անգամ ամենահամեստ ու աննկատ մարդկանց էլ են այցելում, որոնք վստահեցնում են, որ ատում են խառնվածքը սեփական անձի, բայց ո՛չ, նման հանդուգն մտքերը զուտ գովեստներ են ու հենց դրա մեջ է նրանց ամբողջ գեղեցկությունը, մտքեր... գուցե և սրա նման.

«Այդ պահին ես մտա սեւյակ: Նրանք բնությունից էին խոսում: Ես ասացի, որ տեսել եմ, թե ինչպես է Քինորուեյում՝ հին տան կողքին ծաղիկ աճել՝ փոշու ու աղբի կոյտի մեջ: Արևածաղիկի սերմը, ավելացրի ես, կարող էր այդտեղ ընկած մնալ Կարլ I-ի օրերից. «Հետաքրքիր է՝ ինչ ծաղիկ էին աճեցնում Կարլ I-ի ժամանակ», հարցրի ես, բայց, անկեղծ ասած, հարցիս պատասխանը մոռացել եմ: Երևի՝ երկար ցողուններով, ալ կարմիր գլխիկներով: Ու այսպես շարունակ: Այս ամբողջ ընթացքում մտովի, բայց անհուն սիրով կերտում եմ իմ իսկ կերպարը, բայց վախենում եմ... վախենում եմ հիանալ իմ իսկ կերպարով, ու դրանից խուսափելու համար ձեռքս մեկնում եմ գրքին, գուցե գրքերն ինձ օգնեն, նոր գաղափարներ տան, պատասխաններ իմ այս անվերջա-

նալի հարցերին: Եվ իսկապես, հետաքրքիր է, թե ինչպիսի մեծ պատրաստակամությամբ է մարդ արարածը պաշտպանում իր անձը և պաշտամունքից, և այն ամենից, ինչը նրան կնստմացներ, կամ էլ կհեռացներ նրա իրական «ես»-ից՝ դարձնելով այն անհասկանալի ու աներևույթ: Իսկ գուցե այստեղ ոչ մի արտասովոր բան չկա՛: Պատկերացնենք... ընկալել այս ամենը չափազանց կարևոր է, երբ կոտրվում է հայելին, անհետանում է պատկերը, հիշողություն է դառնում գեթ մի վայրկյան առաջ նրա մեջ արտացոլված ռոմանտիկ կերպարը՝ ձուլված անտառի կանաչին, ու ոչինչ չի մնում, բացի բոլորին տեսանելի ուրվագծից, ու աշխարհը դառնում է անօդ, ձնշող, անգույն, տաղտկալի... Աշխարհ, ուր անհնար է ապրել: Ավտոբուսներում, մետրոներում մեկմեկու նայելիս նայում ենք ուղիղ հայելուն, և գուցե դրանից է մեր անկախատեսելիությունը, դրանից է այն սառնությունը, որ կա մեր աչքերում՝ հայացք ապակու միջից: Ու օր-օրի ապագայի գրականության մեջ բանաստեղծներն ավելի մեծ կարևորություն կտան այդ արտացոլանքներին. արտացոլանք, որն իր տեսակի մեջ եզակի չէ, արտացոլանքներ՝ անթիվ ու անհամար, սրանք կլինեն այն բոլոր հեռուները, որոնք կդառնան նրանց գրչի թեման, կլինեն այն աներևույթ

բարձունքները, որոնց կտենչան նրանց հոգիները ու հետզհետե իրենց ստեղծագործությունները մոռացության կմատնեն տաղտուկ ու բուլորին հայտնի իրականությունը. ավելի լավ է խորանալ իմացության անդունդը, հետևել Հայնեի, գուցե և հենց Շեքսպիրի օրինակին: Մի ըմբոստ բառ, և պայթյունն անխուսափելի է: Այդ պայթյունից թնդում են թերթերը, նախարարները սթափվում են նիրհից: Ու նորեն վերածնվում է այն ամենը, ինչ կար քո կյանքում մանկությանդ ժամանակ, ինչ ամենակատարյալն էր ու ամենասիրելին, ու, ամենակարևորը, որից շեղվելն անթույլատրելի էր, այլապես անեծքի բաժին կդառնայիր: Ա՛խ, կրկին այդ վերացական պատկերները, որոնք հիմա էլ ուղեկցում են մեզ Լոնդոն, կիրակնօրյա երեկոյան զբոսանք, կիրակնօրյա նախաձաշ ու պատարագ հանգուցյալների հոգու խաղաղության համար, հետո գնումներ, սովորույթներ ու թվում է՝ դա էլ է դարձել սովորություն՝ հավաքվել մի սենյակում, զրուցել, քննարկել, որից և ոչ ոք իրականում հաճույք չի ստանում: Ամեն ինչ մնում է իր կարգ ու կանոնի մեջ: Ու այդ կանոններից մեկն այն էր, որ սփռոցները գոբելենից էին արվում՝ փոքրիկ դեղին նախշազարդ խորանարդիկներ, այնպիսին, ինչպիսին հաստատ տեսած կլինես թագավորական

դոյակների գորգերով պատկերված լուսանկարներում: Ու ինչ ապտակ՝ դառն ու քաղցր, հալածում է քեզ, երբ զգում ես, որ այդ ամենը՝ կիրակնօրյա նախաճաշերը, այդ զբոսանքները, առանձնատները և այդ ցուցամուլ սփռոցները բնավ էլ իրական չեն, ավելի շուտ աներևույթ տեսիլքներ են, ու այն անեծքը, որը նախատեսվում էր անհավատին, իրականում ազատության ու թեթևության զգացում էր տալիս: Հետաքրքիր է՝ իսկ հիմա իրական անեծքները ո՞ւմ են զիջել իրենց դարավոր գահը: Գուցե տղամարդկանց, եթե դու ինքդ կին ես, ապա սեփական մաշկիդ վրա ես զգացել, որ տղամարդկային կարծիքները, հայացքներն են, որ կառավարում են մեր կյանքը, նշանակում օրենքներ, այս ամենն է վկայում նաև Ուիթաքերական առաջնորդների գրառումները, որ պատերազմի տարիներին, ենթադրում եմ, կորցրին իրենց նախկին ազդեցությունը, և որ շուտով նրանց այդ իրական արժեքները կհայտնվեն աղբանոցում, ուր անիրական իրերն են հայտնվում՝ կարմիր փայտով պատրաստված խմիչքի պահարանով, Լանդսիրի փորագրություններով, դժոխքով ու նրանց հետ կապ ունեցող ամեն ինչով՝ մեզ թողնելով ազատության թեթև ու մեղավոր զգացմունքի հետ, եթե իհարկե, այդ ազատությունը իրոք գոյություն ունի...

Որոշակի լուսավորության ներքո պատի այդ հետքը վերածվում էր խոշոր արտացոլանքի: Այն էլ՝ ոչ այնքան կլոր: Այն կարծես ստվեր է գցում ու եթե հիմա մատով շոշափեմ պատը, ինչ-որ խորդուբորդ ելուստի կհավեմ՝ ելուստ, թումբ, բլուր... գերեզմանաթումբ... ինչպիսին Հյուսիսային Դաունսում է հանդիպում՝ անգամ տեղաբնիկները համոզված չեն, թե իսկապես ի՞նչ են դրանք՝ գերեզմանաթմբեր, թե՛ հնաբնակների հավաքատեղի: Ինքս կնախընտրեի, որ դրանք գերեզմանաթմբեր լինեին. ի վերջո, անզլիացու էությանը հարիր են նման մելամաղձոտ մտքերը. անգամ թափառել ու խորհել թաղված ոսկորների մասին, և ի՞նչ կա դրա մեջ՝ սովորական երևույթ: Գուցե ինչ-որ հնէաբան պեղել է այդ ոսկորներն ու նրանց անուններ տվել: Հետաքրքրի է՝ ի՞նչ տեսակ մարդիկ են այդ հնէաբանները: Նրանց մեծ մասը թոշակի անցած գնդապետեր են ու, առաջնորդելով ծեր աշխատավորներին, բարձրանում են բլուրը, պեղում ամեն մի քարը, ամեն մի ելուստը, քանդում հողը, մտերմանում և նամակագրություն հաստատում տեղի քահանայի հետ ու ամեն անգամ նախաձաշին, մի նոր նամակ ստանալով, վայելում իրենց մեծությունն ու կարևորությունը: Իսկ իրենց նետերի սուր ծայրերը համեմատելու համար շրջում են քաղա-

քից քաղաք, ինչը բավականություն է պատճառում և՛ իրենց, և՛ իրենց մեծարգո տիկնանց, որոնք ցանկանում են վայրկյան առաջ պատրաստել սալորի ջեմը և կարգի բերել աշխատասենյակը ու ջանասիրաբար անում են ամեն ինչ, որ բլրի կամ գերեզմանաթմբի շուրջ պտտվող հարցերը մնան նույն խորհրդավորության մեջ, մինչ գնդապետը ինքը կցանկանար տալ այդ խորհրդավոր վիճելի հարցի փիլիսոփայական բացատրությունը ու ի ցույց դնել ապացույցը: Եվ ի վերջո նա էլ է հանգում այն մտքին, որ այդ ելուստը հնաբնականների հավաքատեղի է, սակայն մերժում են նրա այդ տարբերակը: Նա ստեղծում է պամֆլետ ու պատրաստվում ներկայացնել տեղական ժողովի հերթական հավաքին, բայց հարվածը նրան հավասարեցնում է գետնին, ոչնչացնում, ու այդ վերջին վայրկյաններին նրա գիտակցության մեջ ո՛չ կինն է, ո՛չ երեխաները, այլ հնաբնականների հավաքատեղին ու սրածայր նետը, որը հիմնականում պահպանվում է տեղի թանգարանում մարդասպան չինուիու կրունկի, Ելիզաբեթյան ժամանակներից մեզ հասած մեխերի, Թեոդորի օրերից պահպանված սնդուսափայլ սիգարների, հռոմեական գրականության նմուշների, Նելսոնի խմած գինու բաժակի կողքին, սրածայր այդ նետը, որն այդպես էլ չեմ հաս-

կանում, թե ո՞ր իրադարձության ապացույցն է: Ո՛չ, ո՛չ, ո՛չ, միևնույն է՝ ոչինչ չես ապացուցի ու ոչինչ էլ չես իմանա: Ու եթե հիմա վեր կենամ ու համոզվեմ, որ պատի այդ հետքը (վերջապես ի՞նչ է դա) ընդամենը մեծ մեխի ծայր է, որը խփել են այստեղ երկու հարյուր տարի առաջ, ու հիմա սպասուհիների տարիների ջանասիրաբար մաքրության շնորհիվ այն նորից ծնունդ է ապրել այս սպիտակ պատերի մեջ՝ կրակի լույսով ողողված սենյակում. ի՞նչ կտա դա ինձ... Ես... գիտելի՞ք: Պատճա՞ռ հետագա մտորումների համար: Դե, կարծում եմ, նստած էլ մտորելը ինձ մոտ վատ չի ստացվում: Իսկ առհասարակ ի՞նչ է գիտելիքը: Եվ ովքե՞ր են մեր այդ ուսյալ ամուսինները. ի՞նչ են նրանք թաքցնում... ովքե՞ր, եթե ոչ կախարդների ու ձգնավորների սերունդները, որոնք թաքնվում էին քարանձավներում և թավուտներում, խոտերից թուրմեր պատրաստում, (հարցախեղդ անում հանգուցյալներին), բացահայտում ու թղթին հանձնում որդերի լեզուն: Եվ ինչքան քիչ ենք մենք նրանց պատվում, այդքան շուտ ենք ազատվում մեզ շղթայող նախապաշարմունքներից ու ինքնակամ դառնում ենք գեղեցիկի ու առողջ բանականի գերին: Ես գուցե փորձեմ պատկերացնել նման երանելի մի աշխարհ: Խաղաղ ու լայն մի աշխարհ՝ կապույտ ու կար-

միր ծաղիկներով ծփացող դաշտերով: Աշխարհ, ուր չկան պրոֆեսորներ, գիտնականներ՝ ուստիկանի նման զգաստ ու խիստ. աշխարհ, ուր միտքն է ամեն ինչ թրի նման կործանում, ինչպես ձուկն է լողակով ձեղքում խաղաղ ջուրը, մխրձվում ջրաշուշանների արմատների մեջ և քարի նման անշարժանում ձկնկիթի մոտ... Եվ ինչ խաղաղություն է այստեղ՝ աշխարհի հենց կենտրոնում, նրա արարման իսկ և իսկ սկզբնակետում, ուր, միանալով լուսի թափառող շողին, կոտրում են գորշ ջրի հայելին՝ տեսնում կյանքի բյուրեղյա արտացոլանքը, եթե միայն հօդս ցնդեն այդ Ուիթաքերների օրացույցներն ու առաջնորդների գրառումները, և թույլ տան ըմբռնվել այդ աշխարհը: Չէ, ես պետք է մոտենամ ու պարզեմ, թե իրականում ինչ հետք է դա՝ մեխ, վարդի թերթիկ, թե՛ ընդամենը փայտի ձեղքվածք: Ու նորից բնությունը հին երգն է սկսում ինքնապահպանման երգը: Նման մտքերը, պնդում է նա, տանում են ուժերի անհիմն կորուստի, անգամ հասցնում իրականության հետ բախման, այլապես ո՞վ կհամարձակվեր դուրս գալ Ուիթաքերների առաջնորդների գրառումների դեմ: Քենթերբերյան արքեպիսկոպոսին հաջորդում է լորդ Կանցլերը, լորդ Կանցլերին հաջորդում է Յորքի արքեպիսկոպոսը: Ամենքը հաջորդում են

ինչ-որ մեկին, այսպիսին է Ուիթաքերի փիլիսոփայությունը, ու դա ուղղակի հիասքանչ է իմանալ, թե ով ում է հաջորդում: Դա հայտնի է Ուիթաքերին, ու թող այդպես էլ լինի: Չէ որ բնությունը քո առաջնորդն է. ահա՛ և քո խաղաղությունը, իսկ եթե դրա մեջ չես գտնում քո սփոփանքը ու ամեն կերպ ուզում ես խաթարել այս անդորրը, ապա նորից մտածիր պատի այս հետքի մասին: Ես հասկանում եմ բնության խաղը, այն ստիպում է քեզ գործել՝ փորձելով վերջ տալ բոլոր քո մտորումներին, որոնցից միայն ցավն ու հուզմունքն են քեզ մնում: Գուցե հենց դրանից է մեր բացասական վերաբերմունքը գործի մարդ հասկացության նկատմամբ, նաև այն մարդկանց, որոնք, բառի բուն իմաստով, չեն մտածում: Համենայնդեպս, ոչ մի բան չի լինի, եթե պատի այդ հետքին նայելով, վերջ տամ այս տաղտուկ մտքերին: Ու այս պահին, երբ հայացքս մխրձված է այդ հետքին, ինձ թվում է, որ իսկապես բռնվել եմ փրփուրներից, գիտակցում եմ իրականության քաղցր հաճույքը, որը մի-մի վայրկյանում ն՛ արքեպիսկոպոսներին, ն՛ լորդ Կանցլերին դարձնում է ուղղակի հիշողության ստվեր: Ինչ-որ բան այստեղ չափազանց հստակ է, չափազանց իրական: Արթնանալով կեսգիշերվա մղձավանջից՝ շտապում ես վառել լույսը ու նորից պառկում

ես՝ անշարժ ու անքուն, մտքումդ պաշտամունքի առարկա դարձնում ու երկրպագում նկարիչների ձիրքը, երկրպագում կայունությունը, երկրպագում տիրող իրականությունը, երկրպագում մի անգո ու անիրական աշխարհ, որը կապացուցեր, որ մենք միակ գոյը չենք տիեզերքում: Սա հենց այն է, ինչում մեզանից յուրաքանչյուրն ուզում է համոզված լինել. փայտ, աստառ, բնություն՝ մտածել դրանց մասին և հիանալ: Այն սկսվում է ծառից, ծառերը աճում են, ու մենք այդպես էլ չենք իմանում նրանց ծաղկման խորհուրդը... Նրանք աճում են՝ ժամ առ ժամ, տարեցտարի՝ անտեսելով ամենքին, դաշտերում, անտառներում, գետի եզերքին, իրոք որ՝ հաճելի է մտորել այդ մասին: Տոթ կեսօրին այնտեղ՝ նրանց կանաչ ճյուղերի ներքո, կովերն են արածում, հետո արտացոլվում գետի մեջ ու կրկնօրինակում կանաչ սաղարթի պատկերը, ուզում են անգամ այդ կանաչի մեջ տեսնել ջրհորի չքացնող պատկերները. ուզում են խորհել ձկան մասին, որը դրոշի նման ծփում է ջրի հորձանուտում, ջրային տզրուկների մասին՝ գետի ծոցում դանդաղորեն սեթևեթող: Ուզում են խորհել հենց ծառի մասին՝ սկզբում չոր փայտի կոպիտ զգացողություն, հետո դրան հաջորդող որոտընդոստ փոթորիկ ու... հանդարտ ու քաղցր բզզոց:

Ձմեռային երեկոներին ուզում ես խորհել հենց այդ ծառի մասին, անտեր մի ծառ՝ խոյացող մենավոր դաշտում, որտեղ լուսնի ներքո անկենդանությունն ավելի է շոշափելի դառնում, ու այդ անգոյի մեջ երերում է միայնակ ու անզեն քամին, երերում, տերևի նման դողդողում ամբողջ գիշեր: Եվ ինչպիսի՞ գրնգուն ու անսովոր ձայնով են թռչունները վետվետում հունիսին, ինչ սառն են լինում միջատների գգվանքները, երբ նրանք տենչում են վեր խոյանալ ծառի կեղևի վրայով կամ փորձում են ջերմանալ արևի շողից թավ կանաչ խոտերի մեջ և անթարթ նայում՝ իրենց կարմիր անդամանդակուռ աչքերով...

Մեկը մյուսի հետևից կտրվում են շղթաները՝ չդիմանալով հողի սառը ձնշումներին, հարձակվում է վերջին փոթորիկը, խոցվում են ծառերն ու նորից մխրձվում սառը հողի տակ: Բայցևայնպես կյանքը չի ավարտվում դեռ բազում արահետներ կան, չապրած կյանքեր կան այդ ծառի համար, ճանապարհներ աշխարհից աշխարհ, սենյակից սենյակ, նավից նավ, խաչմերուկից խաչմերուկ, հյուրասենյակից հյուրասենյակ, ուր թեյից հետո հավաքվում են կանայք ու տղամարդիկ, գրուցում, քննարկում: Ծառի մեջ ապրում ու թևածում են անխռով ու պայծառ մտքեր: Ուզում եմ հասնել, ընկալել

դրանցից յուրաքանչյուրը, բայց ինչ-որ բան շեղում է ճամփան իմ... Ո՞ւր էի ես: Ի՞նչ էր կատարվել: Ծանո: Գետ: Դաունսի թմբեր: Ուիթաքերների օրացո՞ւյց: Մարգագետիններ: Ոչինչ չեմ կարող հիշել: Ամեն ինչ երերում է, շարժվում, խոյս տալիս, անհետանում. ամեն ինչ հօդս է ցնդում: Նյութի անվերջ փոխակերպում: Ու... ինչ-որ մեկը մոտենում ինձ ու ասում է.

- Ես գնում եմ թերթ գնելու:

- Ի՞նչ:

- Ճի՛շտ ես, ի՞նչ օգուտ թերթից... Անընդհատ նույնն է գրված... Անիծվի՛ այս պատերազմը... Գրողի ծոցը կորչի՛ այն... Բայց այդպես էլ չհասկացա՝ ի՞նչ գործ ունի խխունջը մեր պատին:

- Ա՛խ, պատի հետքը, ուրեմն՝ դա ընդամենը խխունջ էր:

ՆՈՐ ԶԳԵՍԱԸ

Մեյբլն ի սկզբանե սկսեց կասկածել, որ ինչ-որ բան այն չէ, հատկապես երբ տիկին Բարնեթն օգնեց հանել վերարկուն, բերեց հայելին, այնուհետև սկսեց կարգի բերել խոզանակները, հարդասեղանի վրա դրված առարկաները, Մեյբլի մազերը, զգեստը՝ փորձելով շեղել նրա ուշադրությունը (ճիշտն ասած ո՛չ անտեղի): Այդ ամենն ավելի հաստատեցին Մեյբլի տարակուսանքը, որ իսկապես մի բան այն չէ, մի բան սխալ է ընթանում: Այդ զգացողությունը գնալով ավելի ու ավելի էր արմատավորվում և մինչև նա աստիճաններով ներքև էր իջնում, այն հետզհետե վերածվում էր ավելի շուտ ինքնավստահության, հատկապես երբ նա ողջունեց Կլարիսա Դելլոուեյին և ուղղվեց հյուրասրահի ամենածայրի անկյունը, որտեղ հայելին էր կախված, նայեց իրեն: Այո՛, ինքն իրավացի էր: Ամեն ինչ իսկապես որ ահավոր էր: Այդ պահին այն ցավը, որ նա միշտ փորձում էր քողարկել, այն խորը թախիծը, որ նրան մանկությունից ի վեր ընկերակցում էր, այն զգացումը, որ իբր ինքն ամենավատն է, նորեն արթնացան նրա հոգում, բայց այս ան-

գամ առավել անխնա, անխիղճ ու դժնի հարվածներով: Հարվածներ, որոնք նա ի զորու չէր հաղթահարել, սակայն կարողանում էր սանձահարել Վալտեր Սքոթի և Ջորջ Բորրոուի օգնությամբ, այն էլ՝ այն ժամանակ, երբ տանը մեկնակ էր լինում ու արթնանում էր գիշերվա կեսին, քանզի այս բոլոր տղամարդիկ ու կանայք՝ ամենքը անխտիր, մտածում էին. «Այս ի՞նչ է հագել Մեյբլը: Ա՛յ թե տեսք ունի նա: Ահավոր է նրա նոր զգեստը»: Նրանք բոլորը մոտենում էին Մեյբլին կեղծ զմայլանքի աչքերով, մինչդեռ նրա ետևից հեզնանքով ծամածռում էին դեմքերը: Բայց ախր ողջ մեղքն իրենն էր. վախկոտ, հիմար ու անմիտի մեկն է հա՛: Այն սենյակը, որտեղ նա ժամերով դերձակի հետ խորհրդակցելով պատրաստվում էր այս երեկոյին, միանգամից դարձավ նողկալի ու անտանելի, անգամ սեփական հյուրասենյակը, ուր նա ներս մտավ սնափառությամբ լցված, սկսեց թվալ մռայլ ու գորշ, նա ձեռքն առավ սեղանին դրված նամակն ու ասաց. «Որքան ձանձրալի է...», իսկապես որքան անհեթեթ էր այս ամենը, որքան էժանագին ու քաղթենի: Ամեն ինչ հօդս ցնդեց, փշրվեց, անէացավ հենց այն պահին, երբ նա ոտք դրեց տիկին Դելլուուեյի հյուրասենյակ:

Այն երեկո՝ թեյի սեղանի շուրջ, երբ նա

ստացավ տիկին Դելլոուեյի հրավերը, միանգամից որոշեց, որ չի ընկնի նորաձև հագուստի հետևից: Հարկ չկա պճնվել, նորաձևությունը լոկ ուղղություն է, այն ոճ է, կենսակերպ և ուրվագիծ: Արժի այն ընդամենը երեսուն գինեա և ո՛չ մի պենս պակաս: Եթե այդպես է, ապա էլ ինչո՞ւ չփորձել ինքնատիպ տեսք ունենալ: Ինչո՞ւ չփորձել ունենալ սեփական ոճ: Վեր կենալով սեղանից՝ նա վերցրեց նորաձևության մի հին ամսագիր՝ մոր ամսագրերից, փարիզյան նորաձևության ամսագիր՝ դեռևս կայսրության ժամանակներից պատկանող: Եվ տնտղելով այն՝ սկսեց մտածել, թե որքան հմայիչ, բարձրաշխարհիկ ու կանացի տեսք ունեին նրանք այդ ժամանակներից: Հիանալով այդ կանանցով՝ որոշեց (այ՛ քեզ անխելք) նմանակել նրանց, իրեն սկսեց պատկերացնել նրբակիրթ, մի տեսակ անտիկ, բայց և չքնաղ, իսկ եթե անկեղծ, Մեյբլն ազատություն տվեց սեփական ինքնասիրահարվածությանը, որի համար էլ ահա և պատժվեց... ահա՛ նաև արդյունքը՝ նա այսքան «գեղեցիկ» ձևով պճնվել է:

Մեյբլը խուսափում էր կրկին իրեն հայելու մեջ նայել: Վախենում էր տեսնել իր սարսափելի տեսքը, այդ դժգույն դեղին, անհեթեթության հասնող հևառձ մետաքսե զգեստը՝ երկար փեշերով, թևերը լայն բարձիկներով, իսկ այդ

կորսածը և մնացած շքեղությունները, որոնք այդքան հմայիչ էին ամսագրի էջին, չափազանց ահավոր տեսք ունեին նրա հագին՝ այս նորաշունչ ձևով հագնված կանանց միջավայրում: Նրան թվում էր, թե ինքը դերձակի մի իսկական մանեկեն է, մնում էր միայն ամրացնել ասեղներն ու քորոցները և...

- Քաղցրիկս, չափազանց հմայիչ տեսք ունեք,- ասաց Ռոզա Շոուն՝ ոտքից գլուխ տևտղելով Մեյբլին և հեգևանքով ծամածռելով դեմքը, միևնույն ժամանակ հենց ինքը՝ Ռոզան, բնականաբար հագնված էր նորաձևության վերջին ճիշով, հենց այնպես, ինչպես ներկա գտնվող մնացած բոլոր կանայք:

Մենք բոլորս նման ենք ճանձերի, որոնք տեսչում են մազլցել կարասը, մտածեց Մեյբլը և նորից ինքն իրեն կրկնեց այդ խոսքերը, ասես խաչակնքվում էր, ասես կախարդում էր, որ վանի իրեն պատած ցավը, որպեսզի տանելի դարձնի այդ հոգեվարքի ներկայությունը: Շեքսպիրի խոսքերը, տողեր գրքերից, որոնք նա հազար տարի առաջ էր կարդացել, միշտ էլ հանկարծակի արթնանում էին նրա մտքում, հատկապես վշտի և հոգևարքի պահերին. նա կրկնում էր այդ խոսքերը, կրկնում անընդմեջ, ասես բալասան լինեին դրանք: «Ճանձեր, որոնք տեսչում են մազլցել կարասը...»,-

կրկնում էր նա նորից: Եթե միայն նա կարողա-
 նա կրկնել ու կրկնել դա, եթե միայն կարողա-
 նա իր աչքով տեսնել այս պահին գոնե մի
 ձանձ, ապա կքարանա, կսառչի, կդառնա համր
 ու անձայն: Ահա՛ և կամաց-կամաց դուրս են
 մազլցում կաթի կարասից, նրանց թևերը զմու-
 ված են մեկը մյուսին, ու նա ջանում է (հայելու
 մոտ կանգնած՝ լսելով Ռոզա Ծոռին) պատկե-
 րացնել այդ Ռոզա Ծոռին և մնացած բոլորին
 այդ ձանձերի տեսքով, որոնք պատից պատ են
 զարկվում, ինչ-որ տեղից դուրս ձողոպրելու հա-
 մար, բայց ո՛չ... ինչ-որ մի տեղ ներխուժելու հա-
 մար... թշվառ, անարժան և չարքաշ ձանձեր:
 Սակայն ոչինչ էլ նրա մոտ չստացվեց: Ոչ ոք էլ
 նման չէր նրա երևակայած իրադրությանը, հա-
 կառակը՝ այդ պահին հենց նա ինքն էր նման
 ձանձի, իսկ մնացածը ձպուռներ էին, թիթեռ-
 ներ, վառվռուն միջատներ, որոնք պարում էին,
 ձախրում, թռվռում, իսկ ինքը՝ մեն-մենակ ան-
 փութորեն մազլցում էր կարասից: (Նախանձը և
 չարակամությունը բոլոր մեղքերից ամենաավե-
 րիչն են. ահա Մեյբլի գլխավոր թերությունը և
 սխալների հիմքը):

- Ես ինձ զգում եմ ձգմված, թշվառ ու ծեծ-
 ված ծեր ձանձի նման,- ասաց նա՝ կանգնեցնե-
 լով Ռոբերտ Հեյդընին... նա այս աղքատիկ
 խոսքով կանգնեցրեց նրան լոկ համոզվելու և

ցույց տալու համար իր ինքնուրույնությունը, խելքը և այն, որ իրեն ոչինչ չի կարող մտահոգել: Իսկ Հեյդընը, բնականաբար, ինչ-որ քաղաքավարի բան պատասխանեց՝ լիովին կեղծ, սակայն Մեյբլը միանգամից բացահայտեց դա, ու դեռ Ռոբերտը մի երկու քայլ էլ չէր հեռացել, երբ Մեյբլը սկսեց նորից ինքն իրեն խոսել՝ խոսքեր ինչ-որ տեղից. «Սուտ է, սուտ է, սուտ է...»: Գուցե և երեկոյթի մեղքն էր, որ ամենը դառնում էր առավել իրական կամ էլ առավել վերացական, մտածեց Մեյբլը և հանկարծ ասես թափանցեց Ռոբերտ Հեյդընի հոգու խորքը ու տեսավ ամեն ինչ: Տեսավ ձիշտը: Սա է ՃԻՇՏԸ՝ այս հյուրասենյակը, այս Մեյբլը, իսկ այն մյուս Մեյբլը լոկ հորինվածք է: Օրիորդ Միլանի փոքր սենյակում իսկապես չափազանց տոթ էր, օդը՝ հեղձուկ, ամեն ինչ ցաքուցրիվ եղած ու թափթփված: Զգեստների և կաղամբով ուտեստի հոտ էր գալիս: Բայց և այնպես, երբ օրիորդ Միլանը տվեց նրան հայելին, ու Մեյբլն իրեն տեսավ նոր, արդեն իսկ կարված ու պատրաստի զգեստի մեջ, սիրտը քիչ էր մնում կանգ առնել երանությունից: Ազատվելով հոգսերից ու կնձիռներից՝ նա դարձավ այնպիսին, ինչպիսին երազում էր դառնալ՝ գեղեցիկ կին, բայց լոկ մի քանի րոպե, ոչ երկար (ավելի երկար նա չհանդգնեց, քանի որ

օրիորդ Միլանը ցանկանում էր որոշել զգեստի երկարությունը)... կարմրափայտե շրջանակով երիզված հայելուց իրեն էր նայում խորհրդավոր ժպիտով մի չքնաղ արարած՝ նրա հոգին, նրա էությունը... և ոչ միայն սնափառությունից ու ինքնասիրահարվածությունից էր, որ նա համարեց այդ էակին բարի, նուրբ ու իրական: Օրիորդ Միլանը բազմիցս ասել էր, որ հարկ չկա թողնել երկար փեշեր ու նա իրավացի էր... Օրիորդ Միլանը, հոնքերը կիտելով, փորձում էր պատկերացնել հնարավոր բոլոր ձևերը՝ ըստ տիկին Մեյբլի հավանության: Հանկարծ այդ պահին Մեյբլը հասկացավ, թե որքան շատ է սիրում օրիորդ Միլանին, սիրում է ավելի, քան մնացած բոլորին: Իր այդ զգացումից նա քիչ էր մնում արտասվել, տեսնելով, թե ինչպես է օրիորդ Միլանը չոքեչոք իր ոտքերի տակ այս ու այն կողմ պտտվում՝ բերանում մի խուրձ գնդասեղներ, կարմրած ու ուռած աչքերով... Մեյբլը տարակուսանքի մեջ էր, ուզում էր արտասվել, որ ինչ-որ մեկը կարող է ցանկանալ այսքան բան անել մյուսի համար հանկարծակի մտքից տեղում քարացավ՝ բոլորը, բոլոր-բոլորն ուղղակի մարդիկ են, իսկ հիմա նա ինքը պատրաստվում է երեկոյթի, մինչդեռ օրիորդ Միլանը փակում է դեղձանիկի վանդակը գիշերվան ընդառաջ, բայց մինչ փա-

կելը իր իսկ բերանից կերակրում է նրան սերմերով: Այսուայն մտքից, թե որքան համբերություն ու հնազանդություն կա մարդու մեջ և թե որքան խղճուկ, աղքատիկ ու աննշան ուրախություններով կարող է բավարարվել մարդ արարածը, արցունքներով պատվեցին Մեյբլի մտահոգ աչքերը:

Ահա հիմա ամեն բան հօդս ցնդեց: Ե՛վ զգեստը, և՛ սենյակը, և՛ սերը, և՛ խղճահարությունը, և՛ հայելին իր կարմրափայտե շրջանակով, և՛ դեղձանիկը իր վանդակով, ամեն ինչ անհետացավ, և հիմա նա, վերադառնալով իրականություն, կրկին կանգնած էր տիկին Դելլուուեյի հյուրասենյակի անկյունում՝ տանջվելով իրեն նետահարող հայացքների սուր ցավերից:

Սակայն այս ամենը այնքան անհեթեթ է, էժանագին ու անմիտ, այն էլ իր տարիքի կնոջ համար, որն արդեն երկու երեխաների մայր է, բայց դեռևս շարունակում է կախված լինել այդ մարդկանց կարծիքներից, ժամանակն է ունենալ սեփական սկզբունքները. «Չէ՛ որ կա Շեքսպիր: Կա մահ: Մենք լոկ մի փոքրիկ մակույկ ենք այս ահռելի օվկիանոսի հորձանուտում: Մենք ընդամենը արևի անցողիկ շողերից ենք», կամ էլ նման մի բան, որ սովորաբար ընդունված է ասել:

Մեյբլը նորից խիզախորեն նայեց հայելու

մեջ, ուղղեց ձախ ուսի մետաքսե ասեղնագործ ժանյակը ու հանդգնեց շարժվել առաջ՝ ընկրղմվելու հյուրասենյակի կրկնօրինակված կերպարների հորձանուտի մեջ, որոնք ասես ամեն կերպ փորձում էին ձանկոռտել նրա դեղին զգեստը: Սակայն Ռոզա Շոուի նման ողբերգական և հանդուգն երևալու փոխարեն, նա ուներ հիմար ու ինքնասիրահարված տեսք (Ռոզայի նման, որ հիշեցնում էր Բոադիքեային): Մի դպրոցական աղջնակի նման՝ ինքնագոհ ժպիտով, կույզ եկած ուսերով, նա քիչ էր մնում չորեքթաթ անցներ հյուրասենյակով, ինչպես մի ուժասպառ բակի շուն և... և ակնապիշ հայացքով սկսեց նայել նկարներին, պատի վրա ամրացրած քանդակներին, ասես երեկոյթների այցելում են նկարներով հիանալու համար: Սակայն բոլորն էլ գիտեին, թե դա նրա ինչին էր պետք. որպեսզի թաքցնի, մոռացության մատնի իր խայտառակությունը, ամոթն ու ստորացվածության զգացողությունը: «Ահա՛ և ձանձր կարասի մեջ է,- ասաց նա ինքն իրեն,- ու այն էլ հենց մեջտեղում է, դուրս գալ չի կարող, իսկ կաթը,- մտածում էր նա՝ աչքը չկտրելով նկարից,- իսկ կաթը իր քաղցրությամբ կպցրել է նրա թևերը»:

- Սա այնքան հևառձ է,- ասաց նա Չարլզ Բէրտին՝ ստիպելով նրան մի պահ իր կողքին

կանգ առնել (ակներև էր, որ Բէրտի սրտով չէր):

Մեյբլը նկատի ուներ կամ էլ փորձում էր մտածել, որ նկատի ունի նկարը, այլ ո՛չ թե իր զգեստը: Չարլզի ընդամենը մի բարի խոսքը, նրա գեթ մի սիրալիր հաճոյախոսությունը ի զորու էր փոխել ամբողջ մթնոլորտը, որի մեջ հիմա տանջվում էր Մեյբլը: Եթե միայն այդ պահին ևա ասեր՝ «Մեյբլ, այսօր դու չքնաղ տեսք ունես», դա կփոխեր նրա ամբողջ հոգեվիճակը: Սակայն ինքն էլ պետք է լիներ ճշմարիտ ու ուղղախոս: Բնականաբար, Չարլզը ոչ մի նման բան չասաց, ևս իսկական եսասերի մեկը գտնվեց: Միշտ կարողանում է ևս թափանցել հոգուդ խորքը, հատկապես երբ քեզ զգում ես չափազանց փոքր ու աննշան:

«Մեյբլի զգեստը նոր է...», - ասաց ևս, և խեղճ ձանձր կարասի մեջտեղից գլորվեց ամենախորքը: Մեյբլը անգամ հավատում էր, որ Չարլզն անգամ կուզենար, որ ինքը խեղդվեր: Նա սիրտ չուներ: Մի գրամ խղճահարություն չկար նրա մեջ, լոկ խաբուսիկ արտաքին տեսք և ուրիշ ոչինչ: Օրիորդ Միլանն ավելի անկեղծ էր ու բարի: Դա միայն պետք էր ականջին օղ անել: «Ինչո՞ւ,- հարցնում էր ևս ինքն իրեն՝ ծայրաստիճան կտրուկ պատասխանելով Չարլզին, ցույց տալով, որ ևս հունից դուրս է եկել,

և ինչպես Չարլզը սովորաբար անվանում էր դա, «նրա զգացմունքները տրորվել են» (զգացմունքները տրորվել են, մտածեց Չարլզը ու շրջվեց՝ անկյունում կանգնած տիկնոջ հետ Մեյբլի վրա ծիծաղելու),- ինչո՞ւ չեմ կարողանում միշտ նույն կերպ մտածել, ինչո՞ւ չեմ կարողանում մեկընդմիշտ հասկանալ, որ օրիորդ Միլանն է իրավացի, այլ ոչ թե Չարլզը, ինչո՞ւ չեմ կարողանում հիշել դեղձանիկի հանդեպ սիրո, խղճահարության մասին և չտանջվել սարսափելի ցավերից՝ ոտք դնելով մարդկանցով լի հյուրասենյակը»: Ու այդ ամենն իր զգվելի, թուլամորթ ու անկայուն բնավարության պատճառով. չէ՞ որ նա միշտ հանձնվում է ամենատրոշիչ պահերին, չէ՞ որ նա լրջորեն չի կարողանում զբաղվել ստուգաբանությամբ, բուսաբանությամբ, հնագիտությամբ, չի կարողանում բաժանել կարտոֆիլի թմբերը և հետևել նրա բերքատվությանը, ինչպես Մերի Դեննիսը կամ էլ Վիլյետ Սերլը:

Այնուհետև տիկին Հոլմանը, Մեյբլին մենակ կանգնած տեսնելով, ուղղվեց հակահարձակման: Բնականաբար, զգեստի նման մանրուքը չէր կարող արժանանալ տիկին Հոլմանի ուշադրությանը, ում ընտանիքում միշտ ինչ-որ մեկն աստիճաններից վայր էր ընկնում կամ էլ թոքաբորբով ու քութեշով հիվանդանոցում

հայտնվում: Կարո՞ղ էր Մեյբլը նրանից իմանալ, կբուսնեն արդյոք օգոստոս-սեպտեմբերի կնձնիները: Այս ամենը նման էր ձանձրույթից ծնված մի երկխոսության. չափազանց տհաճ է, երբ քեզ համարում են բնակարանային գործակալ կամ էլ երիտասարդ փոստատար: Այդ ամենը նշանակում է, որ դու փոքր արժեք ունես, ահա թե ինչ էր նա մտածում՝ փորձելով իրեն լուրջ և կարևոր պահել, միաժամանակ պատասխանելով լոգասենյակի, դեպի հարավ բացվող տեսարանի, տաք ջրի մասին տրվող հարցերին: Եվ այդ ամբողջ ընթացում, այդ հավերժություն թվացող բոպենների ընթացքում դեղին զգեստից մի փոքրիկ մաս վառվռում էր նրա աչքի առջև՝ շրջանաձև հայելու մեջ, որը բոլորին դարձնում էր կոճակների, շերեփուկի նման փոքր... և հետարքրիր էր, որ ինքնառչնչացման և ցավի այդպիսի անդունդը, սեփական անձի հանդեպ տաժած ատելությունը, անկայունությունն ու ջանքը կարող էր սկիզբ առնել սոսկ մի բանից, որն ունի ընդամենը երեք պենսի մեծություն և արժողություն: Սակայն առավել հետարքրիր էր այն, որ այդ ինչ-որ բանը և այդ Մեյբլ Ուերինգը մեկուսացված էին, լիովին ունայնացած... և թեև տիկին Հովմանը, այդ սև կոճակը, կանգնած էր նրա կողքին՝ պատմելով, թե ինչպես էր իր ավագ որդին ան-

տեսում սրտի արագ աշխատանքը, միևնույն է՝ Մեյբլը նրան էլ էր տեսնում հայելու մեջ, տեսնում՝ ամբողջովին հեռացած, մեկուսացած ու չէր հավատում աչքերին, որ այդ սև հետքը՝ խոնարհվելով ու շարժվելով, կարող էր այդ առանձին, մեկուսացած, ինքնամփոփ ու ինքնասույգ դեղին զգեստին տալ իր իսկ մտքերն ու զգացմունքները. ինչևէ, նրանք երկուսն էլ բարեկրթությունից դրդված սիրալիրություն էին ձևացնում:

- Հա՛, իսկապես որ չես կարող վերահսկել տղաների երեկոյթները,- սրանից ավել էլ ի՞նչ կարելի էր ասել:

Տիկին Հոլմանը, որ երբևիցե չէր առաջացնում ո՛չ խղճահարություն, ո՛չ համակրանք, ժլատությամբ հարձակվեց իրեն բաժին ընկածի վրա, ասես փորձում էր ցույց տալ, որ դա իր իրավունքն է (ճիշտն ասած՝ նրան ավելին էր բաժին հասնում, քանի որ նա փոքր աղջիկ ուներ, որն այսօր նախաձաշին հայտվել էր ուռած ծնկով), և վերցնելով այդ խղճուկ «ողորմությունը»՝ կասկածամտորեն և անվստահությամբ նայեց շուրջը, ասես դա կեսպենսիանոց էր մեկ ֆունտի փոխարեն, նա թաքցրեց այն քսակի մեջ ու ստիպված եղավ համակերպվել այդ տիրող ժլատության հետ, քանի որ ծանր ժամանակներ էին, չափազանց դժվար ժամա-

նակներ... այնուհետև նա ուղղվեց տարածելու իր աղջկա ուռած ծնկի պատմությունը: Ա՛խ այդ շատախոս ու փնթփնթան տիկին Հովմանը: Իսկական ողբերգություն է, երբ մեկն այդքան շատ է փնթփնթում, նման աղմուկ բարձրացնում, ասես մի իսկական թութակ է թներով հարվածում ու շրխկացնում ուշադրություն գրավելու համար. ողբերգություն է, երբ իսկապես այդ ամենն զգում ես սեփական մաշկիդ վրա, այլ ոչ թե ձևացնում ես:

Սակայն այսօր՝ իր այդ դեղին զգեստի մեջ, Մեյբլն այլևս չէր կարող և ոչ մի կաթիլ սիրալիրություն բեմականացնել. չէ՞ որ այդ պահին ինքն անձամբ էր զգում հոգատարության ու խղճահարության կարիք: Նա գիտեր (անթարթ շարունակում էր նայել հայելուն՝ ամբողջովին խորասուզվելով այդ մեռյալ այլաշխարհի կապույտ ու թափանցիկ ավազանի մեջ), որ իր վերջը եկել է, նա թաղվել է ցեխի մեջ, նա՛ այդ թույլ ու անկայուն արարածը: Նա կարծում էր, որ այդ դեղին զգեստն իր արժանի պատիժն էր, մինչդեռ եթե նա հագնված լիներ Ռոզա Շոուի նման, այդպիսի աննկարագրելի գեղեցիկ ու մարմնին կիպ հպվող զգեստ՝ կարապի փետուրներով, ապա միգուցե նա դրան էլ արժանի կլիներ: Չկար ոչ մի ելք, այս ամենից խույս տալու, ոչ մի ուղի: Բայց միթե դրանում ինքն է

մեղավոր: Չէ՛ որ ընտանիքում տասը երեխա էին, միշտ կար փողի պակաս, ստիպված էին անընդհատ խնայել ու պայքարել. մայրը քարշ էր տալիս ահռելի ծանր բիդոններ. աստիճանների լինուլեումը արդեն մաշվել էր. անհնար էր դուրս գալ այդ չքավորության միջից. ոչ մի աղետալի բան չկար, եթե չհաշվեին ոչխարաբուծական ֆերմայի սնկացումը. ո՛չ մի ռոմանտիկա, ո՛չ մի ներշնչանք ու արտասովոր բան: Նրանք ամեն մեկն իրենց պատիվը ձեռքերում պահած ցրիվ եկան ծովափնյա հանգստավայրերով, ու հիմա նա ամեն մի ափին մի մորաքույր ունի ապրող, որոնք խաղաղ ապրում էին վարձակալած սենյակներում՝ դեպի ծովը բացվող տեսարաններով: Տակավին սա էր նրանց խաչը. ապրել՝ աչքերը կարոտով միշտ հառած ինչ-որ բանի: Իսկ ինքը: Ի՞նչ էր նա ուզում. նա նման էր իր մորաքույրերին՝ երազող էր. տենչում էր ապրել Հնդկաստանում, սեր գտնել մի ինչ-որ Հենրի Լոուրենսի հետ, ինչ-որ հերոսի, ինչ-որ տիրապետության հիմնադիրներից մեկի հետ: Անգամ հիմա էլ նա հուզվում էր, երբ հնդիկ զինվոր էր տեսնում, այն էլ՝ համազգեստով: Սակայն տապալվեցին երազանքներն այդ: Նա ամուսնացավ դատարանում մշտական, սակայն համեստ պաշտոն ունեցող Հյուբերտի հետ, ում հետ միասին մի կերպ գո-

յատևում են իրենց թշվառ տնակում առանց սպասուհու և ամեն օր ձաշակում ընդամենը մանրացրած բանջարեղենով եփած շիլափլավ, իսկ երբ ինքը մենակ էր լինում տանը, բավարարվում էր ընդամենը հաց ու կարագով, երբեմն էլ... Տիկին Հովմանը լքեց Մեյբլի ընկերակցությունը՝ նրան համարելով անզգա ու անհոգի մի խրտվիլակ, այն էլ՝ սարսափելի հագնված: Նա հեռացավ, որպեսզի սկսի հիմա էլ բամբասել երեկոյթին այցելած Մեյբլի տեսքի մասին... երբեմն էլ, մտածում էր Մեյբլը Ուերինգը՝ միայնակ բազմոցին նստած, կարգի բերելով բարձը, որ բոլորի աչքի առաջ պարապի տպավորություն չթողնի, քանի որ այլևս չէր ցանկանում մոտենալ Չարլզ Բէրտին ու Ռոզա Շոուին, որոնք կաշաղակների նման անդադար ծլվլում էին, հավանական էր նաև, որ երբ կանգնած էին բուխարու մոտ, նրանք ծիծաղում էին հենց իր վրա... երբեմն էլ արթնանում էին անասելի ակնթարթներ, օրինակ բոլորովին վերջերս, երբ ինքը կարդում էր անկողնու մեջ կամ էլ այն անգամ՝ ծովի ափին, Չատիկի ժամանակ... հա՛, բայց ինչպե՞ս էր դա եղել. ափի խոտերի խիտ ու դալուկ փունջը ձգվում էր երկինք, այն կապույտ էր, ասես միագույն կապույտ հախճապակի՝ հարթ ու ամուր, հետո ալիքների այս ելևէջը՝ խըճճ, երգում էին ալիք-

ները ու կարկաչում էին մանուկների ձայները, իսկապես, դա մի աստվածային ակնթարթ էր և ակնթարթն այդ դիվային, ասես պառկած էր աստվածուհու ափերի մեջ, որը մարմնավորում էր համայն աշխարհը. չարասիրտ, բայց շքեղամարմին աստվածուհի՝ զոհասեղանին զոհ մատուցվող զոհ (ինչ հիմարություններ ասես չեն ծնվում նրա գլխում, բայց ոչինչ, կարևորը՝ չբարձրաձայնի դրանց մասին): Նույն աստվածային ակնթարթը այցելում էր նրան նաև Հյուբերտի հետ լինելու պահերին. այն կիրակնօրյա նախաձաշին, երբ կտրատում էր ոչխարի տապակած միսը, և այն մյուս անգամ, երբ հանկարծ սենյակ մտավ՝ նամակը հասցեագրելու պահին ու... ակնթարթն այն... ու նա խոսեց ինքն իր հետ (քանզի ոչ մեկի հետ էլ չէր կարող կիսվել): «Ահա՛ խնդրեմ: Տես, թե ինչ կատարվեց... Տես, ահա՛...»: Բայց զարմանալին այն է, որ երբեմն ամեն ինչ այնքան ներդաշնակ է՝ երաժշտությունը, եղանակը, արձակուրդները. մնում է վայելես ու ուրախանաս, բայց իրականում ոչինչ էլ չկա: Ուրախությունը փոշիացած է: Լոկ ձանձրույթ, դատարկություն և ու ուրիշ ոչինչ:

Անկասկած, կրկին իր անփութության պատճառով: Նա միշտ էլ եղել է դյուրագրգիռ, թուլամիտ ու անպատասխանատու մայր, ան-

կայուն կին, վարել է գորշ ու անհետարքրքիր կյանք, չի ձգտել ոչ մի բանի, ի վիճակի չի եղել պնդել իրենը, ինչպես անում էին նրա եղբայրներն ու քույրերը, բացի Հերբերտից... ոչնչի ունակ լոկ մի թշվառ արարած: Հանկարծ այս ողջ մտասարսուռի միջից, երկյուղած կյանքի շղթաների միջից նա ձախրում է բարձր, ոգեշնչվում ու հասնում ամպածրարին: Դըժբախտ ճանճ (տեսնես որտե՞ղ էր նա լսել այս պատմությունը, որը գլխից դուրս չէր ելնում), ահա՛ թե ոնց է մագլցում կարասից: Լինում են նաև նման վայրկյաններ: Սակայն նա արդեն քառասուն տարեկան է, ու նման վայրկյանները հետզհետե սակավանալու են: Աստիճանաբար նա դադարում է մագլցել, դուրս ճողոպրել: Բայց սա առավել սարսափելի է: Անհետաքրքիր է: Ի վերջո պարսավելի է:

Վաղը կգնա Լոնդոնի գրադարան: Կհարձակվի ինչ-որ մի քահանայի, ամերիկացու, գեղեցիկ, ամոքիչ ու ակնահաճո կազմով գրքի վրա, որոնց մասին դեռ ոչ ոք չի լսել, կամ էլ, զբոսնելով Սթրենդի երկայնքով, հանկարծակի կհայտնվի մի հյուրասենյակում, ուր հանքափորը պատմում է հանքում ընթացող կյանքի մասին. նորից կդառնա լիովին այլ մարդ: Լրիվ կվերափոխվի: Կսկսի հագնել համազգեստ, նրան կսկսեն կանչել որպես քույր Այսինչ,

դրանից հետո նա էլ երբեք չի մտածի փալասների մասին: Ու հավերժ կհիշի Չարլզ Բէրտին ու օրիորդ Միլանին, կհիշի այն և այս սենյակների մասին, հետզհետե, օր առ օր ամեն բան կլինի այնպես, ինչպես այն ժամանակ, երբ նա պառկած էր արևի տակ կամ էլ, երբ ոչխարի միսն էր կտրատում: Այդպէս էլ կլինի:

Նա բարձրացավ կապույտ բազմոցից և հայելու մեջ դեղին կոճակը տարուբերվեց, նա ձեռքով արեց Չարլզին ու Ռոզային, ցանկանալով ցույց տալ, որ ինքը նրանց կարիքը չունի. դեղին կոճակը պոկվեց հայելու անհունից. միանգամից հազարավոր նիզակներ մխրձվեցին նրա սիրտը, երբ նա մոտեցավ տիկին Դելլոուեյին և ասաց. «Բարի գիշեր»:

- Գնում եք: Այսքան շոտ,- հարցրեց տիկին Դելլոուեյը:

- Ցավում եմ, բայց այո,- պատասխանեց Մեյբլ Ուերինգը,- բայց...,- ավելացրեց նա թույլ, երեքուն ձայնով, որը միայն ծիծաղելի էր դառնում, երբ նա փորձում էր դրան հաղորդել կտրուկ երանգներ,- բայց ես շատ հաճելի երեկո անցկացրի:

- Ես շատ հաճելի երեկո անցկացրի,- ասաց նա նույնը նաև պարոն Դելլոուեյին՝ հանդիպելով նրան աստիճանների մոտ:

«Սու՛տ է, սու՛տ է, սու՛տ է...», - բաբախում

էին խոսքերն այս նրա մտքում, երբ նա իջնում էր աստիճաններով և մյուս կողմից մեկ այլ խոսք էր պտտվում նրա մտքում՝ «կարասի հենց խորքում», խոսքերն այդ շրխկոցով զրնգում էին, երբ նա շնորհակալություն հայտնեց տիկին Բարնեթին, որն օգնել էր իրեն մուտքի մոտ հանել վերարկուն... ու հիմա նա փաթաթվում ու փաթաթվում էր իր չինական վերարկուի մեջ, որն արդեն քսան տարի է, ինչ հազնում էր:

ՈՐՄԻ ՄԻ ՕՐ

Այդ կինը ներս մտավ, տեղավորեց ճամպուրուկը և դրա վրա դրեց մի զուգ կապված փասիաններ: Հետո նստեց անկյունում: Գնացքը սլանում էր խուլ վայրերով: Նա իր հետ ներս բերեց մի մշուշոտ խավար ու ասես իր ներկայությամբ ընդլայնեց վագոնի սենյակը՝ իրարից հեռու ձգելով չորս ուղևորներին: Երևում էր, որ Մ.Մ.-ն (այդպիսին էին ճամպուրուկի վրա ամրացրած սկզբնատառերը) շաբաթ-կիրակին որսորդների հետ էր անցկացրել: Դա ակնհայտ էր, քանի որ նա հիմա, հենվելով նստարանին, ինչ-որ պատմություն էր պատմում: Աչքերը չէր փակել: Բայց ակներև էր, որ նա չէր տեսնում ո՛չ իր դիմաց նստած պարոնին, ո՛չ էլ Յորքի մատուռի գունազարդ լուսանկարը: Ու հաստատ նա դեռ լսում էր արդեն իսկ լռած ձայները, քանի որ նստել էր՝ ակնապիշ նայելով իր դիմաց: Ծուրթերն էլ դեռ շարժվում էին, երբեմն նրա դեմքին հանկարծակի ժպիտ էր հայտնվում: Նա դուրեկան էր՝ փթթող, հյութալի ու դարչնակարմիր այտերով, սակայն սպիով, որը ձգվում էր, երբ նա ժպտում էր: Ըստ իր պատմածի՝ նա շաբաթ-կիրակին որսորդների հետ

էր անցկացրել որպէս հյուր, բայց հազնված էր հնաճոճ, ինչպէս այն շատ հին մարզական թերթերի նկարների կանայք էին հազնված: Նա ո՛չ հյուրի էր նման և ո՛չ էլ սպասուհու: Եթէ ձեռքին մի զամբյուղ էլ ունենար, նրան կարելի կլինէր համարել տերիեր որսաշներ բազմացնող կնոջ, սիամական կատու ունեցողի, կամ էլ այնպիսի մեկի, որը ձիերի ու շների հետ կապ ունի: Սակայն նա ընդամենը մի ճամպրուկ ուներ և մի զոյգ փասիան: Գուցէ և նա ինչ-որ մի կերպ թափանցել է այստեղ՝ ձեղքելով վագոնների հարդարանքները, պարոնի ճաղատ զլուխը և Յորքի մատուռի գունազարդ նկարը: Եվ ակնհայտ էր, որ նա լսում էր, թէ ինչ են խոսում, որովհետև ահա նա, ասես ինչ-որ մեկին փորձելով նմանակել, թեթևակիորեն հազաց. «Քըխ»: Ու հետո ժպտաց:

- Քըխ,- հազաց օրորդ Անտոնիան՝ ուղղելով քթին դրած ակնոցը: Սրահի նիզակաձև պատուհաններից այն կողմ մոլեգնում էին խոնավ տերևները, մի քանիսը ձկների պես գգվում էին թաց ապակուն ու մնում նրան հպված, ասես շագանակի ծառից ապակուն հասցեագրված դրոշմներ լինեին... հուշեր: Այգով մեկ մի սարսուռ սլացավ, սավառնող տերևները դարձրին սարսուռն այդ տեսանելի. այն գորշ էր ու թաց:

- Քըխ,- նորից խոսպոտ հազաց օրիորդ Անտոնիան ու ձեռքից վար թափեց մի ինչ-որ բարակ ու սպիտակ բան, այդպես հավերն են արագորեն ու նյարդային կտցում ու գցում սպիտակ հացի կտորները:

Քամին հառաչում էր: Սենյակում էլ միջանցիկ քամին էր ձեմում: Դռներն ու պատուհանները լավ փակված չէին: Գորգի վրա մողեսի նման փախչում ու ալեկոծվում էր մեղմ ծփանքը: Արևի շողերից այդտեղ նաև կանաչ ու ոսկե այուներ էին նիզակվում, հետո արևը սահեց ու նրա երկար ոսկե մատը կանգ առավ գորգի վրա, ասես նա այդտեղ մի անցք էր գտել: Մի փոքր անց այն սահեց վերև. այդ թույլ, բայց հանձնվող ոսկե մատը իր ոսկով մեղմորեն լուսավորեց բուխարու գլխին վահանը, կախված ողկույզները, ջրահարսին, նիզակներն ու զինանշանը: Օրիորդ Անտոնիան գլուխը բարձրացրեց՝ նայելով ուժգնացող վառ լույսին: Ասում էին, որ իր նախնիները, նախահայրերը՝ Ռաշլիները, մեծ կալվածքներ ունեին Ամազոնի երկայնքով մեկ: Ծովահեններ... ճանապարհներ... գմրուխտով պարկեր: Թափառում ու քչփորում էին կղզիներում: Գերիներ վերցնում: Ստրկուհիներ: Ահա թե օրիորդ Անտոնիան ինչպիսի փափկամազիկն էր, նաև՝ մեծամիտը: Նա քմծիծաղ տվեց: Արևի ոսկե մատը շարժ-

վեց ու խոնարհվեց, նա էլ հայացքով հետևեց դրան: Ոսկե մատը կանգ առավ արծաթե շրջանակի վրա՝ լուսանկար էր՝ ձվաձև ծաղատ գլուխ, բեղերից դուրս նայող շրթունքներ, իսկ ներքևում վայելչագեղ մակագրություն՝ «Էդուարդ»:

«Թագավորը...,- փնթփնթալով սկսեց խոսել օրիորդ Անտոնիան՝ ծնկների վրա փաթաթելով սպիտակ թելի կծիկը և հետևելով հանգչող ոսկե շողին,- քնում էր կապույտ սենյակում»:

Թագավորական փասիանների հովտում հրացանների փողերի մենահամերգն էր ընթանում: Կրակոցները հրթիռների նման դուրս էին ժայթքում անտառի միջից... թեժացած կրակե հրթիռներ... մեկը մյուսի հետևից բոցավառվում էին հրացանները՝ զվարթ, զրնգուն, ասես շուրջը շների հանկարծակի հաչոցի մրցավազք էր: Սպիտակ մշուշի հորձանուտները մի ակնթարթ անշարժացան օդի մեջ, հետո մելամաղձոտ ու նուրբ հեքով հօդս ցնդեցին ու անէացան:

Ճանապարհին՝ անտառի խորը ձեղքվածքի մոտ, արդեն կանգնած էր սայլակը՝ բեռնված դեռևս տաք ու փափուկ մարմիններով, սուր ձանկերով, և միայն նրանց աչքերն էին լցված կենդանության փայլով: Թվում էր՝ թռչունները

դեռ ողջ են և հիմա ընդամենը կույշ էին եկել իրենց փարթամ ու թաց փետուրների մեջ: Ասես նիրհում են, հանգստանում փետուրների տաքուկ սավանի տակ. միայն թե երբեմն ցնցվում էին քնի մեջ:

Ու հետո կալվածատերը՝ կեղտոտված, գազազած շան նման ահարկու դեմքով, մաշված սռնապաններով, հայհոյեց ու բարձրացրեց հրացանը:

Օրիորդ Անտոնիան կար էր անում: Կրակի հրաշեկ լեզուները հասել էին արդեն ընկճելու բուխարու վանդակի երկայնքով մեկ ընկած գերաններից մեկին, դրանք ազահորեն կուլ էին տալիս այն ու հանգչում՝ թողնելով ընդամենը արծաթե մի ապարանջան արդեն այրված արմատի շուրջ: Օրիորդ Անտոնիան հայացքն ուղղեց բուխարուն, երկար ու անթարթ նայեց, դատարկություն էր նրա աչքերում, այդպես դատարկ կրակին է նայում միայն անզգայացած կենդանիները: Կրակը նահանջեց, և օրիորդ Անտոնիան շարունակեց կարը:

Հսկա դուռն անաղմուկ բացվեց: Երկու նիհար տղամարդ ներս մտան ու դրեցին սեղանը գորգի վրա՝ հենց այնտեղ, որտեղ անցքն էր: Նրանք դուրս եկան, նորից մտան: Սեղանի վրա սփռոց փռեցին: Դուրս եկան, նորից մտան: Ներս բերեցին դանակներն ու պատա-

ռաքաղները՝ կանաչ բրդե կտորով ծածկված զամբյուղի մեջ, հետո բաժակները, շաքարամանը, աղամանները և հացը, հետո արծաթյա մի ծաղկաման՝ երեք քրիզանթեմներով: Սեղանը զգված էր: Օրիորդ Անտոնիան դեռ կար էր անում:

Դուռը կորից բացվեց, բայց ընդամենը մի փոքր ձեղք: Ներս վազեց մի շուն՝ սուր հոտառություն ունեցող մի սպանիել, ու քար կտրած կանգնեց: Դուռը մնաց կիսաբաց: Հետո, հենվելով ձեռնափայտին, ներս մտավ ծեր օրիորդ Ռաշլին: Նրա ճաղատ գլուխը ծածկում էր մի սպիտակ շալ՝ ամրացված աղամանդե զարդով: Հազիվ էր քայլում: Մտնելով սենյակ՝ նա աղեղի նման կույզ եկավ բուխարու կողքին դրված բարձր բազմոցին: Անտոնիան դեռ շարունակում էր կար անել:

- Կրակում են,- ասաց նա վերջապես:

Ծեր Ռաշլին գլխով արեց ու ամուր սեղմեց ձեռնափայտը: Երկուսն էլ նստել ու սպասում էին:

Որսորդները Թագավորական հովտից արդեն հասել էին Մերձակա թավուտները: Կանգ առան ծիրանագույն վարելահողերի մոտ: Խշխշում ու ձոձոում էին ոստերը, մեղմիկ պտտվում էին տերևները: Բայց մեզ ու մշուշի գլխավերևում մի կղզյակ էր լազուրի՝ անապա-

կան լազուրի, վճիտ լազուրի. միայնակ երկնի օվկիանոսի մեջ: Խիստով ու բերկրանքի կարկաչյունով լցված ականակիտ ու մաքուր օդի մեջ լսվեց հեռավոր, միայնակ ու եթերային զանգակատան զանգերի ելևէջները. այն լսվեց ու... քարացավ: Ու նորից վեր սլացան հրթիռները՝ ներքևում թողնելով բոցավառվող հրաշեկ փասիաններին: Ու նորից, նորից հաջորդեցին կրակոցի շառաչյունները, ծխե գնդակներ հայտնվեցին օդում, հետո հալվեցին ու ցրիվ եկան: Եվ փոքրիկ շները, մանրակրկիտ հոտոտելով, թրև էին գալիս հովտում, իսկ սռնապաններով տղամարդիկ զույգերով կապում էին տաք մարմինները՝ նուրբ, փափուկ, ասես դրանք լոկ ուշագնաց մարմիններ լինեին, որոնց կապելուց հետո շարտում էին կառքի մեջ:

«Ահա՛», - ասաց Միլի Մասթերսը՝ տնտեսուհին, ու հանեց ակնոցը: Նա նույնպես կար էր անում դեպի ախոռ բացվող պատուհաններով մութ սենյակում: Բլուզը... իր տղայի, որդու, որն աշխատում էր ու մաքրում էր եկեղեցին. այդ բրդե կոպիտ բլուզը վերջապես պատրաստ էր: «Երկար չտևեց: Վերջ», - ինքն իրեն շշնջաց նա: Հետո լսվեց սայլակի ձայնը, դրան հաջորդեց անիվների ճոճոցը քարերի վրա: Նա բարձրացավ: Ձեռքերով պահելով շագանակագույն

մազերը՝ նա կանգնած էր բակում՝ քամու հարվածներին դեմ առ դեմ:

«Գալիս եմ», - ժպտաց նա, ու այտի սպին ձգվեց: Նա պտտեց պահոցի դռան սողնակը, ու սպասավորը ներս քաշեց սայլակը: Թռչուններն արդեն մեռած էին, նրանք պինդ փակել էին ճանկերը՝ գրկելով դատարկությունը: Աչքերի վրա մոխրագույն ծալքերով թառամել էին նրանց կոպերը: Տիկին Մասթերսը՝ տնտեսուհին, և Վինգը՝ սպասավորը, վերցնում էին թռչուններին՝ բռնելով վզերից, ու շարտում էին պահոցի քարե հատակին: Հատակը պատվեց արյան հեղեղով ու հետքերով: Փասիանները մի տեսակ փոքրացել էին, ասես նրանց մարմինները կուչ էին եկել իրար գրկելու, որ չմրսեն: Հետո Վինգը իջեցրեց կառքի ծայրը: Սայլակին սոսնձվել էին կապտավուն փետուրները, իսկ հատակը պատված էր արյունով: Բայց այն արդեն դատարկ էր:

- Վերջացրինք: Սա վերջինն էր, - քմծիծաղով ասաց Միլի Մասթերսը, հենց որ սայլակը աղմուկով հեռացավ:

- Ընթրիքը մատուցված է, օրիորդ, - ասաց ծառայապետը: Նա կարգադրություններ տվեց սպասավորին ու գլխով նշան արեց սեղանի կողմը: Սպասավորն արծաթե կափարիչով ծածկված ուտեստը դրեց ուղիղ այնտեղ, որտեղ

իրեն կարգադրված էր: Երկուսն էլ սպասում էին՝ և սպասավորը, և ծառայապետը:

Օրիորդ Անտոնիան մի կողմ դրեց ձեռքի սպիտակ կծիկը, մետաքսե կտորն ու մատնոցը, ասեղն անցկացրեց քաթանե կտորի մեջ, իսկ ակնոցը կախեց կրծքին ամրացրած շղթային: Հետո վեր կացավ:

- Ընթրիքն է,- փնթփնթաց նա ծեր Ռաշլիի ականջին: Մի վայրկյան հետո օրիորդ Ռաշլին առաջ գցեց մի ոտքը, սեղմեց ձեռնափայտն ու վեր կացավ: Երկու ծեր կանայք ձեմելով մոտեցան սեղանին, իսկ ծառայապետն ու սպասավորը նրանց տեղավորեցին սեղանի շուրջը՝ մեկին մի ծայրում, մյուսին՝ հակառակ ծայրում: Զրնգաց արծաթե կափարիչը: Փասիան էր մատուցվում, փասիան՝ փետրահան եղած, ձաղատ ու փայլփլուն, ամուր փակած ոտքերով ու պատված չորահացի կտորներով:

Օրիորդ Անտոնիան դանակը հապճեպ մտցրեց փասիանի կուրծքը: Կտրեց երկու կտոր ու դրեց ափսեի մեջ: Սպասավորը հմտորեն բռնեց նրա ձեռքից ու օրիորդ Ռաշլին մոտեցրեց դանակը: Պատուհանից այն կողմ՝ անտառում, կրակոցներ թնդացին:

- Գալի՛ն են,- հարցրեց ծեր Ռաշլին՝ մոռա-
նալով պատառաքաղի վրա կտրատած մսի կտորը:

Այգու ծառերը ճյուղերն էին թափահարում:

Նա մի կտոր համտեսեց փասիանի մսից: Տերևները խշռոցով հարվածում էին ապակուն, մի քանիսն էլ թաց գգվանքով սոսնձվում էին նրան:

- Արդեն հասել են Մերձակա թավուտներ,- պատասխանեց օրիորդ Անտոնիան,- Հյուն էր կրակողը, հաստատ ավարտեց որսը:

Այս խոսքերի հետ օրիորդ Անտոնիան դա-
նակը մոտեցրեց փասիանի կրծքի մյուս
կողմին: Հետո առանց շտապելու ափսեի մեջ
քաշեց կարտոֆիլը իր խավարտով և բրուսել-
յան կաղամբը՝ սպիտակ սոուսով: Ծառայա-
պետն ու տնտեսուհին ուշադիր հետևում էին՝
որպես խնջույքի պատասխանատու սպասա-
վորներ: Ծեր կանայք ուտում էին դանդաղ, լուռ:
Նրանք չէին շտապում ու թռչնի ամեն մի կտո-
րը մանրակրկտորեն ծամում էին՝ ափսեի մեջ
թողնելով միայն ոսկորները: Հետո սպասավո-
րը մոտեցավ, որ վերցնի օրիորդ Անտոնիայի
ափսեն, ու հանկարծ մի ակնթարթ կանգ
առավ՝ խոնարհելով գլուխը:

- Տո՛ւր այստեղ, Գրիֆիտս,- ասաց նա՝ հետ
քաշելով ափսեն: Վերցրեց ոսկորն ու շարտեց
սեղանի տակ՝ սպանիելին: Ծառայապետն ու
սպասավորը խոնարհվեցին ու դուրս եկան:

- Արդեն շատ մոտ են,- ասաց օրիորդ Ռաշ-

լին՝ ականջը ձայնին պահելով: Քամին ուժգնա-
նում էր: Մթանգնած սարսուռը ձեղքում էր օդը,
տերևները պոկվում էին արդեն ճյուղերով ու
այլևս չէին գգվում ապակիներին: Պատուհան-
ները դղրդում էին:

- Խելակորույս թռչուններ,- գլուխը տարու-
բերեց օրիորդ Անտոնիան՝ նայելով այս ամ-
բողջ իրարանցմանը:

Ծեր օրիորդ Ռաշլին լցրեց իր բաժակը: Եր-
կուսն էլ տենչում էին գինի, ու երկուսի աչքերն
էլ պսպղում էին, ինչպես լույսի ցուլքերի տակ
կփայլեին կիսաթանկարժեք քարերը: Օրիորդ
Ռաշլիի աչքերը նմանվեցին կապույտ, բայց
մինևույն ժամանակ նաև գորշ երկնքի, միչդեռ
օրիորդ Անտոնիայի աչքերը լի էին կարմրով՝
ասես դառը գինի: Թվում էր՝ մինչ նրանք
խմում էին, այդ ասեղնագործ ժանյակներն ու
ծալքերը դողդողում էին, ասես նրանց մարմին-
ներն էլ այդ հագուստի փետուրների ներքո՝ գի-
նու արբեցումից թուլացել ու տաքացել էին:

- Հիշու՛մ ես, այսպիսի մի օր էր,- ասաց
օրիորդ Ռաշլին՝ պտտելով բաժակը,- նրան
տուն բերեցին՝ փամփուշտը սրտում: Ասացին
ճյուղից էր: Կոտրվեց: Նա ընկավ...,- քրքնջաց
նա՝ մոտեցնելով գինին:

- Բա Ջոնը...- ասաց օրիորդ Անտոնիան,-
ասում էին նժույգն էր: Սլանալուց սայթաքել ու

ընկել էր խորը փոսի մեջ: Տեղում մահացել էր: Մի իսկական որս էր սկսվել նրան գտնելու համար, ու նա էլ ոտքերը տնկեց...- նորից լցրին բաժակները:

- Իսկ Լիլիին հիշում ես,- շարունակեց օրիորդ Ռաշլին,- Լրբի մեկն էր: Ոնց տուրուդմփոցով ձի հեծնեց, այն էլ՝ կարմիր եղեգը ձեռքին...

- Անամոթ փչացածի մեկն էր:

- Իսկ գնդապետի նամակը հիշում ես... Որդիդ սլանում էր քամու արագությամբ, ասես հարյուրավոր չարքեր նրան պատած լինեին, նա սլանում էր՝ հետևից տանելով մարդկանց: Բայց այդ սպիտակ սրիկան... այ, այ,- նորից լցրեց ու ևս մի բաժակ կոնծեց:

- Մեր գերդաստանի տղամարդիկ...- սկսեց օրիորդ Ռաշլին ու բարձրացրեց բաժակը: Նա այն պահել էր բարձր, ասես խմում էր բուխարու վերևում կախված գիպսե ջրահարսի քանդակի կենացը: Ու լռեց... հրացանները շառաչեցին: Անտառում մի բան խշխշաց: Թե՛ դա առնետ էր, որը վազեց քանդակի ետևում:

- Միշտ կանայք...,- օրիորդ Անտոնիան գլխով արեց,- իսկ այ տղամարդիկ... Այդ սպիտակամորթ, կարմրաթուշ Լյուսիին հիշում ես, ջրաղացից:

- Էլենի դուստրը՝ «Այծ և մանգաղից», - ավելացրեց օրիորդ Ռաշլին:

- Իսկ դերձակի աղջիկը,- փնթփնթաց օրհորդ Անտոնիան,- Հյուն նրանց գորշ խանութից էր իրեն համար բրիջիներ գնում:

- ...Հետո էլ ամեն ձմեռ նրանց տունը հեղեղվում էր: Նրա տղան է, չէ,- քրքջաց օրհորդ Անտոնիան՝ դառնալով քրոջը,- որ մաքրում է եկեղեցին:

Մի որոտ թնդաց: Բուխարու ծխնելույզից մի սալաքար փլվեց ներքև: Վիթխարի գերանը երկու կես եղավ: Գիպսե շերտերը փաթիլի նման թափվեցին գետնին:

- Փլուզվում է,- ծիծաղեց ծեր օրհորդ Ռաշին,- փլուզվում է:

- Իսկ ո՞վ,- հարցրեց օրհորդ Անտոնիան՝ տնտղելով գորգի վրա թափված սպիտակ գիպսը,- ո՞վ է վճարելու:

Երկու փնթի փոքրիկների նման պղպջակներ անելով բաժակի մեջ՝ նրանք անիմաստ ու դատարկ ծիծաղում էին: Մոտեցան բուխարուն ու իրենց հետ քարշ տվին խերեսի գինու շիշը... խմեցին այնքան, մինչև երկուսի բաժակների մեջ մնաց ընդամենը մի կաթիլ բոցավառվող ալ կարմիր գինի: Թվում էր, թե նրանք բնավ էլ չէին ցանկանում բաժանվել գինուց: Փլուզված բուխարու մոտ կողք-կողքի նստած՝ նրանք պտտում էին բաժակները, բայց չէին մոտեցնում շուրթերին:

- Միլի Մասթերսը՝ մեր տնտեսուհին,- սկսեց օրհորդ Ռաշլին,- նա մեր եղբոր...

Պատուհանից այն կողմ նորից կրակոցներ որոտացին: Կտրվեց տեղատարափ անձրևի թելը: Այն թափվեց ապակիների վրա, թափվեց ու հեղեղեց ամենը: Գորգի վրա երևացող լույսը հանգավ: Լույսը հանգավ նաև նրանց աչքերում: Նրանք նստել էին, չէ՛, չէ՛, կույ էին եկել բուխարու մոխրի մոտ ու լսում էին... Նրանց աչքերը հիմա նման էին ջրից հանած խճաքարերի՝ անհետաքրքիր, գորշ, ձանձրալի և ամենակարևորը՝ տաղտուկի շնչով լի: Իսկ ձեռքերը... ձեռքերը թռչնի ձանկերի նման կույ էին եկել կառչելով... կառչելով դատարկությանը: Ու նրանք երկուսն էլ փոքրացան, ասես նրանց մարմինները կծկվել էին հագուստների տակ:

Օրհորդ Անտոնիան բաժակը ձեռքին մոտեցավ ջրահարսին: Մնացել էր մի վերջին կաթիլ. նա դա էլ խմեց:

- Գալիս ես,- նորից փնթփնթաց նա ու բաժակը խփեց սեղանին: Ներքևի կիսաբաց դուռը շրխկաց: Հետո մյուսը: Միջանցքով ու սրահով ծանր քստքստոցով ոտնաքայլեր էին մոտենում:

- Ահա՛, մոտ է, մոտ է,- հեզվանքով ժպտաց օրհորդ Ռաշլին՝ մերկացնելով իր երեք դեղնածատամները:

Բացվեց հսկա դուռը: Ներս խուժեցին երեք վիթխարի շներ ու հևասպառ քարացան դռան դիմաց: Հետո ներս մտավ հենց ինքը՝ կալվածատերը՝ զգալիորեն դուրս եկած կուզով և մաշված սոնապաններով: Ծները վազեցին նրա կողմը, պտտվեցին շուրջը և հոտոտեցին գրպանները: Հետո առաջ վազեցին: Մսի հոտ էին առել: Սրահի հատակը թնդում էր որսաշների պոչերի ու հաչոցների մենահամերգից, ինչպես անտառն էր թնդում քամու հարվածներից: Նրանք հոտոտեցին սեղանը՝ թաթերով ձանկոտելով սփռոցը: Ու ահա գազազած հաչոցով հարձակվեցին փոքրիկ շագանակադեղնավուն սպանիելի վրա, որը սեղանի տակ դեռ կրծոտում էր փասիանի ոսկորը:

- Գրո՛ղը տանի... գրո՛ղը տանի,- բղավեց կալվածատերը: Սակայն ձայնը դալուկ էր, ասես քամին երկատել էր այն,- գրո՛ղը տանի...- գոռում էր նա արդեն քույրերի վրա:

Օրիորդ Անտոնիան և օրիորդ Ռաշլին տեղից վեր ցատկեցին: Հսկա շները բռնեցին սպանիելին: Ժանիքներով նրանք հոշոտում էին խեղճին: Կալվածատերը կաշեպատ ոստը ձեռքին թափահարում էր, անիծում շներին, անիծում քույրերին, իսկ ձայնը նրա բարձր էր, բայց դալուկ ու հեռավոր: Եվ մի հարված... ու այդ մի հարվածով գետնին տապալվեց քրի-

զանթեմներով ծաղկամանը: Իսկ երկրորդ հարվածը իջավ օրիորդ Ռաշլիի այտին: Պառավը մեջքի վրա հետ-հետ գլորվեց ու դիպավ բուխարու սալաքարին: Նրա ձեռնափայտը, ձեռքից թռնելով, դիպավ բուխարու վերևում կախված զինանշանին: Օրիորդ Ռաշլին այդ խուլ հարվածով հայտնվեց մոխիրների մեջ, պատից պոկվեց նաև Ռաշլիների տոհմական զինանշանը: Օրիորդ Ռաշլին թաղվել էր նիզակների ու ջրահարսի ոտքերի տակ:

Քամին հարվածներով ալեկոծում էր պատուհանները, շանթահար ալիքն անցավ այգով մեկ, ու ծառը հանձնվեց՝ արմատախիլ ընկնելով գետնին: Ու այդ նույն պահին էդուարդ թագավորն էլ արծաթե շրջանակի մեջ երերաց, խոնարհվեց ու նա էլ ընկավ:

Գնացքի վագոնում գորշ մշուշ էր: Այն վարագույրի նման տատանվում էր ու ասես անկյուններ էր շարտում ուղևորներին՝ հեռացնելով իրարից, սակայն իրականում նրանք նստած էին շատ մոտ, ինչպես և հարկն է նստել գնացքի վագոնում երկրորդ կարգի ուղևորներին: Տարօրինակ ազդեցություն էր: Դուրեկան, բայց ոչ երիտասարդ կինը, հարգի, բայց և մաշված հագուստով, որը գնացք էր նստել ինչ-որ խուլ կայարանից, ասես կորցրել էր իր ուրվագիծը: Նրա մարմինը ասես վերածվել էր մշուշի:

Միայն աչքերն էին փայլում, փոփոխվում ու ապրում... ասես իրենք իրենց համար. անմարմին աչքեր, աչքեր, որ տեսնում են այն, ինչ տեսանելի չէ մյուսներին: Նրանք փայլվում էին աղոտ օդում, նրանք թափառում էին վագոնի անշնչացած մթնոլորտում (պատուհանները քրտնել էին, իսկ ջահերը պատվել էին խոնավ մեզով), ասես լինեին ձախրող, հեծկլտացող կրակներ, թափառող կրակներ, որոնց մասին ասում են, որ նրանք ձախրում են այն գերեզմանների վրա, որոնք հավերժի հանգիստ քուն չեն մտած: Անհեթեթ միտք է: Դատարկ երևակայություն: Այնուհանդերձ, երբ ոչինչ արդեն չի ավարտվում առանց տեղումների, իսկ մեր հիշողությունը մտքի հեծկլտացող մի կրակ է, երբ արդեն ապրվածը թաղված է, գուցե և հենց այս փայլող, թափառող աչքերն են ընտանիքի ոգին, դարի ոգին, մշակույթի ոգին... գերեզմանի վրա հեծկլտացող կրակե աչքերը...

Գնացքը դանդաղեցրեց ընթացքը: Ջահերը վառվեցին անշարժության մեջ: Ուղևորները տեղերից պոկվեցին: Գնացքը սլացավ կայարան: Ջահերը հեծկլտում էին: Իսկ այն աչքերը՝ անկյունում: Նրանք փակ էին: Գուցե և կուրացնող լույսից: Եվ բնականաբար կայարանի կուրացնող լույսերի ներքո լիովին պարզ դարձավ,

որ սովորական, բնավ էլ ոչ երիտասարդ կինը
եկել էր Լոնդոն ինչ-որ ամենասովորական ու
չնչին պատճառով, ինչ-որ մի բանի համար՝
կապված կատվի կամ ձիու կամ էլ շան հետ:
Նա ձեռքը մեկնեց ծամպրուկին, կանգնեց ու
իջեցրեց փասիանները: Բայց միթե դեռ ամեն
բան նույնն էր մնացել, քանզի երբ նա բացեց
դուռն ու առաջ քայլեց, միթե նա չփսփսաց.
«Բըխ, քըխ»:

ԼԱՊԻՆԸ ԵՎ ԼԱՊԻՆՈՎԱՆ

Նրանք արդեն ամուսիններ էին: Հարսանեկան շքերթի մեղեդին լցվել էր ամեն մի անկյուն: Աղավիհները սավառնում էին: Էթոնական բաժկոններով տղաները բրինձ էին շաղ տալիս, ֆոքստերյերը ձեմում էր փողոցի երկայնքով, իսկ Էռնեսթ Թորբերնը հարսնացուին ուղեկցում էր մեքենայի մոտ՝ անցնելով քթերն ամեն տեղ մտցնող հետարքրքրասերների բազմության միջով, որոնք Լոնդոնում տեղի ունեցող երջանիկ ու դժբախտ դեպքերի մշտական հանդիսատեսներն էին: Հավաքվում էին ու վայելում տեսարանը: Անշուշտ, ամուսինը գեղեցիկ տեսք ուներ, մինչդեռ կինը ամոթխած էր: Նորից բրինձ շաղ տվեցին, ու մեքենան շարժվեց:

Դա երեքշաբթի էր: Իսկ այսօր արդեն շաբաթ է: Ռոզալինդան ամեն կերպ փորձում է ընտելանալ նոր անվանը՝ տիկին Էռնեսթ Թորնբերն: Իսկ եթե նա այդպես էլ չընտելանա՞, որ ինքն արդեն տիկին Էռնեսթ Այսինչն է, մտածում էր Ռոզալինդան, հյուրանոցի կամարածն պատուհանից նայելով լճի մյուս ափին նիրհած լեռներին: Նա սպասում էր, թե երբ է

ամուսինը նախաճաշի իջնելու: Էռնեսթ անվա-
նը դժվար կլինի ընտելանալ: Նա երբեք իր հա-
մար նման անուն չէր ընտրի: Ավելի շուտ կնա-
խընտրեր օրինակ Թիմըթի, Էնթընի կամ էլ Փի-
թեր: Եվ ավելին, իր ամուսինը բնավ էլ նման չէ
Էռնեսթին: Այդ անունը անխզելիորեն հանգուց-
ված է Ալբերտի հուշակոթողին, կարմրափայ-
տե պատուհաններին, ընտանիքի շրջանում
արքայազն-ամուսնու պատկերներով քանդակ-
ների: Կարճ ասած, այն ձուլված է իր սկեսրոջ
տան ճաշասենյակին՝ Փորչեսթըր-Թերասայի
փողոցում:

Ահա՛ և նա: Փայք Աստծու, նա մի գրամ էլ
նման չէր Էռնեսթին, հաստատ: Բայց ղում էր նա
նման: Ռոզալինդան ակնապիշ նայեց նրան:
Ահա՛... երբ ուտում էր բոված հացի խոթխոթան
շերտը, նա նման էր մի իսկական... ճագարի:
Ո՛չ ոք, բացի Ռոզալինդայից, այս թիկնեղ,
սպորտային կազմվածք ունեցող, ուղիղ քթով,
կապույտ աչքերով և շուրթերի հստակ ծալքերով
երիտասարդի մեջ չէր տեսել նմանություն այդ
փոքրիկ վախկոտ կենդանու հետ: Սակայն այդ
ամենն ավելի զվարճալի էր դառնում, երբ...
երբ նա ուտում էր, քիթը շարժվում էր: Այն
իրոք, որ նման էր Ռոզալինդայի սիրած կեն-
դանու քթին: Նա հետևում էր, թե ինչպես է Էռ-
նեսթը շարժում քիթը, նա նկատեց կնոջ հա-

յացքը, մնում էր բացատրել, թե ինչն էր նրան զվարճացրել:

- Ծիծաղում եմ, որովհետև դու հիմա իսկական ձագարի ես նման, Էռնեսթ,- ասաց Ռոզալինդան,- բայց ոչ թե սովորական ձագարի, այլ՝ վայրի,- շարունակեց նա՝ նայելով ամուսնուն,- դու նման ես որսորդ-ձագարի, թագավոր-ձագարի, որն առաջնորդում է մնացած բոլոր ձագարներին:

Էռնեսթը դեմ չէր լինել նման ձագար. քանի որ կնոջը զվարճացնում էր, որ ինքը շարժում էր քիթը (իր քթի նման հատկության մասին նա բնավ էլ չգիտեր), այդ պատճառով էլ նա սկսեց այն դիտմամբ շարժել: Ռոզալինդան ծիծաղում ու ծիծաղում էր, իսկ Էռնեսթը՝ նորից ու նորից կրկնում ու ծիծաղում կնոջ հետ միասին. ահա՛ պառաված օրիորդները, ձկնորսը, ձենձոտ սև բաձկոնով շվեյցարացի մատուցողը, որոնք միանգամից գլխի ընկան՝ երիտասարդ զույգը շատ երջանիկ է: Բայց որքան կտևի նրանց այդ երջանկությունը, հարցնում էին նրանցից ամեն մեկն իրեն, ու ամեն մեկն էլ պատասխանում էր՝ սեփական կյանքի փորձից ելնելով:

Ընթրիքին՝ նստած լժի ափի չորացած խոտերի վրա, Ռոզալինդան հարցրեց. «ձագարս, կաթնուկ ուզում ես»,- առաջարկելով ձեռքին

պահած կաթնուկը, որը նա վերցրեց պինդ խաշած ձվերի հետ միասին ուտելու համար. «Արի՛, ես ինքս քեզ կկերակրեմ», - ավելացրեց նա, ու էռնեսթն առաջ եկավ ու սկսեց կրծոտել կաթնուկն ու շարժել քիթը:

- Իմ խելո՞ք ծագարիկ, լավ ծագարիկ, - ասաց Ռոզալինդան ու շոյեց նրան, ինչպես սովոր էր շոյել իր տնային ծագարին: Բայց ո՛չ, անհնար բան է դա: Ո՛վ, ո՛վ, բայց ինքը երբեք չէր կարող տնային ծագար լինել: Գուցե ֆրանսերենով անվանենք: «Lapin», - կանչեց Ռոզալինդան էռնեսթին: Բայց ահա խնդրեմ նորից, ախր նա ոչ էլ կարող էր լինել ֆրանսիական ծագար, միայն ոչ նա: Չէ՞ որ նա մինչև մազերի ծայրը անգլիացի էր, ծնվել էր Փորչեսթեր-Թերասայում, սովորել Ռեզբիում, իսկ հիմա քաղաքացիական ծառայության մեջ է գտնվում Ձերդ գերազանցություն թագավորի մոտ: Ու հիմա կոչվել «ծագարիկ», պարզապես ահավոր էր: «Ճագարիկը» նման է թմբիկ, փափիկ ու զվարճալի մեկին, իսկ էռնեսթը նիհար էր, լուրջ ու կտրուկ: Բայց միևնույն է, անգամ այդպես նրա քիթը շարժվում էր: «Լամպին», - հանկարծակի բացականչեց Ռոզալինդան: Քիչ էր մնում նա գոռալով ասեր այդ անունը, ասես վերջապես գտավ այն բառը, որն այդքան դժվարությամբ փնտրել էր:

- Լաւպին, Լաւպին, թագավոր Լապին,- կրկընում էր նա: Մականունը, թվում էր, լավ էլ սազում էր նրան: Նա իրոք, որ Էռնեսթը չէ, ինչ Էռնեսթ, նա թագավոր Լապինն էր: Ո՞վ իմանա...

Նրանց երկար ու մեկուսի գրոսանքների ժամանակ, երբ նրանք զրոյցի ոչ մի նոր թեմա չէին ունենում, իսկ անձրևը վերևից հեղեղի նման թափվում էր, ինչպես և նրանց ծանոթները զգուշացրել էին. նրանք երևակայում էին... կամ էլ, երբ երեկոններն անցկացնում էին բուխարու մոտ նստած՝ ունայնանալով ցրտից... երբ պառաված օրիորդներն ու ձկնորսն արդեն հեռացած էին լինում ամեն մեկն իր սենյակը, իսկ մատուցողը հայտնվում էր միայն այն դեպքում, երբ նրան կանչելու կոչնակը սեղմեիր, Ռոզալինդայի երևակայությունը փթթում էր, ու նա հորինում էր Լապինների ցեղախմբի պատմությունը: Այդ ընթացքում կար էր անում, իսկ Էռնեսթը կարդում էր. այնտեղ ամեն ինչ իրական էր, պատկերավոր ու զվարճալի: Էռնեսթը մի կողմ էր դնում թերթն ու գալիս կնոջն օգնության: Միասին նրանք կյանքի էին կոչում սև և շիկակարմիր ծագարների, թշնամի-ծագարների, ընկեր-ծագարների: Հայտնվեց նաև անտառը, որտեղ ապրում էին այդ ծագարները, հետո նաև հայտնվեցին տափաստանները, այնուհետև երևակայությունից ծնվեցին ծահճուտ-

ներ: Բայց ամենից առաջ էռնեսթը տարված էր Թագավոր-Լապինով: Այն ժամանակները, երբ նա կարողանում էր միայն քթով շարժել, վաղուց անցյալում էին մնացել, հիմա նա ո՛չ թե խելացի մի կենդանի էր, այլև ամենահիասքանչ մի գազան: Ռոզալինդան ամեն Աստծու օր նոր առավելություններ էր գտնում նրա մեջ: Սակայն ամենից առաջ իր էռնեսթը մնում էր հրաշալի որսորդ:

- Իսկ ի՞նչ է արել այսօր Թագավորը,- իրենց մեղրամսի վերջին օրը հարցրեց Ռոզալինդան ամուսնուն:

Իրականում նրանք միասին ամբողջ օրը զբոսնել էին լեռներում, ու դրանից նրա կրունկին բշտներ էին առաջացել, սակայն նա դա նկատի չուներ:

- Այսօր,- պատասխանեց էռնեսթը՝ շարժելով քիթն ու ծխելով ծխախոտի վերջին գլանակը,- նա ընկել էր մի նապաստակի հետևից,- լոռեց, վառեց լուցկին ու նորից շարժեց քիթը:

- Աղջիկ նապաստակի,- քիչ անց ավելացրեց էռնեսթը:

- Սպիտակ աղջիկ նապաստակի՞ հետևից,- բացականչեց Ռոզալինդան, ասես հենց նման բանի էր սպասում,- փոքրիկ նապաստակ, չէ՛, սպիտակ, արծաթ-մոխրագույն բծերով ու փայլփլուն աչքերով:

- Հա՛, հա՛,- ասաց Էռնեսթն ու նայեց կնոջը հենց այնպիսի հայացքով, ինչպիսի հայացքով նա էր իրեն նայում,- մի փոքրիկ նապաստակ էր՝ խոշոր, դուրս եկած աչքերով, առջևի թաթերն էլ պարզած,- նա նկարագրեց իսկ և իսկ, թե այդ պահին ինչպես էր նստած Ռոզալինդան՝ նրա ձեռքին կարն էր, իսկ նրա խոշոր ու փայլուն աչքերը իսկապես որ մի փոքր դուրս եկած էին:

- Օ՛հ, Լապինովան,- շշնջաց Ռոզալինդան:

- Ահա թե ի՞նչ է իրական Ռոզալինդայի անունը,- ասաց Էռնեսթն ու նայեց կնոջը: Որքան շատ էր նա սիրում այդ էակին:

- Այո՛,- ասաց Ռոզալինդան,- նրա անունը Ռոզալինդա է:

Մինչ քնելը նրանք ամեն բան պայմանավորվեցին: Այդ պահից ի վեր Էռնեսթը Լապին-Թագավորն էր, իսկ Ռոզալինդան՝ Լապինովա-Թագուհին: Նրանք մեկը մյուսի հակադրությունն էին, Էռնեսթը՝ խիզախ ու անընկճելի էր, մինչդեռ ինքը՝ անհույս ու երկչոտ: Էռնեսթը թագավորում էր հոգսաշատ ծագարների, իսկ նրա թագուհի Ռոզալինդայի թագավորությունը մի անապատային ու խորհրդավոր վայր էր, ուր նա թափառում էր լուսնյակ գիշերներին: Ամեն դեպքում նրանց թագավորությունների տա-

րաձքները հատվում էին իրար. չէ՞ որ նրանք Թագավորն ու Թագուհին էին:

Ու այսպես մեղրամսից վերադառնալով՝ նրանք ունեին սեփական աշխարհը, ուր բացի սպիտակ նապաստակից, ապրում էին նաև միայն ու միայն ձագարներ: Ո՛չ մի կենդանի շունչ չէր էլ կարող կասկածել այդ աշխարհի մասին ու այդպես այն ավելի զարմանահրաշ էր: Բոլոր նորապսակներին էլ բնորոշ է այն զգացողությունը, որը նրանց մոտ էլ էր հայտնվել ու ավելի տպավորիչ էր, քան մյուսների մոտ. նրանց թվում էր, որ դավադրության մեջ են ամբողջ աշխարհի դեմ: Նրանք խորամանկ նայում էին մեկմեկու, երբ խոսքը ձագարների, անտառների, ծուղակների և որսի մասին էր: Թաքուն հայացքներ էին փոխանակում սեղանի շուրջ, ինչպես այն անգամ, երբ մորաքույր Մերին ասաց, որ տանել չի կարող ձագարով ուտեստները, իբր դրանք ասես նորածիններ լինեն, կամ էլ այն անգամ, երբ Ջոնը՝ Էռնեսթի եղբայրը, ու նրա որսի ընկերը պատմեց, թե ինչ գնով են այս աշնանը Յորքշիրում վաճառել ձագարներին, այն էլ ամբողջական ձագարներին՝ մորթու հետ միասին: Երբեմն Էռնեսթին ու Ռոզալինդային իրենց երևակայական աշխարհում պետք էին գալիս խաղացողներ՝ որսագողեր, կառավարիչներ, ուստի նրանք մտա-

ծում ու որոշում էին, թե իրենց ծանոթներից ում ինչ դեր կարելի էր շնորհել: Օրինակ՝ Էռնեսթի մայրը՝ տիկին Ռեջինալդ Թորբերնը, իսկ և իսկ ստեղծված էր կառավարչի դերի համար: Սակայն ամենևն այս նրանց գաղտնիքն էր, այլապես այն կկորցներ ամբողջ հմայքն ու հետաքրքրությունը. ոչ ոք չգիտեր իրենց թաքուն աշխարհի գոյության մասին:

Եթե չլիներ այդ աշխարհը, մտածում էր Ռոզալինդան, ինչպես էր նա դիմանալու ողջ ձմեռը: Ինչպես էր դիմանալու, օրինակ, ոսկե հարսանիքի ժամանակ, երբ Թորբերներն ու նրանց բարեկամները մի մարդու նման հավաքվել էին Փորչեսթըր-Թերասայում, որ նշեին ավագ Թորբերների հիսունամյա հոբելյանը, այն օրինված հոբելյանը, որն աշխարհին էր նվիրել Էռնեսթ Թորբերնին, այն պտղատու հոբելյանը, որից աշխարհ էին եկել ինը եղբայրներն ու քույրերը, որոնք էլ իրենց հերթին էին ամուսնացել և իրենց ամուսնություններն էլ էին պտղատու եղել: Ռոզալինդան երկյուղում էր այդ երեկոյից: Բայց չգնալ չէր կարող: Նա աստուծոմ էր, որ ընտանիքի միակ երեխան էր. այսպես մտածելով բարձրանում էր Ռոզալինդան աստիճաններով՝ «չէ՞ որ նա՝ անձրևի մի փոքրիկ կաթիլը, կկորչի Թորբերների հեղեղի մեջ, որոնք հավաքված էին մեծ ու շքեղ հյուրա-

սենյակում փայլփլուն ատլասե պաստառներով, պատերին փակցրած ընտանեկան սևդուկափայլ նկարներով»: Այս իրական Թորբերները քիչ էին տարբերվում նկարներում քարացած Թորբերներից, միայն թե, ի տարբերություն նկարների, նրանց բերանները ոչ թե նկարված էին, այլև սեփական ձեռքի գործ էին համարվում, որոնք երբեմն էլ իրենց կատակներ էին թույլ տալիս՝ դպրոցական կատակներ, օրինակ՝ թե ինչպես էին ուսուցչի նստելու պահին քաշել աթոռը. կատակներ գորտերի մասին՝ ինչպես էին դրանք թաքցնում պառաված օրիորդների անկողիներում: Իսկ ինքը՝ Ռոզալինդան... ինքը երբեք իրեն նման բաներ թույլ չի տվել: Ձեռքում սեղմելով նվերը՝ նա մոտենում է շքեղ ատլասե դեղին զգեստը հագին սկեսրոջը և սլացիկ կեցվածքով սկեսրայրին, որի բաձկոնի գրպանից ժպտում էր գեղեցիկ դեղին մի մեխակ: Նրանց շուրջը՝ սեղանի և աթոռների վրա, նվերների ոսկե մի թումբ էր գոյացել. ծխախոտի տուփեր, ոսկյա շղթաներ. ամեն մի նվերի վրա ոսկերչի անձնական կնիքն էր դաջված, որ անգամ մի գրամ կասկած չմնա, որ նվերներն այս ոչ թե հասարակ կամ կեղծ են, այլև ամեանաբարձր որակի ոսկուց են ձուլված: Իսկ իրենը. Ռոզալինդայի նվերն ընդամենը ծակ տուփ էր, թեև ձուլված

ոսկուց և պղնձից՝ տասնութերորդ դարի մի իրական պահպանված նմուշ, հին ժամանակներում սրանց մեջ էին ավազով շաղ տալիս թանաքը չորացնելու համար: Ռոզալինդան ինքն էլ էր հասկանում, որ իր նվերն այդքան էլ պետքական չէր, այն էլ՝ երբ արդեն այդ դարում ծծողական թուղթն էր երևան եկել... ու երբ նա տվեց նվերը սկեսրոջը, նրա աչքի առջև տեսաժապավենի նման սահեցին սկեսրոջից ստացած նամակի տողերը, սևով սպիտակին գրված բառերը, որում նա, երբ նրանք նշանադրվել էին, իր հույսն ու ցանկությունն էր արտահայտում, ասելով՝ «իմ որդին քեզ կերջանկացնի»: Սակայն նա երջանիկ չէր: Նա բնավ էլ երջանիկ չէ նաև հիմա: Ու նա նայեց էռնեսթին՝ փայտի նման ուղիղ կանգնած, իսկ քիթը... քիթը իսկ և իսկ այնպիսին էր, ինչպիսին այս բոլոր նկարներում, նման քիթը երբեք չէր կարող շարժվել:

Հետո նրանք իջան ներքև ճաշելու: Ռոզալինդայի դիմաց, նրան գրեթե ամբողջովին ծածկելով, դրված էր քրիզանթեմների մի փունջ, որոնց մեղրածոր ոսկե թերթիկները խոշոր ու խիտ շրջաններ էին հյուսել: Շուրջն ամեն բան ոսկեծոր էր: Բացիկները՝ ոսկյա եգրերով և ոսկեթել ասեղնագործ առաջնատառերով, պարունակում էին ուտեստների հերթա-

կանությունը, որոնք իրենց իսկ նշված կարգով պիտի մատուցվեին: Ռոզալինդան գդալը մոտեցրեց թափանցիկ ոսկեգույն զանգվածով ավսեին: Սպիտակ մառախուղը ջահերի լույսից վերածվել էր ոսկե շղարշի, ավսեների ծայրերը եզրագծվել էին ոսկե շղթաներով, իսկ արքայախնձորների կեղևները պատվել էին ասես ոսկեգույն փոշեհատիկներով: Եվ միայն նա՝ իր հարսանեկան զգեստով, մի քիչ ուռած ու մի կետի նայող աչքերով, ձերմակ էր՝ միակ ձերմակ լույսը այդ ամբողջ ոսկեծորի մեջ, միակ հանդուգն ու չհավվող սառցի կտորը:

Ճաշը ձգձգվում էր: Իսկ ճաշասենյակում տոթ էր: Տղամարդկանց ձակատներին քրտինքի խոշոր կաթիլներ փայլեցին: Ռոզալինդան զգում էր, որ... որ սառույցը հալվում է: Նա հալչում էր. հոդս ցնդում, գլորշանում, կորցնում էր գիտակցությունը: Այդ պահին մտքերի քառսի և աղմուկի մեջ նա լսեց կանացի բացականչություն.

«Բայց ինչ փթթուն են...»:

Թորբերները... այո՛, իսկապես, որ նրանք բեղուն են, մտքի մեջ այդ խոսքերին համաձայնեց Ռոզալինդան՝ մեկը մյուսի հետևից աչքի անցկացնելով նրանց գիրուկ, կարմրաթուշ կառուցվածքները, որոնք կրկնապատկվում էին իրեն պատած գլխապտույտից, փթթում իրենց պարուրած ոսկե մշուշից... Բայց ինչ բեղուն են:

Այդ պահին Ջոնը բղավեց.

- Փոքրիկ հրեշներ... Կրակել է պետք դրանց... Ոտքերի տակ տրորել: Միայն այդպես կարելի է դրանցից ազատվել: Ա՛խ, այդ ծագարները:

Այդ կախարդական բառը լսելուն պես Ռոզալինդան ասես մի հրաշքով սթափվեց խորը նիրհից: Դարձավ դեպի էռնեսթը և քրիզանթեմների ցողունների արանքից տեսավ, թե ինչպես է շարժվում նրա քիթը: Այն կնձռոտվեց ու միմյանց հաջորդեցին նման մի քանի շարժումներ: Հանկարծակի մի առեղծվածային բան սկսեց կատարվել Թորբերների ընտանիքի հետ: Ոսկյա սեղանը վերածվեց ձառնուտի, ուր բազմանում էին ու աճում օրոճները. ձայների խուլ աղմուկը փոխվեց երկնքում արտույտի վետվետումների հետ: Դա մի լազուր երկինք էր, ուր նազանքով սեթևեթում էին ամպերը: Նրանք նույնպես՝ բոլոր Թորբերները, մի վայրկյանում վերափոխվեցին: Ռոզալինդան նայեց սկեսրայրին, այդ ներկած բեղերով ծածկամիտ փոքրիկ մարդուկին, որը տարատեսակ առարկաներ հավաքելու մոլուցք ուներ՝ կնիքներ, էմալապատ տուփեր, տարբեր մանրուքներ, որոնք տասնութերորդ դարում շարում էին հարդասեղաններին, միևնույն ինքն այդ ամենը թաքցնում էր գրասեղանի դարակներում՝ կնոջ

աչքից հեռու: Ու ահա Ռոզալինդային միանգամից պարզ դարձավ, թե ո՞վ էր նա. լոկ մի որսագող, որը բաժկոնի տակ էր թաքցնում փասիաններ ու կաքավներ և ծածուկ ծլկում իր փոքրիկ ծխոտ տնակը, որտեղ էլ եփում էր իր ավարը եռոտանու վրա: Ահա՛ թե ով էր իրականում սկեսրայրը՝ որսագող: Իսկ Սիլիան՝ նրանց չամուսնացած աղջիկը, որը միշտ քիթը մյուսների կյանքի մեջ էր մտցնում, նրանց գաղտնիքները փորփրում, գաղտնիքներ, որոնք սովորաբար մարդիկ փորձում են թաքցնել: Նա մի սպիտակ կզաքիս էր՝ կարմիր աչքերով և կեղտոտ քթով, որը մտցնում էր ամեն մի անկյուն: Սիլիայի կյանքը բավականին խղճուկ է, տաղտկալի. թրև գալ որսորդների շալակած ցանցերի մեջ, սպասել, թե երբ են քեզ բաց թողնելու քո իսկ բույնը. բայց ի՞նչ արած, սա էլ նրան բաժին ընկած ու իր իսկ ընտրած խաչն էր: Ահա այսպիսի կերպարի մեջ էլ բացահայտվեց Սիլիան: Այնուիետև Ռոզալինդայի հայացքը սահեց սկեսրոջ կողմը, որին իրենք որպես ազնվական կառավարիչ էին թագադրել՝ կարմրաթուշ, անփոփոխ և ինքնախաբված մի անմիտ. այս ամենը հենց նրա մասին է ասված, մինչդեռ, երբ նա կանգնած էր ու շնորհակալություն էր հայտնում իրենց հոբելյանը շնորհավորողներին, այդ ժամանակ Ռոզալինդային, չէ՛,

չէ, Լապինովային սկեսուրը մի նոր կերպարի մեջ բացահայտվեց, ու այդ բացահայտման հետ մեկտեղ պարզվեց նաև ընտանեկան կիսափուլ առանձնատան տեսարանը՝ պատերից թափվող ծեփոններ և... սկեսրոջ ձայնի մեջ սկսեցին լսվել թախանձանքի ելևէջներ, երբ նա երախտիքի խոսք էր հայտնում իր իսկ զավակներին (մինչդեռ նրանք բոլորը ասում էին մորը) այն կյանքի համար, որը վաղուց էր արդեն ավարտվել: Հանկարծ լուռություն տիրեց: Բոլորը ոտքի կանգնեցին: Բաժակները լցվեցին. դատարկվեցին. երեկոն էլ ահա ավարտվեց:

- Ա՛խ, Թագավոր-Լապին,- հեծկլտաց Ռոզալինդան, երբ նրանք տուն էին դառնում մշուշի միջով,- եթե այդ պահին քիթդ չչարժեիր, ապա ես հիմա թակարդի մեջ հայտնված կլինեի:

- Հիմա այլևս վախենալ պետք չէ,- պատասխանեց Թագավոր-Լապինն ու սեղմեց Լապինովայի թաթիկները:

- Հա՛, պետք չէ վախենալ,- ավելացրեց Ռոզալինդան:

Այսպես նրանք այգու միջով տուն վերադարձան՝ Թագավորն ու Թագուհին, արբեցած ձահձուտների, մշուշների, օրոճների ու մորուսների գույներով ու պատկերացումներով:

Ժամանակն այդպես սլանում էր. մի տա-

րի... երկու տարի... Եվ մի անգամ՝ ձմեռային մի ցրտաշունչ գիշեր (ձակատագրի հեզանքով օրն այդ համընկավ ավագ Թորբերների ոսկե հարսանիքի տարելիցի օրվա հետ, միայն այս անգամ տիկին Թորբերն այլևս չկար, տունն էլ, ուր հիմա միայն պահակն էր մնում, տրվում էր վարձով), Էռնեսթը ծառայությունից տուն եկավ: Ապրում էին նրանք Հյուսիսային Կենսինգթոնում՝ մի փոքրիկ տան մեջ՝ ձի թամբողի խանութի վերևում, մետրոյի մոտ: Դրսում բավականին ցուրտ էր, ամեն բան մշուշով էր շղարշված, իսկ Ռոզալինդան բուխարու մոտ նստած կար էր անում:

- Գիտես այսօր ինձ հետ ի՞նչ պատահեց, հարցրեց Ռոզալինդան Էռնեսթին, որը դեռ չէր էլ հասցրել տեղավորվել բուխարու մոտ, - անցնում էի գետակով ու...

- Ի՞նչ գետակ, - ընդհատեց Էռնեսթը:

- Ա՛յն... դե այն վերևի գետակը, որտեղ սև անտառը հատվում է մեր տարածքներին, - բացատրեց Ռոզալինդան:

Էռնեսթը տարակուսանքով նայեց կնոջը.

- Ինչի՞ մասին ես խոսում, - հարցրեց նա:

- Էռնեսթ, սիրելի՛ս, - տազնապահար շտապեց պատասխանել Ռոզալինդան, - Թագավոր-Լապին, - ավելացրեց նա՝ կրակի լույսի ցուլքերի մեջ թափահարելով թաթերը. ձեռքերը նորից

թաթերի վերածվեցին ու կառչեցին կարից, իսկ աչքերը քիչ էր մնում դուրս ցայտեին բնից: Հինգ երկար ու ձիգ ռոպեներ նա սպասում էր, թե երբ վերջապես էռնեսթ Թորբերնը կվերափոխվի Լապին-Թագավորի... ու այդ սահմուկեցուցիչ ռոպեների ընթացքում նա իր ուսերին մի ծանր ու ահարկու բեռան ծանրություն էր զգում, ասես ուր որ է ինչ-որ մեկը կկտրի նրա փափիկ վզիկը: Եվ վերջապես էռնեսթի մեջ մարմնացավ Թագավոր-Լապինը, քիթը շարժեց, ու նրանք միասին ամբողջ երեկո թափանցեցին անտառներով:

Բայց և այնպես Ռոզալինդան լավ չքնեց: Գիշերվա կեսին նա արթնացավ՝ նրա հետ ինչ-որ տարօրինակ բան էր կատարվում: Ամբողջ մարմնով սարսուռ ու ցավ անցավ: Ի վերջո նա վառեց լույսն ու նայեց կողքին պառկած էռնեսթին: Նա խորը քնած էր ու խռմփացնում էր: Եվ չնայած խռմփացնում էր, բայց քիթը, մինևույն է, չէր շարժվում: Կարելի էր կարծել, որ այն երբևէ չէր էլ շարժվել: Իսկ ի՞նչ, եթե նա իրականում հենց էռնեսթն էր՝ ի՞նչ, եթե ինքը իրականում ամուսնացած էր իրենց էռնեսթի հետ: Եվ նրա աչքին այդ պահին հայտնվեց սկեսրոջ ճաշասրահը, այդտեղ իրենք էին նստած՝ էռնեսթը և ինքը, բայց արդեն ծերացած, իսկ նրանց գլխավերևում փորաքանդակներ, դիմա-

ցը՝ ծանր պահարաններ. նրանք նշում էին իրենց ոսկե հարսանիքը. ո՛չ, սարսափելի է, այս մեկին նա անկարող էր դիմանալ:

- Լա՛պին, Լա՛պին-Թագավոր,- շնջաց նա ու քիթն ասես ինքն իրեն շարժվեց: Մինչդեռ նա դեռ խորը քնած էր,- Լա՛պին, վեր կաց, արթնացիր,- հեկեկաց նա:

Էռնեսթն արթնացավ ու տեսավ կնոջն անկողնում նստած և հարցրեց.

- Ի՞նչ է եղել:

- Ինձ թվում է, որ իմ ճագարը սատկել է:

Էռնեսթը զայրացավ.

- Հիմարություններ դուրս մի տու՛ր, Ռոզալինդա,- ասաց նա,- պառկիր ու քնիր:

Հետո նա մեջքով շրջվեց դեպի կինը ու պառկելուն պես քնեց. արդեն խոմփացնում էր:

Մինչդեռ Ռոզալինդան չէր կարողանում քնել: Նա պառկել էր անկողնու ծայրին, ծնկները վախեցած ծալել ու կուչ էր եկել, իսկ և իսկ սկուտեղի մեջ մատուցված տապակած նապաստակի նման: Նա հանգցրեց լույսը: Սակայն փողոցի լուսամփոփների աղոտ լույսը ընկել էր առաստաղին ու ժանեկաձև սարդոստայնի նման նրա վրա դրոշմվել էին ծառերի տերևները. այնտեղ նա տեսնում էր սովերոտ մի պուրակ, ուր ինքը թափառում էր, այս ու այն

կողմ ցատկում, պտտվում, և ինքն էր տարվում որսով, և իր հետևից որսի ընկած շներն էին հաչում, փողերը՝ թնդում, իսկ ինքը սլանում էր, փախչում մինչև այն պահը, երբ սպասուհին մի կողմ տարավ վարագույրներն ու մոտեցրեց թեյը:

Հաջորդ օրը նա ասես իր տեղը չէր գտնում: Նրան անընդհատ մի զգացում էր հետապնդում, թվում էր՝ ինչ-որ բան է կորցրել: Նա կարծում էր, թե սեփական մարմինը կույշ է եկել, սեղմվել, փոքրացել, սևացել ու փայտացել: Անգամ ձեռքերն ու ոտքերն էին օտար թվում, իսկ երբ տանը շրջելիս հանկարծակի անցնում էր հայելու կողքով, նրան թվում էր, թե ուր որ է աչքերը բնից դուրս կթռչեն, ինչպես փքաբլիթի կեղևն է ջեռոցի տաքությունից պայթում: Սենյակն էլ կարծես սեղմվել էր: Կահույքի լայն ու ծավալուն ծայրերը ցրիվ էին եկել սենյակի ամենաանսպասելի անկյուններում, որոնց նա անընդհատ հարվածում էր ու վնասում ինքն իրեն: Ի վերջո՝ նա դրեց գլխարկն ու այդ սենյակի ճնշող պատերից դուրս թռավ: Քայլում էր Քրոմուել Րոուդի փողոցով ու ամեն մի սենյակը, որի կողքով անցնում էր, ուր որ աչք էր գցում, իրեն ճաշասենյակ էր թվում, որտեղ դեղին ժանեկավոր վարագույրներից այն կողմ, մարդիկ էին ճաշում, իսկ նրանց գլխա-

վերևում փորաքանդակներ են կախված, դիմացը խոյանում էին հսկա պահարաններ: Ահա վերջապես նա հասավ Ճշգրիտ պատմության թանգարան: Փոքր հասակում նա շատ էր սիրում գալ այստեղ: Բայց դեռ չէր էլ հասցրել ոտքը թանգարանի շեմքից ներս դնել, երբ առաջին բանը, ինչին հայացքը հանդիպեց, կարմիր, ապակե աչքերով նապաստակի խրտվիլակն էր՝ արհեստական ձյան վրա կանգնեցրած: Գուցե, երբ շուտով մթնշաղ լինի, նրա ինքնազգացողությունը բարձրանա: Նա տուն վերադարձավ. առանց լույսը վառելու նստեց բուխարու մոտ ու սկսեց պատկերացնել, որ ինքը մենակ է ճահճուտում, մի փոքր այն կողմ գետակն է կարկաչում, իսկ գետից այն կողմ մթանգնում է սև անտառը: Սակայն ինքն անկարող է հաղթահարել այդ հոսանքը: Եվ ահա հայտնվում է գետի ափին. հպվել է թաց կանաչին. իրականում կուչ է եկել բազմոցին, իսկ ձեռքերը... ձեռքերն այս անգամ դատարկ են, իսկ աչքերը... աչքերը կրակի ցուլքերից առավել աղոտ են փայլում, ասես ապակուց լինեին: Ու հանկարծ կրակոց որոտաց... Վեր ցատկեց. ասես իրեն կրակեցին: Բայց դա ընդամենը էռնեսթն էր. բանալին մտցրեց դռան մեջ: Նա սպասում էր ամուսնուն՝ մարմնով մեկ սարսուռալով: Էռնեսթը ներս մտավ, վառեց լույսը: Նա

կանգնել էր այդտեղ՝ բարձրահասակ, գրավիչ-
ցրտից տրորում էր կարմրած ձեռքերը:

- Խավարասներ ես դարձել,- ասաց նա:

- Ա՛խ, Էռնեսթ, Էռնեսթ,- բացականչեց Ռո-
զալինդան՝ տեղից վեր ցատկելով:

- Լավ, հիմա ի՞նչ է եղել,- կտրուկ հարցրեց
էռնեսթն ու ձեռքերը ուղղեց բուխարուն:

- Լա՛պինովան... Էռնեսթ, Լա՛պինովան,-
կմկմաց Ռոզալինդան՝ խոշոր, բայց այդ պա-
հին վայրի աչքերով նայելով ամուսնուն,- նա
չկա՛... ես նրան կորցրել եմ...

Էռնեսթը խոժոռվեց: Ամուր սեղմեց շուրթե-
րը:

- Ահա, թե ի՞նչ,- ասաց նա ու խորաթա-
փանց ժպտաց կնոջը: Երկար ու ձիգ տասը րո-
պեներ նա լոկ լուռ կանգնած էր, իսկ Ռոզալին-
դան սպասում էր. զգում էր, թե ինչպես են իր
ձեռքերը գալարվում իր իսկ վզին:

- Ահա թե ի՞նչ, խեղճ Լապինովա,- ասաց
նա լռելուց հետո՝ հայելու մեջ ուղղելով փողկա-
պը:- Ծուղակն է ընկել ու... սատկել է,- հետո
նստեց բազմոցին ու խորացավ թերթի մեջ:

Եվ դա եղավ նաև նրանց ամուսնության
ավարտը:

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ

Միակ բանը, որը շարժվում էր ունայն, ընդարձակ ու կիսաշրջանաձև ափիս, մի սև հետք էր: Հետզհետե աննշմար դարձող այդ խավարի մեջ մոտենալով ձկնորսական նավակին՝ պարզ դարձավ, որ այդ սև հետքը ոչ թե սոսկ հետք էր, այլ ոտքեր էին. վայրկյան առ վայրկյան կասկած չէր մնում, որ դրանք երկու երտասարդ տղամարդ էին: Անգամ առանց դիմագծերը տեսնելու, կարելի էր գուշակել, որ նրանց մեջ վառվում է երիտասարդության ավյունը. երկու շարժուն մարմիններ, որոնք մեկ մոտենում էին իրար, մեկ հեռանում: Նրանց մեջ մի անասելի կայտառություն կար, գլուխներն անընդհատ այս ու այն կողմ էին շրջվում, երևում էր, որ նրանք ինչ-որ թեմայի մասին լուրջ քննարկումով էին տարված: Այս բոլոր կասկածները փարատվեցին, երբ տեսանելի դարձավ նրանցից մեկի աջ կողմում մարմնից առաջ ընկնող ձեռնափայտը, ասես այն չէր ենթարկվում տիրոջ ձեռքին: «Դու չես կարող համոզված պնդել. մի՞թե իսկապես կարծում ես, որ...», - թվում էր՝ դժգոհում է աջ ձեռքի այդ ձեռնափայտը՝ ավազի վրա նախշելով երկար ու ուղիղ գծեր:

- Կորչի գրողի ծոցը քաղաքականությունը, պարզ լսվեց աջ կողմից, ու աստիճանաբար տեսանելի դարձան նաև երկու գրուցակիցների շրթունքները, քթերը, կզակները, կարծ բեղերը, տվիդե գլխարկները, կոշիկները, որսորդական բաճկոնները և վանադակավոր գուլպաները: Նրանց ծխամորձերի ծուխը բարձրացավ վերև. ամբողջ ծովափի երկայնքով մեկ ոչինչ այդքան իրական ու հաստատուն չէր, այդքան կենդանի, առածիգ, ալ կարմիր ու կյանքով լի, որքան այդ երկու երիտասարդ մարմինները:

Նրանք նետի նման մխրձվեցին ձկնորսական նավակի կողքին՝ ավազի մեջ: Գիտե՞ք՝ երբեմն մարմինն ինքնակամ ազատում է իրեն վեճի թեմայից ու ներողամտություն հայցում չափից ավել բորբոքվելու համար, գտնելով մի հարմար դիրք՝ նա իր թուլացած թեթևությամբ ցույց է տալիս պատրաստակամությունը մի նոր զբաղմունքի տրվելու՝ ցանկացած մի նոր բան, ինչն առաջինը ձեռքի տակ կրնկնի: Ահա այդպես էլ Չարլզը, ում ձեռնափայտը մի քանի վայրկյան առաջ ափի ավազներն էր գուրգուրում, հիմա արդեն ձեռնափայտից հոգևած քարեր էր նետում գետի մեջ, իսկ Ջոնը, որը բացականչեց «կորչի գրողի ծոցը քաղաքականությունը», մատներով մխրձվեց ավազների մեջ: Նա ավելի ու ավելի էր խրվում ավազների մեջ,

մինչև արմունկը, հետո ավելի խորը, այնքան խորը, որ հարկ եղավ քաշել վերնաշապիկի թևքը: Նրա հայացքից անհետացավ լարվածությունը, հօդս ցնդեցին այն ամբողջ փորձառությունն ու մտքերի երանգները, որոնք հասուն մարդու աչքերին տալիս են անթափանց խորություն, իսկ հիմա նրա աչքերում մնացել էր լոկ անազատ, թափանցիկ մի մակերես, որը ոչինչ չէր ասում. այն անբովանդակ էր, եթե իհարկե չնկատվեր մանուկներին հատուկ զարմանքը: Իհարկե, այս ամբողջ զգացողությունների հեղեղի հիմքն ավազների մեջ սուզվելն էր: Նա հիշեց, որ եթե մի փոքր խորը փոս փորի, ապա մատների արանքից կսկսի հորդել ջուրը ու փոսը կվերածվի ջրափոսի, ջրհորի, աղբյուրի, կդառնա գետը տանող մի գաղտնի անցուղի: Մինչև նա տարված էր, թե դրանցից որ մեկն ընտրի, մատները, առանց իսկ ջրի մեջ դադար առնելու, դիպան ինչ-որ պինդ առարկայի՝ մի ծավալուն առարկայի, որը նա մի քիչ շարժեց, թուլացրեց ու դուրս հանեց: Ավազե հաստ շերտի տակից կանաչ մակերես էր երևում: Ջոնը մաքրեց ավազը: Ապակու կտոր էր՝ հաստ ու գրեթե անթափանց: Գետն ամբողջովին հարթեցրել էր նրա ծայրերը՝ ոչնչացնելով նրա սկզբնական ձևը, ուստի անհնար էր ասել, թե ինչի կտոր է եղել նախկինում՝ շշի, բաժակի,

թե՛ պատուհանի: Հիմա ընդամենը մի ապակի էր՝ գրեթե թանկարժեք քար: Այն հարկավոր էր միայն մտցնել մի ոսկե շրջանակի մեջ կամ էլ կախել բարակ շղթայից ու իսկույն կվերածվեր զարդի, ինչ-որ մի ապարանջանի մասի կամ էլ ձեռքի վրա այրվող դալուկ կանաչ լուսե ցուքի: Իսկ եթե այն իրականում թանկարժեք քար է: Գուցե այն ծառայել էր այն թխահեր արքայադստերը որպես զանդ, որը նստել էր նավի ետևամասում՝ ձեռքերը իջեցրել ջրի մեջ ու լսում էր իրեն նեղուցն անցկացնող ստրուկների երգը: Կամ էլ գուցե Ելիզաբեթ թագուհու ժամանակաշրջանի ծովահենների կաղնու փայտից պատրաստած արկղից է եղել, որը, ընկնելով գետի հատակը, բաժանվել է հազար մասի ու այդպես մաս առ մաս դարեր շարունակ այս ու այն կողմ է հեղեղվել ալիքների հետ. հիմա էլ գուցե այդ զմրուխտները ափ են դուրս եկել: Ջոնը շրջեց ապակին ու միջով նայեց լույսին, նա այնպիսի դիրքով էր բռնել այդ ապակին, որ այդ անձն առարկայի մեջ իսկույն արտացոլվեց ընկերոջ իրանն ու պարզած աջ ձեռքը: Կանաչ լույսը մեկ պայծառանում էր, մեկ՝ խունանում. նայած, թե ով էր նրա հետևում՝ երկինքը, թե՛ Չարլզը: Ջոնին դա դուր եկավ: Նա զարմացել էր: Ձեռքերում հայտնված առարկան այնքան պինդ էր, այնքան կայուն և այն-

քան հասարակ՝ ի տարբերություն խորհրդավոր ծովի ու մշուշապատ ափի:

Հանկարծ նրան սթափեցրեց մի հառաչանք, մի խորը հառաչանք, որից նրան իսկույն նեթ պարզ դարձավ, որ ընկերը՝ Չարլզը, արդեն ծովն էր նետել աչքին ընկած գրեթե բոլոր քարերը, կամ էլ արդեն գլխի էր ընկել, որ զվարճանքն այդ իրականում անիմաստ է: Կողք-կողքի նստեցին նրանք ու, դադար առնելով իրենց զբաղմունքից, կերան սենդվիչները: Կերան, վերջացրին, թափ տվեցին ավազոտված հագուստներն ու վեր կացան: Ջոնը նորից վերցրեց ապակու կտորն ու նայեց դրան: Չարլզն էլ նկատեց ընկերոջ ձեռքի այդ ապակին: Բայց նա, ի տարբերություն Ջոնի, ծխամորձը լցնելու ժամանակ միանգամից նկատեց, որ այդ ապակին հարթ չէ և իրեն հատուկ կենսունակությամբ, որով նա ցրում էր բուպեական տխրության ազդեցությունը, ասաց.

- Հա՛, ինչի՞ մասին, որ խոսում էի...

Չարլզը չտեսավ, բայց եթե տեսներ էլ, ապա ոչ մի նշանակություն էլ չէր տա, թե ինչպես Ջոնը մի տեսակ տարօրինակ տարակուսանքով նայեց ապակուն ու այն դրեց գրպանը: Այս պահը գուցե և հավասարազոր էր այն ակամայից ծնվող մղմանը, որով փոքրիկը ձգտում է վերցնել ճանապարհին ընկած քարե-

րից մեկը՝ հազարավոր քարերից լոկ մեկը, ու այն թագադրել մանկասենյակի բուխարու սալաքարին՝ տաքուկ ու ապահով մի տեղ. այդ ընթացքում էլ արթնանալով գթասրտության և իշխանության զգացումով և ենթադրելով, որ քարի սիրտը բաբախում է երջանկությունից, այն քաղցր գիտակցումից, որ իրեն ընտրել են հազարավոր իր նման քարերի ամբոխից՝ վայելքներ պարգևելու համար, այն հազարավոր քարերից, որոնք մատնված էին ցրտի ու խոնավության շնչի գրկում տաղտկալի գոյության: «Իմ փոխարեն կարող էին լինել նաև հազարավոր ուրիշներ, բայց ընտրեցին ինձ, ինձ, ինձ»:

Ա՛յս միտքն էր, թե՛ մեկ այլ բան էր զբաղեցնում Ջոնին, այնուհանդերձ ապակու կտորը իր տեղը գտավ սալաքարի վրա, նամակների կույտի և հաշիվների վրա, ուր որպես թղթամրակ էր ծառայում ու ինքնաբերաբար ձգում էր երիտասարդի ուշադրությունն այն պահերին, երբ նրա հայացքը թափառում էր սենյակում՝ շեղվելով ձեռքի տակ եղած գրքերից: Երբ մենք անգիտակցաբար երկար հայացք ենք գցում ինչոր առարկայի՝ միևնույն ժամանակ մտածելով մեկ այլ բանի մասին, առարկան այդ ներծծվում է ու հանգուցվում մեր մտքերի հյուսվածքին՝ կորցնելով իր իրական ուրվագիծը և անձնավորվելով մի նոր կատարյալ ձևի մեջ, որը

հաճախ ամենաանսպասելի պահերին առկայ-
ծում է գիտակցությանդ մեջ: Ու հիմա երբ Ջո-
նը դուրս էր գալիս գբոսնելու, հենց այդպես էլ
նրան էին ձգում անտիկ առարկաների խա-
նութները, դրանց ցուցափեղկերը այն պարզ
պատճառով, որ ինքն այդ ամենի մեջ տեսնում
էր կանաչ ապակուց մի մասնիկ, ամեն հնարա-
վ ամեն բան, ամեն մի առարկա, մի փոքր
շրջանաձև՝ ներքին թաքուն փայլով, որոնք բո-
լորն էլ հիշեցնում էին նրան իր ապակու կտո-
րի մասին, լիներ դա՝ հախճապակի, սովորա-
կան ապակի, գրանիտ, մարմար կամ էլ անգամ
թռչնի հարթ, շրջանաձև ձու: Ջոնը նաև սկսել
էր քայլելիս ուշադրություն դարձնել ոտքերի
տակ, հատկապես այն վայրերում, ուր մարդիկ
սովորաբար նետում էին իրենց անպետք իրե-
րը: Նման տեղերում հաճախ են հանդիպում
անպետք, անձև և բոլորից մոռացված առար-
կաներ: Մի քանի ամսում նա հավաքել էր չորս
թե հինգ նման ինքնատիպ իր, որոնք իրենց
արժանի տեղն էին գտել սալաքարին: Բացի
այդ, դրանք նաև գործի մեջ էին ծառայում,
քանզի նախարարի թեկնածուի համար, որը
պատրաստվում էր փայլուն առաջընթաց ունե-
նալ, կային բազում տարատեսակ թղթեր՝ ընտ-
րողներին ուղղված կոչեր, ծրագրեր, բարեգոր-

ծության նախագծեր, ճաշի հրավերքներ ու նման բաներ:

Մի անգամ, Թեմփլի իր բնակարանից դուրս գալով և ուղղվելով երկաթուղային կայարան, որտեղից նա պիտի մեկներ ընտրողների հետ հանդիպման, այդ նեղլիկ մայթերից մեկին՝ իրավաբանական շենքի մոտ, հանկարծ նկատեց կանաչների միջից դուրս եկած մի հետաքրքիր առարկա: Նա կարող էր հասնել այդ առարկային փայտի ծայրով՝ թուջե ցանկապատի արանքից: Ակնհայտ էր, որ ձենապակու կտոր էր՝ զարմանալի ձև ունեցող ծովաստղի նման մի բան. կանաչ խոտի վրա ուրվագծվում էին ինչ-որ հնգանկյուն ստվերներ, արդյոք միտումնավոր էր արված, թե՛ ուղղակի պատահականությամբ էր այդ տեսքն ստացել. գուցե ինչ-որ բան էր կոտրվել: Այն ողողված էր կապույտի մեջ, սակայն այդ կապույտին զգվել էին կանաչ ժապավեններ, թե՛ դրանք ընդամենը հետքեր էին, ահա նաև մուգ կարմիր գծեր, որոնք առարկաներին տալիս էին ջերմ կոլորիտ: Ջոնն առանց տարակուսանքի որոշեց տիրանալ այդ գանձին, սակայն որքան առաջ էր տանում փայտը, այդքան շատ էր այն հեռանում: Ի վերջո, նա ստիպված տուն դարձավ ու զինվեց մի պարզ գործիքով՝ ծայրին կեռիկ ամրացրած փայտով, որի օգնությամբ նա մեծ ջանքերով ու

հնարամտությամբ կարողացավ իրեն մոտեցնել այդքան ցանկալի կտորը: Եվ երբ վերջապես այն հայտնվեց ձեռքում, ակամայից հաղթական բացականչություն դուրս եկավ նրա շուրթերից, ու հենց այդ պահին էլ ժամացույցը զնգաց: Ջոնը հասկացավ, որ նա ուշացավ զնացքից: Ընտրողների հետ հանդիպումն ընթացավ առանց իրեն: Բայց նրան հիմա լոկ մի բան էր հետաքրքրում՝ թե ինչպե՞ս կարող էր ձենապակին կոտրվելով նման տեսք ստանալ: Մի փոքր մանրակրկիտ ուսումնասիրությունը ցրեց կասկածները. այդ հնգանկյունը իրոք որ պատահական է առաջացել ու ավելին՝ տարօրինակ է, որ գոյություն ունի նման առարկա. չէ՞ որ ողջ աշխարհում հազվադեպ են հանդիպում նման առարկաներ: Սալաքարին իր տեղը գտնելով, ափից գտնված կանաչ ապակու հենց հակառակ կողմում, նոր գանձն այդ թվում էր անիրական, ոչ երկրային ծագման, մի փոքր փայլփլուն ու խորհրդավոր, ասես մի կախարդված խեղկատակ լիներ: Թվում էր՝ նա ձախրում է մեն-մենակ մի անծայրածիր հավերժության մեջ՝ մի հեծկլտացող աստղի նման: Ջոնին հիացրել էր կենդանի ու վառ ձենապակու ներդաշնակությունն անբարբառ, լուռ ու խորհրդավոր ապակու հետ: Նա հիացմունքով անդադար հարցնում էր ինքն իրեն, թե ինչպե՞ս է

հնարավոր, որ երկու նման տեսակի առարկաներ կարող են գույություն ունենալ միևնույն երկնքի տակ, միևնույն տիեզերքում, բայց թե ինչ տիեզերք, եթե նրանք մի սենյակում են, մի նեղլիկ մարմարե սալաքարի վրա: Հարցը մնում էր անպատասխան:

Նա սկսեց ավելի շատ ժամանակ անցկացնել այն վայրերում, որտեղ կենցաղային թափոններ էին, հատկապես՝ ձենապակուց. վայրեր՝ ձգված երկաթուղային երկայնքով մեկ, փլված տների մոտ, և Լոնդոնի արվարձաններում ընկած ամայացած վայրեր: Բայց դժվար թե շատերն էին մեծ բարձրությունից նետում իրեր, այն էլ ձենապակուց: Դրա համար միջադեպերի մի ինչ-որ եզակի համընկնում էր պետք. բարձրահարկ բնակարան, հախուռն ու անսանձ բնավորությամբ մի կին, որը ի վիճակի կլիներ պատուհանից վար նետել ձենապակե վազը կամ էլ շաքարամանը՝ առանց անցորդների մասին դույզն-ինչ մտածելու: Կոտրված ձենապակու բեկորներ ինչքան ասես կային, սակայն դրանք ստանում էին խղճուկ ու անիմաստ ձևեր՝ ուղղակի զերծ որևէ ինքնատիպությունից ու բնավորությունից: Խորանալով այս հարցերի էության մեջ՝ նա ավելի ու ավելի էր հիանում ձևերի անվերջանալի տարատեսակներով, որոնք նա բացահայտել էր

դեռ միայն Լոնդոնի տարածքում: Նա տրվել էր երկար մտորումներին, ձևերի, ուրվագծերի հստակությանը, իրենց նախշազարդ խորհրդավորության մեջ: Ամենահետաքրքիր գտածոները նա տուն էր տանում ու հարստացնում սալաքարին շարված հավաքածուն, սակայն, ինչ խոսք, դրանց դերն ավելի շուտ կահավորանքի մաս լինելն էր, քանզի փաստաթղթերի ներկայությունն ու քանակը գնալով նվազում էր, որովհետև դրանք շեղում էին Ջոնին խորհելուց ու երևակայելուց:

Նա սկսել էր չարաշահել պարտականությունները կամ էլ կատարում էր դրանք առանց հետաքրքրության՝ սառնասրտորեն, իսկ գուցե ընտրողները, որոնք եղել էին նրա աշխատասենյակում, զարմանում էին՝ տեսնելով սալաքարի նման տեսքը: Ամեն դեպքում նա տանուլ տվեց նախարարական ընտրությունները, բայց երբ նրա ընկերը՝ Չարլզը, որը շատ ծանր էր տանում այդ պարտությունը, շտապեց հայտնել նրան իր հուսադրող ու ցավակից խոսքերը, ի զարմանս իրեն՝ Ջոնին գտավ բարձր տրամադրության մեջ, ուստի ստիպված ինքն իրեն որոշեց, որ խեղճը դեռ չի գիտակցում դրության լրջությունը: Սակայն բարձր տրամադրությունը պայմանավորված էր նրանով, որ Ջոնը այդ օրը եղել էր Բարնսի ճահճուտում՝ Լոնդոնից ոչ

այդքան հեռու, և թփերից մեկի տակ մի յուրօրինակ երկաթի կտոր էր գտել: Դա գրեթե այն նույն ձևն ուներ, ինչ կանաչ ապակին՝ խոշոր ու ոլորած, բայց այնքան ծանր, սև ու սառը, որ Ջոնը գրեթե համոզված էր դրա ոչ երկրային ծագման մեջ. միգուցե հանգած աստղի մի կտոր էր կամ էլ մոխրացած մոլորակից մասնիկ: Այն ծանրությամբ ներքև էր ձգում գրպանը, անգամ սալաքարը թվում էր կռացել էր նրա ծանրությունից: Այդ երկաթի կտորից տիեզերքի սառնության շունչ էր զգացվում: Ամեն դեպքում այս երկնաքարն արդեն դրված էր այստեղ՝ չափազանց մոտ կանաչ ապակուն ու ձենապակե աստղին:

Հայացքը մի առարկայից մյուսին սահեցնելիս երիտասարդը, մի ինչ-որ տանջալից զգացում էր ունենում, մի անամոք փափագ՝ տիրել ավելի ու ավելի շատ նման հրաշագեղ գանձերի: Հիմա ինքն ամբողջովին նվիրվել էր որոնումներին: Եվ եթե չլինեին նոր բացահայտումների այրող տենչն ու ծարավը և այն աներեր համոզմունքը, որ մի օր ինչ-որ մի աղբանոց իրեն ձոխ կպարզևատրի, ապա անվերջանալի հիասթափություններից, հոգևածությունից ու ծաղրի տեղ տալուց նա արդեն վաղուց ընկձված կլիներ: Զինվելով ուսապարկով ու ծայրին կեռիկ ամրացրած փայտով՝ նա ուսումնասի-

րում էր հողեղեն տարածքները, պրպտում էր թփերի ու մուլախոտերի մեջ, ոտքի տակ էր տալիս նեղ արահետներն ու շենքերի արանքները, որտեղ նա ըստ իր փորձի գիտեր, որ կային բազում դեն նետված իրեր: Նրա պահանջները շատացան, ճաշակը դարձավ ավելի թրծված, հետևաբար՝ էլ ավելի հավանական դարձան հիասթափությունները, սակայն միշտ էլ կար հույսի այն փայլող նշույլը՝ ինչ-որ մի ձեռնապակու կամ էլ առարկայի զարմանահրաշկտոր: Դրանք մագնիսի նման Ջոնին քաշում էին ավելի ու ավելի հեռուն: Անցնում էին օրերը: Նա այլևս երիտասարդ չէր: Նրա հեղինակությունը քաղաքականության մեջ մնացել էր անցյալում: Ծանոթները դադարել էին այցելել: Նա այնքան ձանձրալի ու քչախոս էր դարձել, որ անիմաստ էր նրան անգամ ճաշի հրավիրել: Նա երբեք չէր խոսում իրական ձգտումների մասին, քանզի շրջապատի վարքից ակներև էր, որ նրանք չեն կարող իրեն հասկանալ:

Հիմա նա նստած էր բազմոցին ու նայում էր, թե ինչպես է Չարլզն ակամայից վերցնում սալաքարին դրված առարկաներն ու նորից կտրուկ դնում իրենց տեղը, որպեսզի իր քաղաքականության մասին խոսքերին առավել մեծ նշանակություն տա:

- Ո՞րն էր իրական պատճառը, Ջոն,- հան-

կարծակի հարցրեց Չարլզը՝ շրջվելով դեպի Ջոնը,- ինչո՞ւ դու ամեն բան թողեցիր: Ինչո՞ւ հուսահատությունից միանգամից մեջքդ կոտրվեց:

- Իմ մեջքը չի կոտրվել:

- Բայց հիմա քեզ համար ոչ մի հույս այլևս չկա:

- Ա՛յ այդտեղ համաձայն եմ քեզ հետ,- ասաց Ջոնն, ու նրա ձայնի մեջ զգալի էր համոզմունքը:

Չարլզը նայեց Ջոնին ու սկսեց նյարդայնանալ. միտքը պատվեց սահմոկեցուցիչ կասկածներով. նրան թվում էր, թե իրենք տարբեր բաների մասին էին խոսում: Փորձելով ինչ-որ կերպ ցրել այդ ահավոր ու մոռյլ տրամադրությունը՝ նայեց շուրջը, բայց սենյակում տիրող թափթփվածությունն ավելի հուսահատեցրեց նրան: Սա ի՞նչ փայտ է, իսկ այնտեղ ի՞նչ պարկ է մեխից կախված: Իսկ այս քարե՞րը: Նա նորից շրջվեց Ջոնի կողմը ու հանդիպեց նրա քարացած ու ակնապիշ հայացքին՝ ուղղված հեռուն: Ամբողջովին ակնհայտ էր, որ նրան չէր կարելի թույլ տալ մոտենալ բարձրախոսին:

- Գեղեցիկ քարեր են,- ասաց Չարլզն, ու պատճառաբանելով գործնական հանդիպումը, լքեց Ջոնին... ընդմիջտ:

ԿԻՆԸ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ. ԱՐՏԱՅՈԼԱՆՔ

Պետք չէ անուշադրության մատնել պատիև կախված հայելիները, ինչպես չի կարելի մոռացության տալ բանկային բաց գրքույկը կամ նամակը՝ տաղտկալի չարագործության մասին խոստովանությամբ: Այդ ամառային օրը հայացքս ակամա ձգվում էր հայելուն՝ հյուրասենյակում կախված հայելուն: Պատահականությունն այդպես էր հրամայել: Բազմոցի փափուկ խորքից այդ իտալական հայելու մեջ արտացոլվում էր հյուրասենյակի ոչ միայն մարմարե սեղանը, այլև այգուց մի կտոր: Երևում էր երկար, կանաչ արահետը՝ եզերված ծաղիկների շղթայով, որը տանում էր մի ինչ-որ տեղ՝ ձեռքբերվ ոսկեպատ շրջանակը:

Տունը դատարկ էր, և այն գիտակցումը, որ հյուրասրահում քեզանից բացի ոչ ոք չկա, մի անսովոր զգացողություն էր ներշնչում, որը հավանաբար ծանոթ է նատուրալիստներին, երբ նրանք ծածկվելով տերևների ու խոտի ծածկոցով, դառնում են աներևույթ ու հետևում ամենազախկոտ կենդանիներին ու թռչուններին՝ փորսուղներին ու ջրասամույրներին,

որոնք առանց երկյուղելու ման են գալիս ազատության մեջ: Այդ օրը սենյակը լիքն էր այդ վախկոտ էակներով, ստվերի ու լույսի խաղերով, որոնց մեջ ձախրում են վարագույրները, նիրհում տերևները, ինչը լինում է միայն այն պահերին, երբ ոչ ոք չի տեսնում: Քաղաքից դուրս մի խաղաղ տուն՝ մի հին սենյակ՝ գորգերով ու քարե բուխարիներով, պատերի մեջ հավաքած գրապահարաններով ու ոսկեջրով լաքապատ կարմիր պահարաններով: Տունն այդ լի էր նման թափանցիկ ուրվականներով, անշունչ էակներով: Մի մեղմիկ պատի հեքի մեջ նրանք ձողոպրում էին անկյունից անկյուն, հրաշալի ելույթ ունենում, բարձրացնում էին թաթերն ու իջեցնում պոչերը, ասես ինչ-որ բան էին կտցում, ինչպես ձկնկուլ, կամ էլ պճնված ֆլամինգոյի երամ, որոնց վրա վարդագույնի երանգներ էին շաղ տվել, կամ էլ սիրամահավքերի պոչեր թափանցիկ արծաթ եղյամով պատված: Ու հանկարծ մթանգնեց, ասես թանաքածուկը դուրս արձակեց մանուշակագույն մի թանձր ամպիկ, և սենյակին, ինչպես կենդանի մարդու, սկսեցին կեղեքել թախիժն ու կրքերը, ցասման ու նախանձի մոլեգնությունները: Ամեն վայրկյան նրա մեջ ինչ-որ բան էր փոխվում:

Իսկ դրան հետևում՝ հայելու մեջ, արտա-

ցովում էին մարմարե սեղանը, արևածաղիկները և պարտեզի արահետը. նրանք այնքան պարզ էին ու անշարժ, որ թվում էր թե դրանց իրականի շունչը անխաթար է: Տարօրինակ համադրություն էր. այստեղ ամեն ինչ անդար փոփոխվում է, այնտեղ՝ ամեն բան քարացած: Հայացքս ակամա փախչում էր մեկ այնտեղ, մեկ այստեղ: Իսկ տան բոլոր դռներն ու պատուհանները բաց էին տապից, ինչի հետևանքով էլ տունը ներծծված էր հառաչանքներով, հոգոցներով, ասես ամեն վաղանցուկ ու գալիք բան ձայն էր առել, և այդ գույնը մերթ խշխշում էր, մերթ քարանում, ինչպես մարդկային շնչառությունը, մինչդեռ հայելու մեջ ամեն ինչ անմահության վայելքի մեջ էր անշնչացած:

Կես ժամ առաջ էլիզաբեթ Թայսոնը՝ տանտիրուհին, ամառային թեթև զգեստով, զամբյուրը ձեռքին անցավ կանաչ արահետով ու անհետացավ տեսադաշտից՝ երկատվելով ոսկեջրած շրջանակով: Հետո նա ուղղվեց ներքևի պարտեզ՝ ծաղիկ հավաքելու, կամ էլ ինչ-որ ավելի հավանական բան, հավաքելու ինչ-որ մի անկշիռ, անզանգված հրաշագեղ գոյություն՝ թանձր կանաչին խփող, մի այնպիսի բան, ինչպիսին է մամրիչը կամ էլ պատատուկի նրբանուրբ գալարումները, որոնք պատել են կոպիտ պատերը և ամենուր առկայծում են իրենց վառ մա-

Նուշակագույն ու ձերմակ բողբոջներով: Նրա հետ միաձուլվել էր մի ինչ-որ հրաշուք բան. ավելի շուտ դողդողացող պատատուկն էր, քան փայտի պես ուղիղ մի աստղածաղիկ, կամ էլ գուցե իր իսկ սեփական վարդերը՝ ջահերի նման այրվող թփերի վրա: Այս համեմատությունը ցույց էր տալիս, թե որքան քիչ բան գիտենք նրա մասին, այն էլ այսքան տարի անց, քանզի իրականում մսից ու արյունից հիսուսիկզամյա կամ վաթսունամյա կիևը, չէր կարող լինել ոչ ծաղկեպսակ և ոչ էլ բեղիկ: Նման համեմատությունները ոչ միայն անմիտ են ու մակերեսային, այլև դաժան են, որովհետև երերալով ու դողդողալով՝ պատատուկից էլ վատ են թաքցնում մեզանից ճշմարտությունը: Իսկ ճշմարտությունը հարկավոր է այնպես, ինչպես անհրաժեշտ է պատը: Եվ տակավին տարօրինակ է, որ, իմանալով Իզաբելլային այսքան տարի, անհնար էր ասել, թե նրա մասին ինչն էր ճշմարիտ և ինչն էր երևակայություն: Մինչև հիմա մենք սահմանափակվում էինք այնպիսի խոսքերով, ինչպիսիք էին պատատուկն ու մամրիչը: Բոլորին հայտնի փաստերն անհամար էին, բոլորն էլ քաջ գիտեին, որ նա մի ծեր պառավ էր, որ շատ հարուստ էր, որ գնել էր այս տունը առանց որևէ մեկի օգնության, հաճախ հասել էր աշխարհի ամենախուլ անկյուն-

ները՝ առանց վախենալու, որ մի ինչ-որ արևելյան հիվանդություն կկալնի իրեն կամ էլ թունավոր փուշ կծակի. հավաքել էր այս բոլոր գորգերը, աթոռները, պահարանները, որոնք հիմա իրենց անթափանց ուրվականաշունչ գոյությունն էին քարշ տալիս մեր դիմաց: Այդ պահարաններում շատ փոքրիկ դարակներ կային ու այդ դարակներում հաստատ նամակներ էին պահվում՝ ժապավենով կապկապած, նարդոսի բույրով ներծծված, վարդի թերթիկներով գուրգուրված: Ահա ևս մի փաստ, եթե այդքան անհրաժեշտ են փաստեր. անցյալում Իզաբելլան շատերի հետ էր շփվում, շատ ընկերներ ուներ և այն մեկն, ով համարձակություն կունենար բացել դարակն ու կարդալ նամակները, կգտներ բազում տազնապներ, տարակուսանքի հետքեր. նշանակված ժամադրություններ, ցասում ու տառապանք, որ դրանք չեն կայացել. երկար նամակներ, զգացմունքների նկարագրություն, սիրո տվայտանք. կտրուկ նամակներ՝ լի խանդով ու դժգոհություններով, բաժանման դառը խոսքեր. այս բոլոր հանդիպումներն ու բացատրությունները ոչնչի չհանգեցրին. ևս այդպես էլ չամուսնացավ, իսկ մինչ այդ, դատելով նրա դեմքի՝ դիմակի պես սառը արտահայտությունից, վստահ ասել կարելի էր, թե ևս գիտի՝ ինչ է կիրքն ու փորձը հազար անգամ ավե-

լի լավ, քան այն կանայք, ում սիրավեպերի մասին լսում ու խոսում էին բամբասկոտ շուրթերը: Իզաբելլայի մասին այս մտքերի ազդեցության մոլուցքի ներքո նրա սենյակը տոգորվեց ստվերներով ու այլաբանություններով. անկյուններն սկսեցին ավելի գորշ թվալ, սեղանների ու աթոռների ոտքերն ավելի փխրուն ու իմաստալի:

Հանկարծ այս մտքերը կտրուկ, բայց և անձայն խաթարվեցին: Հայելու մեջ արտացոլվեց ինչ-որ մեկը՝ խոշոր ու սև, իրենով փակեց շուրջն ամեն բան, սեղանին շաղ տվեց մի կույտ մարմարե տախտակներ՝ վարդագույն ու մոխրագույն ավիշներով ակոսված, և անհետացավ: Բայց այդ մի ակնթարթն էլ բավական էր, որ ամբողջ տեսարանը փոխվեր: Մի ինչ-որ պահի այն թվում էր անձանաչելի և անիմաստ, ուրվագծից դուրս: Այս տախտակները չէին տեղավորվում ոչ մի իրավիճակի մեջ: Հետո ինչ-որ մի տրամաբանական շարժ սկսվեց ներծծել իր մեջ այդ ամենը, հրամայել ու տեղավորել ամբողջ պատկերի փորձառության մեջ: Եվ վերջապես գիտակցությանը հասավ, որ դրանք ոչ այլ ինչ էին, քան նամակներ: Եկել էր փոստատարն ու նամակներ բերել:

Դրանք նիրհում էին մարմարե սեղանին՝ սկզբում լույսի և գույնի հետ խաղալով և չհյուս-

վելով ոչ մի բանի: Հետո տեսանելի դարձավ, թե ինչպես են դրանք ձգվում, կախարդվածի պես երկարում, դառնում սենյակի մի մասնիկը և ստանում իրենց բաժին ընկած անմահությունն ու անէացումը, որ նվիրում էր հայելին: Հիմա դրանք ասես նոր իմաստ ու իրականություն ստացան, միաժամանակ նաև կշիռ, ծանրություն, թվում էր, թե միայն կտրող գործիքի միջոցով կարելի է դրանց բաժանել, իրարից պոկել ու հեռացնել սեղանից: Եվ թող որ դա երևակայություն լինի, բայց թվում էր, թե ձեռագիր նամակների մի հսկա խրճից դրանք վերածվել էին քարե հուշատախտակների, որոնց վրա փորագրված էր հավերժական ճշմարտությունը, որը կարդալով կիմանաս Իզաբելլայի մասին այն ամենը, ինչ հարկ է իմանալ, բայց ոչ միայն նրա մասին, այլև կյանքի: Այս մարմարե ծրարների թերթիկներին հստակ գրված է թանձր տառերով, ընդգծումներով, մինչև անգամ՝ կարևորագույն թեմաներով: Իզաբելլաներս կմտնի, դանդաղկոտ կվերցնի ամեն մի նամակը, կբացի ծրարը և ուշադիր կկարդա, բառ առ բառ և հետո խորը, ամեն ինչ ընկալող հայացքով ու հառաչանքով, ասես թափանցելով գիտակցության ամենախորքը, պատառպատառ կանի ծրարներն, իսկ նամակները կկապի ժապավենով ու կթաքցնի պահարանի

դարակներից մեկում՝ հաստատակամ որոշելով թաքցնել այն, ինչի մասին կարծում էր, որ չպետք է խոսել:

Այս միտքն ասես մարտահրավեր լիներ: Իզաբելլան կարևոր չէր համարում պատմել իր մասին, իսկ հիմա դրանից խուսափելն անհնար էր: Դա անհեթեթություն է, դա հրեշային քայլ է: Եթե նա այդքան բան է թաքցնում, այդքան բան գիտի, նշանակում է հարկավոր է այդ ամենը երևան հանել ամենաառաջին զենքով՝ երևակայությամբ: Պետք է առանց հապաղելու նրա շուրջ հավաքել բոլոր մտքերը: Չթողնել նրան խոյս տալ: Թույլ չտալ առաջվա նման քեզ շեղել պատահական մանրութենով՝ ձաշեր, հյուրեր, քաղքենի զրույցներ: Պետք է քեզ իր տեղը դնել: Հեշտ է պատկերացնել՝ ինչպես է նա հիմա կանգնած ներքևի պարտեզում: Հագին երկարաձիտ նորաձև կոշիկներ՝ ամենափափուկ ու նուրբ կաշվից: Հիասքանչ, ինչպես այն ամենը, ինչ նա հագնում էր: Եվ կանգնած է ահա նա ներքևի պարտեզի ցանկապատի մոտ, գոտուց ամրացրած մկրատը վեր պահած, որ կտրի ինչ-որ թառամած ծաղիկ, մի ինչ-որ դուրս ցցված ձյուղ: Արևը համբուրում է դեմքը, հարվածում աչքերին, բայց ոչ, վերջին պահին մի ամպիկ հայտնվեց, և նրա հայացքը դարձավ անընթեռնելի. հեզնո՞ղ, թե՛ քնքուշ, մտած-

կոնտ, թե՛ պարզ: Երևում է միայն այլայլված ուրվագիծը նրա մի փոքր թառամած, բայց գեղեցիկ դեմքի՝ երկնին հառած: Գուցե նա մտածում է, որ պետք է պատվիրել նոր ցանցեր, որ ծածկվի ելակի թփերը. պետք է ծաղիկներ ուղարկել Ջոնսոնի այրուն. որ ժամանակն է այցելել Հիպսելների բնակարանամուտին: Բայց ամեն դեպքում նման բաների մասին նա ասում է ճաշի ժամանակ: Բայց այն, ինչի մասին նա խոսում է ճաշին, հետաքրքիր չէն: Ցանկանում ես այլ բան. որսալ ու բառի կաղապար հագցնել նրա այն վիճակին, որը նրա հոգու համար նույն է, ինչ շնչառությունը մարմնի համար, այն, ինչ երջանկություն են անվանում կամ էլ դժբախտություն: Նա հարուստ է: Նա հայտնի է իր շրջապատում, շատ ընկերներ ունի: Ճանապարհորդում է, գորգեր գնում Թուրքիայից, Պարսկաստանից՝ կապույտ ծաղկամաններ: Հաճույքի ձանապարհները հազարավոր արահետներով սլանում են այն վայրից, որտեղ նա կանգնած էր մկրատը ձեռքին, որ կտրի դողդողացող ձյուղերը, իսկ ժանեկածն ամպիկները նրա դեմքը թափանցիկ եթերային ստվերով էին սքողել:

Ահա նա մի արագ շարժումով կտրեց մամրիչի մի քանի ցողուն, ու նրանք գլորվեցին գետնին: Ու երբ նրանք գլորվեցին, լույսը

սփռվեց, և հնարավոր դարձավ ավելի խորը թափանցել նրա էության մեջ: Նրա հոգին լի է քնքշությամբ ու զղջումներով: Ավելորդ մի ցողուն կտրելն այնքան ցավալի է. չէ՛ որ այն կենդանի է, իսկ կյանքն ամենաթանկն է: Եվ միևնույն ժամանակ ընկնող ճյուղը հիշեցնում է այն մասին, որ դու էլ ես մեռնելու, և աշխարհում ամեն բան անհաստատ է, չկա ոչինչ հարատև ու կայուն: Եվ այդ իսկ վայրկյանին ևս իրեն հատուկ ողջամտությամբ մտածեց, որ կյանքն իր հանդեպ բարյացկամ է եղել, թեպետ մահն անխուսափելի է. ամեն դեպքում քաղցր կլինի փարվել հողին և քայքայվելով ձուլվել մանուշակների արմատներին: Նա կանգնած մտածում է: Ոչ մի միտք բառի շրջանակ չի ընդունում, որովհետև ևս այն համեստ կերպարներից է, որոնք նախընտրում են փաթաթել իրենց մտքերը լռությամբ. զգում է, որ հոգին լի է մտքերով: Նրա հոգին նման է այս սենյակին, ուր ստվերներն այս ու այն կողմ են նետվում պատի մեղմ շնչով, պերճաշուք քայլում են՝ պոզերն իջեցրած, ու ընթացքի մեջ ինչ-որ բան կտցում: Ու նորից նրա ողջ էությունը, ինչպես և սենյակը, խեղդվում է, խորտակվում է իմացության խորության, համր զղջումների մեջ և ինքն էլ հենց նման է իր այդ՝ նամակներով լցված կողպած դարակներին: Մտածել այն

«բացելու» մասին, ինչպես մի խխունջի, մեղսալի է և անհեթեթ: Այստեղ պետք է լոկ ամենաբարակ, ամենասուր ու ձկուն գործիքը: Պետք է լոկ երևակայել... ահա և նա ինքը, ահա՛, հայելու մեջ: Դու վախեցած դողդողում ես:

Սկզբում այնքան հեռու էր, որ չէիր էլ կարող լավ տեսել: Քայլերը դանդաղեցրեց, մերթվարդն է ուղղում ցանկապատի վրա, մերթ ձեռքն է առնում ու հոտոտում մեխակը, բայց քայլում է... քայլում է առանց կանգ առնելու և աստիճանաբար մեծանում հայելու մեջ՝ դառնալով ավելի մեծ, քան այն մեկը, ում հոգում այդքան տենչ էր ներխուժել: Քայլ առ քայլ մոտենում է նաև ստուգումը, այն ընտելացումը, որը ծնվում է նրա մեջ բացահայտված գծերի հանդեպ: Ահա նրա մոխրագույն-կանաչ զգեստը, նեղ կոշիկները և զամբյուղը, իսկ կրծքին ինչ-որ բան է փայլփլում: Նա այնքան համահունչ ու անձայն է մոտենում. թվում է, թե չի էլ ձեղբում հայելու մեջ պատկերված տեսարանը, այլ հակառակը՝ ինչ-որ նոր տրամադրություն է ավելացնում այդ ամենին, որն անսկատ փոխում է նաև մյուս առարկաները՝ քաղաքավարի խնդրելով մի կողմ քաշվել: Հայելու մեջ սպասող սեղանին դրված նամակները, կանաչ արահետը, արևածաղիկները, կարծես նահան-

չում են՝ նրան իրենց գիրկն ընդունելով: Վերջապես նա այստեղ է՝ հյուրասենյակում: Կանգնեց սեղանի մոտ: Անէացած է: Եվ հայելին իսկույն սկսեց նրան լցնել մի լույսով, որը կարծես նրան գամել էր տեղում, որն օքսիդի նման կլանում էր, քայքայում ամեն ոչ էական ու ավելորդ բան՝ կուսական թողնելով միայն ծշմարտությունը: Կլանող տեսարան էր: Ամեն ինչ թափվում էր նրա վրայից՝ ամպիկը, զգեստը, զամբյուղը, ադամանդը, այն ամենն, ինչը համեմատության մեջ էր մտնում մամրիչի ու պատատուկի հետ: Ահա և կոշտ պատը, որին նրանք փաթաթվել են: Ահա և հենց ինքը՝ կինը: Կանգնած է մերկ՝ այս անխիղճ լույսի ներքո: Այլևս ոչինչ չմնաց: Իզաբելլան դատարկված է: Նա չունի մտքեր: Եվ չունի ընկերներ: Նա ոչ մեկին չի սիրում: Իսկ նամակները: Դրանք լոկ հաշիվներ են: Ահա նա կանգնած է՝ ծեր, դալկացած, ակոսված, ուղիղ քիթ, կնճռոտված պարանոց. անգամ չի հոգում դրանք հավաքելու մասին:

Պետք չէ անուշադրության մատնել պատին կախված հայելիները:

ԴՔՍՈՒՀԻՆ ՈՒ ՈՍԿԵՐԻՉԸ

Օլիվեր Բեյքոնն ապրում էր ամենավերջին հարկում, որտեղից բացվում էր տեսարան դեպի Գրին Պարկ: Այդտեղ նրա տունն էր. ամեն մի աթոռ դրված էր իր տեղում, ինչպես որ հարկն էր, կաշեպատ աթոռներ: Իսկ բազմոցները դրված էին պատուհանագոգերի ամբողջ երկայնքով, գորելենածածկ բազմոցներ: Պատուհանները՝ երեք բարձր պատուհանները, ծածկված էին սարդոստայնածն շղարշով ու նախշազարդ մետաքսով: Կարմրափայտե պահարանի վրա, ըստ պատշաճի, իրենց տեղն էին գտել տարատեսակ կոնյակներ, լիկյորներ ու վիսկիներ: Իսկ մեջտեղի պատուհանից նա հիանում էր նորաձև մեքենաների փայլիլուն տանիքներով, որոնցով ողողված էին Պիկադիլիի նեղ փողոցները: Առավել կենտրոնական տեղ դժվար էլ կլիներ պատկերացնել: Առավոտյան ժամը ութին սպասավորը սկուտեղով նախաձաշն էր բերում, հետո նրան էր հրամանում մուգ կարմիր խալաթը. հետո Օլիվերը երկար ու սուր եղունգներով բացում էր նամակների ծրարները ու մեկը մյուսի ետևից հանում հրավերների հաստ ու սպիտակ բացիկները,

ցայտուն տառերով գրված նամակները՝ հասցեագրված դքսուհիների, կոմսուհիների, վիկոնտուհիների և այլ տիտղոսավոր ու ազնվական կանանց կողմից: Հետո նա լվացվում էր, նախաձաշում, այնուհետև ընթերցում թերթը էլեկտրական ածխի բոցկլտացող կրակի լույսի տակ:

«Դե տե՛ս, Օլիվեր,- ասում էր նա՝ դիմելով ինքն իրեն,- դո՛ւ, ում կյանքն սկիզբ առավ կեղտոտ ու փոքր նրբանցքներում, դո՛ւ, ում...», - ու նա նայեց ներքև՝ ոտքերին՝ հիասքանչ անդրավարտիք, թանկարժեք կոշիկներ և նորաոճ զանգապաններ: Նրա հագին ամեն բան ընտրված էր մանրակրկտորեն, կարված ամենալավ կտորներից և Սևիլ Բոուդի ամենալավ դերձակների ձեռքով: Բայց հաճախ էր նա մոռանում այդ ամենն ու վերածվում մութ նրբանցքներում վազվզող այն փոքրիկ տղային: Մի ժամանակ իրեն երազանք էր թվում Ուայթչեփըլի նորաոճ տիկնանց գողացված շնիկներ վաճառելն անգամ: Եվ մի անգամ էլ նա բռնվեց: «Ա՛խ, Օլիվեր,- հառաչում էր նրա մայրը,- անձ, տղաս, է՛րբ ես դու խելքի գալու»: Հետո Օլիվերն աշխատանք գտավ մի տաղավարում՝ էժանագին ժամացույցներ էր վաճառում, մի անգամ էլ մի ինչ-որ ծրար տարավ Ամստերդամ: Այստեղ, ծեր Օլիվերը հիշելով երիտասարդ Օլիվերին,

բավականին զվարճացավ: Իհարկե, նա լավ կլորիկ գումար վաստակեց այն երեք ադամանդներից, հա՛, չհաշված զմրուխտներից ավելացած գումարը: Դրանից հետո նա աշխատեց Հերթըն Գարդենում, իր իսկ տաղավարի հետևի սենյակում, որտեղ օտար մարդկանց մուտքն արգելված էր, այնտեղ էին դրված կշեռքը, գանձապահարանը և հաստ խոշորացույցները: Իսկ հետո... հետո էլ... նա քմծիծաղ տվեց: Երբ նա մի տոթ ամառային երեկո անցավ ոսկերիչների կողքով, որոնք կանգնած էին փողոցում ու քննարկում էին ոսկե ձուլակտորների, ադամանդների գները, Հարավային Ամերիկայից եկած նորությունները, նրանցից մեկը, մատը քթին մոտեցնելով, հաստատ փնթփնթաց Օլիվերի հետևից՝ «Հըմմմ...»: Սուկ մի շունջով ասված խոսք էր, ուսերի լոկ մի շարժում, քթին մոտեցրած մատի մի հպում ու բզզոց՝ Հերթըն Գարդենի ոսկերիչների շարքերով սլացող բզզոց, այն էլ այդ տոթ ամառային երեկոյի ժամանակ. ճի, բայց դա շատ-շատ տարիներ առաջ էր: Սակայն մինչև այժմ էլ զգում էր թիկունքի ետևում այդ հաճելի ու խորհրդավոր շունջը, այն կայծը, որը նշանակում էր՝ «ահա՛, նայե՛ք, երիտասարդ Օլիվերը, այն երիտասարդ ոսկերիչը, ահա՛ նա անցնում է»: Այո՛, այդ ժամանակ նա երիտասարդ էր:

Հետզհետե նա սկսեց ավելի ու ավելի լավ հազնվել, հետո մի համեստ ու փոքրիկ փոխադրամիջոց ձեռք բերեց, այնուհետև գնեց նորաոճ մի մեքենա, թատրոնում էլ սկզբում նստում էր հետևի շարքերը, իսկ հետո միայն առաջին շարքերն ու օթյակները դարձան նրա մշտական տեղը: Դրանց հաջորդեց Ռիչմոնդում ձեռք բերած կարմիր վարդերով պատված ցանկապատով առանձնատունը՝ դեպի գետակը բացվող տեսարանով: Իսկ օրիորդն ամեն առավոտ կտրում էր մի վարդ ու ամրացնում նրա պիջակին:

- Դե...- ասաց Օլիվեր Բեյքոնը՝ կանգնելով, հետո ձգվելով,- դե...

Ու կանգ առավ մոր՝ բուխարու վերևում կախված տիկնոջ դիմանկարի առջև և ձեռքերը պարզեց:

- Ես խոստումս պահեցի,- ասաց նա ու ափերը իրար միացրեց, ասես հարգանքի տուրք է մատուցում,- ես իմ գրազը հաղթեցի:

Այդպես էլ կար, նա դարձել էր Անգլիայի ամենահարուստ ոսկերիչը, սակայն նրա երկար ու սահուն քիթը, ասես փղի կնճիթի նման, ուզում էր քթանցքների շարժով ասել (բայց թվում էր, ոչ թե քթանցքներն էին շարժվում, այլ ամբողջ քիթը), որ նա դեռ չի հագեցել, դեռ գետնի տակ ինչ-որ բան է հոտոտում, ինչ-որ

բան, որն առավել խորն է թաքցրած: Պատկերացրեք մի վիթխարի խոզ արոտավայրում, որտեղ նաև շատ գետնասնկեր կան, ու ահա նա դրանցից մի քանիսը հանել է արդեն հողից, սակայն հոտոտում է ու զգում՝ ավելի խորքում կա մի այլ գետնասունկ՝ առավել խոշոր ու սև: Այդպես էլ Օլիվերն էր Մեյֆերի հարուստ ու բեղուն շրջաններում քչփորում ևս մի գետնասունկ՝ ամենախոշորը, ամենասերը, որն ավելի հեռուն ու խորն էր արմատացած:

Եվ ահա այսպես... հիմա նա ուղղեց փողկապի մարգարտե ամրակն ու հագավ նորաձև ամառային կապույտ վերարկուն, վերցրեց դեղին ձեռնոցներն ու ձեռնափայտը, և մի փոքր ծոծվելով աստիճաններով, ներքև իջավ. հառաչելով կամ էլ իր երկար քթով հոտոտելով դուրս եկավ դեպի Պիկադիլի: Բանզի անգամ եթե նա հաղթել էր գրազը, մի՞թե փոխվել էր ինչ-որ բան, մի՞թե նա դեռ այն տխուր ու չհագեցած մարդը չէր, որը փնտրում էր ինչ-որ երևելի և դեռևս անհայտ մի բան:

Նա ծոծվելով քայլում էր, ինչպես ծոծվում է ուղտը գազանանոցում, երբ քայլում է ասֆալտի վրա՝ մեջքին կրելով վաճառականների ապրանքներն ու նրանց կանանց, որոնք թղթե տուփերի միջից ինչ-որ բան են ծամում ու այդ ծմոթած թղթերը նետում ձանապարհին: Ուղ-

տերն ատում են վաճառականներին, ուղտերին չի գոհացնում իրենց բաժին հասածը, նրանք երազում են խիտ ու թավշյա արմավենիների հովանու ներքո սփռված կապուտակ լժի մասին: Այդպես էլ հանրահայտ ոսկերիչը՝ ամենահանրահայտը աշխարհում, քայլում էր Պիկադիլիով՝ շքեղ հագնված, ձեռնոցներն ու ձեռնափայտը ձեռքին, բայց դեռևս չհագեցած... մինչև չհասավ փոքրիկ գորշ խանութին, որը հայտնի էր Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում և Ամերիկայի բոլոր նահանգներում... մի փոքրիկ գորշ խանութ՝ Բոնդ-Սթրիթի նրբանցքներից մեկի հետևում:

Նա, ինչպես միշտ, նա լուռ ներս մտավ ու անձայն անցավ չորս տղամարդկանց կողքով, երկուսը ծեր էին՝ Մարշալն ու Սփենսերը, իսկ մյուս երկուսը երիտասարդ՝ Հեմոնդն ու Ուիքսը. բոլորն էլ ոտքի ցատկեցին մի մարդու նման նրա ներս մտնելուն պես ու նախանձով նայեցին նրան: Դեղնավուն ձեռնոց հագած ձեռքի մի մատի միայն մի շարժումով նա հասկացրեց, որ արդեն իսկ նկատել է նրանց ներկայությունը: Եվ մտնելով առանձնասենյակ՝ դուռը փակեց հետևից:

Այնուհետև նա շրջեց ու բացեց վանդակաձաղերով փակված պահարանը: Բոնդ փողոցի ձայները, երթևեկության խուլ աղմուկը լսելի

դարձան: Խանութի ներսում արտացոլվեցին լապտերների աղոտ լույսերը: Պատուհանի տակ վեր խոյացող ծառը սեթևեթում էր այս ու այն կողմ՝ իր սոսկ վեց տերևներով: Հունիս ամիսն էր: Եվ արդեն օրիորդն այն ամուսնացել էր տեղի գարեջրի գործարանից մի ինչ-որ պարոն Պեդերի հետ, ու հիմա այլևս ոչ ոք չկար, որ վարդերով զարդարեր նրա պիջակը:

- Այպիսով,- կես փնթփնթոցով, կես հառաչանքով ասաց Օլիվերը,- այսպիսով...

Հետո նա սեղմեց պատի վրա մի կոճակ և պատի քարե շերտերը դանդաղորեն մի կողմ քաշվեցին՝ մերկացնելով իրենց հետևում թաքցրած երկաթյա չիրկիզվող պահարանները. հինգն էին, ո՛չ, արդեն վեցն էին, ու բոլորն էլ ամուր երկաթից էին թրծված: Օլիվերը շրջեց բանալին ու մեկը մյուսի հետևից բացեց դրանք: Ներսից դրանցից ամեն մեկը պատված էր մուգ կարմիր թավիշով, բոլորի մեջ ոսկեղեն կար դրված՝ ապարանջաններ, վզնոցներ, մատանիներ, դուքսերի թագեր, դիադեմաներ, առանձին քարեր էլ կային՝ ապակե տարաների մեջ՝ ռուբին, գմրուխտ, մարգարիտ, ադամանդ: Դրանք բոլորն էլ հուսալիորեն սքողված էին, ապրված, հմայված, բայց դեռ այրվում էին, այրվում՝ իրենց հավերժական կրակի լույսի ու փայլի մեջ:

- Արցունքներ,- ասաց Օլիվերը՝ նայելով մարգարիտներին:

- Սրտից կաթող արյուն,- ասաց նա՝ նայելով ռուբիններին:

- Վառոդ,- շարունակեց նա ու այնպես թափ տվեց ադամանդները, որ դրանք բոցավառվեցին ու հուրհրացին,- այնքան վառոդ, որ բավական է Մեյֆերը պայթեցնելու, նրա երկինքը այրելու համար, ավելի ու ավելի բարձր,- այս խոսքերի հետ նա կախեց գլուխը ու ասես քթի տակ քրթմնջաց ձիու պես:

Սեղանին դրված հեռախոսը մի տեսակ շողորթոթ ու կամացուկ ձայնով զնգաց: Օլիվերը փակեց պահարանները:

- Տասը ռոպեից,- ասաց նա,- ո՛չ շուտ:

Եվ նստեց սեղանի մոտ՝ նայելով թևքերի ամրակալներին փորագրած հռոմեական տիրակալի գլուխներին: Եվ նորից անէացավ ու դարձավ այն փոքրիկ տղան, որը ծառուղում անհոգ տարված էր գնդակի հետ խաղալով, այն ծառուղում, որտեղ կիրակի օրերին վաճառում էին գողացված շնիկներ: Նորից դարձավ խորամանկ ու զվարճալի մի տղա՝ բալի նման հյութալի շուրթերով: Մտցնում էր մատները վառողի մեջ, հետո մոտեցնում դրանք թավաների, որոնց մեջ ձուկ էին տապակում, հետո ամբոխի մեջ այս ու այն կողմ էր թրև գալիս: Նա նիհար

էր ու ձկուն, թաց քարեր հիշեցնող աչքերով: Իսկ հիմա... հիմա... Ժամացույցի սլաքները թոպեները գլորում էին անդունդը՝ մեկ, երկու, երեք, չորս... Լամբորնի դքսուհին սպասում էր նրա թույլտվությանը, որ ներս մտնի. Լամբորնի դքսուհին՝ հարյուրավոր կոմս նախահայրերի սերնդի դուստրը: Եվ հենց նա խանութի մոտ դրված աթոռին նստած պիտի սպասեր տասը թոպե: Պիտի այնքան սպասեր, մինչև Օլիվերը բարեհաճեր նրան ներս հրավիրել, Օլիվերը, որն աչքը չէր թարթում սեղանին դրված շագրենե կաղապարված ժամացույցից: Սլաքն առաջ ու առաջ էր ընթանում: Ամեն վայրկյանի հետ ժամացույցն ասես նրան հրամցնում էր *pate de foie gras*, մի գավաթ շամպայն, մի բաժակ ամենալավ կոնյակից և սիգար՝ մեկ գինեա արժողությամբ: Ժամերը սեղանով մեկ ցրիվ էին տվել այս բոլոր նվերները. վերջապես սահեցին հավերժություն թվացող տասը թոպեները: Ու այդ ժամանակ նա լսեց միջանցքից եկող դանդաղ, գրեթե անլսելի ոտնաձայներ ու հագուստի փեշերի շրշյուն: Դուռը բացվեց: Պարոն Հեմոնդը, մեջքով պատին ամուր սեղմվելով, հայտնեց.

- Ձերդ պայծառափայլությունը:

Եվ այդպես էլ անշարժ մնաց պատին ծեփված ու կանգնած:

Օլիվերը, ոտքի կանգնելով, լսում էր, թե ինչպես է միջանցքում խշխշում մոտեցող դքսուհու զգեստը: Եվ ահա վերջապես հենց ինքը կանգնեց դռան դիմաց՝ լցնելով ամբողջ սենյակն իր բույրով՝ տոգորված բոլոր դուքսերի ու դքսուհիների հեղինակությամբ ու հպարտությամբ: Եվ ինչպես ալիքն է ձեղքվում, այդպես էլ նա ձեղքվեց, նստելով հեղեղվեց, հոսեց ու իր ալիքի փրփուրները ցրիվ տվեց Օլիվեր Բեյքոնի՝ վիթխարի ոսկերչի վրա, ծածկեց նրան գույների վառ դրոշմներով՝ կանաչ, վարդագույն, մանուշակագույն և խայտաբղետ բույրերով, հեծկլտացող փայփլոցով, և ճառագայթներով՝ մատներից ժայթքող, գլխարկի փետուրների հետ երփներանգվող և մետաքսի ծալքերից առկայծող ճառագայթներով: Նա բավականին մարմնեղ էր, բավականին գեր, շատ ամուր կապած վարդագույն դիպակը հագին և երիտասարդությունը վաղուց անցյալին պահ տված: Ինչպես որ անձրևանոցի փարթամ ժանյակները կամ էլ սիրամահավքի շքեղաշուք փետուրներն են փակվում, սակայն խոնարհվում են ժանյակները, փակվում են փետուրները. հենց այդպես էլ դքսուհին ընկավ ու հավաքվեց՝ նստելով խորը կաշվե բազմոցի վրա:

- Բարի լույս, պարոն Բեյքոն,- ասաց դքսուհին՝ նրան մեկնելով իր ձեռքը՝ ձերմակ ձեռնո-

ցը հագին: Օլիվերը նույնպես խոնարհվեց՝ սեղմելով տիկնոջ ձեռքը: Ձեռքերի հպումի հետ մեկտեղ նրանց միջև նորեն ծնվեց վաղեմի կապը: Նրանք ընկերներ էին, միևնույն ժամանակ նաև թշնամիներ՝ դքսուհին հնազանդվում էր Օլիվերին, որն իր հերթին՝ դքսուհուն էր հնազանդվում, նրանք զգում էին մեկմեկու կարիքը և միևնույն ժամանակ վախենում ու խուսափում իրարից: Երկուսն էլ գիտեին այդ ամենը ու ամեն անգամ զգում էին դա, երբ իրար էին դիպչում նրանց ձեռքերը խանութի հետևում գտնվող փոքրիկ սենյակում, ուր պատուհանից ներս էր թափանցում ցերեկային լույսը, ուր թաքուն իր հայացքն էր ներս գցում ծառը՝ իր վեց տերևներով, և լսվում էին երթևեկության խուլ ձայները, իսկ նրանց թիկունքի ետևում վեր էին խոյանում չհրկիզվող անգին պահարանները:

- Ինչո՞վ այս անգամ ձեզ կարող եմ օգտակար լինել, դքսուհի՛,- հանդարտ հարցրեց Օլիվերը:

Դքսուհին նրա առաջ բացեց սիրտը, մինչև վերջին հատիկ գաղտնիքը մերկացրեց նրա աչքերի առջև: Հետո հառաչանքով, առանց որևէ մի բառ ասելու նա պայուսակից հանեց մի թավշյա քսակ, որն ավելի շատ նման էր մի գիրուկ կզաքիսի, քան քսակի: Եվ այդ կզաքի-

սե թավշի մի ձեղքից նա հանեց մարգարիտները՝ տասը մարգարիտ: Դրանք շաղ եկան սեղանի վրա՝ մեկ, երկու, երեք, չորս. ասես վայրի թռչնի ձվեր լինեին:

- Ա՛յն ամենը ինչ ինձ մնացել է, սիրելի՛ Օլիվեր,- հոգոց հանելով ասաց դքսուհին: Հինգ, վեց, յոթ. դրանք գլորվեցին վերամբարձ լեռան լանջերով վար՝ նրա ծնկներից նեղլիկ հովիտ. ութ, ինը, տասը: Եվ այդպես մնացին անշարժ՝ նիրհելու վարդագույն դիպակի ծալքերի մեջ:

- Էփլբիների տոհմական գոտուց է,- վշտալիորեն արտաբերեց դքսուհին,- վերջինս է, ամենավերջինը:

Օլիվերը մեկնեց ձեռքն ու երկու մատով վերցրեց մարգարիտներից մեկը: Այն կլոր էր ու փայլուն: Բայց արդյոք բնական էր, թե՛ կեղծ: Մի՞թե այս կինը նորից ստում է: Մի՞թե համարձակվել է:

Դքսուհին թմբլիկ մատը մոտեցրեց շրթունքին:

- Եթե միայն դուքսն իմանա՜ր...- շշնջաց նա,- սիրելի պարոն Բեյքոն, անխ այնպիսի անհաջողություններ...

Հաստատ նորից խաղացել է նա ու տանուլ տվել:

- Ա՛յդ անպիտանը, այդ խաբեբան,- շարունակեց նա:

Այդ այտին սպիով տղամանրդը: Հա՛, նրա-
 նից սպասելի է: Իսկ դուքսը՝ երկար փայտի
 նման ուղիղ ու բարձրահասակ, երկար բեղե-
 րով... այդ դուքսը նրան կթողներ առանց մի
 գրոշի, ամբողջում կփակեր, եթե միայն իմանար
 այն, ինչ ինձ է հայտնի, մտածեց Օլիվերը, և
 աչքը նորից գցեց պահարաններին:

- Արամիստան, Դաֆին, Դիանան,- հառա-
 չեց նորից դքսուհին,- այս ամենը նրանց հա-
 մար է:

Լեդի Արամիստան, լեդի Դաֆին, լեդի
 Դիանան դքսուհու դուստրերն էին. Օլիվերը
 ձանաչում էր նրանց, երկրպագում էր: Բայց սի-
 րում էր Դիանային:

- Ձեզանից ես գաղտնիքներ չունեմ,-
 ժպտաց դքսուհին վավաշոտ հայացքով: Սա-
 կայն արցունքները հոսեցին, գլորվեցին. ար-
 ցունքները ադամանդների նման ակոսվեցին
 նրա չդիմափոշված այտերին:

- Հին ընկեր,- շնջաց նա,- հին ընկեր:

- Հին ընկեր,- կրկնեց Օլիվերը, ասես փոր-
 ձում էր այդ բառերի հնչողությունը լսել իր իսկ
 շուրթերից:

- Որքան,- հարցրեց վերջապես Օլիվերը:

Դքսուհին ձեռքը դրեց մարգարիտներին ու
 փսփսալով ասաց.

- Քսան հազար է:

Բայց բնական է, թե՛ արհեստական ձեռքին փայլփլող այս մարգարիտը: Էփլքիների տոհմական գոտին, բայց մի՞թե՛ նա դա արդեն չէր վաճառել: Հիմա ինքը կզանգի Սփենսերին ու Հեմոնդին. «վերցրե՛ք ու ստուգե՛ք», կասի նա: Եվ նա ձգվեց դեպի հեռագանգը:

- Այցելե՛ք մեզ վաղը,- ասաց դքսուհին անհամբերությամբ, կարծես փորձում էր նրան հետ պահել զանգից: Վարչապետն ու հենց ինքը՝ ձերդ գերազանցությունը, նույնպես լինելու են...- մի փոքր դադարից հետո ավելացրեց,- նաև Դիանան:

Օլիվերը ձեռքը քաշեց հեռախոսից: Նա նայում էր դքսուհու թիկունքի ետևում գտվող տների պատերին՝ Բոնդ փողոցի բացվող տեսարաններով: Սակայն այս պահին նա ոչ թե Բոնդ փողոցի տներն էր տեսնում, այլ կարկաչող մի գետակ, ուր կարմրախայտն ու սաղմոնն էին պար գալիս... և վարչապետին... հետո ինքն իրեն՝ սև բաժկոնով. տեսնում էր նաև... նաև Դիանային: Նա հայացքը խոնարհեց ձեռքի մարգարտին: Մի՞թե՛ ինքը կարող էր այն ուղարկել ստուգման, երբ իրեն էր շողում գետը, շողում էին իրեն հառած աչքերը: Միևչդեռ այս պահին իրեն իրականում ուղղված էին դքսուհու սպասող աչքերը:

- Քսան հազար,- նորից հառաչեց դքսուհին,- իմ պատիվը: Դիանայի մոր պատիվը:

Օլիվերը վերցրեց բանկային գրքույկն ու գրիչը:

- «Քսան...», - գրեց ու կանգ առավ: Իրեն էին ուղղված կտավից նայող ծեր կնոջ աչքերը՝ իր մոր աչքերը:

«Օլիվեր,- թախանձում էր նա,- խելքի արի: Նորից հիմարություններ ես անում»:

- Օլվեր,- հիմա արդեն թախանձում էր դքսուհին, այն էլ արդեն «Օլիվեր», այլ ոչ «պարոն Բեյքոն», - կարող եք մեզ մոտ մնալ բոլոր ազատ օրերին:

Անտառում, Դիանայի հետ երկուսով, ձիերով և լրիվ մենակ՝ իմ Դիանայի հետ:

«Հազար», - ավելացրեց Օլիվերն ու ստորագրեց չեկը:

- Խնդրեմ,- ասաց նա:

Եվ բացվեցին անձրևանոցի ծալքերը, սիրամարգի փետուրները, բոցավառվեց ալիքը, հուրհրացին Ազենկուրի թրերն ու վահանները. դքսուհին բազմոցից վեր կացավ: Եվ երկու ծեր աշխատողներն ու երկու երիտասարդները՝ Սփենսերն ու Մարշալը, Ուիքսը և Հեմոնդը տաղավարի հետևում ծեփվեցին պատին ու նախանձով նայում էին, թե ինչպես է Օլիվերը ճանապարհում դքսուհուն խանութի միջով մինչև

դուռը: Թվում էր, թե նա դեղին ձեռնոցը հագին հրածեշտ էր մաղթում նրանց, իսկ դքսուհին իր ձեռքերում ամուր պահում էր պատիվը՝ քսան հազար ֆունտի ստորագրած չեկը:

- Բնականն են, թե՛ կեղծ,- հարցրեց ինքն իրեն Օլիվերը՝ փակելով աշխատասենյակի դուռը: Ահա դրանք՝ տասը մարգարիտները, դրված են սեղանին՝ ծծողական թղթի վրա: Օլիվերը մոտեցրեց դրանք պատուհանին ու լույսի տակ խոշորացույցով նայեց դրանց: Ահա՛, թե ինչ գտածո էր նա հայտնաբերել գետնի տակից՝ փտած ու հոտած միջուկով գտածո:

- Ա՛խ, ների՛ր ինձ, մայր իմ,- հառաչեց նա՝ միացնելով ափերը, ասես աղաչելով կտավի ծեր կնոջը չբարկանալ: Եվ նորից վերածվեց ծառուղու այն փոքրիկ տղային, ծառուղու, որտեղ կիրակի օրերին վաճառում էին գողացված շնիկներ,- քանզի դրանք...- նորից շշջաց Օլիվերը՝ ձեռքերը նկարին պարզելով,- քանզի դրանք երկար ազատ օրեր են լինելու:

ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՐԸ

«Սլեյթերի քորոցները սրություն չունեն»:

- Սլեյթերի քորոցները բնավ էլ սուր չեն, նկատել ես,- ասաց օրիորդ Քրեյլը, երբ Ֆանի Ուիլմոթի զգեստից պոկվեց վարդը, և Ֆանին, երաժշտությամբ լցված իր ողջ ծանրությամբ կռացավ՝ հատակին այն փնտրելու:

Բառերը նրան մի արտակարգ ցնցման մեջ գցեցին, քանի որ օրիորդ Քրեյլը հնչեցրեց Բախի ֆուգայի վերջին ակորդը: Օրիորդ Քրեյլն իսկապես գնացել էր Սլեյթերի մոտ և գնել քորոցներ, հարցրեց ինքն իրեն Ֆենի Ուիլմոթը՝ մի պահ իրեն խոցված զգալով: Արդյոք ևս հերթի էր կանգնել մյուսների նման, և նրան տվել էին հաշիվը պղնձադրամներով, և ևս լցրել է դրանք իր դրամապանակի մեջ, իսկ մի ժամ հետո իր զարդասեղանի առջև կանգնած հանել քորոցները: Նրա ինչի՞ն են պետք այդ քորոցները: Քանի որ ևս այդքան էլ տեղը տեղին չի հագնվում, ու ասես բզեզ լինի՝ պատյանի տակ քողարկված՝ ձմռանը կապույտ, ամռանը կանաչ: Ի՞նչ էր նրա ուզածն այդ քորոցներից... Ջուլիա Քրեյլ... ով, ասես, ապրում էր Բախի ֆուգաների հետ, նվագում ինքն իր

համար՝ ինչ կամենար, և միակն էր, որ երկու աշակերտ էր պահում Արչըր փողոցի երաժշտության քոլեջից (այդպես էր պնդում տնօրեն Քինգսթոնը), որպես հատուկ բարեհաճություն նրա հանդեպ, քանի որ նա «մեծագույն հիացմունք էր պատճառում իր բոլոր կողմերով»։ Օրիորդ Քրեյը միայնակ էր մնացել կյանքի ծանր պահին, և օրիորդ Քինգսթոնը վախենում էր նրա եղբոր մահից։ Ախր նրանք սովոր էին այնքան գեղեցիկ բաների, երբ ապրում էին Սեփսբըրիում, և իր եղբայրը՝ Ջուլիուսը, իհարկե շատ ձանաչված մարդ էր, հայտնի հնագետ։ Նրանց հետ մնալը մի հոյակապ առավելություն էր, - ասում էր օրիորդ Քինգսթոնը («Իմ ընտանիքը միշտ ձանաչել է նրանց, նրանք օրինավոր մարդիկ էին Քենթերբրիում», ասում էր նա), բայց մի փոքր վախենում էր երեխայի համար. բոլորը պետք է զգույշ լինեին, որ հանկարծ դուռը շրխկոցով չփակեին կամ էլ անսպասելիորեն դռնից ներս չցատկեին։ Օրիորդ Քինգսթոնը, որը բնավորության այնպիսի ուրվագծերով աչքի ընկավ կիսամյակի առաջին օրը ստացականը վերցնելիս ու հաշիվը դուրս գրելիս ժպտաց։ Այո, գուցե նա ինչ-որ տեղ չարածի աղջնակ էր, նա ներս էր խուժել ու տիրել այդ բոլոր կանաչ հոռմեական բաժակներին, և դրանից իրերը նետվել էին իրենց իսկ

տեղերը: Քրեյները սովոր չէին երեխաների: Նրանցից ոչ մեկն ամուսնացած չէր: Նրանք միայն կատու էին պահում: Կատուներ, որոնք, մի պահ թվում էր, թե ավելին գիտեն հռոմեական սափորների մասին, քան ցանկացած մեկը:

«Շատ ավելին է, քան ես արել եմ», - ասաց օրիորդ Քինգսթոնը զվարթ՝ գրելով իր անունը կնիքի դիմաց արագաշարժ, կենսախինդ և կյանքով լեցուն ձեռքով, քանզի նա միշտ էլ գործնական էր ամեն ինչում: Ահա, թե ինչպես էր նա իր կյանքը կերտել՝ ամեն ինչից զատ:

Գուցե հետո, երբ Ֆանի Ուիլմոթը նայում էր քորոցին, մտածում էր, որ օրիորդ Քրեյների ասածը, թե «Սլեյթերի քորոցները սուր չեն», խիզախություն էր: Քրեյներից ոչ մեկը երբևէ ամուսնացած չէր եղել: Նա ոչ մի բան չգիտեր քորոցների մասին, ընդհանրապես ոչինչ: Բայց նա ուզում էր ձեռքել այդ կախարդանքը, որ կախվել էր տան գլխին՝ կոտորելով պատուհանների ապակին, որ բաժանում է իրենց մյուսներից: Երբ Փոլի Քինգսթոնը՝ այդ փոքրիկ զվարթ աղջնակը, շրխկացրեց դուռն ու թռիչքի մատնեց հռոմեական ծաղկամանները, Ջուլիուսը, տեսնելով որ ոչ մի վնաս չի եղել (դա նրա առաջին բնագղն էր լինելու), նայեց պատուհանին դրված արկղին, հետո դաշտերից դեպի

տուն թռչկոտող Փոլիին, նայեց այն հայացքով, որով իր քույրն էր հաճախ նայում՝ այդ կասկածավոր ու զննող հայացքով:

«Աստղեր, արև, լուսին»,- թվում էր՝ ասում է. «մարգարտածաղիկը խոտերի մեջ, կրակ, սառցե նախշեր պատուհանի ապակուն, սիրտս հավվում է քեզ համար: Բայց: Միշտ թվում է, որ կա ավելացնելու «դու կոտրեցիր, դու անցար, հեռացար»: Եվ միաժամանակ այն պատում էր, կոծկում մտքի այս զույգ վիճակների սաստկությունը. «Չեմ կարող քեզ հասնել, չեմ կարող քեզ դիպչել...», խոսքեր՝ ասված թախծոտ ու տխուր: Եվ աստղերը թռչնեցին, նրանք խամրեցին, և փոքրիկը հեռացավ: Դա կախարդանքի ու դյուրանքի մի տեսակ էր, մի ապակե թափանցիկ մակերես, որ օրիորդ Քրեյը ուզում կոտրել, երբ նվագում էր Բախ, այնքան հրաշալի՝ ասես որպես պարզևատրում սիրելի աշակերտին (Ֆանի Ուիլմոթը գիտեր, որ ինքը օրիորդ Քրեյի ամենասիրած աշակերտն է), որ նա նույնպես, ինչպես բոլորը, գիտի քորոցների մասին: Սլեյթերի քորոցները սրություն չունեն:

Այո, «հայտնի հնագետը» նույնպես ադպիսի հայացք ունի: «Հայտնի հնագետը» ասելով՝ նա հաստատեց վճարագիրը՝ ձշտելով ամսվա օրը, խոսելով պարզ, հատուկ ու ուրախ, օրիորդ

Քինգսթոնի գույնի մեջ մի աննկարագրելի երանգ կար, որ ինչ-որ տարօրինակ բան էր թաքցնում, ինչ-որ տարօրինակ, օտարոտի բան Ջուլիուս Քրեյի համար: Գուցե հենց նույն օտարոտի բանն էր, ինչ Ջուլիան էլ էր զգում: Ասես մեկը թուր պահած լինի, մտածեց Ֆանի Ուիլմոութը հենց նայեց քորոցին, երեկոյթների, ժողովների (օրիորդ Քինգսթոնի հայրը քահանա էր) ժամանակ նա բամբասանքների մասնիկներ էր հավաքել կամ էլ դա կարող էր լինել ժպիտ կամ մի հնչերանգ, որով իր անունն էր արտաբերում, որը նրան փոխանցում էր «մի զգացում» Ջուլիուս Քրեյի հետ կապված: Կարիք չկա ասել, որ նա երբեք այդ մասին չէր խոսում որևէ մեկի հետ: Բայցևայնպես նա անկեղծորեն գիտեր, թե ինչ նկատի ուներ: Բայց հենց որ խոսում էր Ջուլիուսից կամ լսում նրա մասին, ամենառաջինը, որ նրա միտքն էր գալիս, մի գայթակղիչ միտք էր. ինչ-որ տարօրինակ բան կար Ջուլիուս Քրեյի մեջ:

Հենց այդպես էր Ջուլիան նայում, երբ կիսաշրջված նստել էր երաժշտական աթոռակին, ժպիտը դեմքին: Գեղեցկությունը դաշտերի մեջ է, պատուհանին է, երկնքում, և ես չեմ կարող հասնել դրան: Չեմ կարող բռնել այն, ես... նայելով ձեռքի այդ փոքրիկ ճանկերին, որոնք այդքան բնութագրական էին նրա համար,

կարող էր թվալ, թե ուզում է ավելացնել. ես, որ այդքան պաշտում եմ դա, կտայի ողջ աշխարհը միայն թե տիրեի դրան: Եվ նա բարձրացրեց գետնին ընկած կարմիր մեխակը, մինչ Ֆանին քորոցն էր փնտրում: Նա տրորեց այն, Ֆանին զգաց, թե ինչպես է այն նրա հարթ, երակաթելերով ծածկված ձեռքից թափանցում դեպի նրա ջրաներկված մատանիները, որոնց վրա մարգարիտներ կային: Նրա մատների ձնշումը, թվում էր, ավելացնում էր այն ամենը, ինչը ծաղկի մեջ ամենանզիրն էր... այն տապալելու համար, այն ավելի վառվռուն, անբասիր ու թարմ դարձնելու համար: Ի՞նչն էր նրա մեջ տարօրինակ, գուցե նրա եղբոր մեջ նույնպես... մի՞թե դա լոկ այս հրմշտոցն ու պարուրանքն է, որ միաձուլվել է հավերժական խաբկանքի ու հիասթափության հետ: Նա ձեռքերը դրել էր մեխակին, նա սեղմում էր այն, բայց չէր տիրում մեխակին, հաճույք չէր զգում ո՛չ ամբողջական, ո՛չ էլ մասնակի:

Քրեյներից ոչ մեկը ամուսնացած չէր, հիշեց Ֆանի Ուիլմոթը: Նա հիշում էր, թե ինչպես մի երեկո, երբ դասը սովորականից ավելի երկար տևեց, երբ արդեն մութ էր, Ջուլիա Քրեյն ասաց. «տղամարդկանց համար օգտակար է մեզ պաշտպանելը»: Նորից ժպտաց իր տարօրինակ ժպիտով, կանգնեց և կռճկեց վերար-

կուն, որն իրեն նմանեցնում էր մի ծաղկի, միտումնավոր դրոշմելով իր երիտասարդ ու շքեղ մատնահետքերը, բայց Ֆանին էլ ծաղկի նման կասկածեց ու անկարող եղավ զգացմունքներն արտահայտել:

«Օ՛հ, բայց ինձ պաշտպանություն պետք չէ», - ծիծաղեց Ֆանին, բայց երբ Ջուլիա Քրեյը նրան ուղղեց արտառոց հայացքը, նա ասաց, որ դրանում համոզված չէ, Ֆանին ակնհայտորեն կարմրեց նրա հայացքի հիացմունքի ներքո:

Դա տղամարդկանց միակ առավելությունն է, ասաց նա: Միթե դա էր պատճառը, որ Ֆանին հայացքը նրանից չկտրեց, քանի որ նա երբեք ամուսնացած չէր եղել: Ամեն դեպքում, նա իր ողջ կյանքը չէր ապրել Սելիսբըրիում: «Լոնդոնի ամենաչքնաղ մասն է, - մի ժամանակ ասաց նա (բայց ես խոսում եմ 15-20 տարի վաղեմության դեպքի մասին), - Քենսինգթոնն է: Եթե մեկը տասը րոպեով եղել է Գարդենսում, ուրեմն նա եղել է երկրի սրտում: Մարդ կարող էր այնտեղ հողաթափերով դրսում ծաշել ու չմրսել: Քենսինգթոնն ասես մի գյուղ լինեք, գիտե՞ս», - ավելացրել էր նա:

«Դա էր տղամարդկանց առավելությունը».- ասաց նա տարօրինակ ու ծամաճռված հնչերանգով: Դա ինչ-որ լույս սփռում էր այն խնդ-

րի վրա, թե ինչու ևս ամուսնացած չէր: Ամեն ինչ կարելի էր երևակայել. ցանկացած տեսարան նրա երտասարդությունից, թե ինչպես կապույտ խոշոր աչքերով, ուղիղ քթով, մի տեսակ եթերային գրավչությամբ, դաշնամուր նվագելով, զգեստի վրա գերող բողբոջած վարդի կախազարդով, ևս գայթակղել էր առաջին հերթին երիտասարդ տղաներին, որոնց համար նման բաները՝ հախճակապե թեյի բաժակները և արծաթյա մոմակալները, զարդանախշված սեղանը, թվում էին հիասքանչ, քանզի Քրեյները շատ գեղեցիկ իրեր ունեին... երիտասարդ տղաներն այդքան էլ լավ չէին աչքի ընկնում... Մայր տաճարի քաղաքից այդ երիտասարդ տղաները՝ իրենց փառատենչությամբ: Սկզբում ևս գայթակղել էր նրանց, հետո եղբոր ընկերներին՝ Օքսֆորդից ու Քեմբրիջից: Նրանք ամուսնը գալիս էին ու գետի մոտ իր շուրջը շարք բռնում... շարունակում Բրաունինգի բանավեճը նամակներով և միգուցե պայմանավորում այն եզակի հևարավորությունների դեպքում, երբ ևս մնում էր Լոնդոնում՝ ցույց տալով նրան Քենսինգթոնի պարտեզները:

«Լոնդոնի ամենահիասքանչ մասն է Քենսինգթոնը» (ես խոսում եմ 15-20 տարի վաղեմության մասին),- ասել էր ևս մի անգամ: Տասը րոպե պարտեզում լինելը Երկրի սրտում լի-

նելն է: Ամեն ոք կարող էր ստանալ այն, ինչ ուզում էր, մտածեց Ֆանի Ուիլմոթը միայնակ. օրինակ, պարոն Շերմենը՝ նկարիչը, իր վաղեմի ընկերը, ինչ-որ առիթով մի հունիսյան արևոտ օր հրավիրել էր իրեն թեյելու ծառի տակ (Նրանք նույնպես հանդիպել էին այն երեկոյթներին, ուր կարող էիր գալ հողաթափերով ու չվախենալ, որ կմրսես): Մորաքույրը կամ մեկ ուրիշ տարեց բարեկամուհի այդտեղ սպասում էր, մինչ նրանք նայում էին Սերփենթայնին: Նրանք նայում էին Սերփենթայնին: Նա կարող էր նավակով անցնել գետի մյուս ափը: Նրանք դա համեմատեցին էյվընի հետ: Նա պետք է մոլեգնորեն ծանր ու թեթև աներ համեմատությունը: Գետի տեսարանները կարևոր էին իր համար: Նա նստեց ոտքերը մի փոքր ծալած, մի փոքր ծռած, բայց նայնպես նա հիասքանչ էր՝ սլացիկ ու հավաքված: Ամենավճռական պահին, երբ նկարիչը գիտակցեց, որ պետք է հիմա խոսի (դա նրա միակ հնարավորությունն էր Ֆանիին լքելու, միայնակ թողնելու), ու խոսեց՝ գլուխը մի անիմաստ անկյուն ուղղած, հախուռն ջղաձգումներով. և հենց ամենաթեժ պահին Ֆանի Ուիլմոթը կտրուկ ընդհատեց նրան: Նա պետք է ուղեկցեր իրենց դեպի Բրիջ, արտասվեց Ֆանին: Սարսափի պահ էր. երկուսի համար էլ՝ հիասթափության

ակնթարթ: Ես չեմ կարող զավթել այն, չեմ կարող տիրանալ, մտածեց Ֆանին: Ծերմենն էլ չէր կարող հասկանալ, թե ինչու էր Ֆանին եկել: Թիակի մի ահռելի պտույտով Ծերմենը շրջեց նավակը: Պարզապես նախատելո՞ւ համար: Նա շրջվեց մեջքով դեպի Ֆանին ու հաջողություն մաղթեց:

Այդ տեսարանի ողջ էությունը կարող էր այլ լինել, ով ինչպես կցանկանար, արձագանքեց Ֆանի Ուիլմոթը: (Ո՞ր ընկավ քորոցը): Դա կարող էր լինել Ռավենսնան. կամ Էդինբուրգը. նա եղբոր տանն էր տիրություն անում: Տեսարանը կարող էր փոխվել, կարող էին փոխվել և՛ երիտասարդը, և՛ նաև այդ ամենի հանդեպ եղած վերաբերմունքը, բայց մի բան կմնար անփոփոխ՝ Ֆանիի մերժումը, իր խոժոռված դեմքը, զայրույթը, իր խնդրի առիթը և իր թերությունը... նաև՝ իր վիթխարի թեթևությունը: Անմիջապես հաջորդ օրը գուցե Ֆանին արթնացավ ժամը վեցին, ձեռքին կապեց ժամացույցը և ոտքով քայլեց ողջ ճանապարհը՝ Քենսինգթոնից դեպի գետ: Նա այնքան գոհ էր, որ չզոհաբերեց իր իրավունքը գնալ ու տեսնել այդ ամենը. քանի դեռ այդ ամենը կատարյալ էր, մինչև մարդկանց կարելի է ասել՝ նա կարող էր անկողնում նախաձաշել, եթե ցանկանար: Նա չէր զոհաբերել իր անկախությունը:

Այո, Ֆանի Ուիլմոթը ժպտաց, Ջուլիան վտանգի չէր ենթարկել իր սովորույթները: Նա մնացել էր պաշտպանված, իր սովորույթները տառապանքի կենթարկվեին, եթե ինքն ամուսնանար: «Նրանք մարդակեր հսկաներ են», - ասաց նա մի երեկո կատակով, երբ արդեն մի այլ աշակերտուհի, որ վերջերս էր ամուսնացել, հանկարծ հիշեցրեց նրան, որ ինքը կարոտել էր ամուսնուն և շտապում է շուտափույթ հագեցնել կարոտը:

«Նրանք մարդակեր հսկաներ են», - ասաց նա՝ դառնորեն ծիծաղելով: Մարդակերը ամեն ինչ կխառներ անկողնու մեջ իր նախաձաշին... ամեն ինչ, անգամ զբոսանքները գետի ափին, մայրամուտի ժամանակ: Ի՞նչ կլիներ (բայց ինչ-որ մեկը դժվար թե կարողանար խանգարել դրան), եթե նա երեխաներ ունենար: Նա համակվեց հիացնող զգոնությամբ՝ ի հակադրություն սառնությանը, հոգնածությանը, ճոխ ուտելիքներին, տաքացվող սեղյակներին, քանզի նա երբեք չէր կարող տարբերել՝ սրանցից ո՞ր մեկն էր իրեն այդ սարսափելի գլխացավանքների պատճառողը, ո՞ր մեկն էր իր կյանքը լցնում ճակատամարտի խաբուսիկ առերևութականությամբ: Նա միշտ էլ թշնամուն գերազանցում էր իր սրամտությամբ, մինչդեռ դա կարող էր թվալ մի հետապնդող հետարքրքրու-

թյուն. ևա կարող էր ի վերջո ջախջախել թշնամուն և կարող էր կյանքը դարձնել ձանձրալի: Սակայն ևա անվերջ քարշ էր տալիս այդ պատերազմը. մի կողմում՝ սոխակը, մյուսում՝ տեսարանը, որը ևա սիրեց կրթտության չափ, այո՛, տեսարանների ու թռչունների հանդեպ ևա զգում էր ոչ այլ ինչ, քան կիրք... մյուս կողմում սոսկալի խոնավ ու թաց արահետն էր կամ էլ սարսափելի երկար ձգվող զառիթափ մի բլուր, որը հաստատ առանց պատճառի նրան կամոքեր հաջորդ օրը և կվերադարձներ իր գլխացավանքներից մեկը: Երբ այնուամենայնիվ ևա կարողանում էր ձարակություն գործադրել և այցով ձողոպրել Հեմփթոն Քորթ՝ մի շաբաթով, այն ընթացքում, երբ քրքմածաղիկները, որ իր ամենասիրելիներն էին, իրենց գեղեցկության գագաթնակետին էին հասած լինում, դա իսկական հաջողություն էր: Մի տևական զգացում էր, մի բան, որ տեղի էր ունենում անվերջ: Նա կախեց այդ կեսօրը իր հիշարժան օրերի մանյակից, օրեր, որ այնքան քիչ էին, որ ևա կարող էր դրանց մասին ասել՝ այս մեկը կամ այն մյուսը: Այս տեսարանը, այս քաղաքը մատնացույց անել, զգալ այդ ամենը, հառաչանքները, համուիտը, այն արժեքը, որ դարձնում էր այդ ամենը ինքնատիպ:

«Անցած ուրբաթ այնքան հիանալի էր, - ասաց նա, - ես վճռել էի, որ պետք է գնամ այնտեղ»: Ու այդպես նա մեկնեց Վաթերլո, այցելեց Հեմփթըն Քորթ... միայնակ: Ինքնաբերաբար, կամ գուցե և հիմարաբար կխղճայիր նրան այն բանի համար, որ երբևէ չի զղջացել, որ նա միշտ իր ամեն քայլում եղել է միայնակ: Նրա եղբայրը մահացած էր: Քույրը ասթմայով էր տառապում: Եվ Էդինբուրգի օդը, նա ասում էր, որ լավ է իր համար: Դա շատ ցավալի էր Ջուլիայի համար: Միգուցե նաև այն պատճառով, որ նա զուգակցում էր այդ քաղաքը իր եղբոր՝ հայտնի հնագետի հետ, որն այնտեղ էր մահացել, իսկ նա սիրում էր եղբորը: Նա ապրում էր միայնակ Բրոմթոն Ռոդում՝ մի փոքրիկ տան մեջ:

Ֆանսի Ուիլմոթը տեսավ քորոցը ու բարձրացրեց այն: Նա նայեց օրիորդ Քրեյլին: Իսկապես օրիորդ Քրեյլն այդքան միայնակ էր: Ոչ, օրիորդ Քրեյլն այս պահին հավասարակշռված ու կայուն էր. մի երջանիկ կին: Ֆանսին նրան անակնկալի բերեց իր սքանչացման ու երանության պահին: Նա նստեց այնտեղ, կիսով չափ շրջված դաշնամուրը, ձեռքերում պինդ սեղմած մեխակը, մինչդեռ նրա դիմաց պատուհանի սուր շրջանակն էր՝ անվարագույր. երեկոյի բոսորն էր, որ տալիս էր իր բոսորից ադամանդ-

յա էլեկտրական լապին, որն անստվեր այրվում էր երաժտության՝ մերկ ու դատարկ սենյակում: Ջուլիա Քրեյը նստած էր կույզ եկած ու կռացած, ծաղիկն ամուր պահած, թվում էր՝ նա դուրս էր հորդել լոնդոնյան գիշերից, թվում էր՝ այն վերարկուի պես նետել էին նրա առաջ, թվում էր՝ իր մերկության ու խստության մեջ, որ իր հոգու արտացոլքն էր, նա շրջանակված էր մի բանով, որ պահում ու պաշտպանում էր իրեն: Ֆանին անէացած էր:

Ֆանի Ուիլմոթի աչքերում ամեն բան մի պահ թվաց անկայուն, ասես նա նայում էր օրիորդ Քրեյի աչքերով. նա տեսավ իր էության, իր լինելիության ամենավեհ շատրվանը՝ իր ականակիտ արծաթյա կաթիլներով: Նա տեսավ անցյալը, անցածը իր հեռուներով. դրանք արդեն նա շրջանցել էր: Նա տեսավ հռոմեական կանաչ ծաղկամանները իրենց տուփերով, լսեց կրիկետ խաղացողների աղմուկը, տեսավ կորացած քայլերով Ջուլիային, նուրբ շղարշ հագած, իջնելիս. հետո տեսավ իրեն՝ մայրենու տակ թեյ լցնելիս. ծեր մարդու ձեռքերը նրբորեն իր ափերի մեջ առնելը. նորից տեսավ իրեն՝ միջանցքներում պտտվելիս ու քայլելիս. ողբալով, որ ինքն անցավ, գնաց աննշան, առօրյա կյանքում՝ աստիճանաբար ծերանալով և թոթափելով հագուստները՝ ամ-

ռան գալուն ընդառաջ, քանի որ իր տարիքում դրանք չափազանց խայտաբղետ էին հազնելու համար. և խնամելով իր հոր հիվանդությունը, և հավատարիմ մնալով իր ուղուն, որ ավելի ու ավելի հաստատակամ էր դարձնում նրան դեպի իր միակ նպատակը՝ իր միայնությունը. ճանապարհորդելով խնայողաբար՝ չհաշված այն խիստ հաշվարկված ծախսերը, որ դուրս էին գալիս նրա՝ ամուր փակված քսակից, գումար, որ անհրաժեշտ էր այդ ճանապարհորդությունների կամ այն հին հայելու համար. իր համար հաճույքներ ընտրելիս համառորեն կառչելով այն ամենից, ինչ մարդիկ կարող էին ասել: Նա տեսավ Ջուլիային...

Ջուլիան բոցավառվեց: Ջուլիան հուրհրաց: Գիշերվա անհունի մեջ նա այրվեց ինչպես մի մարած, հանգած սպիտակ աստղ: Ջուլիան պարզեց իր ձեռքերը: Ջուլիան համբուրեց նրա շուրթերը: Ջուլիան տիրեց դրանց:

«Սլեյթերի քորոցները սրություն չունեն», - ասաց օրիորդ Քրեյը՝ տարօրինակ ծիծաղելով ու լիցքաթափվելով թուլացնելով ձեռքերը, քանի որ Ֆանսի Ուիլմոթն ամրացրեց ծաղիկը նրա կրծքին դողդողացող մատներով:

ՍԻՐԻՐ ՄԵՐՁԱՎՈՐԻԴ

Փրիքեթ Էլիսն այդ օրը շտապելով անցնում էր Դինս Յարդը: Պատահաբար դեմ առ դեմ հանդիպեց Ռիչարդ Դելլոուեյին: Նրանց հայացքների պատահական հադիպումից ծանաչումի կայծ վառվեց. նրանք քսան տարի է, ինչ չէին հանդիպել: Դպրոցում միասին էին սովորել: Իսկ ինչո՞վ է Էլիսը զբաղվում: Փաստաբան է: Հա՛, հա՛, նա ծիշտ էր՝ չէ՞ որ թերթերով հետևում էր այդ գործի ընթացքին: Բայց այստեղ զրուցելը հարմար չէ: Գուցե այսօր երեկոյան Էլիսն այցելի իրե՛ն (նրանք դեռ նույն տեղում էին բնակվում, անկյունից երկու քայլ այն կողմ): Ընկերներից մի քանիսն էլ են լինելու: Հնարավոր է՝ նաև Ջոնսոնը: «Հիմա նա ազդեցիկ դեմք է», - ավելացրեց Ռիչարդը:

- Դե պայմանավորվեցի՞նք, ուրեմն՝ մինչ երեկո: Ծատ ուրախ եմ, որ հանդիպեցի՞նք, - ասաց Ռիչարդը: Եվ իսկապես նա ուրախ էր, որ հանդիպել էր այդ խենթ երիտասարդին, որը դպրոցական տարիներից բնավ չէր փոխվել՝ այն նույն կլորադեմ, թմբլիկ տղան էր՝ ամբողջովին խորացած իր նախապաշարումների մեջ, բայց անսկարագրելի տաղանդավոր. նա

ստացել էր Նյուքասլի մրցանակ: Ահա այսպես մտածելով Ռիչարդը քայլում էր տուն:

Միևնուկտ Փրիքեթ էլիսը նայելով, Դելլուեյի հեռացող կերպարանքին, ցանկացավ, որ ինքը նրան երբեք էլ հանդիպած չլիներ, իսկ ավելի ձիշտ (քանի որ Դելլուեյը միշտ էլ նրան դուր էր եկել) համաձայնություն տված չլիներ գնալու նրա մոտ՝ ընթերելու: Դելլուեյը ամուսնացած էր, հավաքույթների սիրահար էր, ինչը բնավ էլ էլիսի սրտով չէր: Անգամ մի շնորհքով կոստյում չուներ: Բայց ժամը մոտենում էր, ու պարզ էր, որ եթե ինքը խոստացել է ու չի ուզում վատ դրության մեջ հայտնվել, ապա ստիպված է գնալ:

Բայց ինչ ահավոր մթնոլորտ է: Ջոնսոնն էլ իսկապես եկավ, սակայն իրենք մեկմեկու հետ զրուցելու ոչ մի թեմա չունեին: Ջոնսոնը դեռ պատանի ժամանակ էր գոռոզ, նույնն էլ հիմա՝ փորձում էր իրեն ինչ-որ մի կարևորություն տալ: Ոչ մի հետաքրքիր բան: Իսկ մնացած հյուրերից ոչ մեկի հետ էլիսը ծանոթ չէր: Սակայն միանգամից չէր կարող հեռանալ, գոնե մի երկու բառ պիտի փոխանակեր Դելլուեյի հետ: Միևնուկտ Դելլուեյը հենց ինքն զբաղված էր տան տիրոջ պարտականություններով՝ սպիտակ բաձկոնը հագին այս ու այն կողմ էր գնում-գալիս: Դե արի ու քարե սյան նման

կանգնիր ու սպասիր: Դրանից գիտակցությունդ ավելի է տակնուվրա լինում: Խենթանալ կարելի է, երբ մտածում ես, որ չափահաս մարդիկ՝ գիտակից տղամարդիկ ու կանայք, գրեթե միշտ այսպես են անցկացնում երեկոները: Սափրվելուց առաջացած կարմիր ու կապույտ բծերով այտերին կնճիռներ իջան. այդ ճնշող լուռության մեջ նա հենվել էր պատին ու սպասում էր: Ձիու նման աշխատում էր, չափազանց շատ շարժվում, որպեսզի պահպանի կեցվածքը, ամրակազմ տեսքը, սակայն հիմա նա ընկճված էր, իսկ բեղերը, թվում էր, ցրտահարված էին: Նա ձանձրանում էր, զայրանում և ինքն իրեն այդ անշուք տոնական կոստյումի մեջ թվում էր անփույթ ու աննշան:

Այս պերճաշուք, շքեղ հագնված, սակայն դատարկ մտքերով տիկնայք ու պարոնայք առանց մի վայրկյան անգամ դադարի խոսում էին ու ծիծաղում, իսկ Փրիքեթ Էլիսը հետևում էր նրանց ու ինքն իր մեջ համեմատում էր այդ բոլորին Բրաներների հետ, որոնք, երբ հաղթեցին Ֆեների գարեջրատան գործարանի դեմ ուղղված հայքը և ստացան երկու հարյուր ֆունտ (մինչդեռ կրկնակին պետք է ստանալին), չափսոսացին այդ գումարից հինգ ֆունտը ծախսել ու Էլիսի համար ժամամացույց նվեր գնեցին: Դա նրանց կողմից այնքան մեծահոգի

արարք էր, նման արարքները չեն մոռացվում... ու հիմա նա ավելի խստորեն սկսեց նայել այս մարդկանց՝ պերճաշուք հագնված, ծաղկուն, զվարթ... ու համեմատեց զգացողությունները այն զգացմունքների հետ, որ ապրել էր այն առավուտ, ժամը տասնմեկին, երբ ծերունի Բրաները և տիկին Բրաները զուգված-զարդարված հայտվեցին նրա տանը, որպեսզի նրան հանձնեին, ինչպես ծերունին արտահայտվեց՝ պաշտոնական կեցվածք ընդունելով նման նշանավոր առիթի համար, «այս համեստ նվերը՝ ի նշան երախտագիտության ու հարգանքի, որ դուք այդքան հմտորեն հաղթեցիք մեր գործը», և տիկին Բրաներն էլ համաձայնեց... այո՛, այո՛, նրանք երկուսն էլ համոզված էին, որ առանց Էլիսի օգնության ոչինչ էլ չէր լինի: Նրանք չափազանց շատ էին գնահատում Էլիսի մեծահոգությունը, քանի որ նա ծեր զույգից հոնորար չէր վերցրել:

Երբ նա ստացավ ժամացույցը, այն տեղավորեց սալաքարի մեջտեղում: Չէր ուզում՝ ինչոր մեկն այդ պահին տեսներ իր ինքնագոհ դեմքը: Բայց չէ՞ որ ինքը հենց դրա համար էլ աշխատում էր, ու դա էլ ի՞ր պարգևատրումն էր. ահա հիմա նա նայում էր մարդկանց, որոնք իր աչքի առջև էին, ու նրան թվում էր, որ նրանք էլ են տեղավորվում իր բնակարանում՝ այդ

առավոտի տեսարանի մեջ, ու դա էլ հենց նրանց ամենածանր պատիժն էր. երբ այդ տեսարանը խամրեց ու անհետացավ, երբ Բրաներները հօդս ցնդեցին, այդ ամբողջից մնաց միայն ինքը՝ դեմ առ դեմ այդ թշնամական ջուկատի մարդկանց հետ. հասարակ, ոչ գոռոզ, ժողովրդի միջից դուրս եկած մարդ (ևս ուղղվեց), շատ վատ հագնված, զայրացած, անշուք մի մարդ, որը դեմ էր դուրս եկել դաժանությանը, դրամաշորթությանը և անհոգի հասարակությանը: Բայց բավական է նրանց հետևել: Նա դրեց ակնոցն ու սկսեց աչքի անցկացնել կտավները: Հետո կարդաց պահարաններից մեկին շարված բոլոր գրքերի վերնագրերը՝ մեծ մասը բանաստեղծություններ էին: Լավ կլիներ վերընթերցել այդ սիրելի հին օրերի հեղինակներին՝ Ծեքսպիրին, Դիքենսին: Լավ կլիներ ժամանակ գտնել ու այցելել Ազգային պատկերասրահ, բայց չէ, ոչ այնտեղ: Ո՛չ այնտեղ, երբ աշխարհում այսպիսի բաներ են կատարվում: Երբ մարդկանց առավոտից երեկո քո օգնությունն է պետք, երբ նրանք ուղղակիորեն կանչում են քեզ սատար կանգնելու: Հիմա հարմար ժամանակներ չեն, որ քեզ շռայլություններ թույլ տաս: Նա հայացքը նետեց բազմոցներին, կտրատող դանակներին, շքեղ շապիկներով գրքերին, ու գլուխը տարուբերեց՝

հասկանալով, որ իրեն երբեք էլ ժամանակը չի բավականացնի, երբեք գոհ չէր և երբեք էլ չի հանդգնի նման շռայլություններ թույլ տալ իրեն: Այս պարոնները կքարանային, երբ իմանային, թե որքան է նա վճարում ծխախոտի համար, որ հագի կոստյումը ուրիշից է վերցրած: Միակ ճոխությունը, որից նա ի գորու չէր հրաժարվել, փոքրիկ մի զբոսանավ էր՝ Նոր Տուլքի լճի ափերին: Եվ գուցե նրա մեղքն էլ հենց դա էր: Տարվա մեջ մի անգամ կտրվել ամենքից ու պառկել խոտերին՝ նայելով երկնքին: Նա մտածեց, թե որքան կզարմանային այդ կարևոր պարոնները, երբ իմանային, թե ինչքան ուրախություն էր պատճառում այն, ինչին նա հին ժամանակների նման անվանում էր սեր բնության հանդեպ՝ դաշտերի, ծառերի, որոնք տասնյակ տարիներ է, ինչ նրա ընկերակիցն էին:

Կզարմանային այս պարոնները: Եվ հիմա, ակնոցը նորից գրպանը դնելով, նա զգում էր, որ ամեն վայրկյանի հետ նրանց ավելի ու ավելի է զարմացնում: Եվ դա շատ տհաճ զգացում էր: Եվ անգամ սերը դեպի մարդկությունը և այն, որ նա ծխախոտը գնում էր ունցիան ընդամենը հինգ պենսով, այն, որ սիրում էր բնությունը, անգամ այս ամենի հետ մեկտեղ հիմա նա չէր կարող հանգիստ զգալ, այդ ամենը՝

որպես ինքնին հասկանալի և տրամաբանական մի բան: Այս հաճույքներից յուրաքանչյուրը ասես բողոքի էր վերածվում: Թվում էր՝ այս մարդիկ, որանց նա արհամարհում էր, ստիպում էին իրեն ինչ-որ բանի համար արդարանել: Ես հասարակ մարդ եմ, կրկնում էր նա մտքում: Նաև ասաց մի բան, որի համար իսկույն ևեթ ամաչեց, բայց արդեն ասել էր. «Ես իմ մտերիմների համար մի օրվա մեջ ավելին եմ արել, քան դուք ձեր ամբողջ կյանքի ընթացքում»: Եվ նա դա զգում էր, մեկը մյուսի հետևից տեսարանները սահում էին նրա հիշողության մեջ. տեսարաններ՝ նման այն օրվան, երբ Բրաներները նվիրեցին իրեն այդ ժամացույցը, սահեցին ջերմ խոսքերը, որոնք մարդիկ ասել էին իր մարդասիրության, մեծահոգության համար, այն մասին, թե ինչպես էր ինքը նրանց օգնել: Էլիսը ինքն իր աչքին թվում էր որպես մարդկության իմաստուն, համբերատար ու խոնարհ ծառա: Եվ ավստոսում էր, որ չի կարող այդ խոսքերը բարձրաձայնել: Դժվար է սանձել այն զգացումը, երբ ճշմարտությունը կեղեքում է քեզ՝ ելքի ուղիներ որոնելու համար: Առավել ծանր էր այն, որ անհնար էր ինչ-որ մեկին պատմել, թե ինչպես էին ոմանք արտահայտվել իր մասին: Փառք Աստծու, կրկնում էր ինքն իրեն, վաղը ևեթ վերա-

դառնում եմ աշխատանքի, բայց մինչ այդ հյուրասենյակից ծլկելն ու թաքուն հեռանալը նրան արդեն ոչ բավարար թվացին: Նա ստիպված էր մի փոքր էլ մնալ, մնալ այնքան, քանի դեռ չէր արդարացել: Բայց ինչպե՞ս աներ դա: Նա ոչ մեկի հետ ծանոթ չէր մարդկանցով լեցուն այս սենյակում, չկար մեկը ում հետ խոսեր:

Վերջապես նրան մոտեցավ Ռիչարդ Դելլունյը:

- Քեզ ուզում եմ ծանոթացնել օրիորդ Օ՛Քիֆի հետ,- ասաց նա: Օրիորդ Օ՛Քիֆը նայեց ուղիղ Էլիսի աչքերին: Նա ինքնավստահ, կտրուկ շարժումնով երեսունն անց մի կին էր:

Օրիորդ Օ՛Քիֆը Էլիսին խնդրեց իրեն պաղպաղակ բերել կամ էլ խմելու մի բան: Նա դա արեց աններելիորեն հանդուգն տոնով և միտումնավոր (գոնե Փիքթեթ Էլիսին այդպես թվաց), քանի որ այդ կիզիչ օրը Օ՛Քիֆն ականատես էր եղել, թե ինչպես էր շատ աղքատ ու շատ հոգևած մի կին երկու երեխաների հետ հենվել վանդակաճաղերին ու նայում ներս՝ դեպի պուրակ: Մի՞թե հևարավոր չէր նրանց ներս թողնել, մտածում էր Օ՛Քիֆն ու խղճահարությունը հեղեղել էր իրեն՝ վերածվելով փոթորկոտ անհանդուրժողականության: «Ո՛չ», պատասխանեց նա ինքն իրեն, պատասխանեց կոպիտ ու հանդուգն, ասես ինքն իրեն ահարկու

ապտակ հասցրեց: Աշխարհում և ո՛չ մի ուժ չի կարող դա թույլ տալ: Նա վերցրեց թենիսի գնդակն ու նետեց ձաղերից այն կողմ: Աշխարհում և ո՛չ մի ուժ դա չի կարող անել, զայրույթով արտաբերեց նա ինքն իրեն ու հենց այդ նույն պատճառով էլ գոռոզաբար հրամայեց անծանոթ տղամարդուն.

- Ինձ պաղպաղակ բերեք:

Նա դեռ չէր ավարտել պաղպաղակը վայելելը, երբ Փոթորիկ էլիսը հայտնվեց նրա կողքին ու հասցրեց հայտնել, որ ինքն արդեն մոտ տասնհինգ տարի է, ինչ չի մասնակցել նման ընթրիքների, որ հագի կոստյումը մեկ օրով վերցրել էր քրոջ ամուսնուց, որ նման կերպ ժամանակ անցկացնելը նրա սրտով չէր և նաև ուրախությամբ կասեր, որ ինքը հասարակ մարդ է ու նախընտրում է նման մարդկանց ընկերակցությունը, հետո էլ կպատմեր (ու անմիջապես կամաչեր դրանից) Բրաների ժամացույցի մասին, սակայն օրիորդ Օ՛Քիֆը հարցով ընդհատեց նրան.

- «Փոթորիկը» տեսնլ եք:

Հետո իմանալով, որ չի տեսել, հետաքրքրվեց՝ զուցե կարդացնլ է: Նորից լսելով «ոչ»՝ մի կողմ դրեց պաղպաղակի սկահակը ու... մտածեց. «միթե նա երբևէ պոեզիա չի կարդացել»:

Փրքեթ Էլիսը, զգալով, որ իր մեջ մի բան է սկիզբ առնում, մի բան, որը կոչնչացներ այս երիտասարդ կնոջը, նրանից մի իսկական զոհ կթողներ, ստիպեց իրեն նստել Օ'Քիֆի կողքին, ահա այստեղ, ուր նրանց ոչ ոք չէր խանգարի, դատարկ պարտեզի մի նստարանին, քանի որ բոլորը վերևում էին, չնայած որ այստեղ էլ էր լսվում նրանց բզզոցները, աղմուկը, ձայներն ու զրնգոցները, ասես խոտերի վրա թավալվող կատուների ուրվականային նվագախմբի մլավոցներ էր ուղեկցվում, ներդաշնակվող անտեսանելի խենթ զուգերգ, ամենն այդ ներդաշնակվում էր տերևների խշշոցի, չինական լապտերների նման դեղնավուն պտուղների այս ու այն կողմ տատանումների հետ, իսկ զրույցները հիշեցնում էին հոգեհանգստի մեղեդի՝ գրված խելագարի ձեռքով, մի իրական ու խորը ցավ ապրած թեմայով:

- Ինչ գեղեցիկ է,- ասաց օրիորդ Օ'Քիֆը:

Ա՛խ, իրոք... հյուրասենյակից հետո շատ գեղեցիկ էր այս պարտեզը, իսկ նրանց շուրջը՝ Վեսթմինսթերի սև աշտարակն էր՝ կախված երկնի օվկիանոսից. տան աղմուկից հետո աննկարագրելի էր այդ լռությունը: Ու սա կարող էին վայելել բոլորը՝ այն հոգևած կիևը, նրա երեխաները...

Փրիքեթ Էլիսը սկսեց ծխել: Սա հաստատ

անհարգալից կթվար Օ՛Քիֆին: Սիգարետը էժանագին էր՝ հինգ ու կես պենս մեկ ունցիայի համար: Նա մտածում էր ու իրեն պատկերացնում իր նավակի մեջ ծխելիս, լիակատար ունայնության մեջ միայն ինքը և աստղագարդ երկինքը: Այս ամբողջ երեկոյի ընթացքում նրան միայն հուզում էր, թե ինչ էին իր մասին մտածելու ներկաները: Եվ լուցկու հատիկը քսելով կոշիկի ներբանին ասաց տիկնոջը, որ այստեղ ոչ մի գեղեցիկ բան էլ չի տեսնում:

- Գուցե դուք բնավ էլ ընկալունակ չեք գեղեցիկի նկատմամբ,- հակաձառեց Օ՛Քիֆը, մտածելով այն մասին, որ Էլիսը չի տեսել «Փոթորիկը», ոչ մի գիրք չի կարդացել, տեսքն էլ անփույթ էր՝ այս բեղերը, դուռնը, ժամացույցի արծաթյա շղթան... Ու մտածեց... սրա դիմաց վճարել էլ հարկավոր չէր: Թանգարաններ գնա, այցելիր Ազգային պատկերասրահ, վայելիր գյուղական տեսարանները ու այդ ամենը անվճար: Ի հարկե Օ՛Քիֆը գիտեր նաև այդ ամենի հակառակ կողմը՝ լվացք, եփ ու թափ, երեխաներ, բայց ամենագլխավորը, ինչի մասին բոլորը խուսափում էին բարձրաձայնել, այն է, որ երջանկությունն առավել էժան է, քան սիգարետը: Այն նաև որպես պարզև կարելի էր ստանալ: Այն նվիրում է գեղեցկությունը...

Եվ ահա այդ պահին Փրիքեթ Էլիսը ի պա-

տասխան ցնցեց այդ կնոջը՝ այդ գունատ, հանդուգն ու գոռոզ կնոջը: Ծխախոտի մնացուկները թափ տալով՝ նա մեկ առ մեկ Օ՛Քիֆին թվարկեց այն, ինչ արել էր մի օրվա ընթացքում: Արթնացել էր ժամը վեցին, հաճախորդները ընդունել, ծանոթացել ծայրամասերի գարշահոտ կոյուղիների գործին, հետո գնացել դատարան:

Հազիվ էր զսպում իրեն, որ չպատմի որոշ անձնական ձեռքբերումների մասին: Այնուհանդերձ կարողացավ զսպել իրեն, բայց դրանից առավել կծու դարձան խոսքերը: Ասաց, որ իր համար զզվելի է լսել, թե ինչպես են կերածխմած, պերճաշուք հագնված կանայք մտածում գեղեցկությունից դուրս գտնվող գեղեցկության մասին (Օ՛Քիֆը սեղմեց շուրթերը, քանի որ ինքը նիհարիկ էր, իսկ հագի զգեստը՝ ոչ նորածն):

- Գեղեցկություն,- ասաց Փրիքեթը: Նրա պատկերացումներում գեղեցկությունը չէր անջրպետվում կենդանի էակներից:

Երկուսն էլ զայրացած նայում էին ամայի պարտեզի այս ու այն կողմը, ուր ստվերներն էին խաղում, իսկ կատուներից մեկը թաթը բարձրացրել էր ու խրված մնացել էր ջրափոսի մեջտեղում:

- Գեղեցկություն՝ անջրպետված կենդանի

էականերից: Ինչպէս հասկանալ,- բացականչեց օրիորդ Օ՛Քիֆը:

Ահա թե ինչպես... Եվ Փրօքթթ Էլիսը ավելի բորբոքվեց, պատմեց Նրան Բրաներների մասին, ժամացույցի մասին, դույզն-ինչ չթաքցնելով, որ հպարտանում է այս պատմության մեջ ունեցած դերով:

- Այ սա գեղեցիկ էր,- ավելացրեց Էլիսը: Նրա այս պատմությունը կնոջը տարակուսանքի մեջ գցեց: Ինչպիսի մեծ կարծիք սեփական անձի մասին, բացի այդ, դա գեղեցիկ չէ բարձրաձայնելը, մի տեսակ անարգանքի պես հնչեց: Ոչ մեկին իրավունք չի տրված պատմել ինչ-որ բաների մասին՝ ապացույց մերձավորների հանդեպ սիրո: Իսկ այդ ընթացքում, մինչև ա պատմում էր, թե ինչպես ծերուկը զգաստացավ ու ասաց ճառը, Օ՛Քիվը հուզվեց, աչքերին արցունքներ հայտվեցին: Ա՛խ, եթե իր կյանքում մեկը իրեն նման խոսքեր ասած լիներ: Եվ ահա հենց սա էլ ապացույց, որ մարդիկ անհույս են, Նրան երբեք ժամացույցներից այն կողմ հուզվելու առիթ չեն գտնի, Բրաներները կշարունակեն գովեստի խոսքեր շռայլել Փրիթթ Էլիսներին, իսկ Փրիթթ Էլիսները կշարունակեն թոթովել ամեն մի հարմար առիթի, թե որքան են իրենք սիրում իրենց մերձավորներին: Եվ միշտ էլ պիտի խոյս տան համաձայ-

նության եզրեր գտնելուց, պիտի վախենան գեղեցկությունից: Երկուսն էլ լուռ նստած էին: Երկուսի սրտերն էլ մռայլված էին: Անգամ սեփական խոսքերը թեթևություն չբերեցին Էլիսին, այն փուշը, որը Օ՛Քիֆը մխրձել էր նրա ինքնասիրության մեջ, նա չկարողացավ հանել, այլ ավելի խորը մխրձեց: Իսկ Օ՛Քիֆի մտքերում քառս էր, պարզության փոխարեն՝ մթանգնում ու տարակուսանք:

- Ես երևի այն մարդկանցից եմ, այն սովորական մարդկանցից, որոնք սիրում են իրենց մերձավորներին,- ավելացրեց Փրիքեթ Էլիսը՝ ոտքի կանգնելով:

Սրան ի պատասխան՝ Օ՛Քիֆը քիչ էր մնում գոռար, բայց հանդարտ պատասխանեց.

- Ես նույնպես:

Եվ, ատելով մեկմեկու, ատելով հյուրերին, այս տան տերերին, ում շնորհիվ նրանք անցկացրեցին նման ծանր, նման նողկալի երեկո, երկուսն էլ, ի կատար ածելով իրենց սերը մերձավորների հանդեպ, վեր կացան ու առանց մի բառ ասելու ընդմիջտ բաժանվեցին:

դեռ փոքր տղա էր: Ես ինքս էլ հիմա երիտասարդ չեմ,- դա ծիշտ էր, չնայած որ նա դեռ առաջվա նման դուրեկան էր ու էլեգանտ,- այսպես, ուրեմն, նա խորը ծերության մեջ էր, իսկ ես երեխա էի, երբ նա պատմեց ինձ այս պատմությունը: Նա շատ գեղեցիկ ծերունի էր՝ սպիտակ մազերով և կապույտ աչքերով: Երիտասարդ ժամանակ նա հաստատ եղել էր շատ գրավիչ, բայց երևի տարօրինակ... դա գուցե բնական էր՝ հաշվի առնելով իրենց ապրելակերպը: Իրենց ազգանունը Քոբեր էր: Սնկացած պալատականներ էին, միևնույն ժամանակում իրենց էին պատկանել Յորքշայրի հողերը: Սակայն իմ պապի մանուկ հասակում այդ ամենից արդեն լուրջ մի աշտարակ էր կանգուն մնացել: Իսկ իրենց տունը հասարակ ֆերմերի տուն էր՝ միայնակ կանգնած դաշտերի մեջ: Վերջին անգամ մենք այնտեղ տասը տարի առաջ ենք եղել: Ստիպված էինք իջնել մեքենայից ու ոտքով անցնել դաշտը: Տուն տանող ոչ մի ձանապարհ չկար: Ծուրջը՝ ունայնություն, դատարկություն և սոսկ դարպասները մագցող խոտեր... Սենյակներում դուրս ու ներս էին անում հավի ձտեր: Բոլոր անկյունները բարձիթողի վիճակում էին: Հիշում եմ՝ հանկարծ աշտարակից մի քար պոկվեց.- տիկին Այվիմինը մի փոքր լռեց, հետո նորից շարունակեց:- Ահա՛

հենց այդտեղ էլ նրանք ապրում էին՝ ծերունին, կինն ու տղան: Այդ կինը ծերունու կինը չէր և ոչ էլ այդ տղայի մայրն էր, այլ ընդամենը ֆերմայի աշխատող, որին իր մոտ ապրելու էր վերցրել ծերունին՝ կնոջ մահից հետո: Գուցե և դրանից էլ էր, որ նրանք հյուրեր չէին ունենում, ու տունը սկսել էր փլուզվել հենց նրանց աչքերի առաջ ու դարձել ավերակ: Բայց ես հիշում եմ դռան վերևում գամված ընտանեկան գիւնանշանը: Հիշում եմ նաև գրքերը՝ հին գրքերը, թավշյա կազմով գրքերը: Այն ամենը, ինչ ծերունին սովորել էր, միայն այդ գրքերից էր: Նա ինձ պատմում էր, որ չափազանց շատ էր կարդում՝ հին ժամանակների գրքեր, գրքեր քարտեզներով պատկերված: Նա դրանք իր հետ քարշ էր տվել մինչև աշտարակի ծայրը, անգամ մինչև հիմա այն հաստ պարանն էր պահպանվել, նաև՝ կոտրված աստիճանները: Պատուհանի մոտ դռնա դրված էր կոտրված թիկնակով աթոռը, պատուհանն էլ քամուց ինքն իրեն բացվում էր, իսկ քանի որ ապակին կոտրված էր, այդտեղից երևում էր հեռուն, շատ հեռուն:

Տիկին Այվիմինը լռեց, ասես այդ բացված պատուհանից նայում էր անծայրածիր հեռուն:

- Բայց մենք չկարողացանք աստղադիտակը գտնել,- շարունակեց նա:

Ճաշասրահից լսվում էր ափսեների շխկշխկոցը: Միևչդեռ այստեղ՝ պատշգամբում, տիկին Այվիմինը վրդոված էր, քանի որ աստղադիտակ չէր կարողանում գտնել:

- Ինչի՞ համար է աստղադիտակը,- հարցրեց նստածներից մեկը:

- Ինչու՞: Որովհետև եթե չլիներ այդ աստղադիտակը,- ծիծացեղ տիկին Այվիմինը,- ես հիմա այստեղ նստած չէի լինի:

Միևչդեռ նա իսկապես հիմա այստեղ էր նստած, նա՝ այդ երեսունն անց կինը՝ կապույտ թիկնոցը ուներին գցած:

- Աստղադիտակը պետք է որ այնտեղ լիներ,- շարունակեց նա,- քանզի նա ինձ պատմել էր, որ ամեն երեկո, երբ ծերունիները քնում էին, նա նստում էր պատուհանի մոտ և աստղադիտակով նայում էր աստղերին՝ Յուպիտեր, Ալդեբարան, Կասիոպեյա,- ձեռքով ցույց տվեց խավար այգու վերևում մերթընդմերթ առկայծող աստղերը: Մթնշաղը նոսրանում էր: Հիմա լուսարձակն ավելի պայծառ էր թվում. այն սահեց գիշերային երկնքով և, մեկումեջ դադար առնելով, ասես հիանում էր երկնի արծաթ աստղերով:

- Նա նայում էր աստղերին,- ավելացրեց նա,- ու հարցնում էր ինքն իրեն՝ իմ մեծ պապը՝ այդ փոքրիկ տղան՝ «Ի՞նչ է սա: Ինչի՞ հա-

մար են դրանք: Եվ ո՞վ եմ ես»,- այդպես պատահում է, երբ նստած ես մենակ, ու չկա ոչ մեկը, որ խոսես, իսկ գլխավերևումդ աստղազարդ երկինքն է:

Նա նորից լռեց: Բոլորը նայում էին ծառերի վերևում խավարի մեջ առկայծող աստղերին: Աստղերը թվում էին հավերժական ու դարավոր: Լոնդոնի աղմուկը հանդարտվեց: Հարյուր տարին թվաց մեկ ակնթարթ: Փոքրիկ տղան հիմա նրանց հետ միասին նայում էր աստղերին: Նրանք այդտեղ էին՝ աշտարակի վրա, և նայում էին անապատային ունայն տարածության վրա սփռված գիշերային երկնքին:

Հանկարծ նրանց թիկունքի հետևից լսվեց մեկի ձայնը.

- Դուք լիովին իրավացի եք: Ուրբաթ օրը:

Բոլորը սթափվեցին ու շարժվեցին, ասես իրենք ներքև էին նետել ու նրանք նորից այստեղ՝ այս պատշգամբում էին վայրէջք կատարել:

- Ա՛հ, բայց նրան ոչ ոք չէր կարող նման բան ասել,- հանդարտ ասաց տիկին Այվիմին:

Մի զույգ բարձրացավ ու հեռացավ պատշգամից:

- Նա լրիվ մենակ էր,- նորից սկսեց տիկին Այվիմին.- շոգ ամառային օր էր՝ հունիսյան մի օր: Այն օրերից, երբ երկինքն անասելի լազուրով է ծածկված, և ամեն բան ասես քարացած

է շոգից: Հավի ձտերը ինչ-որ բան էին քջջում բակում, ախոռում ծեր ձին դժվարությամբ էր ոտքերը հետ ու առաջ անում, իսկ ծերունին նիրհում էր՝ մինչև վերջ չխմած բաժակը կողքին դրած: Կինը խոհանոցում դույլերն էր լվանում: Գուցե աշտարակից նորից քար էր պոկվել ու ներքև գլորվել: Թվում էր՝ օրն այդ չէր ավարտվելու: Մինչդեռ նա՝ այդ փոքրիկ տղան, չուներ մեկը, ում հետ կխոսեր, նա զբաղվելու ոչինչ չուներ: Սակայն այդ ամենի փոխարեն, նրա առջև էր սփռված ամբողջ աշխարհը: Ճահճուտը ծխում ու հրդեհվում էր տապից, այն այրվում էր իր իսկ ծխե քուլաների մեջ, որոնք մխրձվում էին երկինք. կանաչ խոտն ու լազուրը, կանաչ օազիսն ու երկանակամարը... անվերջ էին ու անծայրածիր:

Կիսախավարի մեջ հյուրերը տեսնում էին, որ տիկին Այվիմին հենվել էր բազրիքին ու, գլուխն ափերի մեջ առնելով, նայում էր ճահճուտին աշտարակի գագաթից:

- Միայն ճահճուտ ու երկինք, լոկ ճահճուտ ու ամպածրար, անվերջ ու անծայր,- մտածկոտ կրկնեց նա:

Հանկարծ նա պարզեց ձեռքերը, ասես հենց աչքերի դիմաց ինչ-որ բան նկատեց:

- Իսկ ի՞նչ տեսք ունի երկիրը աստղադիտակից,- հարցրեց նա:

Մի արագ շարժում արեց մատներով, ասես անհամբերությամբ մի բան պտտեց:

- Նա ուղղեց աստղադիտակը,- ասաց տիկին Այվիմին,- նա պտտեց աստղադիտակը երկրի կողմը: Եվ պահեց այն հորիզոնում սփռված անտառի խավար հատվածի վրա ու տեսավ... ամեն մի ծառը... ամեն մի ծառն առանձին-առանձին... և թռչուններին... և ծխի քույակները... այնտեղ... ծառերի մեջ... իսկ հետո... ներքև... ներքև (տիկին Այվիմին հայցքը ներքև իջեցրեց) ու ահա նրա դիմաց տունն է... տուն՝ ծառերի մեջ... ֆերմա... պարզ տեսանելի էր ամեն մի աղյուսը... և դռան երկու կողմերի փայտե ծաղկամանները... դրանցում երկնագույն ու վարդագույն ծաղիկներ, երևի հորտենգիաներ էին,- նա մի քիչ լռեց,-... տևից մի աղջիկ դուրս եկավ... կապույտ գլխաշորով... սկսեց թռչուններին կերակրել... աղավախներին... թռչունները թռվո՞ւմ ու թռչկոտում էին նրա շուրջը... իսկ հետո... տեսնե՞ք... տղամարդ, այո՛, այո՛, տղամարդ: Նա դուրս եկավ տնից: Գրկեց աղջկան: Նրանք համբուրվեցին:

Տիկին Այվիմին բացեց ձեռքերն ու փակեց դրանք, ասես ինքն էլ էր համբուրում մեկին:

- Փոքրիկ այդ տղան կյանքում առաջին անգամ էր տեսնում, թե ինչպես է տղամարդը համբուրում կնոջը, և նա դա տեսավ աստղա-

դիտակի միջոցով, հարյուրավոր մղոններ այն կողմ ճահճուտի այն մյուս ծայրում:

Տիկին Այվիմին կտրուկ շարժումով մի բան հրեց, գուցե աստղադիտակը, հետո ակնթարթորեն ուղղվեց:

- Տղան այդ վազեց աստիճաններով ներքև: Նա երկար վազում էր դաշտով մեկ, արահետներով, ճանապարհներով: Նա վազեց հարյուրավոր մղոններ ու երբ ծառերի գլխավերևում վառվեցին առաջին աստղերը, նա վազեց վերջապես դեպի տուն... ամբողջությամբ քրտնած ու փոշոտված...

Տիկին Այվիմին նորից լռեց, կարծես տեսնում էր այդ տղային իր առջև:

- Իսկ հետո՞... հետո՞... հետո ի՞նչ եղավ: Նա ի՞նչ ասաց: Իսկ աղջիկը...- թափվեց հարցերի տարափը:

Հանկարծ տիկին Այվիմինի վրա լույս ընկավ, ասես մեկը գիտակցաբար նրա կողմ պտտեց աստղադիտակը (դա ռազմասօդային պաշտպանության զորքերն էին՝ փնտրում էին թշնամու ինքնաթիռը): Նա բարձրացավ աթոռից: Գլխին կապույտ գլխաշոր էր: Ձեռքը բարձրացրեց, կարծես հանկարծակիի եկավ ու ասես զարմացած կանգնել էր դռան շեմքին:

- Աղջիկը: Նա...- Այվիմին խճճվեց, թվում էր ուզում էր ասել «ես էի»: Բայց հետո սթափ-

վեց ու ասաց,- նա իմ մեծ տատն էր:

Հետո շրջվեց՝ հայացքով փնտրելով թիկնոցը: Այն գցած էր աթոռի թիկնակին:

- Բայց ասացե՞ք՝ ինչ պատահեց այն մյուս տղամարդուն, այն մեկին, որը դուրս եկավ տանից,- չէին դադարում «ինչունները»:

- Մյուս տղամարդը: Իսկ նա...- շնջաց տիկին Այվիմին՝ կռանալով ու աթոռի վրա ձեռքով շոշափելով ու որոնելով թիկնոցը (լուսարձակն արդեն շրջանցել էր պատշգամբը),- անհետացավ երևի: Լույսը,- ավելացրեց նա՝ արդեն փաթաթվելով թիկնոցի մեջ,- լոկ մի ակնթարթ է ընկնում:

Լուսարձակը հիմա լուսավորում էր Բուֆինգեմյան պալատը: Իսկ իրենք արդեն պիտի շտապեին թատրոն:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«Սեսի Միլերին»: Գիլբերթ Քլենդոնը վերցրեց մարգարտյա կրծքազարդը կնոջ հարդասեղանին դրված մատանիների ու զարդերի կույտի միջից և կարդաց դրան ամրացրած թուղթը. «Սեսի Միլերին, սիրով»:

Իսկապես որ, այս քայլը նման էր Անժելային, ևա չէր մոռացել անգամ Սեսի Միլերին՝ իր քարտուղարուհուն: Ամեն դեպքում տարօրինակ էր սա, ևորից մտածեց Գիլբերթ Քլենդոնը, որ կհեն ամեն ինչ թողել էր այդ հերթականությամբ, թեկուզ և փոքր, բայց մեկական նվեր ընկերուհիներից յուրաքանչյուրի համար: Կարծես կանխազգացել էր մոտալուտ մահը: Ախր ևա բացարձակ առողջ էր այն առավոտ՝ վեց շաբաթ առաջ, երբ դուրս եկավ տանից և, Պիկադիլի կամուրջն անցնելով, հայտնվեց մեքենայի անիվների տակ:

Գիլբերթ Քլենդոնը սպասում էր Սեսի Միլերին: Նա խնդրել էր այդ կնոջը այցելել՝ գիտակցելով, որ այսքան տարիներ նրանց մոտ աշխատելով արժանացել էր նման ուշադրության: Բայց, մտածում էր ևա՝ սպասելով Սեսիին, ամեն դեպքում տարօրինակ էր, որ Ան-

Ժելան ամեն ինչ այս տեսքով ու կարգով էր թողել: Բոլոր ընկերներին մի բան կար թողած որպես հուշ: Այդ բոլոր մատանիները, վզնոցները, չինական զարդատուփերը (նա առհասարակ պաշտում էր փոքրիկ տուփեր) հասցեագրված էին ինչ-որ մեկին: Իսկ իր համար այս իրերից ամեն մեկը կապված էր մի հիշողության հետ: Այ այս մեկը՝ ռուբինե աչքերով էմալապատ դեֆինը, ինքն էր Անժելային նվիրել, այն իր ուշադրությունն էր գրավել Վենետիկի նըրբանցքներից մեկում: Նա միևնույն հիմա հիշում է՝ Անժելայի հիացմունքով լի աչքերը: Իսկ իրեն... անձամբ իրեն իհարկե նա ոչինչ չէր թողել, եթե չհաշվենք նրա օրագրերը: Կաշվե կանաչ կազմով տասնհինգ հատորները դրված էին իր թիկունքի հետևում՝ կնոջ գրասեղանի վրա: Իրենց ամուսնության առաջին իսկ օրվանից նա այս ամբողջ տարիների ընթացքում օրագիր էր պահել: Այդ օրագրի պատճառով էլ առաջացել էին նրանց հազվադեպ... ոչ թե վեճերը, այլ տարածայնությունները: Երբ նա սենյակ էր մտնում այն պահերին, երբ կինը զբաղված էր լինում գրելով, Անժելան միշտ փակում էր գիրքը կամ էլ ձեռքով ծածկում էջը: «Ո՛հ, ո՛հ, ո՛հ,- ասես նա նորից լսում էր նրա ձայնը,- միայն իմ մահից հետո... միգուցե»: Ահա և թողել էր իր օրագիրը նրան՝ որպես իրեն բա-

ժին հասնող ժառանգություն: Դա միակ բանն էր, որի մասին նրանք չէին կիսվում Անժելայի կենդանության օրոք: Բայց Գիլբերթը չէր էլ կարող ենթադրել, որ նա կնոջից երկար է ապրելու: Եթե միայն նա այդ ժամանակ էլ գեթ մի պահ մտածեր, թե ինչ է անում, ապա նա հիմա էլ ողջ կլիներ: Բայց չէ, նա միանգամից ուղղվել էր դեպի կամուրջ... հարցաքննման ժամանակ այդպես էր ասել վարորդը: Նա արգելակելու ոչ մի հնարավորություն չէր թողել... Նրա մտքերը կտրեցին միջանցքից լսվող ձայները:

- Օրիորդ Միլերը, պարոն,- հայտնեց սպասուհին:

Նա ներս մտավ: Գիլբերթը երբեք նրա հետ մենակ չէր հանդիպել, և բնականաբար չէր տեսել նրան արտասովոր: Սեսի Միլերը սարսափելի հուզված էր ու տարակուսանքի մեջ էր: Անժելան նրան ոչ միայն աշխատանք էր տվել, այլև նրան ընկեր էր դարձել: Իսկ հենց ինքը, մտածում էր Գիլբերթ Քլենդոնը՝ մոտեցնելով Սեսիին աթոռը, դժվարությամբ կտարբերեր այս կնոջը շրջապատի որևէ մեկ այլ կնոջից: Նման Սեսի Միլերները հազարն են՝ անշուք փոքրիկ կանայք՝ սև զգեստով և աշխատանքալին պայուսակներով: Բայց Անժելան իր հեռատեսության շնորհով Սեսի Միլերի մեջ անգնահատելի արժեքներ էր բացահայտել: Իսկական

խոհեմության օրինակ, չափազանց զուսպ ու վստահելի, նրան կարելի է պատմել ամեն բան... դրական հատկանիշների այս շարանը դեռ կարելի էր շարունակել:

Սկզբում օրիորդ Միլերը չէր կարողանում խոսել: Նստել էր՝ թաշկինակը աչքերից չհեռացնելով: Հետո իրեն ստիպելով ասաց.

- Ներեցե՞ք, պարոն Քլենդոն:

Գիլբերթը մի բան փնթփնթաց: Բնականաբար, նրա համար ամեն ինչ հասկանալի էր: Նա պատկերացնում էր, թե ինչ նշանակություն ուներ իր կինը օրիորդ Միլերի համար:

- Ես ինձ այստեղ այնքան երջանիկ էի զգում,- ասաց օրիորդ Միլերը՝ աչքը սեղանի վրա դնելով: Նրա հայացքը կանգ առավ Գիլբերթի թիկունքի հետևում դրված գրասեղանին: Այստեղ նրանք Անժելայի հետ միասին աշխատում էին: Չէ՞ որ Անժելան էլ, որպես հայտնի քաղաքական գործչի կին, կրում էր իրեն բաժին ընկած պարտականությունները: Ամուսնու կարիերայի մեջ նա գլխավոր օգնականն էր: Քանի անգամ էր Գիլբերթը նրանց այստեղ միասին տեսել՝ Սեսին գրամեքենայի դիմաց գրում էր Անժելայի կողմից թելադրվող նամակ: Ակնհայտ էր, որ օրիորդ Միլերն էլ էր հիմա դա հիշում: Հիմա մնում էր միայն նրան հանձնել Անժելայի կտակած կրծքազարդը: Այո՛, ոչ

այնքան հարմար մի նվեր: Գուցե ավելի լավ կլիներ մի կլորիկ գումար թողնել կամ էլ մի գրամեքենա: Բայց ինչ արած. «Սեսի Միլերին՝ սիրով»: Գիլբերթը հանձնելով նրան զարդը մի փոքր ճառ ասաց, որը նախօրոք էր պատրաստել: Նա գիտեր, որ օրիորդ Սեսին կարող է գնահատել այդ նվերը: Անժելան հաճախ էր այն կրում... Եվ օրիորդ Միլերը՝ ընդունելով նվերը, պատասխանեց, ասես ինքն էլ էր նախօրոք խոսք պատրաստել, որ հիմա սա կլինի նրա ամենաթանկարժեք կարողությունը... Մնում էր հուսալ, մտածեց Գիլբերթը, Սեսին կունենար մի հարմար զգեստ, որի վրա այս մարգարտյա կրծքազարդը այսքան անշուք չէր երևա: Հիմա նրա հագին սև կոստյում էր, սև վերարկու և սև վերնաշապիկ, կարելի էր ասել իր մասնագիտության տեր կանանց համազգեստ: Բայց հանկարծակի Գիլբերթը հիշեց, որ օրիորդ Միլերն էլ էր սգի մեջ: Նա էլ էր ողբերգության միջով անցել. եղբայրը, որին նա այդքան սիրում էր, մահացել էր Անժելայից մեկ կամ երկու շաբաթ առաջ: Կարծես ինչ-որ վթարի ժամանակ: Գիլբերթը մոռացել էր, միայն թե հիշում էր, որ Անժելան նման մի բան պատմել էր: Անժելան, իր հավասարակշռված լինելու շնորհի հետ մեկտեղ, այդ ժամանակ բավականին էլ բորբոքվել էր: Սեսի Միլերը այդ ընթաց-

քում տեղից բարձրացավ: Արդեն ձեռնոցներն էր հագնում: Երևի զգում էր, որ ինքն արդեն ավելորդ է: Սակայն Գիլբերթը չէր կարող նրան հենց այսպես թողնել և չխոսել նրա հետագա անելիքների մասին: Ինչպիսի՞ն էին նրա ծրագրերը: Ինքը կարո՞ղ էր ինչ-որ բանով օգտակար լինել:

Օրիորդ Միլերը մտազբաղ նայում էր սեղանին, գրամեքենային, որոնց դիմաց այդքան ժամեր էր անցրել... նայում էր նաև... օրագրերին: Եվ խորասուզվելով Անժելայի մասին հիշողությունների մեջ՝ Գիլբերթի հարցին միանգամից չպատասխանեց, ասես չհասկացավ: Գիլբերթը կրկնեց.

- Ի՞նչ ծրագրեր ունեք, օրիորդ Միլեր:

- Ծրագրեր: Ահ, ամեն ինչ լավ է, պարոն Քլենդոն: Իմ մասին հարկ չկա անհանգստանալու:

Այս խոսքերից Գիլբերթին պարզ դարձավ, որ Սեսին ֆինանսական օգնության կարիք չուներ: Ավելի լավ կլիներ, մտածեց Գիլբերթը, այս մասին նամակով հայտնել: Հիմա նրան մնում էր միայն սեղմել օրիորդ Սեսիի ձեռքն ու ասել.

- Իմացե՞ք, օրիորդ Միլեր, եթե երբևէ ինչ-որ բանով կարողանամ օգնել, ապա մեծ հաճությամբ...,- ու բացեց դուռը: Մի վայրկյան օրիորդ Միլերը կանգ առավ, ասես մի բան հիշեց.

- Պարոն Բլենդոն,- ասաց նա, առաջին անգամ նայելով ուղիղ նրա աչքերին և առաջին անգամ Գիլբերթին ապշեցրեց նրա հայացքը՝ սրտակից և կրակոտ,- եթե երբևէ, հիմա կամ էլ գուցե հետագայում ես կարողանամ ինչ-որ բանով ձեզ օգնել, ապա հիշեք, որ հանուն ձեր կնոջ ես միշտ ուրախ կլինեմ:

Այս խոսքերով նա հեռացավ: Այս խոսքերն ու հրաժեշտի հայացքը զարմացրին Գիլբերթին: Նա վերադարձավ սենյակ, ու այդ պահին նրա գլխում մի զվարճալի, անգամ ֆանտաստիկ միտք ծագեց: Միթե այս տարիների ընթացքում, մինչև նա գրեթե չէր նկատում օրիորդ Միլերին, նա, ինչպես գրում են վեպերի մեջ, իր հանդեպ թաքուն զգացմունքներ էր տածում: Նա քայլում էր սենյակում և այդ ընթացքում բռնեց իր արտացոլանքը հայելու մեջ: Հիսունն անց էր, բայց չէր կարելի չընդունել հայելու վկայությունը. նա դեռևս բավականին գրավիչ տղամարդ է:

- Խեղճ Սեսի Միլեր,- ասաց նա քմծիծաղով: Ինչէր նա կտար, միայն թե կնոջ հետ ծիծաղեին այս կատակի շուրջ: Ակամայից նա ձեռքը մեկնեց օրագրին. «Գիլբերթը,- կարդաց նա՝ բացելով պատահական մի էջ,- ուղղակի հիասքանչ տեսք ուներ...»: Նա կարծես պատասխանեց ամուսնու հարցին: Կարծես ասում

էր՝ «իհարկե, դու չափազանց գրավիչ ես կանանց համար»: Եվ իհարկե, Սեսի Միլերն էլ էր դա զգում: Գիլբերթը շարունակեց կարդալ: «Որքան եմ հպարտանում, որ ես նրա կինն եմ»: Իսկ ինքն էլ միշտ հպարտանում էր, որ Անժելայի ամուսինն է: Որքան անգամներ, երբ նրանք ճաշում էին հյուրերի տանը, նա նայում էր իր կնոջն ու ինքն իրեն ասում. «այստեղ հավաքվածներից ամենաչքնաղ կինն է նա»: Նորից դարձավ օրագրին: Այդ առաջին տարին էր, որ ինքն առաջադրված էր Խորհրդարանական ընտրությունների: Իրենք միասին անցկացրին ուղևորություն ողջ շրջանով մեկ: «Երբ Գիլբերթը նստեց, ծափահարությունները թընդացին: Բոլորը ոտքի էին կանգնել ու երգում էին՝ «Զէ որ նա ընտիր տղա է» երգը: Ես իսկապես հիացած էի»: Սա նույնպես Գիլբերթը հիշում էր: Անժելան նստած էր նրա կողքին՝ հարթակի վրա: Թվում էր՝ հիմա էլ էր նա տեսնում կնոջ աչքերը՝ իրեն ուղղված և արցունքներով լցված: Իսկ հետո՞: Նա թերթեց ևս մի քանի էջ: Իրենք ուղևորվեցին Վենետիկ: Հիասքանչ մի արձակուրդ էր ընտրություններից հետո: «Ֆլորինայի մոտ պաղպաղակ կերանք»: Գիլբերթը ժպտաց: Անժելան լրիվ երեխա էր: Շատ էր սիրում պաղպաղակ: «Գիլբերթն այնքան հետաքրքրի փաստեր էր ինձ պատմում

Վենետիկի մասին: Պարզվում է, որ...», - այդպես էլ գրել էր ամեն բան իր աշակերտական ձեռագրով: Անժեւայի հետ ճանապարհորդելը մի իսկական հաճույք էր, նաև այն պատճառով, որ նա տենչում էր որքան հնարավոր է շատ բան իմանալ: Սիրում էր խոսել իր «սարսափելի անկարգությունների» մասին, բայց դա միայն կրկնապատկում էր նրա գրավչությունը: Հետո Գիլբերթը բացեց հաջորդ հատորը, ուր նրանք արդեն վերադառնում էին Լոնդոն: «Ես այնքան եմ ուզում լավ տպավորություն թողնել: Հագել էի իմ հարսանեկան զգեստը»: Հա՛, սեղանի շուրջ նրա կողքին այդ ժամանակ նստած էր ծեր պարոն Էդվարդը, և Անժեւան հենց իր աչքի առաջ գայթակղել էր այդ հուժկու ծերունուն՝ Գիլբերթի տնօրենին: Նա արագ-արագ կարդում էր՝ հիշողության մեջ վերակենդանացնելով տեսարանները: «Ճաշեցինք Խորհրդարանական պալատում... հետո երեկոն անցկացրեցինք Լավգրովսների մոտ: Իսկ լեդի Լ.-ն հարցրեց ինձ, թե արդյոք պատկերացնո՞ւմ եմ, որքան պատասխանատվություն կա Գիլբերթի կինը լինելու մեջ»: Իսկ տարիներն անցնում էին, նա սեղանից ևս մի հատոր վերցրեց... հետզհետե նա ավելի ու ավելի էր խորանում իր գործի մեջ: Իսկ Անժեւան ավելի շատ ժամանակ էր անցկացնում տանը... հաստատ մեծ

վիշտ էր նրա համար այն, որ երեխաներ չունեին: «Որքան եմ ուզում Գիլբերթին որդի պարզել»: Սակայն Գիլբերթը հենց ինքը այս առիթով երբեք չէր տխրել: Իր կյանքը առանց երեխաների էլ լցված էր ու հագեցած: Այդ տարի նա ստացել էր իր առաջին համեստ պաշտոնը կառավարությունում: Շատ համեստ պաշտոն էր, բայց Անժելան այդ մասին գրել էր.- «Ես համոզված եմ, որ նա վարչապետ է դառնալու»: Ինչևէ, գուցե եթե գործերն այլ ընթացք ունենային, ապա նա կդառնար վարչապետ: Գիլբերթն ընդհատեց կարդալը՝ մտածելով թե ինչ կարող էր լինել: Քաղաքականությունը մի մուլախաղ է. մի վարակիչ խաղ, բայց խաղն այդ իր հիսուն տարեկան հասակում դեռ ավարտված չէր: Նա թերթեց էջերը, որոնցում գրված էին մանրուքների մասին, այն թերթ, երջանիկ, կենցաղային մանրուքների, որոնցով լցված էր Անժելայի կյանքը:

Գիլբերթը մի նոր հատոր վերցրեց: Նորից պատահական էջ բացեց: «Ինչ վախկոտի մեկն եմ ես: Նորից բաց թողեցի հնարավորությունը: Բայց ինձ թվում էր, որ եսասիրություն կլիներ նրան անհանգստացնել իմ խնդիրներով այն ժամանակ, երբ ինքը զբաղված է: Բայց մենք այնքան հազվադեպ ենք երեկոն միասին անցկացնում»: Ի՞նչ նկատի ուներ: Հա՛, ահա և բա-

ցատրությունը, խոսքը նրա՝ Իստ-Էնդում աշխատանքի մասին էր: «Ինչևէ, խիզախեցի ու խոսեցի Գիլբերթի հետ: Նա անքան նրբանկատ, այնքան սատարող ու բարի գտնվեց»: Գիլբերթը հիշում էր այդ զրույցը: Անժելան ասել էր, որ իրեն այնքան անպետք է զգում, այնքան միայնակ: Ինքն էլ էր ուզում մի գործով զբաղվել, ինչ-որ կերպ օգնել մարդկանց, այդ պահին Գիլբերթը հիշեց, թե նա ինչքան քնքշորեն շիկնել էր այդ օրը, հենց այստեղ, այս բազմոցին նստած: Այդ ժամանակ Գիլբերթը մի քիչ խաղաց նրա հոգու հետ: Միթե քիչ են նրա համար արդեն եղած գործերը՝ ամուսնու մասին հոգ տանելը, տնային գործերով զբաղվելը: Բայց եթե նրան փոփոխություններ են պետք, ինչ արած, թող լինի, ինքը բնավ էլ դեմ չէ: Բայց կոնկրետ ի՞նչ: Որևէ մի բարեգործություն: Որևէ կազմակերպություն: Միայն թե Անժելան պետք է խոստանար, որ շատ չի հոգնելու: Ու ահա ամեն չորեքշաբթի սկսեց գնալ Ուայթչեփլ: Գիլբերթը հիշեց, թե որքան էր ինքը նեղվում այն զգեստից, որն Անժելան հագնում էր այդ ուղևորությունների ժամանակ: Մինչդեռ ինքը՝ Անժելան իր գործին մեծ լրջությամբ էր նվիրվել: Օրագիրը եռում էր նման գրառումներով. «Եղա տիկին Ջոնսի մոտ... նա տասը երեխա ուներ... ամուսինը դժբախտ պա-

տահարի պատճառով կորցրել էր ձեռքը: Հնարավոր ամեն բան արեցի, որ Լիլիին աշխատանքի տեղավորեի»: Հետո... Գիլբերթը թռուցիկ անցավ մի քանի էջեր: Իր անունը սկսեց հազվադեպ հանդիպել: Կարդալն արդեն դարձավ ոչ այնքան հետարքրքիր: Որոշ գրառումներ էլ լիովին անհասկանալի էին, օրինակ. «Բ.Մ.-ի հետ վիճեցինք սոցիալիզմի հարցի մասին»: Ո՞վ էր այդ Բ.Մ.-ը: Գլխատառերը ոչինչ չէին հուշում, երևի կազմակերպությունում էր Անժելան հանդիպել ու ծանոթացել այդ կնոջ հետ: «Բ.Մ.-ն անգութորեն քննադատում էր իշխող դասակարգերին... Ժողովից Բ.Մ.-ի հետ վեռադարձանք, ու ես փորձում էի տարհամոզել նրան: Բայց այդ մարդն իսկական պնդածակատի մեկն էր»: Ուրեմն այդ Բ.Մ.-ը տղամարդ էր, հաստատ այն «ինտելիգենտներից», որոնք այդպես էին իրենց անվանում, Անժելան միշտ էլ ասում էր, որ նրանք ն անգութ են, ն այնքան պնդածակատ: Պարզվում է, որ Անժելան նրան տո՞ն էլ է հրավիրել: «Ճաշին այցելեց Բ.Մ.-ը: Նա Մինիին ձեռքով բարևեց»: Այս բացականչական երանգը մի նոր գույն հաղորդեց նրա մտավոր պատկերին, որը ձևավորվում էր Գիլբերթի գլխում: Բ.Մ.-ն, ինչպես երևում է, սովոր չէր սպասուհիների հետ շփվելուն. նա ձեռքով բարևել էր Մինիին: Կարելի էր գլխի ընկնել, որ

ևա այն մի քանի խոսք անգիր արած ճարտասաններից էր, որոնք մեծախոսում էին իրենց հայացքների մասին, այն էլ կանացի երեկոյների ժամանակ: Գիլբերթի համար նոր էր այս տեսակը, ու նա բնավ էլ այն չէր համակրում: Ահա նորից նա. «Բ.Մ.-ի հետ Լոնդոնի Թաուերում էի... Ինքն ասաց, որ հեղափոխությունը անխուսափելի է... ասաց, որ մենք բոլորս ապրում ենք հորինված երևակայական մի անգո աշխարհում»: Հենց նման ձշմարտություններ էլ պիտի գովերգեր այդ Բ.Մ.-ը, թվում էր՝ Գիլբերթը լսում է նրա ձայնը: Անգամ տեսնում է նրան լիովին պարզ ձևով՝ անփոյթ մի սուբյեկտ, անխնամ մորուքով, կարմիր փողկապով, տվիդե կոստյումով: Անհնար էր, որ Անժելան բացահայտած չլիներ նրա իսկական կերպարը: Գիլբերթը շարունակեց կարդալ: «Բ.Մ.-ը լավ չէր արտահայտվում-ի մասին»: Անունը ջանասիրաբար ջնջված էր: «Ես իրեն ասացի, որ չեմ ուզում լսել ոչ մի հանդիմանություն ուղղված-ին»: Միթե դա իր սեփական անունն էր: Միթե այդ պատճառով Անժելան փակեց էջը, երբ ինքը ներս մտավ: Այս մտքի հետ նրա հակակրանքը Բ.Մ.-ի հանդեպ սրացավ: Այ քեզ հանդգնություն, քննարկել իրեն իր իսկ սենյակի մեջ: Բայց ինչո՞ւ Անժելան իրեն այդ մասին չէր պատմել: Ինչո՞ւ էր թաքցրել նման բանը. չէ՞

որ նրանք միշտ այնքան անկեղծ են եղել իրար հետ: Գիլբերթը սկսեց թերթել էջերը, փնտրելով Բ.Մ.-ի հասցեին ուղղված ցանկացած գրառում: «Բ.Մ.-ը ինձ պատմեց իր մանկությունից: Նրա մայրը աշխատում էր օրավարձով... հենց մտածում եմ այս մասին, միանգամից անհնար է դառնում ապրել նման ճոխության մեջ... երեք գինեա մեկ գլխարկի դիմաց, ահա նրա մոր աշխատանքը»: Ավելի լավ կլիներ նա այդ մասին խոսեր իր հետ, ոչ թե իր փոքրիկ գլուխը ծանրաբեռներ նման հարցերով, որոնք բնականաբար հասանելի չէին նրա մտածողությանը: Այդ Բ.Մ.-ը Անժելային գրքեր էլ տվել կարդալու: ԿԱՐԼ ՄԱՐՔՍ՝ «ՍՊԱՍՎՈՂ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ»: Բ.Մ... Բ.Մ... այս գլխատառերն այդպես էլ պտտվում էին աչքերի առաջ: Բայց ինչո՞ւ ոչ մի տեղ, ոչ մի անգամ նրա անունը ամբողջությամբ չի հանդիպում: Սրա մեջ ինչ-որ ծածուկ, մտերմիկ բան կար, որ բնավ էլ նման չէր Անժելային: Ի՞նչ, մի՞թե նա հենց նրան Բ.Մ. էլ անվանում էր: Ծարունակում է կարդալ: «Ճաշից հետո Բ.Մ.-ը անսպասելորեն հայտնվեց: Բարեբախտաբար, ես մենակ էի»: Սա մի տարի առաջ էր գրառված: «Բարեբախտաբար», ինչո՞ւ բարեբախտաբար, «ես մենակ էի»: Իսկ ինքը որտե՞ղ էր այդ երեկո: Ստուգեց ամսաթիվը իր նոթատետրում, որտեղ գործնական

հանդիպումներն ու ժամադրություններն էր գրանցում: Այդ երեկո նա ճաշի էր քաղաքապետի տանը: Մինչդեռ Բ.Մ.-ն ու Անժելան այդ երեկո միասին էին անցկացրել: Գիլբերթը փորձում էր ամեն ինչ վերականգնել հիշողության մեջ: Երբ ինքը տուն վերադարձավ, Անժելան սպասում էր իրեն, թե՛ պառկել էր քնելու: Իսկ ի՞նչ տեսք ուներ սենյակը, արդյո՞ք այն իր մշտական ձևով էր: Սեղանին բաժակներ կային, թե՛ ոչ: Աթոռները տեղաշարժված էին, թե՛ իրենց տեղերում էին: Ոչինչ չի գալիս հիշողության մեջ, բացարձակ ոչինչ, բացի այդ երեկո քաղաքապետի տանը ճաշին ասած իր ճառից: Իրադրությունը դառնում էր ավելի անբացատրելի. կինը միայնակ հյուրընկալում էր իրենց տանը իրեն անծանոթ տղամարդու: Գուցե այս առեղծվածի բանալին հաջորդ հատորում էր: Վերցրեց վերջին հատորը, այն մեկը, որն այդպես էլ անավարտ էր մնացել. նա մահացել էր: Ահա նորից, գրողը տանի, ահա հենց առաջին իսկ էջին. «Ճաշեցի Բ.Մ.-ի հետ: Նա չափազանց հուզված էր... ասաց, որ ժամանակն է, որ փորձենք իրար հասկանալ... Ես փորձեցի նրան խելքի բերել, բայց նա ոչինչ չէր ուզում լսել: Սպառնաց, որ եթե ես...»: Դրանից հետո ամեն ինչ ջնջված էր: Ամբողջ էջին միայն գրված էր «Եգիպտոս, Եգիպտոս, Եգիպտոս...»:

Ոչ մի բառ հնարավոր չէր ընթեռնել, բայց ընդհանուր միտքը հասկանալի էր՝ այդ գարշելին փորձել էր Անժելային իր սիրուհին դարձնել: Միայնակ, այս սենյակում... Արյունը խփում էր Գիլբերթ Քլենդոնի գլխին: Նա սկսեց գազազած թերթել էջերը: Ի՞նչ էր Անժելան պատասխանել: Գլխատառերը վերջացան: Հիմա ամենուր հանդիպում էր միայն «Նա»-երը: «Նա նորից էր եկել: Ես ասացի, որ չեմ կարող որոշել... խնդրեցի, որ հեռանա»: Անպիտան, կպնում է կնոջը իր իսկ սեփական տան մեջ: Բայց ինչո՞ւ Անժելան միանգամից չէր պատմել իրեն: Ինչպե՞ս կարող էր թեկուզ մի վայրկյան երկմտել: Ահա գտավ, շարունակեց կարդալ: «Ես նրան նամակ գրեցի»: Մի քանի դատարկ էջեր ու հետո. «Իմ նամակին պատասխան չկա»: Նորից դատարկ էջեր ու հետո: «Նա իրագործեց իր սպանալիքը»: Իսկ հետո, ի՞նչ եղավ հետո: Նա թերթում էր էջերը: Ահա վերջապես ևս մի գրառում՝ իր մահվանից առաջ. «Ես էլ այդքան խիզախ կգտնվեմ նույնն անելու համար»: Եվ վերջ:

Գիլբերթ Քլենդոնը թուլացրեց ձեռքերում պինդ բռնած օրագիրն, ու այն ընկավ գետնին: Աչքի առաջ հայտվեց Անժելան: Նա կանգնած էր Պիկադիլիի մայթի ծայրին: Աչքերը քարացած ու լայն բացված էին, բռունցքները սեղմած: Ահա սլանում է մեքենան...

Սա անտանելի էր: Նա պետք է ամեն բան պարզեր: Ակնթարթային արագությամբ հայտվեց հեռախոսի մոտ:

- Օրիորդ Միլեր,- լռություն: Հետո ինչ-որ շարժման ձայներ լսվեցին:

- Սեսի Միլերը լսում է:

- Ո՞վ է Բ.Մ.-ը,- մոնչաց Գիլբերթը:

Նա լսում էր, թե ինչպես է բուխարու սալաքարին թթթում ժամացույցը. հետո խորը հառաչանք: Եվ վերջապես պատասխան.

- Նա իմ եղբայրն է:

Ահա և ձշմարտությունը. նա Սեսի եղբայրն է եղել ու, ինքնասպան է եղել:

- Գուցե ես ինչ-որ բացատրություն պետք է տամ,- լսվեց Սեսի Միլերի հարցն, ու դրան հաջորդեց Գիլբերթի բղավոցը.

- Ո՛չ: Ոչինչ էլ պետք չէ:

Նա ստացավ իր բաժին ժառանգությունը: Անժելան ասել էր ձշմարտությունը: Նա մտածված էր կանգնել այդտեղ, որ գևար միանար իր սիրեկանին: Կանգնել էր, որ հեռանար իրենից:

ՄԻԱՍԻՆ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ

Տիկին Դելուտեյը ծանոթացրեց նրանց և ասաց, որ այդ տղամարդը նրան դուր կգա: Թեև նրանք դեռ լուռ էին, բայց նրանց միջև զրույցն արդեն սկսվել էր: Պարոն Սերլն ու օրիորդ Անինգը նայում էին երկնքին, այդ պահին երկուսի համար էլ մի տեսակ այլ էր. այն ասես շնչում էր մի անհասկանալի կարևորությամբ, երկուսի համար էլ այն ինքնատիպ էր, ու երկուսն էլ յուրովի էին ընկալում: Հանկարծ օրիորդ Անինգը իր կողքին պարոն Սերլի ներկայությունն այնքան մոտ զգաց, որ երկինքն այդ անհետացավ նրա աչքերից, ընդամենը հասարկ մի երկինք և ուրիշ ոչինչ, այն երկինքը, որի տակ կանգնած էր բարձրահասակ, մուգ աչքերով, ձերմակած մազերով և թախծոտ դեմքով (բայց շատերն էին ասում, որ այդ թախիծը շինծու է) Ռոդերիկ Սերլը: Օրիորդ Անինգը գիտակցելով իր մտքի անհեթեթությունը, չդիմացավ ու ասաց.

- Ինչ գեղեցիկ երեկո է:

Հիմարություն: Կատարյալ հիմարություն: Բայց միթե հնարավոր է քառասուն տարեկան

հասակում, և այն էլ նման երկնքի տակ, չխենթանալ, երբ այս լուսնի ցուլքերի ներքո ամեն ինչ (ինքը և պարոն Սերլը կանգնած էին տիկին Դելլոուեյի հյուրասենյակի պատուհանի մոտ), ամեն մի կետ, ամեն մի բջիջ ու փոշեհատիկ, անգամ նրանց երկուսի կյանքերը չէին կարող առավել արժենալ, քան թիթեռի կյանքն այն գիշերին:

- Հըմմմ...,- հառաչեց օրիորդ Անինզը, մտածկոտ թմփթմփացնելով բազմոցին: Պարոն Սերլը նստեց նրա կողքին: Արդյոք ձիշտ էին ասում նրա «շինծու թախծի» մասին: Ամեն դեպքում իր համար միևնույն էր, թե ինչ են ասում, ինչ են խոսում ու դրանում կրկին երկինքն էր մեղավոր, և գուցե դրանից էր, որ կրկին շատ տեղին մի բան ասաց.

- Ես, երբ փոքր աղջնակ էի, Քենթըրբերիից մի օրիորդ Սերլի էի ճանաչում:

Մտքերը հանձնելով գիշերային երկնքին՝ պարոն Սերլի դիմաց այդ պահին հայտվեցին նախնիները, այդ կապույտ ռոմանտիկ լույսի ներքո նրա աչքերը սևացան ու լայնացան. նա պատասխանեց.

- Այո՛, մենք համարվում են Նորմանների հետևորդները, որոնք այստեղ էին եկել Վիլիելմ Նվաճողի հետ: Իսկ Քենթըրբերիում իսկապես

կա թաղված ոմն Ռիչարդ Սերլ: Նա եղել է Անգլիայում Ծնկակապի շքանշանի ասպետներից:

Օրիորդ Անինզը հասկացավ, որ պատահականորեն դիպավ պարոն Սերլի իրական կերպարին, որը թաքնված էր այս երկրորդ՝ «շինծու» կերպարի դիմակի տակ: Լուսնով սքանչացած (իսկ լուսինը նրա համար տղամարդկայնության խորհրդանիշն էր, ու հիմա նա նայում էր այդ լուսնին վարագույրի արանքից՝ շողշողալով նրա արծաթե ցուլքերի ներքո)՝ նա կարող էր ասել գրեթե ամեն ինչ, ուստի որոշեց բացահայտել պարոն Սերլի մեջ թաքնված ու մոռացված իրական Սերլին, անընդհատ ինքն իրեն շնչալով. «Առաջ Սթենլի, առաջ», դրանք նրա մոտ ասես մարտական կանչի խոսքեր լինեին, գաղտնի մի ուժ՝ քաջալերող, հուսադրող, երբեմն այդպես անում են միջին տարիքի մարդիկ, որոնք տառապում են անուղղելի չարության զգացումով, միևնույն ժամանակ տառապում էր ահավոր ամաչկոտությամբ, ավելի շուտ՝ ծուլությամբ, որովհետև նրան ոչ թե քաջությունն էր պակասում, այլ էներգիան, հատկապես տղամարդկանց հետ զրույցի ժամանակ, որոնցից նա խուսափում էր, իսկ ավելի հաճախ խուսափում էր նրանց կողմից տարվող զրույցներից, որոնք նման էին ձշմարտության որոնման պայ-

քարների, սակայն, ընդհանուր առմամբ, նրա ընկերների մեջ տղամարդիկ շատ քիչ էին, ավելին՝ նա մտերիմ ընկերներ չուներ, իսկ եթե անկեղծ, նա միշտ էլ մտածում էր, թե արդյոք նրանք բոլորը պետք են իրեն: Ո՛չ: Նա մենակ չէր, նրա հետ էին Սառան, Արթուրը, նա ուներ տուն, շունիկ և իհարկե ԴԱ, խորանալով ինքն իր մեջ մտածում էր օրիորդ Անիսգը, նույնիսկ հիմա, երբ նա նստած էր բազմոցին՝ պարոն Սերլի կողքին, նա զգում էր ԴԱ, զգում էր, որ վերադառնալու էր տուն, որտեղ իրեն սպասում է մի հրաշք փունջ, անգո մի թագավորություն. նա համոզված էր, որ այս աշխարհում իրենից բացի ոչ ոք չուներ նման բան (չէ՞ որ միայն իրենն էին Սառան, Արթուրը, տունը և շունիկը), և նորեն սուզվելով տիրելու այդ բաղձալի զգացման մեջ, նա գիտակցեց, որ միայն ԴԱ և լուսինը (լուսինը մեղեդի էր) բավական են իրեն, որ իրեն բնավ էլ պետք չէ այս Սերլը՝ նախնիների հանդեպ ունեցած իր հպարտության հետ միասին: Ո՛չ: Հենց դրանում է թաքնված ամենամեծ վտանգը. պետք չէ այս տարիքում անուրջներին տրվել: «Առանց Սթենլիի, առանց», - շշնջաց Անիսգը ու կրկին խոսեց.

- Իսկ դուք ինքներդ եղե՞լ եք Քենթրբերիում:

Արդյոք եղե՞լ է նա Քենթրբըրիում: Պարոն Սերլը թեթևակի ժպտաց: Ինչ անմիտ հարց է, որքան քիչ բան գիտեր հնամյա գեղեցիկ վզնոցով, բարի աչքերով այդ քնքուշ ու զուսպ կինը, երևում է, որ խելացի կին է, ասում են, որ նա երաժիշտ է, բայց ամեն դեպքում որքան քիչ բան գիտեր այն ամենի մասին, ինչից հարցնում էր: Հարցնել իրեն, թե արդյոք եղե՞լ է Քենթրբըրիում, երբ նրա լավագույն տարիները, ամենաթանկ հիշողությունները, այն ամենը, ինչ ինքը երբեք կյանքի ընթացքում չէր հասնոգնել պատմել... չէր փորձել նկարագրել (խորը շունչ քաշեց)... տեղի էին ունեցել հենց Քենթրբըրիում... այս ամենը նրան ստիպեցին ծածաղել:

Սերլի հառաչանքն ու ծիծաղը, թախիժն ու ուրախությունը գրավում էին մարդկանց, ու նա դա գիտեր, բայց այդ գիտակցումը չէր խեղդում հիասթափությունը, և այն, որ նա վայելում էր ընդհանուրի համակրանքը (նա այցելում էր սիրունատես տիկնանց, ու դրանք լինում էին երկարատև այցելություններ, երկար... շատ երկար) չէր մեղմացնում նրա հոգու ունայնությունը, այլապես նա արդեն վաղուց տիրացած կլիներ այն ամենին, ինչի մասին երազում էր մի ժամանակ Քենթրբըրիում, երբ փոքր տղա էր:

Ամեն մի նոր ծանոթություն մի նոր ծնունդ էր տալիս նրան. նա, ով նոր էր ճանաչում նրան ու դեռ չէր հանդիպել նրա անկատար հույսերին, տրվելով նրա հմայքին, թույլ էր տալիս նրան ամեն բան նորեն ապրել... ու դա հիսուն տարեկանում: Օրիորդ Անիկզը դյուրված էր բնությամբ: Իսկ պարոն Սերլի մտքերում ծորում էին դաշտերն ու ծաղիկները, նրա մտքերի չորացած պատերին գգվում էին արծաթագույն կաթիլներ և սլանում վար: Հենց նման պահերին էին ծնվում նրա բանաստեղծությունները, ու հիմա նա տեսչում էր կերտել կերպարներ հենց այստեղ, այս խաղաղությամբ շնչող կնոջ կողքին:

- Այո՛, ես ծանոթ եմ Քենթրբերրիին,- ասաց նա մտախոհ և զգացմունքային ձայնով, սպասելով, ինչպես թվաց օրիորդ Անիկզին, նոր ոչ այդքան համեստ հարցերի: Ահա թե ինչու էր պարոն Սերլը բոլորի համար այդքան հետաքրքիր, բայց և հենց այդ զարմանալի հատկությունը՝ միանգամից արծազանքել քեզ ուղղված խոսքերին, կործանել էր նրան, որքան հաճախ էր մտածում այդ մասին... նա մտածում էր՝ արձակելով կոճակները և հերթական ընդունելություններից հետո բանալիներն ու մանրադրամը դնելով անկողնու կողքի սեղանիկին, իսկ

առավոտները՝ նախաճաշին, նա փոխվում էր, դառնում դաժան, նյարդային և կնոջ հետ կտրուկ խոսում: Նրա կինը հիվանդ էր և երբեք տանից դուրս չէր գալիս, սակայն նրան հաճախակի էին այցելում, մանավանդ կանայք, որոնք հետարքրքրվում էին հատկապես հնդկական փիլիսոփայությամբ, տարբեր դեղաբույսերով ու բժիշկներով, ինչի համար Ռոդերիկ Սերլը միշտ հեգնանքով ինչ-որ բան էր ավելացնում, որին ի պատասխան կինը կարող էր լոկ լուռ գլուխը տարուբերել ու թաքուն արտասվել: Ու գուցե դրա համար էր, որ նա ոչնչի չէր հասել, գուցե և այն պատճառով, որ երբեք չէր կարողացել դուրս պրծնել կանանց միջավայրից ու գրել... այո՛, գրել, ինչը նրան այդքան պետք էր: Կյանքը նրան ամբողջովին կլանել էր (նա ոտքը ոտքին զցեց, շարժումները սլացիկ էին ու յուրօրինակ), ու նա դրանում բնավ էլ ինքն իրեն չէր մեղադրում, չէ՛, նա ավելի շուտ մեղադրում էր իր հարուստ ներաշխարհը ու այդ հարցում իրեն ավելի լավն էր համարում, քան ասենք Վորդսվորթին: Նա չափազանց շատ էր տվել մարդկանց ու հիմա կարծում էր, գլուխն ափերի մեջ առնելով, որ նրանք էլ պետք է իրեն օգնեին... այդպիսին էր նախերգանքը՝ սրտատրոփ, հուզումնալից գրույցի

նախերգանքը... և կերպարները սկսեցին ձևավորել նրա գլխում:

- Այն ասես մրգատու ծառ լինի՝ բողբոջած ծաղիկներով բալենի,- ասաց Սերլը՝ նայելով շիկահեր փարթամ մազերով երիտասարդ կնոջը:

Գեղեցիկ կերպար էր, մտածեց Ռուֆ Անինգը, այն էլ բավականին հաճելի, բայց այնուհանդերձ նա վստահ չէր, որ այս ինքնատիպ ու մելամաղձոտ մարդը իր ժեստերով իրեն դուր է գալիս. տարօրինակ է. անտրամաբանական են մեր զգացմունքները, մտածեց նա: Սակայն իրեն դուր չէր գալիս այն, որ նա կնոջը համեմատում է բալենու հետ, այն քեզ համեմատություն: Նրա նրբանուրբ զգացողությունները ծովածին ծաղկի ցողունի նման մեկ այս, մեկ այն կողմ կողմ էին շարժվում՝ առաջացնելով և՛ սարսուռ, և՛ տարակուսանք, միևնույն ժամանակ նրա միտքը՝ օտարացած թափառող մտքերից, այդ զով լռության մեջ շարունակում էր մնալ սթափ, շարունակում էր ընդունել ազդանշաններ, որոնք կարիք ունեին վերանայվելու, որպեսզի հենց խոսքը հասնի Ռոդերիկ Սերլին, որը իր տեսակի մեջ կայացած կերպար էր, նա կարողանա միանգամից ու համոզիչ ասել՝ «նա ինձ դուր է գալիս» կամ «ո՛չ, նա ինձ դուր չի գալիս», ու

դրանով մեկնդմիշտ ձևավորել իր կարծիքը: Որքան տարօրինակ միտք. որքան կարևոր միտք. ահա, թե որն է մարդկային հարաբերությունների էական բաղկացուցիչը:

- Տարօրինակ է, որ դուք ծանոթ եք Քենթըրբերիին,- ասաց պարոն Սերլը,- այնքան դժվար է հասկանալ այն մեկին, ում հենց այնպես հանդիպում ես (նրանք առաջ երբևէ չէին հանդիպել), ու նա հանկարծ սկսում է խոսել մի բանից, որ քեզ համար այնքան մեծ կարևորություն է ունեցել՝ չէ՞ որ Քենթըրբերիին ձեզ համար լուր մի հին փոքրիկ քաղաք է, այնպես չէ: Դուք այնտեղ երևի ընդամենը մի ամառ անցկացրած կլինեք ձեր հորաքրոջ տանը, չէ՞ (հենց դա, միայն դա էր Ռուֆ Անիզը պատրաստվում պատմել իր Քենթըրբերիի ճանապարհորդության մասին): Այցելեցիք տեսարժան վայրերը ու հետո հեռացաք՝ այլևս երբեք դրա մասին չհիշելով:

Թո՛ղ պարոն Սերլն այդպես էլ մտածի: Նա իրեն դուր չի գալիս, ինչո՞ւ հակառակը համոզել: Իրականում Քենթըրբերիում անցկացրած երեք ամիսները ցնցելել էին իրեն: Նա հիշում էր ամեն մի մանրուքը, չնայած, որ ամենասովորական մի այցելություն էր դա, նա հիշում էր, թե ինչպես էին հյուր գնում իր հորաքրոջ ծա-

նոթուիուն՝ Շառլոթ Սերլին: Անգամ հիմա էլ ևս կարող էր անգիր ասել օրիորդ Սերլի խոսքերը ամպրոպի մասին. «Երբ կեսգիշերին արթնանում եմ ամպրոպի ձայնից, միշտ մտածում եմ, որ գուցե այն ինչ-որ մեկին սպանեց»: Նրա հիշողությունների մեջ էին մնացել կոպիտ խավվոր գորգը և պառավի փայլիլող ու արցունքոտ աչքերը, երբ ևս դատարկ բաժակը ձեռքին խոսում էր ամպրոպի մասին: Դրանից հետո, ամեն անգամ Քենթրբերրիի մասին հիշելիս, աչքերի առաջ են գալիս մոխրագույն ամպերը, խնձորենու ծաղիկների արտացոլանքը և երկար ու գորշ շինությունների ուրվագծերը:

Ամպրոպը նրան սթափեցրեց տարիքային մելամաղձոտ անտարբերությունից: «Առաջ Սթենլի, առաջ»,- ասաց ևս ինքն իրեն, որը նշանակում էր «ո՛չ, իմ ձեռքից բաց չեմ թողնի, ինչպես և մնացածը»: Այս ամենը ծանրութեթև անելով՝ ևս որոշեց՝ «ես նրան ճիշտը կասեմ»:

- Ես սիրեցի Քենթրբերրին,- ասաց ևս: Պարոն Սերլը այդ խոսքերից մի տեսակ տաքացավ: Չէ՞ որ դա իր պարզևն էր, իր դժբախտությունը, իր ճակատագիրը:

- Սիրեցի՞ք...,- կրկնեց ևս,- ես ձեզ հասկանում եմ:

Անինգին շանթի նման մի նոր ազդակ սթափեցրեց... Ռոդերիկ Սերլը իրեն դուր էր գալիս:

Նրանց աչքերը հանդիպեցին, գուցե բախվեցին, քանզի երկուսն էլ զգացին, որ այդտեղ՝ խորքում, հավերժական խավարի մեջ, կար ինչ-որ մեկը, որը միշտ մնում էր աշխույժ, աներևույթ, շատախոս, հանդուգն ու կենսուրախ երկվորյակի հետևում. հանկարծ նա ոտքի կանգնեց, հանեց վերարկուն ու քայլեց Անինգի կողմը: Տագնապազդու էր, բայց և անկրկնելի գեղեցիկ: Երկուսն էլ երիտասարդ չէին, իսկ կյանքի ձեռքերը նրանց թրծել էին մինչև իսկ փայլելու աստիճան, այնպես որ՝ Ռոդերիկ Սերլը մի եռամսյակի մեջ հասցնում էր գնալ տասնյակ երեկույթների և դրա հետ մեկտեղ չզգալ ոչինչ, բացի աղոտ ափսոսանքներից և գեղեցիկ կերպարների նկատմամբ ունեցած տենչանքից (ինչպես բողբոջող բալենու կերպարը... այդ ամբողջ ընթացքում նրան կրծում էր մի խունացած զգացում՝ սեփական անձի առավելությունը մյուսների հանդեպ, այն բոլորի, որոնք շրջապատում էին իրեն), չօգտագործած հնարավորությունների զգացումից, որը տուն դառնալուն պես խառնվում էր կյանքի և սեփական անձի հանդեպ ունեցած տարածայնությունների հետ՝ դառնալով դատար-

կույթուն, ձանձրույթ և դյուրագրգռություն: Սակայն հիմա հանկարծ մշուշի միջից, ինչպես մի ձերմակ նետ (այս կերպարն ինքն իրեն հայտնվեց, այն առկայծեց ինչպես կայածակը երկնքում), հայտնվեց կյանքի հանդեպ ունեցած հին արբեցումը, հայտվեց ու շղթայեց նրան՝ այդ անհաղթահարելի զգացումը, որ այն լցնում էր հոգին ուրախությամբ ու երիտասարդությամբ, այն ամբողջ մարմնով մեկ շաղ էր տալիս սառույց ու կրակ. սահմուկեցուցիչ էր:

- Քսան տարի առաջ Քենթըրբերիս...-
ասաց օրիորդ Անիկն այնպես, ինչպես օրինակ ձեռքով կփակեին անտանելի վառ մի լույս, ինչպես կանաչ թփի տակ կթաքցնեին կրակի պես այրվող դեղձը, քանզի գուցե այն արդեն չափազանց հասած էր, չափազանց հյութալի ու քաղցր:

Հաճախ օրիորդ Անիկը հասկանում էր, թե ինչու չէր ամուսնացել: Երբեմն նրան թվում էր, որ կյանքի կեսի անդորրն ու սառնությունը, հոգին ու մարմինը հարվածներից պաշտպանելու համար լավ թրծված մեխանիզմը համեմատած կայծակնային երկնքի և Քենթըրբերիի խնձորագույնի հետ, իսկական սին ու ունայն «ոչինչ» էր: Նա կարող էր իրեն ինչ-որ այլ բան պատկերացնել, ինչ-որ ահարկու բան, ամպրո-

պի նման... ինչ-որ ֆիզիկական զգացողություն... ինչ-որ...

Հիմա անգամ դա էր տարօրինակ, որովհետև ինքն առաջին անգամ էր տեսնում Սերլին և առաջին անգամ զգաց ծովածին շանթ ազդակներ. ազդակներ, որոնք քիչ առաջ թփթփում էին ու դողդողում, այլևս չէին գործում, այլ անշարժության էին մատնվել, ասես ինքը և Սերլը այնքան մտերիմ էին, որ կարող էին ձեռք-ձեռքի տված նավարկել հոսանքն ի վար:

Աշխարհում ամենատարօրինակն ու անբացատրելին մարդկային փոխհարաբերություններն են, մտածում էր Անինզը, այն այնքան փոփոխական է, զրկված է ամեն տեսակի տրամաբանությունից, ահա՛ և նրա այդ հակակրանքը վերածվեց ամենաթեժ ու հմայիչ սիրո, բայց միայն հենց «սեր» բառը մտքում ասելուն պես նա դուրս վանեց այդ մտքերը իր գլխից՝ նորից մտածելով այն մասին, թե ինչքան անհասկանալի բան է մարդու միտքը, որում այդքան սակավաթիվ են բառերը՝ նկարագրելու համար մարդկային զգացմունքների, վայելքների և ցավի հերթափոխները: Ինչպես դիմանալ այս ամենին: Նա կորցրեց կողքիններին հասկանալու ունակությունը, բարի լինելու շնորհը... Սերլն անհետացավ... իրենք երկուսն էլ փա-

փագում էին թաքցնել այն, ինչն այդքան ավերիչ ու ոչնչացնող էր մարդկային դասի համար, ինչն ամեն ոք փորձում է որքան հնարավոր է քաղաքակիրթ ձևով թաղել, ու հիմա ինքն էլ խաղից դուրս գալու ինչ-որ մղումով, փորձելով օգտվել այդ համընդհանուր թաղման-մոռացման միջոցից, ասաց.

- Իհարկե, ինչ էլ որ պատահի, միևնույն է, Քեթրըբըրին աղավաղելն անհնար է:

Սերլը ժպտաց: Ինքն էլ ընդունեց դա: Ոտքը ոտքին գցեց: Անինգն իրենն արեց, Սերլը՝ իրենը: Ահա՛ և վերջ: Ամեն ինչ վերջացավ: Ու հանկարծ երկուսին էլ պատեց զգացումներ բթացնող խավարը, դատարկությունը, որն ասես մի թանձր շղաշի նման պատում է գիտակցությունը՝ ներս չթողնելով ո՛չ մի միտք, ո՛չ մի զգացմունք, այդ ամենը մի տեսակ ցավ է պատճառում, և աչքերդ հառած անգիտակից նայում ես մի կետի՝ լինի դա գորգի մի նախշ, թե բուխարու մի առկայծող ածխի կտոր... նայում ես... ու ամեն ինչ տեսնում մի սարսռեցնող պարզությամբ, որից կորցնում ես ինքդ քեզ, քանզի չկա ո՛չ մի իմաստ, ո՛չ մի տպավորություն, որ գորու է փոխել, շրջել և գեղեցկացնել այն, ինչը տեսանելի է աչքիդ, քանզի զգացմունքների զարկերակը կանգնել է, իսկ ուղեղը

բթացել է, դրանց հաջորդում է մարմնի ավարտը՝ մահը, ասես մի ապաշխարանք, ուստի և պարոն Սերլը, և օրիորդ Անինգը չէին կարող ո՛չ խոսել, ո՛չ շարժվել, նրանց թվաց, որ հօդս ցնդեց իրենց պատած սարսափելի կախարդանքը... կենսատու ուժը նորեն լցվեց նրանց ավյուններում, երբ Մայրա Մարթրայթը սեթևեթանքով դիպավ պարոն Սերլի ուսին և շշնջաց.

- Երեկ ձեզ տեսա Մեյսթրըսիսիզների թատրոնում, իսկ դուք հաջողեցրեցիք ծլկել, այ թե անպիտանն եք: Դրա համար չեմ էլ ուզում խոսել ձեզ հետ:

Ու նրանք կարողացան բաժանվել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Քանի որ շոգը գնալով ավելի հեղձուցիչ, իսկ սրահն ավելի մարդաշատ էր դառնում, քանի որ այդ գիշեր դրսում չէր կարող լինել այնպիսի վտանգ, ինչպիսին է խոնավությունը, և չինական լապտերները թվում էին անտառը զարդարող կարմիր ու կանաչ պտուղներ, ուստի՝ պարոն Բերթրամ Փրիթչարդը տիկին Լեյզեմին ուղեկցեց պարտեզ:

Կամքն ու թարմ օդն արբեցրին Սաշա Լեյզեմին գլխապտույտ արագությամբ, այդ բարձրահասակ, գեղեցիկ, արտաքնապես ծույլ թվացող կնոջը, որի ներկայության գերակայությունը այնքան նկատելի էր, որ ոչ ոք չէր էլ կարող երևակայել այն ջանքերն ու տարակուսանքը, որ նա գործի էր դնում մարդկանց ներկայությամբ մի բառ արտասանելու համար: Տակավին ամեն բան հենց այդ կերպ էր, և հիմա նա միայն ուրախ էր, որ Բերթրամի հետ էր, որն ինչպես արդեն ակներև էր՝ պարտեզում էլ էր առանց դադարի խոսելու: Եթե նրա խոսքերը գրի առնվեին՝ կստացվեր աննկարագրելի մի «ինչ-որ բան», որի մեջ ոչ միայն նրա բառերն էին առանձին-առանձին զուրկ իմաստից, այլև

նկատելիորեն կաղում էր դատողությունը: Ի սեր Աստծու, եթե վեցնես մատիտն ու գրի առնես բառ առ բառ նրա խոսքը, մի երեկոյի ընթացքում նա կխոսեր մի ողջ վեպի ծավալի չափ, ու ամեն ոք, ով կդիմանար այդ ծանր բեռին, առանց կասկածի կհանգեր այն մտքին, որ խեղճը հաստատ գծվել է: Մինչդեռ ամեն բան թարսի պես հենց հակառակն էր, պարոն Փրիթչարդը հարգված պետական ծառայող էր, Բաղնիքի խմբակիցների անդամ և նաև մի անհասկանալի դրական գծի տեր. նա գրեթե ամենքին անխտիր դուր էր գալիս: Նրա ձայնը, մեղեդայնությունը, մի տեսակ տարբերվող հնչերանգը, մտքերի խրթինությունը, իր կերպարի ներկայանալի արտահոսքը, խորանարդաձև թուխ դեմքը և հաղթանդամ լանջը մի տեսակ անշոշափելի ու անորսալի ուրվագիծ էին ստեղծում, ու ամենն այդ աճում էր, հաղթական ու համոզիչ դառնում, անկախանում նրա խոսքից երբեմն մասամբ, երբեմն՝ ամբողջովին գատված: Նման մտքերով էր գուցե տարված Սաշա Լեյգեմը, մինչ նա շատախոսում էր իր դեպի Դեվընշիր ուղևորության մասին, հյուրանոցների, վերմակների, Թեդի ու Ֆրեդի, կովերի ու գիշերային երթևեկությունների մասին, պաղպաղակի ու աստղերի, եվրոպական կայարանների և Բրեդշոյի մառախուղի ու գրիպի,

հարբուխի, ռևմատիզմի ու Քիթսի մասին. Սա-
 շան իրականում մտածում էր այն մասին, թե
 ինչ լավ է, որ աշխարհիս երեսին նման մարդ
 է ապրում, և նրա շատախոսության ներքո նա
 ստեղծում է Բերթրամի կերպարը, որը ոչ մի
 բանով նման չէր այս խոսող Բերթրամին, նրա
 շատախոսությանը, որն էլ հենց արտացոլում
 էր իրական Բերթրամ Փրիթչարդի էությունը,
 որն ապացուցել իհարկե անհնար էր: Բայց թե
 ինչպես կփորձես ապացուցել այն, որ նա հա-
 վատարիմ ընկեր է, մեծահոգի է, և... այդ պա-
 հին, ինչպես հաճախ լինում էր Բերթրամի հետ
 զրույցի ժամանակ, նա մոռացավ նրա գոյու-
 թյունը, ներկայությունը և սկսեց մտածել այլ
 բանի մասին:

Գիշեր... ահա ինչի մասին նա սկսեց մտա-
 ծել՝ ասես սթափվելով հայացքը երկնքին հա-
 ռելով: Ու նա պատվեց ու սկսեց բուրել դաշտի
 հևքով, խաղաղ ու թախծոտ նիրհած աստղերի
 ներքո, բայց այստեղ՝ Վեսթմինսթերում, տիկին
 Դելլոուեյի մոտ, նրա տան պարտեզում. այդ
 հրաշագեղությունը նրան այլ կերպ կլանեց,
 նրան, ով ծնվել ու մեծացել էր գյուղում... Գու-
 ցե դա համեմատություն էր ներդաշնակ որոն-
 ման մեջ՝ խոտի բույրը և մարդկանցով ծփա-
 ցող սենյակները: Նա Բերթրամի կողքին օրոր-
 վում էր ասես մի եղևիկ, ամեն մի քայլին հով-

հարը մեղմիկ շորորում, ազնվագույն ու անխոս, հազիվ շնչելով, ականջները սրած, քթանցքներով կլանելով օդի ամեն մի գրամը, ինչպես մի վայրի, բայց ընտելացրած գազան, որն իր ամեն մասնիկով կլանում էր գիշերվա ուրախությունն ու հաճույքը:

Ահա, մտածում էր նա, ահա հրաշքներից ամենակարևորը, մարդկության ամենամեծ ձեռքբերումը: Այնտեղ, ուր ջրուռի օթևանին կարելի էր հասնել թիավարելով ու մորուտն անցնելով. ահա ձեզ խնդրեմ. ու նա մտածում էր մի չոր, մաքուր, ամուր, գեղեցիկ կառուցված, արժեքավոր իրերով լցված օթևանի մասին, ուր մարդիկ բզզում են մեղուների նման, հեռանում ու մոտենում, կարծիքներով կիսվում, վիճում: Եվ Կլարիսա Դելլուուեյը այն բաց արեց գիշերվա անհունության մեջ... մի փոքրիկ կամրջակ սփռեց այդ անհունի մեջ, ու երբ նրանք Բերթրամի հետ հասան պարտեզի ծայրը (պարզվեց այն շատ փոքր է) ու նստեցին փայտյա նստարանին, նա սրտի անձայն բաբախով գնահատող մի հայացք նետեց տանը, ասես մի ոսկյա նետ էր մխրձվել նրան՝ դիպչելով ազնվագույն արցունքներին: Չնայած իր ամոթխածության պատճառով նա սովորաբար ոչ մի բառ անգամ չէր արձագանքում, անգամ երբ նրան հապճեպ ինչ-որ մեկի հետ էին ծա-

նոթացնում, սարսափելի ամոթխած լինելով՝ նա ի սրտե հիանում էր այլ մարդկանցով: Հրաշալի կլիներ լինել նրանցից մեկը, սակայն դատապարտված լինելով մնալ այն, ով կաս, նա կարող էր միայն այսպես, պարտեզից, հեռվից հիանալ այն բոլորի ներկայությամբ, որտեղ նա մուտք չուներ: Կար փափագ նրանց ձուլել բարձրաձայն հնչող հանգերին. նրանք բարի էին, հմայիչ և այդ ամենի հետ մեկտեղ խիզախ, գիշերվա այդ դյութարարները, հերոսներ որոնողները՝ տարված վտանգներով և իրենց ճանապարհը փոթորիկների միջով բացող:

Ճակատագրի դաժան հեգնաբով նա չէր հանդգնում նրանց միանալ, փոխարենը կարող էր նրանց ջատագովել, ձայնակցելով Բերթրամին, որը նույնպես մասնակցում էր այդ ճամփորդությանը. նա մեկն էր այդ նավաստիներից, որ կառչում է, բարձրանում տախտակամած և զվարթ սուլում: Այդ վայրկյանների ընթացքում դիմացի ողկույզի մի շյուղ, մինչև ավիշները ներծծված նրա խոսքով, հիացմունքով հալվեց, հոսեց ոսկե կաթիլով, հետո նորից կայտառացավ, սթափվեց ինչպես մի պահակ: Այն լոկ մի պերճաշուք և զվարթ խրախճանքի մասնիկն էր, մի փարոս, մի տախտակամած, որից ծածանվում էր դրոշը: Պատի

մոտ մի դույլ կար դրված, և անգամ դրա առաջ պարտք չմնաց: Հանկարծ Բերթրամը, որը մի տեղ հանգիստ նստել չուներ, որոշեց տնտղել տեղանքը և, կառչելով աղյուսների մի կույտից, սկսեց նայել պարսպից այն կողմ: Սաշան նույնպես նայեց: Նա մի կողով տեսավ կամ էլ երևի դա կոշիկ էր: Ակնթարթորեն նման պատրանքները հոդս ցնդեցին: Շուրջը նորից Լոնդոնն էր. ընդարձակ, անդեմ, անտարբեր մի աշխարհ... մեքենաներ... աշխատանք... գարեջրատների կողքին լուսամփոփներ և հոգևած ու հորանջող ոստիկաններ:

Բավարարելով հետքորթրասիրությունը և մի րոպե տևած լուրջությունը նորեն լցնելով իր եռացող շատախոսությամբ՝ Բերթրամը հրավիրեց տեր և տիկին Այսինչներին նստել իրենց հետ և մոտեցրեց ևս երկու նստարան: Ու ահա նորից նստած էին նրանք և նայում էին նորից նույն տանը, նույն ողկույզին, նույն դույլին... միայն Սաշան, պարսպից այն կողմ նայելուց և կոշիկները, ավելի ծիշտ՝ Լոնդոնը, տեսնելուց հետո, այլևս չէր կարող աշխարհը պատել իր պատրանք ոսկե ամպով: Բերթրամը խոսում ու խոսում էր, և Այսինչներն էլ (սպանեիր էլ, և չէր հիշի նրանց անուններ... Ուոլիսներ, Ֆրիմեններ...) պատասխանում էին, և նրա ամեն մի խոսքն անցնում էր նուրբ ոսկեծույլ հեքով ու

գլորվում անթափանց շողի ներքո: Նայում էր նա ամուր ու խիստ տանը՝ կառուցված Աննա թագուհու ոճով. նա ամեն կերպ փորձում էր հիշել, թե ինչ էր կարդացել դպրոցում խեցգետինների, ջրիմուռների, մշուշների ու բաղերի մասին: Բայց նա արդեն համոզվում էր, որ այս ամենը բանվորների ու փայտագործների գործն էր, մինչդեռ այս ներկա ամբոխը՝ երեկոյան զգեստներով մարդկանց մի կծիկ էր, ուրիշ ոչինչ:

Հետո նա հարցրեց ինքն իրեն, թե որ տեսարանն է իրականը: Կարելի է նայել տանը ու կոշիկ-շերեփին և՛ այս կողմից, և՛ այն:

Նա իր այդ հարցը տվեց Այսինչներին, որոնց նա համեստորեն վերագրում էր մյուսների իմաստությունը և ուժը: Պատասխանները, լինում է, պատահական են գալիս... այդպես էր պատասխանում հարցերին նրա ծերուկ սպանիելը՝ պոչը թափահարելով:

Եվ ահա ողկույզը, զրկվելով իր ոսկեծոյլից և վեհությունից, ասես ապահովեց նրան իր ուզած պատասխանով... Դարձավ մի ծառ՝ չպարսպված տարածության մեջ միակը, ճահճուտների մեջ եզակին... մի ծառ: Նա հաճախ էր այն տեսնում. տեսնում էր կարմիր հրակեզ ամպերը՝ ուրվագծված ողկույզի ճյուղերով և փշրված թույլ ցուլքերը լուսնի արծաթի: Այո,

բայց ո՞րն է պատասխանը: Օ, դե իհարկե հոգին... Սաշան զգում էր, թե ինչպես է մի ինչ-որ գոյ կռիվ տալիս իր մեջ, ելք փնտրում և նույն այդ պահին այն անվանեց հոգի... Չէ՞ որ հոգին իր էությանը միայնակ է. մի կորուսյալ ունայն թռչնակ: Թռչուն՝ նպատակասլաց ու բարձր բույն հյուսած ողկույզի շյուղին:

Բայց այդ պահին Բերթամը, անփութորեն և մի փոքր կոպտորեն բռնելով նրա ձեռքից (քանի որ ծանոթ էին մանկուց), հայտարարեց որ իրենք խախտում են իրենց ուխտը, և ժամանակն է տուն մտնելու:

Եվ այդ ժամանակ ինչ-որ մի տեղ, մի խուլ փողոցում կամ էլ գարեջրատանը զրնգաց ծանոթ, անսեռ մի ձայն... մի հառաչանք... մի ճիչ: Եվ վախվորած դրախտահավը ճախրեց հեռուն՝ ավելի ու ավելի լայն օղակներ գծելով այնքան ժամանակ, մինչև այն (ինչին նա անվանում էր հոգի) վերածվեց հեռավոր ագռավի, որն իրեն ուղղված քարերի պատճառով վախենում է օդ բարձրանալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐՈՎ ՏՈՒՆԸ	3
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԿԱՄ ԵՐԵՔՇԱԲԹԻ	8
ԶԳՐՎԱԾ ՎԵՊ	11
ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌՅԱԿԸ	39
ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐ	49
ՊԱՏԻ ՀԵՏՔԸ	64
ՆՈՐ ԶԳԵՍՏԸ	82
ՈՐՍԻ ՄԻ ՕՐ	102
ԼԱՊԻՆԸ ԵՎ ԼԱՊԻՆՈՎԱՆ	120
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ	141
ԿԻՆԸ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՁ. ԱՐՏԱՅՈԼԱՆՔ	155
ԴՔՍՈՒՀԻՆ ՈՒ ՈՍԿԵՐԻՉԸ	167
ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՐԸ	183
ՍԻՐԻՐ ՄԵՐՁԱՎՈՐԻԴ	198
ԼՈՒՍԱՐՁԱԿԸ	212
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ	222
ՄԻԱՍԻՆ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ	239
ԱՄՓՈՓՈՒՄ	254

ՎԻՐՋԻՆԻԱ ՎՈՒԼՖ
ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐՈՎ ՏՈՒՆԸ

VIRGINIA WOOLF
A HAUNTED HOUSE

ВИРДЖИНИЯ ВУЛФ
ДОМ С ПРИВИДЕНИЯМИ

Հրատ. տնօրեն՝ Արմեն Գասպարյան
Խմբագիրներ՝ Աշոտ Գաբրիելյան,
Թագուհի Ղազարյան
Էջաղրումը՝ Արմինե Քոչարյանի
Ծապիկը՝ Լուսինե Նավասարդյանի



Տպագրությունը՝ օֆսեթ, Չափսը՝
70x100/32, Ծավալը՝ 20.0 տ/մ, Թուղթը՝
օֆսեթ 80 գ/մ², Տառատեսակը՝
Ghabuzian1600NS, Տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Ձանգակ» հրատարակչության տպարանում,
Հասցե՝ ՀՀ, 0051, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2:



Վիրջինիա Վուլֆ

Վիրջինիա Վուլֆի (1882-1941) «Ուրվականներով տունը» պատմվածաշարն առաջին անգամ որպես ամբողջությամբ տպագրվել է հեղինակի մահից գրեթե երեք տարի հետո՝ ամուսնու՝ Լեոնարդ Վուլֆի նախաձեռնությամբ: Ինչու որպես ամբողջություն, որովհետև տասնութ պատմվածքից կազմված այս շարքի առաջին վեց պատմվածքը տպագրվել էր արդեն 1921 թվականին հրատարակված

«Երկուշաբթի կամ երեքշաբթի» ժողովածուում:

Լեոնարդ Վուլֆը «Ուրվականներով տունը» ժողովածուի առաջաբանում նշում է, որ պատմվածքների այս ժողովածուի կառուցվածքը համապատասխանում է հեղինակի ցանկությանը, և որ այդ մասին քննարկել է հեղինակի հետ:

Վերջին վեց պատմվածքներն այն պատմվածքներն են, որոնք հեղինակի կենդանության օրոք չեն հրապարակվել: Պետք է նշել նաև, որ այս վերջին վեց պատմվածքից միայն երկուսն է («Լինելիության վայրկյանները», «Լուսարձակը») հեղինակը հասցրել վերջնական տեսքի, մյուս չորս պատմվածքները դեռևս մշակման փուլում են եղել և հնարավոր է՝ կառուցվածքային ոչ ամբողջականությունը նկատելի լինի:

ISBN 978-9939-9132-3-0

